ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.19-1 Վարդանյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Վ 301

Վարդանյան Վաչագան

Վ 301 Երկերի ժողովածու / Վ. Վարդանյան.- Եր.: Համահայկական գրողների միության հրատարակչություն, 2024. Հատոր առաջին.- 368 էջ:

Վաչագան Վարդանյանի ստեղծագործական ուղին եղավ երկար և արդյունավոր: Վաստակաշատ հեղինակի ստեղծագործությունների երկհատոր այս ընտրանին, որ ներկայացնում ենք հայ ընթերցասերներին, ուշագրավ մի փորձ է՝ համախմբելու և համատեղելու հեղինակի տարբեր տարիների գրվածքները, գրքերը, տպագրված և անտիպ ստեղծագործությունները:

ՀՏԴ 821.19-1 Վարդանյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-9310-2-9

© Շուշան Վարդանյան, 2024

ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՀՈԳՈՒ ՈՒՂԻՆ

Վաչագան Վարդանյանը նոր անուն չէ մեր գրականության մեջ. Ախուրյանի Հովիտ գյուղի ծնունդ, նշանավոր աշուղ Յանդունիի (Հարտենի) ծոռը, գերազանցությամբ ավարտելով յոթնամյա դպրոցը, ապա Գյումրիի մանկավարժական տեխնիկումը, գործուղվել է ուսուցչության, ապա 1942-ին զորակոչվել է բանակ: 1947-ին ընդունվել և 1952-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, ապա աշխատել շրջանային թերթում:

1954-1990 թթ. ավագ խմբագիր էր Հայաստանի պետական ռադիոկոմիտեում: Ութ գրքերի, բազմաթիվ ռադիոնյութերի և անտիպ

գեղարվեստական գործերի հեղինակ է: Վաչագան Վարդանյանը կարևոր դեմք է եղել մեր գրական կյանքում: Մտերիմ է եղել գրական աշխարհի կարկառուն ներկայացուցիչներից շատերի հետ: Եղել է նաև անվանի հայ գրող Հովհաննես Մելքոնյանի համախոհն ու գործընկերը: Նրա տեքստերի հիման վրա մեր հեղինակավոր երգահանները ստեղծել են երգեր, որոնք առ այսօր սիրված են և գեղարվեստական վայելք են պարգևում մեր երաժշտասերներին: Վաչագան Վարդանյանի ստեղծագործությունների երկհատոր այս ընտրանին, որ ներկայացնում ենք հայ ընթերցասերներին, ուշագրավ մի փորձ է՝ համախմբելու և համատեղելու հեղինակի տարբեր տարիների գրվածքները, գրքերը, տպագրված և անտիպ ստեղծագործությունները:

Վաստակաշատ հեղինակի երկերի առաջին հատորը բացում ենք նրա «Սոնետների պսակով», որ նկատելի երևույթ է եղել 70-80-ական թվականների հայ գրականության մեջ: Սոնետն իբրև ժանր և բանաստեղծական կայուն ձևերից մեկը հայ պոեզիայում երևելի ձեռքբերումներ ունի: Բաղկացած լինելով 14 տողից՝ սկզբում երկու քառատող (կատրեն) և վերջում երկու եռատող (տերցետ), սոնետն ի հայտ է բերում բացառիկ կարողություն՝ արտահայտելու մարդկային հուզաշխարհն իր բոլոր երանգներով: Բազմազան են նաև սոնետի հանգավորման ձևերը: Քառատողերում օղակաձև կամ խաչաձև հանգավորումով տողերն իրար են կապվում՝ բացելով բազմազանության հրաշք մի աշխարհ:

Սոնետն ինքնին երգ է, որ Տերյանի, Չարենցի և հատկապես Վահան Թեքեյանի ստեղծագործության մեջ կատարյալ ձևեր առավ և հնչեց իբրև տիեզերական մեղեդի: Սկիզբ առնելով իտալական գրականության մեջ՝ այն գրավել է աշխարհի շատ բանաստեղծների: Որոշ տարածում է ունեցել և ունի սոնետների պսակը՝ բաղկացած 15 սոնետից՝ ունենալով այնպիսի կառուցվածք, որ յուրաքանչյուր բանաստեղծության վերջին տողը նույնությամբ կրկնվում է իբրև հաջորդի առաջին տող: Հայ գրականության մեջ սոնետների պսակի հայտնի հեղինակ է Հենրիկ Էդոյանը:

Յուրահատուկ է Վաչագան Վարդանյանի «Սոնետների պսակը», որը միավորում է սոնետների 15 փունջ՝ յուրաքանչյուրում 14 սոնետ, իսկ վերջին՝ «Բովանդակություն» վերնագրված փունջը կազմված է շարքի բանաստեղծությունների առաջին տողերից: Այս

առումով Վաչագան Վարդանյանը բերել է մեր բանաստեղծության մեջ նոր շունչ ու նոր ոգի, նաև սոնետների պսակի ինքնօրինակ կառուցվածք: Ընթերցողն այս գրքում կհայտնվի սոնետների հրաշք աշխարհում, մաքուր երազների անմար տեսիլների մեջ: Վաչագան Վարդանյանի սոնետը, վերացական պատկերները մերժելով, բացում է մարդկային սրտի ու սիրո գեղարվեստասկսսն անմահ մի աշխարհ: Բոլոր սոնետների մեջ և սոնետների պսակում մեր առջև բարձրանում է հեղինակը՝ իբրև երազող ու պայծառ հոգի: Նա պատմում է իր սիրո մասին և մեզ ասես հրավիրում է մի զարմանալի ճամփորդության, ուր ապրում է սիրո առեղծվածը:

Սերը բանաստեղծի համար երջանկության որոնումն է. նա աղոթում է սիրո լուսե տեսիլքի դեմ, հիացած երգեր է ձոնում սիրած էակին, հսկում նրա քունը մինչև լուսաբաց: Այս պայծառ հեղինակի հետ մենք էլ ենք զարմանում՝ ինչպես են մարդիկ ապրում առանց երազի: Սիրո մեջ միշտ էլ ցավ կա, բայց բանաստեղծին այն երևում է իբրև անվերջ բերկրանք. նա պատրաստ է այրվել, ողջակիզվել հանուն սիրո, անգամ եթե չհասնի սիրո անմար կրակին: Սերը փրկություն է կյանքի խավարից, և սոնետների այս պսակում սիրած էակի մի հայացքով գտնվում է կյանքի բանալին, արթանանում են ցնորքները կենսատու: Ցավն անգամ երանություն է, եթե երկինքդ լուսավորված է սիրով: Սիրո բերկրանքն է կյանքը դարձնում խնդություն: Վաչագան Վարդանյան գրողի այս աշխարհընկալումը նորություն է մեր բանաստեղծության մեջ:

Սիրո ծարավը մեկ ամոքում ունի՝ երգը.

Որ ծարավս զոնե երգով մեղմանար,
Պիտի բառերն իմ առնեի շողերից,
Արև ծնող կույս երկնքի դողերից,
Լույս հորինել սովորեի խանդավառ...

Սոնետների պսակը մի ամբողջական հիմն է սիրո: Ամբողջ բնությունը վերածվել է հանդիսատեսի և հիանում է սիրած էակի մի նայվածքով անգամ երջանկացող բանաստեղծի գոյությամբ: Բնությունը կենդանանում է՝ հրաշք սերը պահպանելու, սիրահարներին զուրգուրելու համար:

Բայց լեռներս ինձ կհիշեն տրտմագին,
Կակաչները՝ կարոտներն իմ բոցեղեն,
Երբ հյուր գնաս, քո ոտքերին կփարվեն,
Ու թե քաղես՝ կզգվեն քո ձեռքերին...

Գրքում կարևոր տեղ են զբաղեցնում Վաչագան Վարդանյանի պոեմները՝ «Հազարան բլբուլ», «Փոքր Մհերի մորմոքը», «Դյուցազնական» և այլն... Սակայն այս բոլոր արժեքավոր գրվածքների կողքին հատուկ գեղարվեստական ուժ և արդիական բովանդակություն ունի «Դեղին գիշեր»-ը:

Սա մի խոր փիլիսոփայական գրվածք է, որ բացահայտում է մեր ազգային կյանքի ողբերգությունը: Չար ուժերը մտնում են երկիր, հայտնվում են դեղին աչքերով մարդիկ, ովքեր ոսկու փայլով կուրացնում են հանրությանը: Դրամի, ոսկու ուժին այլևս անհնար է դառնում դիմակայելը: Գայլերի պես հայտնվում են խավարում, վառ աչքերով շրջում ամենուր, ավելանում են ժամ առ ժամ, իսկ ազնիվ հոգիները պակասում են: Ո՞վ պիտի դեմ կանգնի այս դեղին ժանտախտի առնետներին, ինչպե՞ս կարելի է դեղին ժանգից մաքրել մարդկանց սրտերը և փրկել խիղճն ու հոգին: Ճոխ ու հարուստ երկիրը կործանվում է ոսկու տենդից:

Պոեմի ավարտին հայտնվում է ծեր բանաստեղծը, որ ողբում է իր կորած երկիրը. զարհուրելի և խորհրդավոր պայթյունից պատերը ճաք են տվել, քաղաքի վրա իջել է դեղին գիշեր, հետո հասնում է ավելի աղետալի բոթը՝ դեղին դևը գրավել է ուրիշ քաղաքներ ևս, և ուր որ նա մտնում է, վարակում է մարդկանց հոգիները ոսկու տենդով: Եվ վերջում իբրև պատգամ հնչում է հեղինակի զգուշացումը՝ արթնացրե՛ք մարդկանց, դեղին դևը անցնում է քաղաքից քաղաք՝ գայթակղելով երկրի բնակիչներին: 1988 թվականին գրված «Դեղին գիշեր» պոեմը ազնիվ բանաստեղծի՝ Վաչագան Վարդանյանի հոգու ճիչն է, արթնության կոչ ու փրկության ելք:

Վաչագան Վարդանյանի երկերի երկրորդ հատորում զետեղված են բանաստեղծություններ և պիեսներ, նշանակալից է հեղինակի «Արցախական» շարքը, որ բերում է ըմբոստ ու հայրենապաշտ խոսք, մղում պայքարի հայրենի հողի ազատության համար:

Ընթերցողը գեղարվեստական գեղեցիկ էջեր կգտնի Վաչագան Վարդանյանի արձակի մեջ, կխորհի հայրենիքի ճակատագրի մասին, նաև այն մասին, թե ինչպես պիտի սիրել հայրենի հողն ու ճանաչել հարազատ բնաշխարհը:

Ընթերցողին սիրով հանձնարարում եմ այս երկերի ժողովածուն, որ ամբողջովին բխվածք է ազնիվ մի սրտի, որ իր ողջ կյանքը ապրեց հայրենիքի սիրով, նվիրվեց իր երկրին հարազատորեն, զենքը ձեռքին պայքարեց հայրենի հողի ազատության համար և ստեղծեց գեղարվեստական արժանավոր գործեր, որոնք մեր ուղեկիցն են դառնալու այս դժվար օրերին՝ պահպանելու համար սերն ու մարդկայնությունը, ազնվությունն ու սրբությունը, որոնց անհունորեն հավատում էր ազնիվ հայն ու քաղաքացին, տաղանդավոր գրող Վաչագան Վարդանյանը:

ԱԲԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ
Գրականագետ, Համահայկական
գրողների միության նախագահ

ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊՍԱԿ

ՓՈՒՆՋ - 1

1

Քո լույսով են ներկված երկու պատուհան,
Ես հասկացա լույսի հրճվանքը քեզնով,
Թե կույր էի, դարձա մեկից ես տեսնող,
Աչքերիս մեջ աստվածները արթնացան։

Ու հասկացա լույսի խորհուրդն իմաստուն,
Որ կաթել է մեծ խոհերում դարեդար,
Մթնում միայն լույսն է գտնում ճանապարհ,
Միայն նա է տանում դեպի սրբություն։

Բիբերիս մեջ լույս է, լույս է, լուսաբաց,
Արյանս մեջ՝ լույսի խայտանք ու հրդեհ,
Քոնն է, ինչ որ իմ հոգու մեջ ունեմ վեհ։

Քո այդ երկու պատուհանը երկփեղկված
Իմ լուսահորդ ուսուցիչներն են վսեմ,
Ես կանգնում եմ ամեն գիշեր նրանց դեմ։

2

Ես կանգնում եմ ամեն գիշեր նրանց դեմ,
Նրանք՝ երկու պատուհանդ անստվեր,
Ինձ տանում են հեքիաթային աշխարհներ,
Ուր ապրում են ջրանույշներ սիգաճեմ։
Սեր իմ, սեր իմ, դու տիրուհին ես նրանց

Եվ ամենքին սեր ու զութ ես բաժանում,
Քո ծով լույսից նրանց բաժին ես հանում,
Մենակ ինձ ես մթնում թողնում մթամած։

Նրանք՝ երկու պատուհանդ անստվեր,
Ինձ ասում են, որ դեռ էլի դիմանամ,
Չէ՞ որ մարդ եմ, ոչ ջրահարս փրփրածամ։

Էհ, ի՞նչ արած, մարդ եմ, այսպես կապրեմ դեռ,
Ամեն գիշեր այստեղ կգամ տխրադեմ,
Որ քո լուսե տեսիլքի դեմ աղոթեմ։

3

Որ քո լուսե տեսիլքի դեմ աղոթեմ,
Ես կփնտրեմ բառեր, ոճեր այնպիսի,
Որ քարն անգամ լեզու առնի ու խոսի,
Եվ դու, սեր իմ, լուռ չմնաս դու իմ դեմ։

Ա՜խ, թե հանկարծ լեզու առնի քարն անգամ,
Քո քար սիրտը պիտի էլի լուռ մնա,
Քարը քար է, լոկ մի լեզու ունի նա,
Դու՝ հազարը, ես ո՞ր մեկը իմանամ։

Այն ո՞ր բառն է, որով սիրտդ կբացեմ,
Հազար բառից այդ ո՞ր մեկն է, ո՞վ կասի,
Կորած ասեղ՝ խառնակույտի մեջ դեզի։

Մեկ է, էլի փնտրում եմ ես, կփնտրեմ,
Գտա կարծես, օ՜, հրաշք է իսկական,
Բայց բառերը ծուխ են դառնում ու չկան։

4

Բայց բառերը ծուխ են դառնում ու չկան,
Իսկ եթե կան, կույտ են անպետք ապարի,
Ինչքան փնտրես՝ ոսկու փայլ չես նշմարի,
Իմ հանքերը, ավա՛ղ, ամուլ դուրս եկան։

Էլ ես ինչպե՞ս, ի՞նչ բառերով պատմեմ քեզ
Անուրջներս, կարոտներս ու սերս,
Ծանր բեռին չեն դիմանում ուսերս,
Չգիտեի, որ տկար եմ ես այսպես։

Լուսե բառեր, աննյութ բառեր լինեին,
Մաքուր, ինչպես դրախտային այգաբաց,
Որ պատմեի անուրջներն իմ սիրարբած։

Հուրհրում է իմ կարոտը քո ճամփին
Անկարող եմ քեզ հաղորդել այն սակայն,
Իմ կարոտը բառեր չունի մեղսական։

5

Իմ կարոտը բառեր չունի մեղսական։
Ինչպես երկինքն ամպերից վեր՝ միշտ կապույտ,
Ինչպես մանկան երազանքը՝ աստղաբույլ,
Որ կախված է իր օրոցքին ոսկեգամ։

Իմ կարոտը մաքուր-մաքուր, ճերմակ ամպ,
Քո սպիտակ ցոլքով վառված լուսամփոփ,
Իմ կարոտը նաև մի որբ անսփոփ,
Մղկտում է քեզ կորցրածի դառնությամբ։

Գիշեր է կես, մութն է լալիս իմ չորս դին,
Աստղերն ասես արցունքներն են իր հրե,
Թե՞ այդ ես եմ իմ տրտունջները ցրել։

Ծանրանում է ցուրտ երկինքը իմ սրտին,
Բայց կարոտս էլի վառ է, էլի կեզ,
Քո այդ երկու պատուհանի լույսի պես։

6

Քո այդ երկու պատուհանի լույսի պես
Երազների լույսն է սրտից իմ հորդում,
Երբ որ դու կաս՝ կա անսովեր մաքրություն,
Որին, գիտես, մի օր պիտի հանդիպես։

Պատուհանից թե ինձ նայես ժպտադեմ,
Իմ կրծքի տակ մի երգեհոն կհնչի,
Իմ հոգում էլ սարսուռները արարչի
Հողում թաղված հունդի նման կպայթեն։

Դու ինձ կյանքի հունին կապող պորտալար,
Օրհնում եմ քեզ, քո ծնունդը աշխարհում,
Քեզնով ծաղկեց սերը և իմ թաղարում։

Կմնա ծիլը գեղեցկի միշտ դալար,
Չէ՞ որ կյանքս, ինչքան էլ սին թվա քեզ,
Քո այդ երկու պատուհանի լույսն է կեզ։

7

Քո այդ երկու պատուհանի լույսն է կեզ
Այս աշխարհում հարստությունն իմ միակ,

Ես հարուստ եմ արքաներից ոսկեթագ
Իմ խնդությամբ, տառապանքով իմ նույնպես։

Տիեզերքը կենտրոն ունի, ես գիտեմ,
Ինչպե՞ս, ինչպե՞ս ժխտողներին հավատամ,
Այդ զառամյալ գիտուններին անատամ,
Երբ քո երկու պատուհանին ծանոթ չեն։

Իմ հոգու մեջ մի արտույտ է ճռվողում,
Լույսով արբած լույսն է երգում աչքերիդ
Իր ցնծագին միակ երգով ճշմարիտ։

Այդ իմ խիղճն է, որ մաքրվում քո ցողում,
Ու երգում է, թե ես հարուստ եմ որքան,
Արթուն է նա, երբ ես քնած եմ անգամ։

8

Արթուն է նա, երբ ես քնած եմ անգամ,
Քո պատկերը, որ գալիս է երազիս,
Ծարավ եմ ես, դու ինձ համար օազիս,
Անապատի տոչորումով մոտդ գամ։

Նստեմ կողքիդ, աչքերիդ մեջ խոր նայեմ,
Քո աչքերի արևներից մոգական
Իմ ծիլերը ավազներից դուրս կգան,
Անապատս կխնկարկի հանց եդեմ։

Խմեմ շողդ, և չլինի դա երազ,
Ինչպես հիմա երազում եմ աչքով բաց՝
Քո այս երկու պատուհանի տակ կանգնած։

Թե ինձ տեսնես, գիտեմ, պիտի բարկանաս
Եվ այստեղից հեռացնես ինձ անդարձ,
Պատուհանից դուրս չնայես դու հանկարծ։

9

Պատուհանից դուրս չնայես դու հանկարծ,
Թեև ոչինչ փափագելի չէ այնքան,
Քան տեսնելը մազերիդ կեռ լուսնկան
Եվ աչքերդ՝ գիշերիս մեջ այգաբաց։

Քո ստվերն է ընկնում պատին ու սահում,
Երանի թե ընկներ այդպես ինձ վրա,
Փաթաթվեի քո ստվերով ես հիմա,
Ոչ մի ցրտից չէի մրսի աշխարհում։

Դու երևի պատրաստվում ես քնելու,
Ես քուն չունեմ, ինձնից խլել ես քունս,
Արթուն թողել միայն ցավս, մրմուռս։

Ես դեռ այստեղ պիտի կանգնեմ քեզ հլու,
Պատուհանից ցած չնայես, դե քնիր,
Ու չփշրես իմ երազը լուսալիր։

10

Ու չփշրես իմ երազը լուսալիր,
Ես կարող եմ ապրել անհաց ու անջուր,
Բայց կմարեմ ինչպես մի կայծ, փոքրիկ հուր,
Եթե չտա ինձ երազը հրդեհն իր։

Այդ ինչպե՞ս են ապրում առանց երազի
Բազմապիսի մանր-մունր հոգիներ,
Որ երազ են կեղծում ինչպես դրամներ
Ու վաճառում ինչքան սրտները կուզի։

Նրանք վաղուց քուն են մտել աներազ,
Խռմփոցն եմ լսում նրանց ես հիմա,
Սարսռում եմ ու ցնցվում եմ ակամա։

Դու էլ քնիր, իմ երազկոտ ջրահարս,
Երազները քո գլխի տակ իբրև բարձ.
Թող ես հսկեմ քունդ մինչև լուսաբաց։

11

Թող ես հսկեմ քունդ մինչև լուսաբաց,
Ինչպես որ քո այս արթնությունն եմ հսկում,
Թեկուզև ինձ ահ է պատում ու սոսկում,
Որ նկատես, կբարկանաս դու հանկարծ։

Մի բարկացիր, ես մեղավոր չեմ բնավ,
Այս ոտքերս այստեղից չեն հեռանում,
Այս իմ գիժը՝ իմ սիրտը չի ծերանում
Ու մնում է պատանորեն քեզ ծարավ։

Այս աչքերս են մնում կարոտ քո լույսին
Ու խմելուց չեն կշտանում ողջ գիշեր,
Ախր նրանք շատ ծարավ են, լուսասեր։

Երանի թե տեսնես նրանց այս պահին
Եվ ունկ դնես նրանց կանչին մտերիմ
Ու բարկացած չմարես լույսը, սեր իմ։

12

Ու բարկացած չմարես լույսը, սեր իմ,
Իմ հոգում էլ, գիտցիր, մի լույս կմարի,
Ես չեմ ուզում գերին լինել խավարի
Ու ինքս ինձ թվալ անլույս մի շիրիմ։

Իմ հոգին էլ հաղորդակից թող լինի
Ողջ էությամբ՝ տիեզերքի երակին,
Ի՞նչ է կյանքը, երբ կպած ես քո շեմքին
Ու քոնը չեն ծիրկաթիններն անհունի։

Քո լույսն առած՝ աստղից-աստղ թափառեմ,
Քո շողերից տամ խավարող աստղերին,
Որ ծիծաղեն՝ պայծառացած վերստին։

Եվ ես ինքս էլ պայծառանամ առավել։
Իմ զորավոր, ա՛խ, բարկացած մի մարիր
Քո այդ երկու պատուհանի լույսերն հիր։

13

Քո այդ երկու պատուհանի լույսերն հիր
Ունեն խաղաղ երազային ինչ-որ փայլ,
Թեկուզ մեռնեմ՝ նրանք էլի անայլայլ
Պիտի այդպես շողան մթնում սգակիր։

Եթե մեռնեմ, հող կդառնամ ես մի բուռ,
Իմ աչքերը կաճեն իբրև սև շուշան,
Հողից բխած երկու սևբոց ատրուշան
Քեզ կսպասեն մարմրումով մի տխուր։
Ու կերազեն ու կտենչան նրանք դեռ

Քո այդ երկու պատուհանի լույսերն հիր,
Որ վերջապես քո ցոլքի մեջ մտնեն նիրհ։

Եթե դաշտ գաս, տեսնես մի զույգ շուշաններ,
Չտրորես, հող չլցնես թերթերին,
Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին։

14

Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին
Քո այդ երկու պատուհանները մարած,
Դու քնեցիր, սակայն ես դեռ լուսարբած
Լուռ նայում եմ նրանց մթնած փեղկերին։

Պիտի կանգնեմ այդպես մինչև լուսաբաց,
Որ քեզ տեսնեմ առավոտյան ծագելիս,
Շատ եմ տեսել արևածագ, սիրելիս,
Քոնն ուրիշ է և ավելի լիարծարծ։

Օ՜, ինչ հրաշք, մթնած փեղկերը հանկարծ
Ձեռք են բերում այլ հրապույր մի ուրույն,
Որ լույսի պես կախարդում է ու բուրում։

Ես չեմ զգում, որ քո ջահերն են հանգած,
Կրկին, կրկին իմ աչքերի հանդիման
Քո լույսով են ներկված երկու պատուհան։

15

Քո լույսով են ներկված երկու պատուհան,
Ես կանգնում եմ ամեն գիշեր նրանց դեմ,
Որ քո լուսե տեսիլքի դեմ աղոթեմ,
Բայց բառերը ծուխ են դառնում ու չկան։

Իմ կարոտը բառեր չունի մեղսական,
Քո այդ երկու պատուհանի լույսի պես,
Քո այդ երկու պատուհանի լույսն է կեզ,
Արթուն է նա, երբ ես քնած եմ անգամ։

Պատուհանից դուրս չնայես դու հանկարծ
Ու չփշրես իմ երազը լուսալիր,
Թող ես հսկեմ քունդ մինչև լուսաբաց։

Ու բարկացած չմարես լույսը, սեր իմ,
Քո այդ երկու պատուհանի լույսերն հիր
Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին։

ՓՈՒՆՋ - 2

1 (16)

Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին
Հիշողության ջրհորները տրտմալից,
Ես հուշեր եմ դույլ-դույլ հանում այնտեղից,
Որ սփոփի գոնե մեկը իմ հոգին։

Իմ դույլերը արցունքներով են լեցուն,
Ինձ չեն բերում խմելու ջուր ոչ մի կում,
Ա՛խ, հուշերս այն են միայն հանկերգում,
Որ սատանան փոխարինեց աստծուն։

Ինչպե՞ս եղավ, որ սիրեցիր դու մեկին,
Որի համար մի թույր ունես ու մի բույր,
Թե կինն հողե, թե ջրահարսդ փրփուր։

Որի համար չեն հուրհրում քնքշագին
(Թող այդ բնավ քեզ բամբասանք չթվա)
Քո լույսերը, որպես արև գիշերվա։

2 (17)

Քո լույսերը, որպես արև գիշերվա,
Երկնառաք են միայն, միայն ինձ համար։
Քո լույսերում կանգնած այսպես դողահար՝
Թերթում եմ ես իմ հուշերը ծովափնյա։

Հողմը, ինչպես հսկա թռչուն խելագար,
Անցավ՝ թևերն անհուն ծովին բախելով,
Խառնվեցին ասես երկինք, հող ու ծով,
Այդ ո՞ր խիզախն ահեղ ծովին մոտ կգար։

Դու հերարձակ կանգնած էիր լերկ ափին,
Մեկ էլ հանկարծ նետվեցիր ծովն ալեվարս,
Ինչպես մի ճայ՝ անգիտակ իմ տագնապին։

Թույլ չտվիր լողամ կողքիդ, ջրահարս,
Լոկ աչքերդ ընկան մի պահ ինձ վրա,
Նրանց միջով եմ ես տեսնում ինձ ահա։

3 (18)

Նրանց միջով եմ ես տեսնում ինձ ահա՝
Քո աչքերի, քո հայացքի, քո ժպտի,
Մեր խմբի մեջ ինձ ընտրեիր դու պիտի,
Չէ՞ այդ էին ասում նրանք աներկբա։

Բայց ուրիշին դու կանչեցիր, որ լողա,
Քեզ հետ ճախրի ալիքներում փրփրադեզ,
Զուր հուսացի, որ ինձ պիտի նկատես,
Նա վախկոտ էր, ափին մնաց, խեղճ տղա։

Ես խենթի պես նետվեցի ջուրն ամեհի,
Որ հրդեհս մարեր ծովը իր գրկում,
Թե խեղդվել կար, թող քո կողքին խեղդվեի։

Տարերք էիր ծովի փրփուր տարերքում,
Նայում էի քո հոլանի թևերին,
Նրանց ցոլքում ստվեր թվում ինքս ինձ։

4 (19)

Նրանց ցոլքում ստվեր թվում ինքս ինձ,
Մղվում էի դարձյալ նրանց՝ թևերիդ,
Ինչպես առաջ՝ լուսամարմին ձևերիդ,
Երբ դեռ ջուրը չէր թաքցրել ինձանից։

Տեսիլքի պես կանգնած էիր քարափին,
Թռցնում էր, տանում հողմը մազերդ,
Ժայռից բուսած՝ քո դեմ հողմը անզոր էր,
Թեև քշել, մարդ չէր թողել լողափին։

Հողմն հեծում էր, ասում կարծես՝ ե՛կ, տանե՛մ,
Մերժման ցավից գալարվում էր, ոռնում խոլ,
Բայց անհողդողդ կանգնած էիր դու վսեմ։

Դու վեհություն, դու միշտ այդպես լուսացող,
Դու՝ լուսազօծ սարի կատար, իսկ ես՝ մեգ,
Դու՝ մաքրություն, ներիր, մթնում եմ մեկ-մեկ։

5 (20)

Դու՝ մաքրություն, ներիր, մթնում եմ մեկ-մեկ
Եվ անիծում քեզ տեսնելուս պահն անգամ,
Ի՜նչ վսեմ պահ, սեր իմ, ինչպե՞ս ես չզգամ
Իմ արյան մեջ նրա սարսուռը երբեք։

Ելնում էի, քո ժայռն ի վեր մագլցում,
Սակայն չէի ուզում արագ հասնել քեզ,
Որ ցնորքս քո հոնքերով չփշրես,
Ոչինչ, էլի մնայի թող ես ցածում։

Եվ չէր խոցվում սիրտս մտքից այդ նվաստ,
Ոչ ոք, ոչ ոք ավելին չէր հանդգնում,
Քան ցնորքում գուրգուրել քեզ, ով անհաս։

Ի՞նչ, այդ պահն եմ ես անիծել կամենում,
Անեծք ո՛չ այդ, այլ ա՛յս պահին, որ, անգին,
Չեմ սրբանում մտածելիս քո մասին։

6 (21)

Չեմ սրբանում մտածելիս քո մասին,
Նրանի՞ց է, որ քո հմայքն է նվազ,
Թե՞ ես՝ տկար, քայլ եմ փոխում հազիվհազ
Ու չեմ հասնում գեղեցկության երազին։

Այնպես, այնպես դյութում էիր բոլորին,
Երբ սիգալով գալիս էիր դու ծովափ,
Բոլոր կանայք քո դեմ խոտեր գունաթափ,
Այրերն՝ անզոր դիմանալու քո փայլին։

Ճգնում էի քեզ չնայել, որ հանկարծ
Չկոտրեմ սիրտն ընկերուհուս՝ «ախ»-ով տաք
Եվ անհասիդ համար կորցնեմ այն, որ կար։

Բայց նայեցի, և լույս ծնվեց կրծքիս տակ։
Հիմա ինչպե՞ս մտածելիս քո մասին
Խեթ եմ նայում թեկուզ քո մեն մի մազին։

7 (22)

Խեթ եմ նայում թեկուզ քո մեն մի մազին,
Ճաճանչներից մի պահ զրկում վսեմիդ,
Ահ, հուշերիս կոհակներով մաքրաշիթ
Դեռ լվանամ պիտի խոհերս և ինձ։

Փրփուրի մեջ դու բոցափայլ ջրահարս,
Պլլվում են քո թևերը փրփուրին,
Շուլալվում ես ծովի փոթ-փոթ ջրերին,
Քո գրկի մեջ ծովը սեղմած հանց երազ։

Կարդացել եմ քանի երգեր հանճարեղ,
Բայց սրանից հանճարեղ երգ չգիտեմ,
Օ՜, ի՜նչ հրայրք և ի՜նչ հրաշք փառահեղ։

Երգի տաճար, մեղավոր եմ ես քո դեմ
Ու թող փուլ գամ, չեմ աղոթել քեզ մեկ-մեկ
Ես՝ տաճարիդ ուխտավորս հուսաբեկ։

8 (23)

Ես՝ տաճարիդ ուխտավորս հուսաբեկ,
Հեծում եմ, որ մի խեղճի հետ ծով եկար,

Ասի՝ սուտ է, թե Ադամին այն տկար
Հուր Լիլիթը չի տվել սիրտն իր երբեք։

Խանդը սիրուց զորավոր է ավելի,
Ինչ շինում է տարիներով սեր-մեղուն,
Մի վայրկյանում քանդում է խանդը զեռուն,
Հար կրկնվող ողբերգություն սոսկալի։

Ինչո՞ւ, սեր իմ, թիկունքդ ինձ դարձրեցիր,
Իսկ երեսդ, իսկ երեսդ՝ ուրիշին,
Ծիր Կաթինի տեղ դրեցիր դու փոշին։

Խանդից քշված՝ քեզ վիհերը նետեցի,
Սուրբ չեն մնա սուրբ կամարներն էլ երկնի,
Եթե գահդ երկնքի մեջ չլինի։

9 (24)

Եթե գահդ երկնքի մեջ չլինի,
Չեմ ունենա ես այլ փարոս իմ ճամփին,
Եվ չեն բուրի ծաղիկների պես նրբին
Այս ծովափնյա իմ հուշերը՝ քեզնով լի։

Ներիր, եթե հայացքի դեմ իմ պղտոր
Երևացիր մեկ հրեշտակ, մեկ էլ քաջք,
Ախր, գիտե՞ս, խանդը ունի հազար աչք,
Որ ճիշտ տեսնես՝ երկու աչք է հարկավոր։

Ես մոռացա, որ կուլ տվեց ալիքն ինձ,
Դու ինձ փրկած՝ վերադարձար ծովը քո,
Երբ աչք բացի՝ անհաս էիր դու նորից։

Գեթ մնայիր, որ ասեի հավատքով՝
Դու չլինես՝ տիեզերքում բովանդակ,
Սուտ կդառնան աստվածները և պատրանք։

10 (25)

Սուտ կդառնան աստվածները և պատրանք,
Եթե հանկարծ մեռնի քո լույսն իմ հոգում,
Ա՛խ, թող մնա կրակդ միշտ բորբոքուն,
Այրվեմ անվերջ ու քեզ տենչամ մի ողջ կյանք։

Ողջակիզվեմ, ինչպես թիթեռն հրի մեջ
Ու չհասնեմ սիրուդ անմար կրակին,
Սուգի փոխվի նույնիսկ օրս ցնծագին,
Բայց հավատս բոցկլտա բորբ ու անշեջ։

Չեմ դիմանա, թե նա մեկ էլ մարմրի,
Կարկուտից ետ հազիվ կանգուն հասկ եմ ես,
Սեր իմ, սեր իմ, մեկ էլ կարկուտ չբերես։

Այսպես մեջտեղն ապրեմ սև ու կարմրի,
Միայն լույսիդ սև օր չգա եղեռնի,
Սրբությունը դեռ բողբոջում կմեռնի։

11 (26)

Սրբությունը դեռ բողբոջում կմեռնի,
Թե շող չառնի արեգակից քո պայծառ,
Ով էլ ընկնի, մնա միշտ վեր, իմ պարծանք,
Ով էլ ընկնի՝ տեղն հաջորդը կհառնի։

Արևն հանգչի, կմնա տեղն իր թափուր,
Աստղը չի տա մեր աշխարհին լույսը նույն,
Մեկ էլ այդպես հոգուս անհուն խորանում
Քո տեղն, իմ սեր, բաց կմնա ու տխուր։

Դու գահին ես, հավատում եմ հեքիաթին,
Հրեղեն ձին ցոլում է իմ երկնքում,
Եվ խրխինջն է ականջիս մեջ զրնգում։

Քոնն է, սանձիր հրեղեն ձին հավատիս,
Մնա միշտ վեր, ի՞նչ փույթ, եթե վերստին
Քո աչքերը չեն նայում իմ աչքերին։

12 (27)

Քո աչքերը չեն նայում իմ աչքերին,
Ինչպես հետին ստահակին չեն նայում,
Քեզնից շող իսկ մթնած սրտիս չի ընկնում,
Որ շեղակի ցոլք տամ, ինչպես ապակին։

Քո վեհության տեսիլքի դեմ ես կանգնած՝
Հնարում եմ, թե ինձ ժպտում ես հեռվից,
Իմ խոհերը մերթ ճախրում են բերկրալից,
Մերթ ասես թե խեղճ հավքեր են՝ ընկած ցած։

Հավաքում եմ դիակները ես նրանց,
Ինչքա՛ն փոքր են ու անիմաստ ու անշունչ՝
Ցոլքի պահի խոհերիս հետ բաղդատած։

Տանում եմ ես այս տանջանքն էլ անմռունչ։
Քո շողերը ինձնից փախչում են արագ,
Բայց տանջում են մեղքիս համար ինձ նրանք։

13 (28)

Բայց տանջում են մեղքիս համար ինձ նրանք՝
Քո աչքերի համր խոսքերն օրն ի բուն,
Այնքան մեղքեր վրաս առնել ստիպում,
Որ չեմ գործել կյանքում ոչ մի ժամանակ։

Ա՛խ, կան նրանք՝ այդ մեղքերը իմ հոգում,
Խորունկ ննջած, որ կարթնանան հենց դիպչես,
Դո՛ւ, դու պիտի այդ մեղքերից ինձ փրկես,
Ինչքան էլ որ անտես լինեն և թաքուն։

Թե դու ի՞նչ ես՝ չգիտես էլ երևի,
Քո մաքրությամբ դու հայելի ես անհուն,
Որի խորքում իմ ախտերն են ցոլանում։

Ինչպես կլոր, տաք ապակին արևի,
Այրող, տանջող, բայց և մաքրող ավելի,
Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին։

14 (29)

Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին,
Դու ես ինձ հետ՝ դարձած արյուն, էություն,
Քեզնով, սեր իմ, միայն քեզնով է լեցուն
Սրտիս ամեն մի բջիջը՝ լի ու լի։

Դրանից է, որ երբ ցուրտն է քեզ դիպչում,
Ես մրսում եմ գուցե քեզնից ավելի,
Ինչքան շատ ես դու մատնվում ցավերի,
Որ ամեն օր իմ մեջ մի բան է փլչում։

Թե ինձ այրեն՝ վերջին բջիջս ապրող
Քո պատկերը դեռ կպահի կենդանի,
Քե՛զ հետ վերջին հրաժեշտս կլինի։

Բայց հայացքս չի այրվի, դառնա հող,
Ծով ու երկինք երբ քեզ ժպտան, դու խորհիր՝
Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին։

15 (30)

Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին
Քո լույսերը որպես արև գիշերվա,
Նրանց միջով եմ ես տեսնում ինձ ահա,
Նրանց ցոլքում ստվեր թվում ինքս ինձ։

Դու՝ մաքրություն, ներիր, մթնում եմ մեկ-մեկ,
Չեմ սրբանում մտածելիս քո մասին,
Խեթ եմ նայում թեկուզ քո մեն մի մազին,
Ես՝ տաճարիդ ուխտավորս հուսաբեկ։

Եթե գահդ երկնքի մեջ չլինի,
Սուտ կդառնան աստվածները և պատրանք,
Սրբությունը դեռ բողբոջում կմեռնի։

Քո աչքերը չեն նայում իմ աչքերին,
Բայց տանջում են մեղքիս համար ինձ նրանք,
Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին։

ՓՈՒՆՋ - 3

1 (31)

Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին,
Որպես հայացքն իմ ճանաչած լավ մարդկանց,
Որ հարցնում են կյանքից, գրքից իմ բացած՝
Հո չե՞մ շեղվել, դավել մարդու իդեալին։

Շեղվել եմ շատ, դավել եմ միշտ, լքել հեշտ,
Իմ ծնունդով չի պակասել ոչ մի ախտ,
Ապրում եմ ես (թեև այսպես ապաբախտ)
Ու չեմ զոհվել մարդու համար կռվում թեժ։

Եվ դեռ հաճախ մտածել եմ, որ եթե
Կան շատ ախտեր, վսեմ գործեր կողք կողքի,
Ուրեմն այդ է օրենքը այս կյանքի։

Ա՜խ, անցել եմ ճանապարհս ես թեթև,
Հիմա այնպես ծանր ու դժվար եմ քայլում,
Սիրտս է բեկված քո աչքերի հայելում։

2 (32)

Սիրտս է բեկված քո աչքերի հայելում,
Ա՜խ, աստված իմ, ի՜նչ հայելի է դաժան,
Ծով է դարձնում կաթիլ մեղքս աննշան,
Հազար տեղից իմ հասակը ծալծլում։

Դու էլ, սեր իմ, մեղավոր ես փոքր-ինչ,
Ախր հոգիս ու ցնորքս ախտավոր

Չեն ստացել քեզնից սնունդ գեթ մի օր,
Որ լռեի, երբ սատանան կանչեր ինձ։

Ես խելագար, հունից ելած, ամայի
Ճաշակեցի կյանքի գինուց լոկ մի կում,
Հիմա այսպես ցրտից դողում եմ միգում։

Բայց իմ շուրջը, բայց իմ շուրջը, դու նայիր,
Ինչպե՛ս անհոգ տակառներ են գլորում,
Ուրիշները կյանքի գինին վայելում։

3 (33)

Ուրիշները կյանքի գինին վայելում
Ու պարում են ու քրքջում լիաձայն,
Ամեն կամար նրանց թվում ծիածան,
Ամեն կամուրջ խինդի նոր ափ է հանում։

Մի փեթակից մյուս փեթակն են վազում,
Ինչպես արջեր մեղվանոցում անպահակ,
Կհոշոտեն, եթե կոչես ստահակ,
Չէ՞ որ նրանց իրոք այդ է շատ սազում։

Հաճախ այնպես վարպետորեն են կեղծում,
Որ իբր թե ինձ պես մարդ են իրենք էլ,
Պատահաբար գինու պահեստ են ընկել։

Ու պարում են՝ գլուխներին նոր կեղծամ,
Ես խնջույքից հեռու կանգնած մի բեղվին,
Ես բարձում եմ նոր-նոր մեղքեր իմ սայլին։

4 (34)

Ես բարձում եմ նոր-նոր մեղքեր իմ սայլին,
Չի դիմանում սայլս՝ հոգուս բեռան տակ,
Շուռ է գալիս դեպի ձորը անհատակ,
Գլոր-գլոր բախվում մթանն ահալի։

Երբ որ շատ է եղունգիդ ցավը տանջում,
Կտրիր ցավող մատդ նույնիսկ ու ցավն էլ.
Իսկ ես, իսկ ես, ի՞նչ կարող եմ ես անել,
Լերդ ու թոքս է ցավը բռնել, չի ննջում։

Միայն մեղքեր, միայն տրտունջ անդադար.
Շատ եմ հոգնել տրտնջալուց ես արդեն
Եվ այս ցավից և խոհերից այս մթար։

Բավ չէ՞ նրանք իմ պատկերը աղարտեն։
Ա՛խ, կորցրած տեղը միակ բանալու՝
Ես փնտրում եմ մի դուռ՝ մեղքից դուրս գալու։

5 (35)

Ես փնտրում եմ մի դուռ՝ մեղքից դուրս գալու,
Միակ դուռը խենթանալն է երևի,
Կամ անզգա քունը գրկում ցուրտ հողի,
Կամ մինչ հատակ ապականումն իմ հոգու։

Երեք դռնից ես ոչ մեկը չեմ բացի,
Բաց էլ լինեն՝ ես ոչ մեկով դուրս չեմ գա,
Գիտեմ, նրանք ինձ կփրկեն, ճիշտ է դա,
Բայց ոչ մեկը ինձ դեպի քեզ չի բերի։

Ի՞նչ է մնում, արդյոք էլ ի՞նչ իմ հոգուն,
Տանջվել ու լալ, հուսալ ու լալ անդադար,
Գուցե հանկարծ լույս կցոլա մի պատառ։

Կարծես այնտեղ մի շող տալիս է ոսկուն,
Օ՜, ինչ բերկրանք, ձեռքս պարզում եմ երկինք,
Մխիթարվում հազիվ բացված ճեղքով իսկ։

6 (36)

Մխիթարվում հազիվ բացված ճեղքով իսկ
Ու կարծում եմ իմ գիշերը կցնդի,
Շող կտեղա նոր առավոտն հավատի
Իմ խոհերին, իմ հասկերին ոսկեքիստ։

Բայց խավարս մակարդվում է ավելի,
Եվ իմ շնչած օդն է ասես մակարդվում,
Հոգիս էլի թպրտում է թակարդում
Իմ չգործած և իմ գործած մեղքերի։

Չգործածն էլ գործածի է հավասար,
Նա էլ նույնքան հոգեղավ է, նույնքան ժանտ
Եվ գործածից հազար ու բյուր անգամ շատ։

Իմանայիր գոնե ինչքան է դժվար
Տանջվել ծարավ, զրկված մի կում ջրից իսկ,
Ուրիշները արդեն հարբել են նույնիսկ։

7 (37)

Ուրիշները արդեն հարբել են նույնիսկ
Ու թքում են սուրբ երկնքի երեսին,

Մեկին ահա ցեխակոլոլ բերեցին,
Ո՜նց է սողում իր ցեխի մեջ երջանիկ։

Նայեց նա ինձ ու մռլտաց՝ ապիկա՜ր,
Նայեց նորից ու շպրտեց՝ ճգնավո՜ր,
Կրկնեցին նույնը աչքերն ահավոր.
«Ո՞ւմ էիր պետք, ինչո՞ւ աշխարհ դու եկար»։

Ես պետք էի, որ կյանքում մեկն էլ զգար
Ինչ է մութը, ինչ է լույսը, սերը՝ ինչ,
Խղճար նրան, սեր իմ, բարձրից քո դյութիչ։

Ասեր նրան, որ խեղճ է շատ ու տկար,
Չգիտի, թե ինչպես լույսիդ նշույլում
Ես իմ փոքրիկ շողքն եմ կում-կում վայելում։

8 (38)

Ես իմ փոքրիկ շողքն եմ կում-կում վայելում,
Որով սիրտս է լցվում լույսդ շիթ առ շիթ,
Ես պարզվում եմ սրբագործող շողերիդ,
Ինձ մաքրվող տեսնում քո ջինջ հայելում։

Ուրիշներին լինեն փառք ու վայելում,
Իսկ ինձ բավ է, որ սրտիս մեջ թրթռա
Մաքուր մի շող, սիրո մի հույս, մի քուրա,
Որ գեթ մի քիչ ծալ-ծալ սառույցն է հալում։

Ես հպարտ եմ լույսի ցոլքով այս փոքրիկ,
Հպարտ նաև իմ այն հույսով, որ դեռ նա
Պիտի քիչ-քիչ մի դռան չափ լայնանա։

Ես հպարտ եմ տագնապներով իմ նույնիսկ,
Որ անընդհատ, անգամ գրկում անուրջի
Վախենում եմ լույսի այդ ցոլքն էլ կորչի։

9 (39)

Վախենում եմ լույսի այդ ցոլքն էլ կորչի,
Ինչպես հանկարծ վերջին հույսն է խավարում,
Վերջին ճիչը անապատի մեջ լռում,
Ցուրտ քարայրում հանգչում կրակը վերջին։

Ցուրտը ինչ է՝ ես լավ գիտեմ, տեսել եմ,
Մրսում էի երեկ մեղքի քարայրում,
Կրակից էլ դաժան էր ցուրտը այրում,
Մինչև հիմա հազում եմ ես, մրսել եմ։

Սեր իմ, որ դու իմ վիճակը հասկանաս,
Պիտի լինես այդ քարայրում մի անգամ
Ու միջանցիկ քամուց դողաս մի կես ժամ։

Բայց չեմ ուզում, այդ չեմ ուզում, իմ անհաս,
Եթե պետք է՝ էլի մրսեմ թող հիմա,
Ե՛ս որբ մնամ խավարի մեջ գիշերվա։

10 (40)

Ե՛ս որբ մնամ խավարի մեջ գիշերվա,
Դու լուսահորդ արևի հետ ճառագիր,
Լույսի դու մայր, լույսի դուստր թագակիր,
Այնպես արա՝ սրտերում մութ չմնա։

Չէ՞ որ, շող իմ, եթե դու շա՛տ ուզենաս,
Կհալածես մութը բոլոր սրտերից,
Ինչպես արփին, քո քույրիկը, որ քնից
Շտապ ելնում, լույս է դարձնում աշխարհն այս։

Դու իմ մութն էլ մի ժպիտով կցրես,
Մոռացել ես դու ժպտալը երևի,
Թե՞ ժպտալն ինձ՝ նման է կեղծ բարևի։

Պետք չէ, պետք չէ, դու, դու մնա, միշտ քեզ պես,
Քեզ մի կեղծիր, ու ես էլի, այդ ոչինչ,
Մնամ կարոտ մի հոգեբուխ ճաճանչի։

11 (41)

Մնամ կարոտ մի հոգեբուխ ճաճանչի,
Հազար անգամ խոժոռ նայես ինձ վրա,
Ոչ թե այդպես կրծքիս տակ խիղճս եռա,
Եվ արյունս երակներիս մեջ հանգչի։

Մի կին, երեկ մեռնող արև մի գունատ,
Այս առավոտ է՛լ չծագեց, չժպտաց,
Մայր մտնելիս նրա աչքերն էին թաց,
Սիրում էր ինձ, ինչպես ես քեզ՝ հուսահա՛տ։

Կարող էի այն խոսքերը ես գտնել,
Որոնք պիտի նրա ցավը մեղմեին,
Ու նա ապրեր, թախծոտ աչքերն ապրեին։

Մեռած աչքերն հիմա վրաս է հառել,
Ես հալածված՝ վարում, թողնում եմ նրան,
Մագլցում եմ մտքով կատարը լեռան։

12 (42)

Մագլցում եմ մտքով կատարը լեռան,
Որ չխեղդվեմ իմ իսկ հեղեղ արցունքից,
Մեծ խոհերի երկնագնա բարձունքից
Ցածի վշտերն ինձ լոկ մանրուք երևան։

Բայց զուր, էլի տեսնում եմ ես, որ ահա
Անզգա դին իջեցրին գերեզման,
Սառն, անտարբեր կոխկռտեցի ես նրան
Ու դեռ հողը պահում է ինձ իր վրա։

Ա՛խ, թե մեռնեմ, գուցե թվա քեզ հանկարծ,
Որ ես էլ քո՛ սիրուց մեռա վաղաժամ,
Քո կրծքում էլ զարթնի մորմոքն այս դաժան։

Ետ գնա, ձեռք ինքնակործան, իջիր ցած...
Ելքը գտա... Գիրկն եմ փախչում գալիքիս,
Բայց այնտեղ էլ նորից իմ մեղքն է լալիս։

13 (43)

Բայց այնտեղ էլ նորից իմ մեղքն է լալիս,
Բոլոր, բոլոր իմ օրերում դեռ չեկած...
Ինչո՞ւ ամպ չեմ, ամպը ահա հեկեկաց
Եվ ուր որ է՝ թեթևացած կփայլի։

Անձրևն իջավ մայթի փոշոտ ծառերին,
Իմ բալիկներ, մոր պես գթոտ ձայնեց նա,
Կեղտոտվել եք, լողացնեմ ձեզ հիմա,
Ծարավել եք, ես ձեզ ջուր տամ երկնային։

Ինչո՞ւ ամպ չեմ, թեթևանամ լալով ես,
Կամ արցունքս այնքան աղի չլինի,
Ծարավ կոտրի, ցավեր լվա ու տանի։

Ինձ կփրկես, սեր իմ, լոկ դու, թե ուզես,
Որ էլ չզգամ մի անզգա գերեզման՝
Իմ աչքերը, իմ արցունքները վրան։

14 (44)

Իմ աչքերը, իմ արցունքները վրան՝
Մի տղամարդ ցեղ է գալիս դարերից,
Հագուստները ծվատվել են շանթերից,
Սրտում կսկիծ ու ոտքերին վերքեր կան։

Լալիս էր նա, բայց ոչ իբրև լալկան կին,
Այլ՝ տղամարդ, խոշոր-խոշոր արցունքով,
Սրբում էր նա թաց աչքերը մի ձեռքով,
Մյուսը մեկնում էր գութանին ու լույսին։

Ես այդ ցեղի մի զավակն եմ, օ՜, իմ սեր,
Թեև այսպես արտասվում եմ դառնակեզ,
Բայց մղվում եմ դեպի լույսը, դեպի քեզ։

Ես մեղավոր, իսկ դու արդար, դու միշտ վեր,
Դու դատավոր եղիր վերից հյուլեիս,
Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին։

15 (45)

Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին,
Սիրտս է բեկված քո աչքերի հայելում,

Ուրիշները կյանքի գինին վայելում,
Ես բարձում եմ նոր-նոր մեղքեր իմ սայլին։

Ես փնտրում եմ մի դուռ՝ մեղքից դուրս գալու,
Մխիթարվում հազիվ բացված ճեղքով իսկ,
Ուրիշները արդեն հարբել են նույնիսկ,
Ես իմ փոքրիկ շողքն եմ կում-կում վայելում։

Վախենում եմ լույսի այդ ցոլքն էլ կորչի,
Ե՛ս որբ մնամ խավարի մեջ գիշերվա,
Մնամ կարոտ մի հոգեբուխ ճաճանչի։

Մագլցում եմ մտքով կատարը լեռան,
Բայց այնտեղ էլ նորից իմ մեղքն է լալիս,
Իմ աչքերը, իմ արցունքները վրան։

ՓՈՒՆՋ - 4

1 (46)

Իմ աչքերը, իմ արցունքները վրան՝
Ծիածանը հանգավ, թաղվեց երկնքում,
Աղբյուրների երգը տխուր է զնգում,
Չորանալու ահը պատել է նրանց։

Կռունկները դեպի հարավ չվեցին,
Ի՞նչ իմանաս, ո՞րն է նորից ետ գալու,
Հրաժեշտի նրանց երգով ահազդու
Իմ օրերը, իմ բառերը լցվեցին։

Երգը գնաց, տիեզերքում թափառեց,
Ասուպահար վերադարձավ ինձ էլի,
Մահվան դեղին սարսափներով աչքը լի։

Կանգնեց շեմիս, երգը այսպես բարբառեց.
- Քեզ պես տանջվում, քեզ պես տնքում է անվերջ,
Գալարվում է տիեզերքը ցավի մեջ։

2 (47)

Գալարվում է տիեզերքը ցավի մեջ,
Ես տեսնում եմ միայն երկինք մի խաղաղ,
Լուսնյակ գիշեր, անուշ աստղեր, լույսի խաղ,
Արև, անձրև, ծիածաններ վառ ու պերճ։

Ո՞վ է կախել վարագույրն այդ վիթխարի
Տիեզերքի վրա դարեր ու դարեր,
Նրանք ասես վարագույրի նկարներ՝
Խաբում են ինձ ծնված օրից աշխարհի։

Վարագույրից այն կողմ մահ է ու հրդեհ,
Ես փորձում եմ դիմակները ծիծաղի,
Կարծես իմ մեջ նույն մահը չէ կատաղի։

Ժայռերն ինչպե՜ս երերուն են ու հարդե,
Ես ո՞ւմ հենվեմ, երբ որ գուղձի նման խեղճ
Փշրվում են աստղաբույլերը անվերջ։

3 (48)

Փշրվում են աստղաբույլերը անվերջ,
Աստղը աստղին հոշոտում է անհունում

Կամ դարերի հոլովույթից դժգունում,
Թե դժգույն է՝ էլ աստղ չէ (ոչ մի վեճ)։

Բայց աստղերը, որ բախվում են մեկմեկու,
Ոչ դժբախտ են, ոչ երջանիկ դրանից,
Նրանց համար չկա ոչ մահ, ոչ կսկիծ.
Չգիտեն էլ, որ կան իրենք երկնքում։

Սիրտ իմ, սիրտ իմ, եղիր այդպես անզգա,
Բավ է տանջվես տեղն էլ անսիրտ աստղերի,
Օտար վիշտը քոնի նման քեզ այրի։

Ո՞վ անիծեց, որ միշտ զգամ, թե ցավ կա,
Պետք է ախր լիներ պահ էլ մոռացման,
Ուր նայում եմ՝ մոխրի բուք է անսահման։

4 (49)

Ուր նայում եմ՝ մոխրի բուք է անսահման,
Արեգակն էլ մի օր պիտի չլինի,
Փերթ-փերթ կորչի երախի մեջ անհունի
Ու չունենա նույնիսկ շիրիմ-գերեզման։

Բայց նա ինչպե՜ս հուրհրատում է կայտառ,
Միլիարդ դարեր իր ուսերին չեն ասես,
Խաղ է անում չձանձրացող մանկան պես,
Միշտ նույն ճամփին՝ արևելքից արևմար։

Ի՞նչ եմ նստել ու թախծում եմ ես մոլոր,
Մոխրի բքից մաքրեմ աչքերս հոգնած,
Հո մանուկ չե՞մ, ինձ ապրելու ի՞նչ մնաց։

Մինչ թախծում եմ հուսակտուր ու անզոր,
Սիրտս մաշում կործանման մեջ անընդհատ,
Մոխիրներից արևներ են ծնվում արդ։

5 (50)

Մոխիրներից արևներ են ծնվում արդ,
Ինչպես մի օր մեր այս արևն է ծնվել,
Նա բոլորից գեղեցիկ է առավել,
Զուր չի վատնում կյանքի ոչ մի ակնթարթ։

Ինչ որ ունի, ողջը տալիս է մարդուն,
Այնպես է նա սիրահարված աշխարհին,
Նկարում է նույն լեռները իր պես հին,
Նույն դաշտերը, նույն գետերը լայնահուն։

Մթան քողը ետ է տանում շող մատով,
Չի ձանձրանում նույնն ամեն օր տեսնելուց,
Ինչպես, սեր իմ, ես քո աչքերն արշալույս։

Տեսնես էլի նա կնայի՞ ժպտալով,
Թե իմանա արևներ են ծնվում պերճ,
Որ վերստին մոխիր դառնան անընդմեջ։

6 (51)

Որ վերստին մոխիր դառնան անընդմեջ,
Ի՛նչ բոցեր են տիեզերքում բռնկվում,
Մրրիկներ են հրդեհի պես տարածվում,
Ինչ անում են՝ ողջն անիմաստ և անտենչ։

Եկել եմ ես նրանց տենչանք հաղորդեմ,
Ասեմ՝ բոցերն ու հրդեհներն այդ պես-պես
Արծարծում է տիեզերքը հողմի պես,
Որ պերճ լինի ինքն իր աչքում ու վսեմ։

Իմ սիրտը ի՜նչ, ամայության սարսափին
Չի դիմանում մինչև անգամ այդ հսկան,
Կյանք է ծնում ամեն րոպե ու վայրկյան։

Բայց ականջը հազիվ հպած սոսափին՝
Փուլ է գալիս ստեղծածը և անվերջ
Դղրդում է տիեզերքը մահվան մեջ։

7 (52)

Դղրդում է տիեզերքը մահվան մեջ,
Լաց է լինում արցունքներով ասուպե,
Ոչ ոք չկա նրա վիշտը սփոփե
Ու խոստանա նրան խաղաղ գեթ մի էջ։

Ինչ կար երեկ, այսօր չկա, չի եղել,
Ինչ կա հիմա՝ պղպջակ է մի օրվա
(Սեր իմ, թե գաս, գուցե հանկարծ չթվա,
Որ զուր ջանք է խավարի մեջ կայծ պեղել)։

Միտքս՝ ինչպես սառած թռչուն, ընկած վար,
Երակներիս միջով սառույց է հոսում,
Ես մի քառս այս սառցեղեն քառսում։

Չեն ջերմացնում ինձ արևներն հրավառ,
Ա՜խ, նրանք էլ վաղը մոխիր են անհայտ,
Կան և չկան, կան թե չկան՝ մեկ է այդ։

8 (53)

Կան և չկան, կան թե չկան՝ մեկ է այդ,
Կուզես եղիր Բեթհովենի նման մեծ,
Կամ թե քամուց երգող եղեգ սնամեջ,
Մեկ է՝ չկաս և միայն դա է հաստատ։

Թե լինեի ես Բեթհովեն վիթխարի,
Զայն կտայի իմ տաճարի խորանից՝
Հեյ դու, եղեգ, մի սփոփվիր դրանից,
Տրորեցին քեզ ոտքերը ոչխարի։

Բայց եղեգ եմ ու դժվար է ավելի
Տեսնել ինչպես ինձ նման է ամեն բան,
Անհաստատ են, սուտ են և՛ կան, և՛ չկան։

Ա՜խ, լինեի իմ մեծության ստով լի,
Չնվայի, չթվայի պահ մի գեթ
Այս վիթխարի քառսի մեջ ես մի կետ։

9 (54)

Այս վիթխարի քառսի մեջ ես մի կետ,
Հանց եղեգն անիծված եմ ի ծնե,
Դողում եմ ես հագուստների մեջ ձնե
Եվ ամառվա տապին դողում օդի հետ։

Շանթն է շողում՝ դառնում եմ ես մի բուռ վախ,
Կուչ եմ գալիս հրդեհվելու երկյուղից,
Ամպն է գոռում՝ սրսփում եմ ես վախից,
Ամեն հողմից խոնարհվում եմ անհապաղ։

Էխ, ինձ վախ է առթում ճաճանչն իսկ աստղի,
Կարծում եմ, թե կբռնկվեմ, կծխամ,
Կյանքս ինչքան է վարանոտ ու տարտամ։

Բայց ճաճանչն ի՞նչ, օվկիաններ կան կատաղի,
Տիեզերքն է ալիք-ալիք գալարվում,
Ում ինչ պետքն է՝ կորչում եմ, թե հայտնվում։

10 (55)

Ում ինչ պետքն է՝ կորչում եմ, թե հայտնվում,
Մահվան առաջ ողջն են շվար ու մոլոր,
Շիրմափոսը լցնող ձայնից ահավոր
Խլացել են ականջները աշխարհում։

Հողի վրա քայլող ամեն մեկիս տեղ
Միլիոն մարդ կա հիմա պառկած հողի տակ
Եվ մեծեր կան, որոնք չունեն հիշատակ,
Շա՛տ վաղուց են փայլել անցել հանց կանթեղ։

Ա՛խ, կարող է գեղեցկությունն էլ կորչել,
Ո՞ւմ անիծեմ կամ ո՞ւմ քարշ տամ դատարան,
Եվ դատավորն ո՞վ է, չկա պատասխան։

Ումի՞ց, սեր իմ, ես զանգատվեմ, երբ դու էլ
Չես տեսնում, թե ինչպես կորչում եմ անհետ
Կամ երազում լինել կողքիդ, միշտ քեզ հետ։

11 (56)

Կամ երազում լինել կողքիդ, միշտ քեզ հետ,
Կամ ուժասպառ քեզ մոռանում եմ իսպառ,

Իմ իսկ ձեռքով դառնում եմ ես սիրասպան,
Դու կաս, չկաս՝ մեկ է դառնում այնուհետ։

Մեկ են դառնում մահ թե ծաղկում, թուր թե թույն,
Մեկ են դառնում սիրո խոստում, թե խաբկանք,
Չի ղողանջում իմ հոգու մեջ ոչ մի զանգ,
Նույնիսկ եթե զանգահարը դու ես, դու։

Երբ ես շատ եմ ուզում լինել քո կողքին,
Հենց շատի մեջ կան մոռացման նշաններ,
Ինչպես ջրի շատ գալու մեջ՝ հատնելն իր։

Անվերջ մոխիր, քամահրանք նոր ու հին,
Ո՞նց դիմանամ, սիրտս է ծյուրվում ակնատում,
Հոգնում եմ ես այս մոխրի մեջ անհատնում։

12 (57)

Հոգնում եմ ես այս մոխրի մեջ անհատնում,
Ու հոգնելուց նույնպես հոգնում մի օր էլ,
Ցանկանում եմ քարն իմ սրտից գլորել,
Բավ է ինչքան ինձ կորստյան եմ մատնում։

Ելք եմ փնտրում, ելքը դարձյալ դու ես, դու,
Քո աչքերն են, որ ակնարկով երկնային
Ցույց են տալիս ո՛ւր է կյանքի բանալին,
Որտե՛ղ գտնեմ ցնորքներս կենսատու։

Լեռնալանջս էլի փշով է լցվում.
Ես խոցվելով, ծակծկվելով բյուր տեղից՝
Բարձրանում եմ տանջանքի լեռս նորից։

Իմ արյունն է ծորում հողին ու ծծվում,
Բայց ելնում եմ դեպի կատարը հեռու,
Քեզ եմ գալիս, սակայն ինձ չես կանչում դու։

13 (58)

Քեզ եմ գալիս, սակայն ինձ չես կանչում դու,
Ես իզուր եմ պահում ականջս ձայնի,
Հույսս՝ ինչպես մարդ ավազում սերմ ցանի,
Ծիլ չի տալիս, զուր է ջանքս ջրելու։

Իսկ թե հանկարծ այնպես լինի, որ ծիլ տա,
Ինչպե՞ս պահեմ թերթիկները հույս-վարդիս,
Որ չթափվեն ձյունաբքից ու ցրտից,
Ա՛խ, փռել ես շուրջս ձմեռ դու հիմա։

Ձմեռն ինչ է՝ գարնան դիակն է սառած
Ու փաթաթած ցուրտ պատանքով սպիտակ,
Տաք օրեր եմ եկել փնտրում նրա տակ։

Ետ եմ տանում ձյունը շերտ-շերտ ծանրացած,
Իմ նոր գարնան ձնծաղիկն եմ որոնում,
Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում։

14 (59)

Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում,
Ու չգիտես, որ ունկնդիր քո խոսքին
Գլորվում եմ մութ աշխարհը ես կրկին,
Ուր ճիշտն է սուտ, լիքը՝ դատարկ, պերճն՝ անգույն։

Ունայնության հողմն է փչում վերստին,
Քշում-մարում աստղերն իբրև խեղճ կայծեր,
Տիեզերքի քաոսի մեջ տարուբեր՝
Ես ճոճվում եմ ուղեկորույս ու անթի։

Հազիվ էի գտել փարոսս մթնում՝
Քո աչքերը, որ ուզեին թե հանկարծ,
Ափ հանելով կդարձնեին ինձ աստված։

Ի՞նչ արեցիր, անգամ ձեռքդ չեմ տեսնում,
Ինձ խավարին մատնող ձեռքը քո դաժան՝
Իմ աչքերը, իմ արցունքները վրան։

15 (60)

Իմ աչքերը, իմ արցունքները վրան՝
Գալարվում է տիեզերքը ցավի մեջ,
Փշրվում են աստղաբույլերը անվերջ,
Ուր նայում եմ՝ մոխրի բուք է անսահման։

Մոխիրներից արևներ են ծնվում արդ,
Որ վերստին մոխիր դառնան անընդմեջ,
Դղրդում է տիեզերքը մահվան մեջ,
Կան և չկան, կան թե չկան՝ մեկ է այդ։

Այս վիթխարի քաոսի մեջ ես մի կետ,
Ում ինչ պետքն է՝ կորչում եմ, թե հայտնվում,
Կամ երազում լինել կողքիդ, միշտ քեզ հետ։

Հոգնում եմ ես այս մոխրի մեջ անհատնում,
Քեզ եմ գալիս, սակայն ինձ չես կանչում դու,
Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում։

ՓՈՒՆՋ - 5

1 (61)

Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում,
Փուչ սերմեր են քեզ հասնելու ջանքերս,
Շատ եմ լսել այդպիսի ցուրտ խոսքեր ես,
Ցուրտ խոսքերի բուք-բորան է իմ հոգում։

Ես սառչում եմ, իսկ դու՝ հուրդ ոսկեշող,
Ավելի ես գեղեցկանում, հեռանում,
Ինչպես աստվածն իր պաշտողի բերանում՝
Ցած չես իջնում իմ շուրթերից աղոթող։

Ինչքան շատ եմ ես քեզ ձգտում կարեվեր,
Այնքան շատ ես դու ինձնից վեր բարձրանում
Եվ չհալչող ձյան պես վերում կարծրանում։

Ցուրտ քամու դեմ անդուռ հյուղակ եմ ավեր,
Մի՞թե քիչ է, որ դեռ էլի մահազդու
Հազար ձևով քո մերժումն ես կրկնում դու։

2 (62)

Հազար ձևով քո մերժումն ես կրկնում դու,
Վերջին հույսիս սանդուղքներից ցած նետում
Դեպի նկուղ, մի հինավուրց գինետուն՝
Ինձ գինու մեջ մոռանալու, կորցնելու։

Գինին ահա իմ կոկորդով իջնում ցած,
Բարձրանում է դեպի ուղեղս ահա,

Էլ արյուն չէ, այլ կրակ է ու լավա,
Որ հոսում է երակներով իմ սմքած։

Պտտվում են և՛ առաստաղ, և՛ պատեր,
Բոլոր իրերն ու տենչանքները համայն՝
Խառնիխուռն, թավալգլոր, անկայան։

Միայն դու ես էլի՝ կանգնած աներեր,
Շողում ես դու էլի ինձնից շատ հեռու,
Բայց իրերի հորձանքի մեջ ահարկու։

3 (63)

Բայց իրերի հորձանքի մեջ ահարկու
Ես լսեցի քո ոտնաձայնը հանկարծ,
Արդյոք գինուց իմ ուղե՞ղն է բորբոքված,
Թե՞ իսկապես քո տաք շունչն եմ ես զգում։

Չէ, սեղանիս գինու դատարկ շիշն է լոկ
Եվ մի բաժակ, որ ես հենց նոր պարպեցի,
Քո տեսիլքը և բուրմունքդ կանացի
Արարել էր իմ կարոտը անամոք։

Հեյ, մատռվակ, էլի գինի և օղի,
Այնքան հարբեմ, որ դու աչքիս Նա թվաս,
Բայց ոչ Նրա նման հեռու և անհաս։

Մոտիկ նստիր, այսպես մոտիկ, կողք-կողքի,
Դու չես, Նա ես, և իրերի պտույտում
Միակ հաստատն աչքերն են քո անխոստում։

4 (64)

Միակ հաստատն աչքերն են քո անխոստում՝
Գինուց մթնած երկու պղտոր ապակի,
Հեյ, մատռվակ, դա լոկ խոստում է կրքի,
Մի շփոթիր վեհ սիրո հետ իմաստուն։

Դու չես սիրում, քո խոսքերի խավարում
Առկայծում են մեղքի աստղերը միայն,
Դու չլսած մաքուր սիրո ոտնաձայն՝
Ինչքան հեշտ ես իմ թևի տակ ծվարում։

Ես քեզ կասեմ ինչ է կոճղը գինետան՝
Հին դարերից եկող սեղանն հնառճ,
Խաբկանք է լոկ, ինչպես որ դու Նա չես, ո՛չ։

Որտե՞ղ գտնեմ քաղցրությունը արբեցման,
Բացի Նրա գինովցնող աչքերից,
Նրանց ցոլքում մոռանում եմ ինքս ինձ։

5 (65)

Նրանց ցոլքում մոռանում եմ ինքս ինձ,
Անուշ ցոլքում ձյունաճերմակ թևերի,
Դու, մատռվակ, ցածր ես՝ նման ստվերի,
Նա երկնքով սահող ամպ է լուսալից։

Բայց ինչո՛ւ եմ քեզ բաղդատում Նրա հետ,
Հրճվում կարծես թերիներով քո անբավ,
Մեկի համար գուցե կատար ես իրավ,
Եվ փնտրում է քեզ հասնելու արահետ։

Նա տառապած իմ խաչեղբայրն է գուցե,
Խաչ ես հանել Հիսուսի պես դու նրան,
Իջեցրու նրան փայտից այդ մահվան։

Սիրիր նրան, ունայնության մեջ սառցե,
Տեսել է նա խաչափայտեր օրն ի բուն
Եվ իրերի հոսքն ու մոխիրն անկայուն։

6 (66)

Եվ իրերի հոսքն ու մոխիրն անկայուն
Գինու ձեռքով զուր եմ վանել ես ջանում,
Նույն կածանը նույն տեղում է վերջանում,
Էլի դեղնած տերևների պարսն է նույն։

Ո՞վ է ճիշտը՝ այս հարբա՞ծը իմ դեմի,
Որ կարծում է, եթե հանկարծ ինքն ուզի,
Ձեռքի շարժմամբ երկինքն անգամ կկիսի,
Թե՞ ես՝ տրվածս դեղնաշունչ խոկումի։

Ես չեմ հոգնել, ես փնտրում եմ պատասխան,
Թե չէ ելնեմ, հարբածի հետ բացեմ վեճ,
Նա կխրի իր դանակը սրտիս մեջ։

Ես չեմ կարող, սեր իմ, լինել անձնասպան,
Չէ՞ որ ինձնով վեհությունդ եմ վկայում,
Ապրում եմ ես ինչ-որ ուրիշ ներկայում։

7 (67)

Ապրում եմ ես ինչ-որ ուրիշ ներկայում,
Ուր հրաշքը բանուգործ է առտնին։

Չի ես եմ այն արարողը անքնին,
Ես եմ դատում, ես՝ պատժում կամ խնայում։

Նախ հաղթում եմ սիրո անգութ իմ ցավին,
Հետո բոլոր ցավերին եմ ես հաղթում,
Բայց երբ գիտես, որ կա վերջում պարտություն,
Հաղթանակը հաղթանակ չէ տակավին։

Ես պարտության գաղափարն եմ սպանում
Ու դարձնում եմ ողջ աշխարհը գինետուն,
Ուր գինու տեղ սերն է առթում խնդություն։

Ո՞նց են ապրել մարդիկ նախկին աշխարհում,
Զարմանում եմ իմ աշխարհում ցնծալից,
Ուր մահ չկա, և իրերն են անթախիծ։

8 (68)

Ուր մահ չկա, և իրերն են անթախիծ,
Ես ուզեցի այնտեղ ապրել հանց արքա։
Տեսա նորից պերճ հովիտներ արևկա
Ու քեզ տեսա նորից այցի գալիս ինձ։

Մի ողջ գարուն սառցի տակից դուրս ելած
Կարմիր-կարմիր կակաչներն էր իր վառում,
Ինչքա՜ն հուր կա գետնի տակի աշխարհում,
Որ այսքան շատ ուղարկել են ինձ սրտանց։

Չկա ոչինչ՝ քաղցր լինի ավելի,
Քան մոտեցող ոտնաձայները սիրո։
Բայց կանգ առար, չմոտեցար ինձ հետո։

Ցնորքն անցավ, ու մենակ եմ ես էլի։
Ողջն է ամպի ստվերի պես լուռ սահում,
Քո աչքերն են միակ հաստատն աշխարհում։

9 (69)

Քո աչքերն են միակ հաստատն աշխարհում,
Բայց գինետան պատերի մեջ այս ճոճվող
Շուրջս հարբած խեղճություն է մի անշող,
Ոչ ոք, ոչ ոք հայացքդ չի նշմարում։

Արժանի չեն նրանք սիրո, շատ են խեղճ,
Արժանի չեն ատելության՝ խեղճ են շատ,
Այնքան են խեղճ, գինի տվի մի գավաթ,
Կիսաստված եմ, նույնիսկ աստված՝ իրենց մեջ։

Իսկ ինձ բավ է լոկ զղջումդ, իմ արդար,
Որ զուր վրաս ուժն ես փորձել հմայքիդ,
Նույնքան զորեղ քամահրանքդ բարձրաքիթ։

Իսկ ինձ բավ է լոկ նայվածքը քո պայծառ,
Ցուրտն ինչքան էլ սրտիս խորքն է սողոսկում,
Երբ նայում ես, ողջը փոխվում է իսկույն։

10 (70)

Երբ նայում ես, ողջը փոխվում է իսկույն...
Սիրտս վաղուց որդն է կրծում կասկածի,
Մի սև օձ է հաճախ գալիս ինձ այցի,
Եվ արյունիս մի խոհ խառնում իբրև թույն։

Փառքն, ասում է, միլիոն տարի էլ տևե,
Սկիզբ ունի և վախճան է ունենում,
Լեռներն՝ ալիք ժամանակի օվկիանում,
Ալիքի պես պիտի փուլ գան երբևէ։

Ամեն մի բառ երևույթ է կամ թե իր,
Քարն ասում է, քար է, ահա, ծառը՝ ծառ,
Հավերժն ի՛նչ է՝ միայն ցնորք անհնար։

Ա՛խ, հավերժը չունի հիմքն ու իմաստն իր։
Բայց երբ, սեր իմ, դու ես ճամփաս արևում,
Էլ ինձ հավերժն անիմաստ բառ չի թվում։

11 (71)

Էլ ինձ հավերժն անիմաստ բառ չի թվում,
Հավատում եմ հար գոյությանը մարդու
Ես՝ ծնունդս այն հեռավոր վայրենու,
Որ ապրում էր իր ցեղի հետ անձավում։

Նա առաջին մարդն էր ցեղում մարդակեր,
Որ չկերավ առաջինը մարդու միս,
Սերունդ-սերունդ հասել է ինձ՝ վերջինիս,
Բայց վերջը չեմ ու նա պիտի ապրի դեռ։

Դարերն ուսած՝ գալիք դարեր կգնա,
Ժպտում ես ինձ, շարունակվի՛ նա պիտի
Նաև ճամփին իմ հաղթաքայլ հաջորդի։

Դու չես թողնի, որ վերջ գտնի իմ մեջ նա,
Քո նայվածքից կգա նորից նա աշխարհ...
Բայց պատրանք է, ինձ չես նայում սիրավառ։

12 (72)

Բայց պատրանք է, ինձ չես նայում սիրավառ...
Կայծակից ետ մութն ավելի է մթնում,
Կորցրեցի հույսիս թելը, չեմ գտնում,
Մտքիս նավը նորից չունի նավավար։

Հոսիր, գինի, սեղմվիր ինձ, մատռվակ,
Ես մրսում եմ, ասես սառույց եմ հագել,
Սուտ արև էր իմ երկնքում ճառագել,
Սուտ հնչյունն էր ուզում դառնալ երգ-նվագ։

Մարդ մեռած է, եթե տեսնի միայն մահ,
Կարծես լինի լուսնի վրա մեն-մենակ,
Ուր՝ հաստատ է, որ սեր չկա, ոչ էլ կյանք։

Լվի ցատկն էր իմ թռիչքը, և ընկա։
Իմ աստղերով է՛լ երկինքներ չեն ծաղկում,
Սիրտս էր ցավից այդ հրաշքը հորինում։

13 (73)

Սիրտս էր ցավից այդ հրաշքը հորինում,
Փռում մահվան հորի վրա իբրև գորգ,
Ա՛խ, հրաշքը ցնդեց իբրև մի ցնորք,
Նորից մութն է կույր աչքի պես ինձ նայում։

Մեծ սրտերը ի՛նչ ուժ ունեն ու ինչ չափ,
Հարկավ գիտեն, որ առու են ավազում,
Սակայն էլի կարկաչելով են հոսում,
Որ կանաչով զուգեն հողը գեթ մի ափ։

Օ՜, ի՜նչ մղում ստեղծարար, ի՜նչ կորով,
Չեն ընկճվում, այլ ընկճում են միշտ ու միշտ
Հոգին ծյուրող ամեն կասկած, ամեն վիշտ։

Դժվար է շատ, քայլել նրանց հետքերով,
Բայց և հեշտ չէ, որ զգում եմ անդադար
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար։

14 (74)

Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար,
Գինին անգամ ուղեղս չի մթագնում,
Որ թեկուզ սուտ՝ մի պահ լինեմ երկնքում
Եվ ինքնագոհ, և բախտավոր նայեմ վար։

Փոքրիկ լիճը անգամ հովն է խռովում,
Մրրիկ է պետք, որ հուզի կուրծքն օվկիանի,
Ա՜խ, ես գիտեմ (չիմանայի երանի)
Մեծ ալիքը ծնվում է լոկ մեծ ծովում։

Դու էլ, սեր իմ, ինչպես մեծերը ոգու,
Քո խոսք-մեխն ես իմ սրտի մեջ խոր խրում,
Թե մեծ գործերն իմ գործը չեն աշխարհում։

Նրանք ոչինչ, քո մուրճն է շատ ահարկու,
Այնպես դիպուկ հարվածում ես մեխին նույն՝
Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում։

15 (75)

Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում,
Հազար ձևով քո մերժումն ես կրկնում դու,

Բայց իրերի հորձանքի մեջ ահարկու
Միակ հաստատն աչքերն են քո անխոստում։

Նրանց ցոլքում մոռանում եմ ինքս ինձ
Եվ իրերի հոսքն ու մոխիրն անկայուն,
Ապրում եմ ես ինչ-որ ուրիշ ներկայում,
Ուր մահ չկա, և իրերն են անթախիծ։

Քո աչքերն են միակ հաստատն աշխարհում,
Երբ նայում ես, ողջը փոխվում է իսկույն,
Էլ ինձ հավերժն անիմաստ բառ չի թվում։

Բայց պատրանք է, ինձ չես նայում սիրավառ,
Սիրտս էր ցավից այդ հրաշքը հորինում,
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար։

ՓՈՒՆՋ - 6

1 (76)

Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար,
Գեթ մի ծաղրիր, որ ծննդյանս գիշեր
Ապոլլոնը պիտի ձիրքերը բաշխեր,
Բայց հարբել էր ու քնած էր նա երկար։

Անբախտ եղար, արթուն լիներ՝ ձիրք կտար,
Որովհետև երգի ծարավն էր տրված,
Քեզ բանաստեղծ էր պատրաստում ինքն աստված,
Հող կար, պետք էր սերմը գցել անվթար։

Թե լինեի ես բանաստեղծ հանճարեղ,

Այն ժամանակ կսիրեիր ինձ գուցե.
Քեզ կդյութեր երգս հանգով սիրազեղ։

Ոտքերիդ տակ շաղ կտայի մարգարիտ
Ու կանեի երգն ինձ սանդուղք մարմարե,
Որ բարձրանամ, հասնեմ աստղոտ աչքերիդ։

2 (77)

Որ բարձրանամ, հասնեմ աստղոտ աչքերիդ,
Մաքո՛ւր-մաքո՛ւր սիրտ է տվել աստված ինձ,
Այնքան մաքուր, որ ամեն մի փոքրիկ բիծ
Ես տեսնում եմ, զգում սրտիս մեջ վճիտ։

Իմ ամեն բիծն ինձ ավելի է տանջում,
Քան չարամիտ հարվածն ու դավն օտարի,
Այդ նշան է, որ իմ հոգում չի մարի
Խղճի լույսը՝ վսեմորեն ճաճանչուն։

Թե այդպես է, թող որ հուսամ, սեր իմ, սեր,
Որ ինձ մի օր կնկատես ու կզգաս,
Ինչպես զգում, խառնվում են զույգ լույսեր։

Օ՛, չի լինի ոչ ոք ինձ չափ լիասիրտ,
Երբ հաղորդվեմ երազներին քո անհաս,
Մեկ էլ երգի ակունքներին մաքրաշիթ։

3 (78)

Մեկ էլ երգի ակունքներին մաքրաշիթ
Հպեմ պապակ իմ շուրթերը և հարբեմ,

Լցնեմ դատարկ խեցիներս, լեփ-լցնեմ
Ճառագայթով, հույսով, հույզով ճշմարիտ։

Գամ մարդկանց մոտ գեթ մի երգով իմ անզույգ,
Ասեմ՝ մարդիկ, ձեզ մոտ չեկա ձեռնունայն,
Ոգու անհուն օվկիանոսում մշտաձայն
Ես էլ ունեմ մարգարիտը իմ ստույգ։

Ու չհիշեմ, որ ինձ բնավ չես հիշում,
Մոռացված եմ, ինչպես լավան գետնի տակ,
Որ աննկատ՝ իրեն այրում է, մաշում։

Չասեմ՝ ծարավ եմ նայվածքիդ սիրավառ,
Չասեմ՝ հանկարծ ժայթքեր երգս՝ լավաս տաք,
Որ ծարավս գոնե երգով մեղմանար։

4 (79)

Որ ծարավս գոնե երգով մեղմանար,
Պիտի բառերն իմ առնեի շողերից,
Արև ծնող կույս երկնքի դռներից,
Լույս հորինել սովորեի խանդավառ։

Լույս հոգեկան, գերագույն լույս, որ խայտաց
Արյան տեղակ երակներում մեծերի,
Սերն ավելի մեծեր աշխարհ կբերի
Եվ մեծության այլ չափանիշ դեռ չեղած։

Ամեն պոետ՝ հառած հայացքը նրանց,
Դժգոհ է իր ստեղծածից, իրենից,
Փառք արարիչ դժգոհությանն այդ անանց։

Մի օր գուցե երգս ուրախ կցայտե,
Ինչո՞ւ, սեր իմ, չես հավատում երբեք ինձ,
Ասում ես, որ քնար ունեմ ես փայտե։

5 (80)

Ասում ես, որ քնար ունեմ ես փայտե,
Երգում եմ զիլ, սակայն լավ էր ավելի,
Որ արտի մեջ մի խրտվիլակ լինեի,
Փախցնեի ագռավներին գորշաթև։

Այդ ինչպե՞ս է, ախր ինչպե՞ս, սիրելիս,
Որ իսկական ագռավներից չես սոսկում,
Իմաստներ ես փնտրում նրանց փուչ խոսքում,
Հրճվում նույնիսկ մի կես հատիկ գտնելիս։

Մի՞թե դու էլ համաձայն ես, որ իրավ
Դայլայլի տեղ քեզ կռավոց լսել տան,
Որ լցնում է օդը ամեն գորշ ագռավ։

Ես ջինջ կարկաչ, դեպի քո ափն եմ հոսում,
Այդ ինչպե՞ս է, որ իմ երգում մեղմաձայն
Մեղեդու տեղ չոր թխկթխկոց ես լսում։

6 (81)

Մեղեդու տեղ չոր թխկթխկոց ես լսում,
Իսկ ես, ներիր, ուզում եմ քեզ առարկել
Եվ նույնիսկ քեզ, մինչևիսկ քեզ էլ հերքել,
Որ ես իբր խեղճ աղքատ եմ Պառնասում։
Հարուստ եմ ես երազներով պոետի,

Մի երազս մարդուն աստղեր է տալիս,
Երազում է մի երազս ցնծալից,
Որ դեպի Մարս հիմա թռչեմ ես պիտի։

Մի երազս պատերազմին է հաղթում,
Մի երազս հանճարներին հող դարձած՝
Կյանք է տալիս և բարի երթ է մաղթում։

Սիրտս է զարկում... Բայց սողոսկեց մի կասկած,
Երբ ասացիր՝ մուրճի զարկ է, չե՞ս լսում։
Ճիշտ որ, սեր իմ, մուրճն է այդպես հարվածում։

7 (82)

Ճիշտ որ, սեր իմ, մուրճն է այդպես հարվածում,
Ամեն զարկից սիրտս դառնում է ավազ,
Ծվեն-ծվեն մղկտում է մի երազ,
Որ ինձ առաջ դեպ Հելիկոն էր տանում։

Լոկ թվում էր, թե ելնում եմ լեռն ի վեր,
Մուսաները հիմա կտան ինձ ողջույն,
Այս էլ ճամփան, որ թողեցի ես կիրճում,
Հետքերս, տես, խորն են ինչքան, խոր ձորեր։

Բայց բարձրացավ քո արևը, և ահա
Իմ հետքերից հետք չմնաց ճամփեքին,
Տպված էին նրանք, ավա՛ղ, ձյան վրա։

Տեսնում եմ ես երգիս դազաղն աչքիս դեմ,
Գալիս ես դու իբրև մուսա, իբրև կին
Ու քո ձեռքով մեխում դազաղս արդեն։

8 (83)

Ու քո ձեռքով մեխում դագաղս արդեն,
Շպրտում ես Լեթա գետը՝ զուտ փրփուր,
Ալիք-ալիք փշրվում են օրեր բյուր,
Ես մոռացված, և իմ մասին չգիտեն։

Բայց լեռներս ինձ կհիշեն տրտմագին,
Կակաչները՝ կարոտներն իմ բոցեղեն,
Երբ հյուր գնաս, քո ոտքերին կփարվեն,
Ու թե քաղես՝ կգգվեն քո ձեռքերին։

Եղինջները մի քիչ փշոտ են, գիտես,
Նրանք կասեն, որ ինձ դու շատ տանջեցիր,
Ներիր նրանց, իրենց բնույթն է այդպես։

Շատ մի տխրիր, Լեթա գետն է միշտ հոսում,
Ինձնից լավերն այդ գետին կուլ գնացին
Այս իրերի հողմագալար քառսում։

9 (84)

Այս իրերի հողմագալար քառսում
Իբր քիչ էր, որ այսքան ցավ տվիր դու,
Տերն էլ տվեց անհագ մի տենչ ճախրելու,
Թև չտվեց, տանջել, ծաղրել էր ուզում։

Պաշտիր, ասաց, բրիտանական կաղնին դու,
Որ հայտնի է այլ անունով՝ Շեքսպիր,
Եվ գիտակցիր, գիտակցելով տառապիր,
Որ չես լինի մեն մի տերևը կաղնու։

Այնինչ տենչդ այնքան է մեծ, որ հազիվ
Յոթը երկինք տեղավորեն իրենց մեջ,
Տանջվիր այդպես ստորոտներում երազիդ։

Ով տեր, դու լավ գիտես խոցել կարեվեր։
Ա՛խ, չզգայիր, որ երջանիկ սերն անշեջ,
Մեկ էլ պիտի երգն ինձ կայան պարգևեր։

10 (85)

Մեկ էլ պիտի երգն ինձ կայան պարգևեր,
Բայց մեծ երգը, արքա երգը, երգ-հսկան,
Կյանքից սերված ու կյանք դարձած իսկական,
Հողում՝ արմատ ու երկնքի մեջ՝ թևեր։

Ես այդ երգն եմ իմ արյունով երազում,
Փոքրերը ի՞նչ, հազիվ ապրում մի վայրկյան,
Կայծերի պես հանգում են լուռ ու չկան,
Մարդ մրսում է նրանց մանրիկ, խեղճ պարսում։

Իմ երազը, գիտեմ, շատ է ընդունայն,
Ներիր, սեր իմ, որ երազում եմ այդպես,
Մեկ էլ ներիր, որ ասում եմ բարձրաձայն։

Թե ստեղծեմ երգն այն, որ ես եմ ուզում,
Ուրիշ էլ ո՞ւմ, կնվիրեմ միայն քեզ,
Բայց պոետ չեմ, երբ որ դու ես այդ ասում։

11 (86)

Բայց պոետ չեմ, երբ որ դու ես այդ ասում,
Քո վճիռը, սեր իմ, շատ է անողոք,

Իմ մեջ էլի կայծակում է մի բողոք,
Դու ամպրոպիս դղրդոցը չես լսում։

Թե զոհ է պետք, որ ցավերը վերանան,
Ե՛ս կլինեմ առաջին զոհն աշխարհում,
Սիրտս քամեմ, թող նա սառչի անարյուն
Միայն հետո պակաս չզգա սիրտն արյան։

Ես պատրաստ եմ, առաջինն եմ, զոհեցեք,
Դա երազանք-զգացում է պոետի,
Միայն կյանքում զոհ չլինի էլ երբեք։

Բայց ի՞նչ, էլի կոչում ես ինձ անքանքար,
Եվ ես, նայիր, ասես մեխված եմ գետնին՝
Իմ թևերին խոսքդ ինչպես ծանր քար։

12 (87)

Իմ թևերին խոսքդ ինչպես ծանր քար՝
Ցած է քաշում, ինձ խրում է հողի մեջ,
Որ պոետ չեմ, աշխարհն ասեր թող անվերջ,
Աշխարհի դեմ կընդվզեի քաջաբար։

Դու ես ասում, քո դեմ ինչպե՞ս մղեմ մարտ,
Դու՝ այդ ես եմ, իմ կյանքը դու ես, սեր իմ,
Ի՞նչ խոսք գտնեմ, որ շառաչի ոխերիմ,
Երբ լոկ շոյող խոսքեր ունեմ քեզ համար։

Ծանր է քարը, դու նոր քարեր ես դնում
Իմ թևերին, իմ խոհերին, իմ սրտին,
Հողում խրված՝ ես երկինքը չեմ տեսնում։

Սուտ են, ափսոս, կյանքում չկան հրաշքներ,
Որ արծվացած՝ քսվեմ երկնի կապույտին,
Ես՝ ուժասպառ, չեմ սավառնի երբեք վեր։

13 (88)

Ես՝ ուժասպառ, չեմ սավառնի երբեք վեր,
Կանաչ արտիս քարե կարկուտ տեղացիր,
Բայց անվթար ծիծաղում է դեռ մի ծիլ,
Իբրև վկա, որ իմ արտը բերրի էր։

Փառք քեզ, իմ ծիլ, շոշափուկներն իմ մտքի
Քիչ-քիչ հասնում ու Անհայտն են շոշափում,
Ցնծում եմ ես, միշտ կցնծամ իմ ափում,
Երբ էլ Անհայտն ինչպես հասած նուռ ճաքի։

Անգամ չնչին հյուլեն ունի դռներ փակ,
Ով էլ բացի՝ ինձ սփոփանք կբերի,
Որ իմ չարածն ինքը արեց իմ տեղակ։

Բայց ո՞վ կտա ինձ սփոփանք մի պատառ,
Որ չհասա մտածումիս մեջ թերի
Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար։

14 (89)

Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար,
Որ նրանց դեմ տոնածառս զարդարեմ,
Ու գա նաև իմ Նոր տարին, ես պարեմ,
Թնդացնեմ երգով աշխարհը արար։

Դուրս են նետվում հետո քանի տոնածառ
Ցեխակոլոլ ձյուների մեջ ու ցրտի,
Ի՜նչ սիրտ ունեն, անգամ ձեռքում տմարդի
Ու ձյուներում կանաչ ծիծաղ են դարձյալ։

Մեկտեղ պահված թող չորանան շոգին բարկ,
Երբ լուցկի տաս՝ պարեն ուրախ, ճրթճրթան,
Որ չքնաղ են մահվան մեջ իսկ և կրակ։

Երկինք ձգվող մի սանդուղք են բոցավառ,
Թող պոետներն հայացքով վեր բարձրանան,
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար։

15 (90)

Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար,
Որ բարձրանամ, հասնեմ աստղոտ աչքերիդ,
Մեկ էլ երգի ակունքներին մաքրաշիթ,
Որ ծարավս գոնե երգով մեղմանար։

Ասում ես, որ քնար ունեմ ես փայտե,
Մեղեդու տեղ չոր թխկթխկոց ես լսում,
Ճիշտ որ, սեր իմ, մուրճն է այդպես հարվածում,
Ու քո ձեռքով մեխում դագաղս արդեն։

Այս իրերի հողմագալար քառսում
Մեկ էլ պիտի երգն ինձ կայան պարգևեր,
Բայց պոետ չեմ, երբ որ դու ես այդ ասում։

Իմ թևերին խոսքդ ինչպես ծանր քար,
Ես՝ ուժասպառ, չեմ սավառնի երբեք վեր
Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար։

ՓՈՒՆՋ - 7

1 (91)

Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար,
Որ նվիրեն մի ողջ երկինք ինձ նրանք,
Արծվի ճախրը, արծվի ճախրը համարձակ
Եվ ճախրելու հրճվանքն ինձ տան սիրաբար։

Այնտեղ, վերում ինչ-որ բան կա գեղեցիկ,
Որ արծիվներն այդպես ձգտում են վերև.
Ուրիշ լույս կա, ուրիշ երազ ու արև
Այնտեղ, վերում, կապույտի մեջ թափանցիկ։

Գեթ ճառագեն քո աչքերը իմ ճամփին,
Թեկուզ հեռվից, թեկուզ միայն մի վայրկյան,
Ոսկեզօծեն հանց արևի շողն ամպին։

Ամպեր տեսնեմ, որպես փրփուր խեղդվողին,
Գոնե ամպեր՝ հեռավոր ցոլքդ վրան,
Որոնք պիտի ինձ ուղեցույց լինեին։

2 (92)

Որոնք պիտի ինձ ուղեցույց լինեին,
Էլ փարոս չեն, նայում են կույր բիբերով,
Նավս մոլոր, կասկածների իր բեռով
Ջարնվում է քո ժայռեղեն ափերին։

Պետք չե՞ն իրավ քեզ դղյակներ անուրջի,
Ուր քարերը լույս են՝ շող-շող խտացված,

Ուր շաղախը սերն է՝ մաքուր ու անանց,
Ուր բնակվում է կարոտը՝ բարձր ու ջինջ։

Ճի՞շտ է, ասա, որ քեզ պետք չեն ցնորքներ,
Ճերմակ ամպեր ու տեսիլքներ վարդագույն,
Քրքրում են կասկածներն ինձ, սեր իմ, սեր։

Ա՛խ, թե հանկարծ քո աչքերը քամեին
Իրենց լույսից գեթ մի կաթիլ իմ հոգում,
Ես հաղթեի կասկածներն իմ ամեհի։

3 (93)

Ես հաղթեի կասկածներն իմ ամեհի,
Որ գալիս են ոլոր-մոլոր, օձաբար,
Ու ֆշշում են, թե բացվի այլ ճանապարհ,
Այլ կլինեմ ես նորաբաց այդ ճամփին։

Եթե հաղթեմ՝ կկուրանամ ես փառքից,
Ինչպես հիմա պարտությունից եմ նվում,
Եթե սիրես, մեկ-մեկ այնպես է թվում,
Էլ չեմ կարող երկրպագել քեզ նորից։

Ու վխտում են սև օձերը կասկածի,
Ալիք-ալիք գալարվում են ինչպես ծով,
Որի խորքում, ա՛խ, ի՞նչ հավատ կառկայծի։

Չեմ ազատվում, օձեղեն ծովը խավար
Հոգուս մեջ է իր բյուրլեզու խայթոցով...
Ափ դուրս գայի հաստատաքայլ, հուսավառ։

4 (94)

Ափ դուրս գայի հաստատաքայլ, հուսավառ...
Գրոհ տալիս ամեն ալիք կասկածի,
Դու, ասում է, բավ է արդեն, հասկացիր,
Չեղար կյանքում նույնիսկ վսեմ սիրահար։

Խեղճ, ասում է, քեզ թվում է քո հոգում
Բնակվում է սիրո աստվածը լուսեղ,
Գույն է փոխում լոկ քամելեոնը այնտեղ,
Սերը մեկն է իր գույներից, միայն գույն։

Վիշտ ու խնդում, ատելություն, մաղձ, հավատ,
Սև ու կարմիր, գորշ ու դեղին և կապույտ,
Ողջը փոխվող, քամու նման անհաստատ։

Կողոպտում է ինձ քամելեոնն անդադրում։
Ծեծվող շունն իսկ չունի իմ այս ցավն անգութ.
Լավ է լինել բրածեծ շուն աշխարհում։

5 (95)

Լավ է լինել բրածեծ շուն աշխարհում,
Զգալ միայն ոսկորների մի սուր ցավ,
Որը մեկ էլ տեսար չկա, շուտ անցավ,
Քո հոգնատանջ ուղեղն էլ չի քրքրում։

Իսկ իմ ցավը ամուր կառչել է հոգուս
Հազարճիրան կասկածներով անհատնում,
Թե քրքրված սիրտս եմ մի տեղ կարկատում,
Մի այլ տեղ է ցավը պատռում, ելնում դուրս։

Իմ վերևում մի սեգ արծիվ է ճախրում,
Ոչ մի կասկած չի ծվատում իր հոգին,
Թե չէ ինչպե՞ս պիտի ճախրեր այդ բարձրում։

Նա արծիվ է, նա հասկանում է անշուշտ,
Որ ավելի լավ է հասնել երկնքին,
Քան թե ծեծվել կասկածներից իր ներքուստ։

6 (96)

Քան թե ծեծվել կասկածներից իր ներքուստ,
Լավ չէ՞, սիրտ իմ, ըմբոստանալ նրանց դեմ,
Չկասկածել, չմտածել տխրադեմ
Ամեն ինչից ամեն ճամփով տալ փախուստ։

Ու չանրջել, չկամրջել ոչ մի վիհ,
Ինչպես փոշին, ուր ոչ մի սերմ չի ծլում,
Զուր չի փնտրում ներկա-գալիք-անցյալում
Եղե՞լ է, կա՞, կորչի՞ պիտի, սկսվի՞։

Ի՞նչ, կորցնո՞ղ լինեմ էլի աշխարհում,
Հանց հողակոշտ՝ ընկած գետի մեջ վարար,
Որ զուր՝ ջրից դուրս ելնել է աշխատում։

Թող, թող մնամ կասկածներով էլ հարուստ,
Ոչինչ, եթե տրտնջամ էլ, որ, ավա՛ղ,
Բաժին ընկավ վատթարագույնն ինձ վերուստ։

7 (97)

Բաժին ընկավ վատթարագույնն ինձ վերուստ,
Ինքնալլկման լաբիրինթոսն այս անել,

Որ կարող է անգամ քաջին կործանել,
Քանզի դրսից չի խաճում, այլ՝ ներքուստ։

Այնքան շատ են իմ խոսքերը ցավածին,
Երջանկության իմ ծարավը՝ այնքան մեծ,
Որ թե խմեմ խինդի մի հորդ ջրընկեց,
Պիտի զգամ էլի ծարավ մնացի։

Ո՞վ ինձ պատժեց այդ խոհերով և հետո
Ինքնալլկման լաբիրինթոսը նետեց,
Դու, դու, սեր իմ, այդ անտարբեր ձեռքով քո։

Ցնորք ճամփան ինձ քո աշխարհն էր բերում,
Դաժան ձեռքդ այդ ճանապարհն էլ փակեց,
Էլ ես նույնիսկ ցնորքներ չեմ արարում։

8 (98)

Էլ ես նույնիսկ ցնորքներ չեմ արարում,
Որ նրանցից կառչեմ որպես պարանից,
Դուրս գամ այս մութ, ինքնաժխտման ջրհորից,
Ուր ծարավից հույսիս ծիլերն են խամրում։

Հանկարծ հրաշք, ծագեց ահա աստղը մեծ,
Նա՝ լուսաստղ աստղերի մեջ աննշան,
Շողշողում է իբրև հսկա մի շուշան,
Եվ ես եմ այդ պայծառ աստղը բարձրաբերձ։

Մի զարմանա, ով կարող է ինձ նման
Վիհերն իջնել, անդունդները իր հոգու,
Կարող է և ելնել կատարը լեռան։

Ուշ է, սակայն, մնացել է քիչ բան ինձ,
Կորցրել եմ շատը անհույս մորմոքում
Ու դառնացած գնում եմ ես աշխարհից։

9 (99)

Ու դառնացած գնում եմ ես աշխարհից՝
Երկնքից՝ շող, քեզնից ներումն հայցելով,
Որ եղծել եմ քեզ կասկածիս «բայց»-երով,
Քեզ մանրելով՝ ինքս էլ դարձել եմ մանրիկ։

Ճիշտն այն է, որ սիրտը սրտին լոկ բույր տա,
Ապրել է պետք, որ ապրեցնի ու ապրի,
Ատելությունն ինչքան գոռա, փրփրի,
Մարդը միայն սիրո ձայնին հավատա։

Դարձյալ քեզ եմ իմ աղոթքը առաքում,
Ապրում ես դու նորից երկնում իմ վսեմ,
Քո արևն է սրտիս վրա ճառագում։

Երգս լիներ նրա լոկ փայլն անդրադարձ,
Չէի ասի, թե աշխարհից գնում եմ
Եվ ոչ մի երգ այս աշխարհին չթողած։

10 (100)

Եվ ոչ մի երգ այս աշխարհին չթողած՝
Անցնում եմ ես շիրիմներով օրերիս,
Թափուր-թափուր երկնակամար սևերիզ,
Իմ օրերը աստղեր չեղան լուսարձարձ։

Իմ օրերը միշտ պատյանում մնացին,
Չգնացին կյանքի համար կռվելու,
Իմ օրերը միշտ մնացին քեզ հլու,
Հեռու բախտից, կռվից հեռու, առանձին։

Եվ ձյուն եկավ, և ոտքերս մրսեցին,
Ես չզգացի ջերմությունը մայր հողի,
Ձյուն էր իմ ու նրա միջև իմ ճամփին։

Ի՞նչ եմ արել, ի՞նչ եմ տվել իմ սրտից,
Արյո՞ւն, քրտի՞նք, կամ գեթ համբույր մի շողի,
Որ մայր հողը իմ մահից ետ՝ զգար ինձ։

11 (101)

Որ մայր հողը իմ մահից ետ՝ զգար ինձ,
Ավազի մեջ երազներս տնկեցի,
Ծառ չդարձած՝ նրանք արագ թոշնեցին,
Չկանաչեց մի ափ հող իսկ իմ շնչից։

Հող չբերի, ծառս ինչպե՞ս կանաչեր,
Ջուր չտվի, ծարավին ո՞նց դիմանար,
Միայն, միայն քեզ փնտրեցի անդադար,
Միշտ քեզ տեսա իմ ցնորքում սիրաջերմ։

Անձրև եղա՝ ավազներին կաթկթած,
Ծիլ դառնալու քաղցրությունը չզգացի,
Եվ ինձ, սեր իմ, սիրտդ երբեք չգթաց։

Իմ գոյությամբ աշխարհին ինձնով հարուստ չէր
Ու բնավ չի աղքատանա մեռնելիս,
Հոգիս ինչպե՞ս ցուրտ խոհերից չմրսեր։

12 (102)

Հոգիս ինչպե՞ս ցուրտ խոհերից չմրսեր,
Տաքանալու համար չգար էլի քեզ.
Ինձ այս անգամ քո կրակից չզրկես,
Բաժին հանիր ինձ քո բոցից գեթ կայծեր։

Չգիտեի, որ այդ պիտի պատահեր,
Կայծը հազիվ մի ակնթարթ է վառվում,
Նույնիսկ եթե փայտը չոր է անտառում,
Կայծից միշտ չէ, որ ծագում են հրդեհներ։

Բայց քո կայծից, ժպիտ կայծից, սեր իմ վեհ,
Ներշնչանքի ի՜նչ մեծ հրդեհ բռնկեց,
Լույսի, սիրո խենթ գահակալ դարձա ես։

Եթե այդպես շինել գիտես սրտաբաց,
Ինչո՞ւ, ինչո՞ւ քանդում ես միշտ հույսս մեծ,
Ո՞ւմ զանգատվեմ քեզնից բացի, իմ աստված։

13 (103)

Ո՞ւմ զանգատվեմ քեզնից բացի, իմ աստված,
Մեկ էլ ծովին, մեր այն ծովին զանգատվեմ,
Նա էլ ինձ հետ հառաչում է տխրադեմ,
Չես այցելում, և նա շատ է, շատ ազդված։

Ես ու ծովը՝ երկու լքված հոգիներ,
Մերթ փոթորկվում քո անարդար վարմունքից,
Մերթ խաղաղված՝ լռիկ թախծում ենք նորից՝
Իրար խառնած երկու կարոտ, երկու սեր։

Լուռ է ծովը, տրված քաղցր հուշերին,
Իր գրկի մեջ քեզ է տեսնում երևի
Եվ ժպտում է երազների մեջ վերին։

Լուռ եմ ես էլ, սակայն սիրտս երգ կուզեր,
Լուռ են ու ցուրտ բիբերը իմ աչքերի,
Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր։

14 (104)

Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր,
Եվ երգ, և սեր՝ երկուսն էլ մեծ ու անհուն,
Ինչպես վիշտս, որ տիեզերքն է բռնում,
Ինչպես խինդս, որը գուցե կգա դեռ։

Դու դիտմամբ ես ինձ ցավ տալիս, որ հետո
Ես խնդության ահագնությունը զգամ,
Ցավս երգեմ բյուր ձևերով, բյուր անգամ,
Եվ մեկ անգամ երջանկությունն իմ սիրո։

Իմ բարի բախտ, միշտ կիսատ ես լինում դու,
Գուցե գիտես՝ հեշտ է վշտին դիմանալ,
Քան թե լրիվ խնդությանը մահազդու։

Մի վախեցիր, լրիվ եղիր, ծալեծալ,
Մութ է չորս դիս, լուսաբացդ չեմ տեսնում,
Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար։

15 (105)

Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար,
Որոնք պիտի ինձ ուղեցույց լինեին,

Ես հաղթեի կասկածներն իմ ամեհի,
Ափ դուրս գայի հաստատաքայլ, հուսավառ։

Լավ է լինել բրածեծ շուն աշխարհում,
Քան թե ծեծվել կասկածներից իր ներքուստ,
Բաժին ընկավ վատթարագույնն ինձ վերուստ,
Էլ ես նույնիսկ ցնորքներ չեմ արարում։

Ու դառնացած գնում եմ ես աշխարհից՝
Եվ ոչ մի երգ այս աշխարհին չթողած՝
Որ մայր հողը իմ մահից ետ՝ զգար ինձ։

Հոգիս ինչպե՞ս ցուրտ խոհերից չմրսեր,
Ո՞ւմ գանգատվեմ քեզնից բացի, իմ աստված,
Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր։

ՓՈՒՆՋ - 8

1 (106)

Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր,
Երգը տաներ կարոտներն իմ սրտեսիրտ,
Սերը դարձներ երազներս անբասիր,
Փերթ-փերթ բացվող, ինչպես գարնան բողբոջներ։

Թագերի մեջ լոկ երգի թագն է հավերժ՝
Սիրո պայծառ ադամանդով զարդարուն,
Քանի արքա շիրիմ գտան դարերում,
Չկա ոչ մի երգի արքա նրանց մեջ։

Սակայն չունի իմ երազը ստնտու,
Որբ մանուկ է ու նվաղել է արդեն,
Ես լսում եմ նրա վերջին լացն ազդու։

Գայիր հանկարծ՝ նոր երազներ քո ձեռքին,
Նվիրեիր քո պոետին դալկադեմ
Ու նայեի ես նրանցով աշխարհին։

2 (107)

Ու նայեի ես նրանցով աշխարհին՝
Պայծառ-պայծառ քո բիբերով, քո սրտով
Եվ հյուսեի իմ հեքիաթը հոգեթով՝
Քո բիբերի միջով տեսած անցքերն հին։

Իմ հեքիաթում որպես բլբուլ հազարան,
Թող մեր սերը վարդ շաղ տալով դայլայլեր,
Եվ աշխարհում ինչ որ բիրտ ու մռայլ էր,
Փոխվեր հանկարծ սիրանվեր քնքշության։

Իր նախկին տեսքն առներ վարդը փուշ դարձած,
Այս աշխարհին բռնած անեծքը ցնդեր,
Մարդը ելներ սանդուղքն ի վեր երկնաբաղձ։

Եվ այդ աներ, մեր սերն աներ երկնային,
Գեթ մի անգամ, գեթ մի վայրկյան, օ՜, իմ սեր,
Ինձ աշխարհն ու կյանքը հեքիաթ թվային։

3 (108)

Ինձ աշխարհն ու կյանքը հեքիաթ թվային,
Ես լինեի, դու լինեիր հեքիաթում,

Դու ասեիր, որ էլ այգիդ չի փթթում,
Թուփն է դեղնում չար անեծքից դիվային։

Պիտի բերել հազարան հավքն, ասեիր,
Որ ծիծաղի առաջվա պես այգին իմ,
Հեծնեի ես իմ նժույգը մտերիմ,
Ինձ բարի երթ ու վերադարձ մաղթեիր։

Երեք եղբայր, արքայազուն երեք քաջ
Պիտի գնան բերելու հավքն հազարան,
Պիտի փոքրին բախտը վազի ընդառաջ։

Մինչ ուրիշը պիտի սերդ երազեր,
Ես ետ գայի՝ ինձ հետ երգիչ հավքը այն
Ու լինեի արքայազնը ես կրտսեր։

4 (109)

Ու լինեի արքայազնը ես կրտսեր,
Ու հաղթեի վիշապներին, դևերին,
Պարտվեր ինձնից վիշապներից սոսկալին՝
Իմ իսկ եսը՝ բյուր մեղքերով ծանրաբեռ։

Մաքրամաքուր հրաշք բլբուլն հազարան
Կարող են լոկ մաքուր ձեռքերը բռնել,
Միայն մաքուր սիրտն է կարող ըմբռնել
Երգը նրա աստվածային ու նրան։

Մաքրեի ինձ իմ մեղքերից բյուրանուն,
Որ դեևեր են ճանապարհին իմ դժնի,
Նրանց շնչից իմ աչքերն են կուրանում։

Եվ իմ հոգին որպես խարույկ մի կայտառ,
Որպես արև, որ երբևէ չի թոշնի,
Ծովերի մեջ, ծովերից դեն բոցկլտար։

5 (110)

Ծովերի մեջ, ծովերից դեն բոցկլտար
Հոգիս՝ զտված ամեն ախտից, վարակից,
Մաղձից, քենից և ախտերից հարակից,
Որ դարձնում են ուրիշներին ինձ օտար։

Լինեի քաջ, ինչպես Արեգն հեքիաթի,
Որ գնում է հրաշք հավքի հետևից,
Նրա նման անանձնական ու անբիծ,
Նրա նման լույսից կերտված լինեի։

Թեթև-թեթև կթռչեի այնուհետ
Իմ հազարան կրակ հավքը բերելու,
Որ իր երգով այրեր սրտեր ախտաժետ։

Եվ չէր զգա ծանրությունն իմ մեղսական,
Վեր կճախրեր՝ մաքուր կամքին իմ հլու
Հրեղեն ձիս՝ տեսիլքի պես հուրհրան։

6 (111)

Հրեղեն ձիս՝ տեսիլքի պես հուրհրան
Ցոլցլում է երկնքի մեջ կապուտակ,
Գլխիս վրա երկինքն ինչպես կապույտ թագ,
Արեգակը շող մարգարիտն է նրա։

Գնում եմ ես ու մի ձայն է ինձ կանչում.
«Դարձիր, դարձիր, բոցերի մեջ կվառվես»։
Ոչ, կգնամ, առանց երգի ի՞նչ եմ ես,
Այն հազարան հավքի երգն եմ ես տենչում։

«Դարձիր, դարձիր»,- կանչում է ինձ ձայնն էլի,
Այդ իմ վախն է, որ կանչում է իմ ներսից
Ու ցույց տալիս վիշապներին ահռելի։

Թե վախը կա, շատ կշեղվի իմ ճամփան
Ու չեմ տեսնի ինձ հաղթական ետ գալիս՝
Գիրկս առած երգի բլբուլն հազարան։

7 (112)

Գիրկս առած երգի բլբուլն հազարան՝
Միայն մտքով, միայն կապույտ ցնորքում
Ես խփում եմ, և վիշապներն են տնքում,
Վարարում է գետը նրանց սև արյան։

«Բայց չես հաղթի»,- կասկածն է ինձ տատանում։
Ա՛խ, կասկածը կեսն է արդեն պարտության,
Հաղթանակը հո գինի չէ մի էժան,
Որ ամեն մարդ համը զգա բերանում։

Երգին պիտի ողջ քո արյամբ նվիրվես,
Այդպես նաև երգիչ հավքը բերելուն,
Ցամաքել եմ, կարծես արյուն չունեմ ես։

Մնում է ինձ լոկ մի անփակ ճանապարհ՝
Բաղձանքը, թե՝ հուր հավքի հետ գայի տուն,
Քեզ մոտ գայի, որ նա երգեր քեզ համար։

8 (113)

Քեզ մոտ գայի, որ նա երգեր քեզ համար՝
Իմ հազարան բլբուլ լեզուն, իմ մուսան,
Ինձ հետ երգեր և երկինքը սրբազան
Իր արևով, իր աստղերով անհամար։

Երգեր և իմ բերած հավքը դրախտի
(Իբր բերած, իբր կռվով մոլեգին)
Բայց դու, սեր իմ, չլսեիր ոչ մեկին,
Լոկ իմ երգից բացվեր դուռը քո սրտի։

(Ինչքան հեշտ է ցնորքի մեջ ամեն բան,
Բայց թե միայն ցնորքի մեջ գտնելիս
Ոչ թե գտնում, այլ կորցնում ես ճամփադ)։

Հավք ու երկինք մնային լուռ, ապշահար,
Դու ժպտայիր, ինչպես պահին ցնորքիս
Ու երգեի, ե՛ս երգեի քեզ համար։

9 (114)

Ու երգեի, ե՛ս երգեի քեզ համար,
Երգս քեզ հետ լսեր աշխարհը համայն,
Այնպես թռվիչ, կախարդական լիներ այն,
Որ աշխարհից ամեն ոճիր վերանար։

Ով զենք վերցներ սպանելու ուրիշին,
Ինքն սպանվեր՝ հղանալիս միտքն իր չար,
Ուժեղները ինձ կատեին անպատճառ,
Իմ դեմ ելած՝ առաջինը կընկնեին։

Վսեմ ոգին կսավառներ այնուհետ
Մեր մտքերում, երազներում, աշխարհում,
Ու չէր կռվի մարդը նույնիսկ ինքն իր դեմ։

Ա՜խ, ցնորքս մարմին առներ իրական,
Ես լինեի փրկիչ՝ երգով իմ անհուն,
Նսեմանար իմ դեմ բլբուլն հազարան։

10 (115)

Նսեմանար իմ դեմ բլբուլն հազարան,
Ու դու գայիր, ինձ ասեիր՝ սիրելիս,
Միայն մի բառ, հարկավոր չէր ավելին,
Որ չդառնար այդ մեծ բառը հասարակ։

Ես կզգայի, որ արժանի եմ դրան,
Չէ՞ որ մարդուն վերստեղծել նորից-նոր,
Արարիչ եմ, աստված եմ ես գերհզոր,
Աստվածուհիս, կողքիս նստիր, գահիս լայն։

Մենակ հեշտ չէ հսկել շարժումն աշխարհի,
Երկուսիցս չի վրիպի ոչ մի բան,
Ոչ մի լավ գործ և ոչ մի ծուռ ու թերի։

Ես կլինեմ, օ՜, ինչ աստված խանդավառ,
Մենակ նստես դու իմ կողքին մի անգամ,
Ա՜խ, ցնորքս ինչքան շատ է անհնար։

11 (116)

Ա՜խ, ցնորքս ինչքան շատ է անհնար,
Բայց քո սերն է ինձ ափն հանում ցնորքի

Ու քո սերն է ահա մղում մի խոսքի,
Որ երբ գտնեմ՝ կլինի ողջը պայծառ։

Որոնում են բանաստեղծներն աշխարհի
Այդ մի խոսքը, միակ խոսքը երջանիկ,
Տերն ստեղծեց ցամաք ու ծով ու երկինք,
Այդ մի խոսքն էլ նա ստեղծած կլինի։

Ու փնտրում են, ու չի գտել դեռ ոչ ոք,
Ինչ գրում են՝ փնտրտուքն է նրանց հար,
Մերթ լի հույսով, մերթ՝ ցավերով անամոք։

Ու փնտրում եմ այդ մեծ խոսքը նաև ես,
Բայց երազում և երազով մի անճար,
Երազում է միայն աղքատը ինձ պես։

12 (117)

Երազում է միայն աղքատը ինձ պես,
Նա, որ պարկը երազներով է լցնում,
Հացի տեղակ սուտ երազներ է կրծում,
Այնպես մեղք է, երբ էլ նրան հանդիպես։

Նա չի առնում քլունգ ու բահ կամ տապար,
Չի վաստակում ինքն իր ձեռքով հացը իր,
Հե՜յ, երազելն աշխատանք չէ, իմացիր,
Լավ է մեռնես, քան գութ մուրաս վատաբար։

Լավ է մեռնեմ, քան սեր մուրամ ես ինքս էլ,
Մուրացվածը սեր չէ, այլ խեղճ մի փշրանք,
Թե սիրում ես՝ անկարող ես այն մարսել։

Գոհանում եմ ես ստվերից քո անգամ,
Թե այդպես է, ես աղքատ եմ անկրակ,
Իմ աչքերում ոչ սեր, ոչ էլ երգեր կան։

13 (118)

Իմ աչքերում ոչ սեր, ոչ էլ երգեր կան,
Առաջինը չեղա, ավա՛ղ, ոչ մի տեղ,
Ոչ սրընթաց թռիչքի մեջ փառահեղ,
Ոչ հուսահատ մորմոքի մեջ տնական։

Ինձնից էլ խոր երազողներ կան, գիտեմ,
Ինձնից էլ շատ անճարակներ անպտուղ,
Հազել եմ ես վշտի թանձր մառախուղ,
Բայց ավելի վշտոտներ կան թախծադեմ։

Զուր տենչացի հասնել հավքին հազարան,
Ավելի զուր տենչացողներ են եղել,
Ինձ չի հասնի, թե զուր տենչին դափնի տան։

Աչքեր են պետք, որ առաջ կամ ետ քայլես,
Այստեղ հասել ու կմնամ այստեղ էլ,
Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես։

14 (119)

Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես,
Ինչպե՞ս թե կույր, երբ որ դու կաս աշխարհում,
Ես ամենուր քո ցոլքերն եմ նշմարում,
Եթե նույնիսկ յոթ ծով այն կողմ արևես։

Իսկ թե մեկ-մեկ խեղճ ու կույր եմ թվում ինձ,
Նրանից է, որ թախիծն է ինձ պատում,
Որ հազարան հավքը մնաց հեքիաթում,
Ես նրան կյանք չբերեցի հեքիաթից։

Ախր պիտի նա իմ գրկում գեղգեղեր,
Չէ՞ սրտիս մեջ գեղգեղում է շարունակ,
Սրտից մինչ գիրկ ճամփան ի՜նչ շատ է եղել։

Պիտ աշխարհում ոչ մի տեղ փուշ չթողներ
Ու աշխարհում անփուշ, անվիշտ, ներդաշնակ
Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր։

15 (120)

Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր,
Ու նայեի ես նրանցով աշխարհին,
Ինձ աշխարհն ու կյանքը հեքիաթ թվային,
Ու լինեի արքայազնը ես կրտսեր։

Ծովերի մեջ, ծովերից դեն բոցկլտար
Հրեղեն ձիս՝ տեսիլքի պես հուրհրան,
Գիրկս առած երգի բլբուլն հազարան՝
Քեզ մոտ գայի, որ նա երգեր քեզ համար։

Ու երգեի, ե՛ս երգեի քեզ համար,
Նսեմանար իմ դեմ բլբուլն հազարան,
Ա՜խ, ցնորքս ինչքան շատ է անհնար։

Երազում է միայն աղքատը ինձ պես,
Իմ աչքերում ոչ սեր, ոչ էլ երգեր կան,
Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես։

ՓՈՒՆՋ - 9

1 (121)

Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես,
Հանց մառախուղ, որ սողում է լեռն ի վար,
Չի նկատում անդունդ ու ձոր, թուփ, մացառ,
Կույր-կույր գնում է դեպի ուր՝ չգիտես։

Ես ամպ էի բարձրագնա ու հպարտ,
Ծանր վիշտը ինձ քիչ առ քիչ քաշեց վար,
Հենց մթնեի՝ իմ կայծակը կերևար,
Իմ որոտին չէր դիմանա ամեն մարդ։

Շատ-շատերին նայում էի վերևից,
Բարձր էր իմ չուն, և անկաշկանդ, և ազատ,
Լոկ արևն էր գլխիս վերև հսկում ինձ։

Ինչքա՜ն իջա, շանթ չէ, կայծ իսկ չեմ տալիս,
Ո՞ւր մնաց իմ բարձրությունը լուսազարդ,
Կարեկցում են ինձ թզուկները նույնիսկ։

2 (122)

Կարեկցում են ինձ թզուկները նույնիսկ,
Իսկ ես նրանց էլի վերից եմ նայում,
Ախր նրանք այն պատրանքն են փայփայում,
Որ կապկից էլ խելացի են ու ճարպիկ։

Ինչ ասում են, միայն խաղ է մի ունայն,
Թե ուրախ են՝ մի շատ չնչին պատճառով,

Թե տխուր են՝ վիշտ են խաղում ամպերով՝
Ինչքան փոքր են, վիշտն իբր մեծ է այնքան։

Հառաչում են, բայց հառաչանքը նրանց
Ոչ բոց ունի, ոչ էլ անգամ բարակ ծուխ,
Սրտի անհուն անդունդներից չի պոկված։

Թզուկներ են՝ լինեն հպարտ էլ նույնիսկ,
Թզուկաբար խղճում են ինձ, կարեկցում,
Երբ նայում են կույր աչքերիս ու զույնիս։

3 (123)

Երբ նայում են կույր աչքերիս ու զույնիս,
Ի՞նչ իմանան ինչու եմ ես դալկադեմ,
Ինչո՛ւ կույր եմ, թեև շատ լավ տեսնում եմ
Թզուկային հասակն իրենց՝ մի կես թիզ։

Ես ապրեցի սարսուռն արծվի ճախրանքի,
Աչքերիս մեջ ծիրկաթիններ բեկվեցին,
Կյանքն զգացի թռիչքի մեջ գեղեցիկ
Ու կորցրի, ցավ եմ զգում կրկնակի։

Գիտեմ, միշտ կան՝ թռիչքը մեծ, կյանքն անհուն,
Ես կուրացած սիրո պղտոր արցունքից՝
Հիմա դրանց շողշողումը չեմ տեսնում։

Բայց ես գիտեմ, որ կան դրանք իսկապես,
Նրանք՝ թշվառ, այդ չգիտեն, բայց դեռ ինձ
Շշնջում են թզուկերեն՝ ի՜նչ մեղք ես։

4 (124)

Շշնջում են թզուկերեն՝ ի՜նչ մեղք ես.
Մեղք եմ, այո, նաև ստվեր գետնամած,
Երբ որ մեկը հոխորտում է իմ դիմաց,
Նրա տեղակ ցածրանում եմ, գիտե՞ք, ես։

Ընկածի հետ մի ընկած եմ իմ հոգում,
Նրա անկումն իմ անկումն է հիրավի,
Իմ արյան մեջ կա գնդիկն այն երևի,
Որ ուրիշի արյան պղտորն է զգում։

Սկսվում եմ մարդկությունից բովանդակ,
Սկսվում է մարդկությունն էլ ինձանից,
Մեկ ենք ես-նա, մի սիրտ՝ մի մեծ կրծքի տակ։

Կարմրում եմ ես ամոթից, երբ վատ են,
Մեղք եմ, այո, բայց և հպարտ դրանից,
Նրանք՝ երգի թզուկները, չգիտեն։

5 (125)

Նրանք՝ երգի թզուկները, չգիտեն,
Որ իմ սրտում կա մի տեսնող ճառագայթ,
Նոր ծալքեր է խավարի մեջ բացում արդ,
Ցրում մթան ծվեները դես ու դեն։

Մի հեռավոր ծոռան ծոռն եմ ես նրա,
Այն տիտանի, որ պարգևեց մեզ կրակ,
Ինչքան թվամ այսպես խեղճ ու անճարակ,
Էլի իմ մեջ այդ կրակից մի կայծ կա։

Եվ կա սերը, որ կարող է տանել ինձ
Դեպի տիտանն առասպելի, դեպի վեր,
Որ ջերմություն բաշխեմ մարդկանց իմ սրտից։

Ես չեմ կորցրել ինչ ունեի, չեմ կորցրել,
Մարդ եմ եղել, մարդ եմ նորից, սեր իմ, սեր,
Որ կարող եմ քո մի խոսքով տառապել։

6 (126)

Որ կարող եմ քո մի խոսքով տառապել,
Այդ նշան է, որ վսեմը միշտ կզգամ,
Կգա թել-թել հյուսվող երգի աստղաժամ,
Գուցե վերջին երգ ունեցող կարապ եմ։

Արյունով է երգը սնվում և սրտով,
Քչերն իրենց սիրտը տվին, երգ առան,
Եվ մարդկությունն հիմա ունի երգարան,
Ինչպես տուն, հող, ուտելու հաց՝ կարագով։

Ունենայի ես նրա մեջ երկու տող,
Մեկում անվերջ իմ տառապանքը տնքար,
Որ ծնվել է քո մի խոսքից ինձ խոցող։

Մյուսն ասեր, որ քո սիրուց՝ ես հարբել,
Խիզախել եմ երջանկության մեջ անծայր,
Քո մի խոսքով դարձնել աշխարհն առասպել։

7 (127)

Քո մի խոսքով դարձնել աշխարհն առասպել
Ու զմայլվել ստեղծածով սեփական,

Այս աշխարհում ինչքա՛ն-ինչքա՛ն աստղեր կան
Ու չեմ կարող հիացմունքս ես զսպել։

Ողջույն, աստղեր, մեծ երկնքի մեծ խոհեր,
Վառվում եք հար ողջ մարդկության համար դուք,
Ով որ ունի արթուն ականջ, աչք կտրուկ,
Ձեզ կլսի, կկարդա ձեզ ողջ գիշեր։

Իմ աչքերը լոկ սեր աստղը փնտրեցին,
Ու ծաղրում են թզուկներն ինձ՝ հի-հի-հի,
Մարդ էլ այսքան գերի լինի սիրածին։

Աստղեր, նրանք սեր էլ չունեն, ես գիտեմ,
Տվեք նրանց սիրո գարուն լիուլի,
Ուր ծաղիկներն հավերժորեն կփթթեն։

8 (128)

Ուր ծաղիկներն հավերժորեն կփթթեն,
Միշտ էլ այնտեղ կապրեն երգի մեղուներ,
Սիրտս մի օր նրանց կողքին տեղ ուներ,
Այս ե՞րբ այսպես փշրվեցի ես մեկեն։

Այնքան մանր եմ, ինձնով պատեր չեն շարի,
Կբարձրանա երգի տաճարն առանց ինձ,
Ո՞ւր մնացին սարսուռներս լուսալից,
Այս ի՞նչ արիք ինձ, պոետներ վիթխարի։

Ձեր բարձունքից ծիծաղում եք դուք վրաս,
Ինչպես որ ես՝ թզուկների վրա դեռ,
Որ կարծում են, բարձրացել են լեռն անհաս։

Եվ ուր որ է ողջույն կտան մուսային,
Իրենց հոգում փառքի մեծ-մեծ երազներ՝
Ցատկոտում են ճամփաներում աստղային։

9 (129)

Ցատկոտում են ճամփաներում աստղային,
Չեն ափսոսում թզուկները մի բերան,
Որ տիտաններ կային երգի, բայց մեռան,
Ի՜նչ ընձյուղներ դեռ չարձակած՝ բեկվեցին։

Ու խորհում են, ոչի՜նչ, նրանց փոխարեն
Ի՜նչ հրաշքներ պիտի աշխարհ բերեն դեռ,
Ի՜նչ նոր խոհեր, խորունկ մտքեր ծուռ ու կեռ։
Ու այդ կեռից հսկաներին պիտ կախեն։

Եվ տեսնում են արդեն իրենց երազում,
Որ ճոճվում են հսկաները կեռից կախ,
Ագռավ ու ցին նրանց աչքերն են մարսում։

Ի՜նչ խրախճանք ցիների հետ գիշակեր,
Պար են բռնել թզուկները այդ խիզախ,
Գոհ են այնպես, որ կարող են ցատկել դեռ։

10 (130)

Գոհ են այնպես, որ կարող են ցատկել դեռ
Հոգիները միաբջիջ, սնամեջ,
Փառք քեզ, իմ սեր, որ ես չկամ նրանց մեջ,
Մի ողջ երկինք երազ ունեմ ու լույսեր։

Եվ այս գիշեր տեսա երազ մի անսուտ,
Դուռս եկար սև նժույգով ոսկեպայտ,
Սևը շուտ է, ձին մուրազ է, դուռը՝ բախտ,
Որ լայն բացվել ու սպասում է գալուդ։

Հոգիները՝ միաբջիջ, աղքատիկ,
Ախր ինչպե՞ս, ախր ինչպե՞ս հասկանան,
Որ հարուստ եմ այդ երազով մի հատիկ։

Չեմ հասկանում ես էլ նրանց, իմ անգին,
Ինչո՞ւ նրանք ցանկանում են անպայման
Լվերի պես քնից հանել մուսային։

11 (131)

Լվերի պես քնից հանել մուսային,
Ահա նրա թևատակերն են կծում,
Ու ինձ հանկարծ պատում է ահ ու սոսկում,
Մի՞թե ես էլ նրանց պես չեմ վարքով իմ։

Ես ծաղրեցի արատները լվերի,
Ծաղրողն ինքը պիտի արատ չունենա,
Գոնե ծաղրած արատից զերծ լինի նա,
Որ անարատ խիղճ-դատավորը ների։

Բայց ծաղրողից հեշտ է դառնալ ծաղրվող,
Մեկ-մեկ այնպես է ինձ թվում, թե իրոք,
Ես էլ, ես էլ փքված լու եմ թռչկոտող։

Դու այդ պահին շողարձակում ես վսեմ,
Ես՝ գետնահար, նորից դառնում եմ անօգ,
Շնորհակալ եմ քեզանից, սեր իմ, սեր։

12 (132)

Շնորհակալ եմ քեզանից, սեր իմ, սեր,
Որ դու բարձր ես, որ անհաս ես դու այդպես,
Որ չքնաղ ես ու միշտ քեզ եմ ձգտում ես
Ու չեմ հասնի քո բարձունքին անստվեր։

Ու երիցս շնորհակալ եմ դարձյալ,
Որ դու խիստ ես, ինչպես ահեղ դատավոր,
Ամեն ուժ չէ, որ համարում ես հզոր,
Ամեն երգ չէ, որ կարող ես դու կարդալ։

Քո հոնքերի մի շարժումով ինձ սաստող
Ինձ չես թողնում, որ մտածեմ իմ մասին,
Թե ես իբր բանաստեղծ եմ նոր ծագող։

Թող մի մեծ էլ պակաս լինի Պառնասում,
Ասում ես դու, ու ես գոհ եմ վերստին,
Որ քո խոսքում ես ինձ պոետ չեմ կարծում։

13 (133)

Որ քո խոսքում ես ինձ պոետ չեմ կարծում,
Ո՜հ, դրանից տառապում եմ ավելի,
Եկեք, ինձ պես տառապողներ աշխարհի,
Մեր լացը լանք, ողբը ողբանք այս ցածում։

Նախ վտարենք մեզնից այն կեղծ մեծերին,
Որ կարծում են, թե չեն ծնվել անտաղանդ,
Ողբանք ձայնով, անկեղծությամբ մանավանդ,
Որ չտվինք ոչ մի մեծ գործ աշխարհին։

Ինձ թույլ տվեք նախ ես խոսեմ, ասեմ ձեզ,
Որ մտքերս, երազներս լուսեղեն
Նրա համար անկրակ են մոխրի պես։

Ու զանգատվեմ, որ կարծում է անտարբեր,
Թե իմ մոխրում պիտի մտքեր զուր պեղեն,
Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ։

14 (134)

Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ,
Ա՛խ, ինչպե՞ս ես դու ինձ փտած անվանել,
Երբ քո կանաչ սերը ինձնից չեն հանել,
Երբ իմ սրտում քո կարոտն է ծաղկում դեռ։

Ուր գնում ես, հետևում է աչքս քեզ,
Աչքս կորցնի, քեզ հոգիս է հետևում,
Հոգիս քնի՝ երազներս են արթնանում,
Որ քնիս մեջ շուրջդ հածեն սիրակեզ։

Ուր գնում ես, սրտիդ զարկն եմ ես լսում,
Քո սրտով եմ զգում իրերն այս բոլոր,
Իմը չկա, մեռավ մի տեղ իմ ներսում։

Ու տեսնում եմ քո աչքերով սրատես,
Քո աչքերով, քո աչքերով այդ խոշոր,
Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես։

15 (135)

Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես,
Կարեկցում են ինձ թզուկները նույնիսկ,

Երբ նայում են կույր աչքերիս ու գույնիս,
Շշնջում են թզուկերեն՝ ի՛նչ մեղք ես։

Նրանք՝ երգի թզուկները, չգիտեն,
Որ կարող եմ քո մի խոսքով տառապել,
Քո մի խոսքով դարձնել աշխարհն առասպել,
Ուր ծաղիկներն հավերժորեն կփթթեն։

Ցատկոտում են ճամփաներում աստղային,
Գոհ են այնպես, որ կարող են ցատկել դեռ
Լվերի պես քնից հանել մուսային։

Շնորհակալ եմ քեզանից, սեր իմ, սեր,
Որ քո խոսքում ես ինձ պոետ չեմ կարծում,
Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ։

ՓՈԻՆՋ - 10

1 (136)

Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ,
Իմ ճյուղերին հավքերը չեն ճռվողի,
Եվ հովերը տաքուկ շնչով սիրողի
Իմ ականջին չեն փսփսա ողջ գիշեր։

Իմ գիշերը լիքն է միայն լռությամբ,
Սև է այնպես այդ լռությունն ու խեղդող,
Մութ ջրհորում հիմա ընկած լինեմ թող,
Գեթ կկռվեմ խեղդվող մարդու սաստկությամբ։
Հիմա՝ անճար, ու՞մ օգնության կանչեմ, ու՞մ,

Որ ինձ փրկի լռությունից քո ճնշիչ՝
Իմ մեջ դարձած մի հուսահատ մահվան ճիչ։
Փոթորիկ է քո լռությունն իմ սրտում,
Իսկ ես հզոր այն կաղնին չեմ երբեմնի,
Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի։

2 (137)

Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի,
Իսկ դու անհոգ՝ դալար շիվեր ես տնկում,
Որ ծառ դառնան, մի օր շողան երկնքում՝
Ճյուղերի մեջ խնձոր-աստղերն անհունի։

Ա՜խ, լինեի խնձորենին քո տնկած,
Քո մատների բույրը տայի աշխարհին,
Իմանայիր սերս ինչքան է խորին
Ու նոր միայն կոտրեիր ինձ, անաստված։

Սիրտս, լսիր, ափսոսանքից լուռ տնքաց,
Ափսոսում եմ իմ չպտղած իղձերին,
Որոնք պիտի քո քաղցրությամբ լցվեին։

Լաց է լինում սիրուս ծաղիկը ջարդված,
Շատերն անցան ինձ պես սիրո լացով լի,
Այսպես ջահել, դեռ չդարձած ծերունի։

3 (138)

Այսպես ջահել, դեռ չդարձած ծերունի՝
Սիրտս լիքն է ընկնող ծառի սարսուռով,

Ծառեր տնկիր ու թող աճեն անխռով,
Մեկն էլ գուցե շիրմիս վրա հով կանի։

Այդ ծառեր չեն, մահվան դեղին աչքի դեմ
Հազարաձև արարում է դա կյանքի,
Ինչքա՞ն ծառեր ձեռքդ պիտի դեռ տնկի,
Որ ասես, թե մահվանն հաղթել ես արդեն։

Շտապում ես, ի՞նչ է եղել, սիրելիս,
Գալիք տարին նույնպես ունի ծառատունկ,
Նոր ծառերի ծլարձակում ու ծաղկունք։

Եթե մահ կա, քեզ չէ, ինձ է մոտ գալիս,
Սիրտս է մաշված, գուցե հանկարծ այս գիշեր
Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր։

4 (139)

Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր
Ու կտեսնեմ քո ծառերը ծաղկելիս,
Քեզ կտեսնեմ գուցե հանկարծ ժպտալիս,
Երբ կբացես իմ գաղտնիքը՝ թաքուն դեռ։

Քոնի կողքին, քեզնից գաղտնի, այս գիշեր
Ես իմ անշուք խնձորենին տնկեցի,
Երկարում է ահա թելը իմ հույսի,
Որ քոնի հետ իմն էլ կաճի, կելնի վեր։

Այդ ու՞մ ճամփին գեթ մի ուրախ օր չկա,
Կա, պիտի գա և իմ օրը անտրտում,
Երբ կողք կողքի մենք կծաղկենք՝ ես ու դու։

Վշտի աստված, թող գա օրս արևկա,
Դու այնքան շատ հառաչանքներ ունես խոր,
Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ։

5 (140)

Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ,
Մեր ծառերը անուշ բերք տան կողք կողքի,
Մեր ծառերը, մեր իղձերը հրճվանքի
Փոքրիկ հողում իմ ընկերոջ, իմ եղբոր։

Նա էլ ինձ պես հիմա զարկված է սիրուց,
Բայց ոչ կնոջ, այլ մի պատառ մայր հողի,
Միակ տենչն է՝ հողն իր ջանքով ծիծաղի,
Ավելանա բարին թեկուզ մի պտղունց։

Մեր ծառերը նա կջրի խանդավառ,
Ա՛խ, ճիշտ լիներ, ոչ թե ցնորք միմիայն,
Որ իմ սիրուց ընկեր դարձար դու նրան։

Թե ցնորքս ցնդի հանկարծ հողմավար,
Ո՞ր անգութը կասի լեզվով թունալից՝
Աշխարհը չի աղքատանա դրանից։

6 (141)

Աշխարհը չի աղքատանա դրանից,
Թե իր վշտից իմ արցունքը պակասի,
Բայց մի կաթիլն հիմա փոխվեց երկուսի,
Ա՛խ, տեսել են, լաց ես եղել դառնալից։

Քո արցունքն է այրվում հիմա իմ սրտում,
Այդ ե՞րբ, ասա, ինչպե՞ս դարձար լալկան ամպ,
Շատ ես խոցել ինձ քո ծաղրով, սառնությամբ,
Բայց արցունքով ինձ առավել ես խոցում։

Ես խինդ չունեմ, տային ինձ խինդն աշխարհի,
Ողջը ես քեզ նվիրեի ցնծագին,
Ու մնայի այսպես անխինդ վերստին։

Թե այդ քիչ է, կյանքս էլ քեզ տայի,
Գեթ դու ժպտա, ջահել մեռնելն հոգ չէ ինձ,
Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից։

7 (142)

Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից,
Ես՝ գալիքի այդ ծերունին դառնահեծ,
Չասեմ՝ ծառս քոնի կողքին չծաղկեց,
Ժպիտներդ թռիչքի թև չեղան ինձ։

Ես չտեսա ծլարձակումն իմ իղձի՝
Փունջ-փունջ ծիծաղ քարքարուտում մի պատառ,
Մեր ծառերից խնձոր-խնձոր կաթող վար,
Ու ողջ կյանքում քո երաշտից խանձվեցի։

Բայց դու, սեր իմ, դու էլ տխուր ես ինձ պես,
Մեկ-մեկ նստում ու լալիս ես սրտիդ մեջ,
Դու, որ ծովում մրրիկ էիր, բարձրի տենչ։

«Իմ հիշատակն են ծառերն այս»,- ասել ես,
Հրճվել, որ չես դառնա ծեր կին մի անզոր,
Ու՞մ է նրա տնքտնքոցը հարկավոր։

8 (143)

Ու՞մ է նրա տնքտնքոցը հարկավոր՝
Եկան ու ինձ ասին այդպես քո մասին,
Անվանեցին քեզ փնթփնթան, ծաղրեցին՝
Նախանձելով քո հրայրքին անսովոր։

Սակայն նրանց դու չես ծաղրում, այդ ինչո՞ւ,
Մենակ ես եմ թիրախ դարձել խոսքիդ սուր,
Ես, որ քեզ հետ ալիքների դեմ զարհուր
Կռվում էի, բնավ չէի երկնչում։

Էլ ի՞նչ անեմ, որ չծաղրես, ի՞նչ անեմ,
Ախր, պիտի փուշ խոսքերիդ փոխարեն
Ժպիտներդ ինձ զգվեին մեղմորեն։

Ելնեմ, այրվեմ արևների մեջ վսեմ,
Կռիվ մտնեմ կայծակի դեմ անխնա,
Գոնե հիմա կասեն՝ ջահել մեռավ նա։

9 (144)

Գոնե հիմա կասեն՝ ջահել մեռավ նա,
Ու չեն ասի, թե ծերուկ է սիրահար,
Սիրո վշտից խեղճը դարձել խելագար,
Մերթ լալիս է, մերթ ծիծաղում իր վրա։

Ծիծաղելի շատ բաներ կան աշխարհում,
Բայց ուրիշ է սիրահարված ծերունին,
Ներում ունի անգամ դահճի սերը սին,
Բայց սիրավառ ծերունուն ո՞վ է ներում։

Ոմանք վրաս կծիծաղեն հաճույքով,
Ոմանք քարից ծանր խոսքեր ինձ կասեն,
Կամ ծաղրանքով ինձ կանվանեն ծեր բազե։

Քո անունը ոմանք կտան շշուկով
Ու ոմանք էլ, որ կիմանան գիժ չեմ ես,
Կասեն՝ այնպես խորն էր սիրում մեկին՝ քե՛զ։

10 (145)

Կասեն՝ այնպես խորն էր սիրում մեկին՝ քե՛զ,
Իսկ ես կասեմ (թե հրաշքով արթնանամ)
Ցնորքիս մեջ մտածել եմ մի անգամ,
Որ դու, անգին ..., որ դու ..., ինձ դու ... սիրում ես։

Որ կա մի դև յոթգլխանի՝ մի անհայտ,
Մի հանելուկ, որ ես լուծել չեմ կարող,
Ինչ էլ լինի (խոսքս վկա մնա թող)
Մի օր գուցե կզգաս լացս հուսահատ։

Ո՛հ, սաստիկ է սիրուս մրրիկը դարձյալ,
Փլվող տուն եմ, դղրդոցս լսելիս
Գիտցիր, որ այդ քո սուրբ անունն եմ տալիս։

Այդ ժամանակ գուցե հոգիդ ծալեծալ
Կհեղեղվի իմ արցունքով գեթ մի պահ,
Եվ սրտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա։

11 (146)

Եվ սրտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա,
Ու կհիշես, որ երգեր եմ գրել ես,

Պահ եմ տվել արցունքներս աղեկեզ
Իմ թղթերին, որ անտեր որբ են հիմա։

Տեր կկանգնես նրանց գուցե (բախտ անհուն)
Քոնն են նրանք, ինչպես քոնն էր իմ հոգին,
Բայց մի կարդա մենության մեջ, առանձին,
Այցի արի գերեզմանիս դու իսկույն։

Կարդա, լսեմ՝ ձայնիդ կարկաչն եմ ուզում,
Կարդա, լսիր՝ ինչքան էր սերս շքեղ,
Կարդա, լսենք՝ գեթ մի անգամ միատեղ։

Այնքան քիչ բան մրմնջաց քեզ իմ լեզուն,
Թող երգերս քեզ ողջն ասեն, երբ, անգի՛ն,
Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին։

12 (147)

Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին
Ու կտեսնես գուցե ծառերն իմ ու քո,
Գիտե՞ս, ելա՝ զինված բահ ու քլունգով,
Ջուր բերեցի նրանց համար, ի՛մ անգին։

Ուզեցի ես, որ իմ ծիլ-ծիլ քրտինքով
Իմ ընկերոջ սմքած հողը կանաչի,
Եվ ուզեցի, որ մեր սերը բողբոջի
Ծառերի հետ, ծառերի մեջ իմ ու քո։

Բախտ է դարձյալ, գոնե ծառի տեսք առած
Մահից հետո լինեմ քեզնից անբաժան,
Կողքիդ կանգնած՝ ականջիդ սերս շրշամ։

Դու այդ կզգաս, ուշ կլինի չափազանց,
Թաց հողի տակ մի բուռ հող եմ դարձել ես,
Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լսես։

13 (148)

Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լսես,
Հողի տակից իմ ձայնը քեզ չի հասնի,
Իմ սրտի մեջ մի հուր կարոտ կզարթնի,
Եվ իմացիր, երազ դարձած կգամ քեզ։

Ցուրտ է՝ կասեմ, ու խոնավ է հողի տակ,
Ձեռքս բռնիր, հանիր մութից լույս ցերեկ,
Կանաչ խինդով լցնեմ մի ողջ տիեզերք
Եվ քո սիրով՝ անհունները կապուտակ։

Այն կյանքում քաղցր ու ազնիվ առավել,
Որ ուրիշին երազ ու կյանք պարգևես,
Քո պարգևով ինքդ լինես բարձր ու վեհ։

Երազիդ գամ, կասեմ, սեր իմ, քեզ այս էլ,
Որ քանի դեռ ծառ չես տնկել իմ շիրմին
Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին։

14 (149)

Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին,
Ի՞նչ իմաստ եմ, ավա՜ղ, փնտրում այդ «մեծում»,
Մեկ չէ՞, երբ որ մանրիկ որդն է քեզ կրծում,
Այդ ճիճվին ի՞նչ՝ մեծ ես եղել, թե չնչին։

Թեկուզ այդպես, ես կջրեմ մի ափ հող,
Ի՜նչ մեծ պարգև, ժառանգել բահն իմ նախնյաց,
Բարությունը, որ փոխանցել են միմյանց
Եվ մեծ սերը՝ իմ սրտում էլ տրոփող։

Էյ, ժամանակ, թեկուզ փխրուն մարդ եմ ես,
Ես այդքանը և այդ կերպ եմ հաստատում,
Կյանքը այսպես պիտի ծիլ տա իմ սրտում։

Ես կմնամ, թեկուզ ոչինչ էլ դարձնես,
Եվ կգոռամ քո հավերժ խուլ ականջին՝
Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ։

15 (150)

Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ,
Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի,
Այսպես ջահել, դեռ չդարձած ծերունի՝
Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր։

Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ,
Աշխարհը չի աղքատանա դրանից,
Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից,
Ու՞մ է նրա տնքտնքոցը հարկավոր։

Գոնե հիմա կասեն՝ ջահել մեռավ նա,
Կասեն՝ այնպես խորն էր սիրում մեկին՝ քե՜զ,
Եվ սրտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա։

Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին,
Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լսես,
Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին։

ՓՈՒՆՋ 11

1 (151)

Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին՝
Հաղթահասակ լեռներիս հետ բաղդատած,
Ողջույն, լեռներ, եկել եմ ձեր գիրկը բաց,
Որ ճար անեք այս ամեհի իմ վշտին։

Ինչ է վիշտդ՝ ձայն են տալիս լեռներն ինձ,
Նայիր նրան մեր հավերժից և իսկույն
Կզգաս նրա փոքրությունը քո հոգում
Ու մեզ նման վարդ կհագնես անթախիծ։

Ինչքա՜ն շատ եք, ինչքա՜ն շատ եք ապրել դուք,
Բայց ապրելուց չեք ձանձրացել, իմ լեռներ,
Ծաղիկ հագած ծիծաղում եք վեհաշուք։

Կանաչ կյանքով էլի լիքն է կուրծքը ձեր,
Հող են դառնում ձեր մեջ դարեր բյուրավոր,
Ինչպես մամոնտն այս հողի տակ թաղված խոր։

2 (152)

Ինչպես մամոնտն այս հողի տակ թաղված խոր,
Էլ չի քայլի, չի շորորա լեռն ի վեր,
Այդպես էլ իմ մանկությունը՝ մի թիթեռ,
Չի կայծկլտա այս լանջերին ծաղկավոր։

Բայց ես եկել իմ մանկությունն եմ փնտրում,
Ա՜խ, մանկանամ, ցավն այս ելնի իմ սրտից,

Թող ձյուն տեղա ու սրթսրթամ ես ցրտից,
Միայն չայրվեմ սիրո ծուխ ու բոցերում։

Ա՜խ, ինչե՜ր եմ ցավից մղված ես ասում,
Ինչպե՞ս, ապրեմ առանց սիրո՞, առանց քե՞զ,
Չապրել է այդ, մտքի, սրտի բացասում։

Թող այս ցավից թառանչեմ ես աղեկեզ,
Թեկուզ խոցված՝ այս լեռան պես կանգնեմ գոռ,
Նրա նման սիրուս մեջ մեծ ու հզոր։

3 (153)

Նրա նման սիրուս մեջ մեծ ու հզոր՝
Այն պոետի, որ իր լեռները երգեց,
Իմ լեռներում ես երգում եմ դարձյալ քեզ,
Չայնս զնգում է սարեսար, ձորեձոր։

Նորից ինչպես իմ մանկության օրերին,
Սեր իմ, տեսա հուր-հրեղեն նժույգներ,
Սակայն ոչ թե հեքիաթներից ճախրող վեր,
Այլ բուն կյանքից, որ եռում է իմ չորս դին։

Ցոլցլացին բոցափրփուր բաշերով,
Որպես ոգու անսանձ թռիչք իմաստուն,
Եվ ես տեսա այգաբացը գիշերով։

Ա՜խ, պատրանք էր, բայց թողեց հուշ մի խնդուն։
Վերապրում եմ այդ մեծ պատրանքն իմ բաժին,
Թեև սիրտս պարզված է սուր քո փշին։

4 (154)

Թեև սիրտս պարզված է սուր քո փշին,
Բայց ես էլի օրհնում եմ քեզ, իմ անգութ,
Եվ լեռներն իմ, որոնց ընկերն եմ մանկութ,
Ինձ հետ ասես սպասում են քո ճամփին։

Արի, սեր իմ, այս կակաչները փնջիր,
Իմ լեռները սնուցել են քեզ համար,
Փոքրիկ-փոքրիկ հրդեհներ են բյուրհազար,
Որ լեռներս են ճամփիդ վառել ցան ու ցիր։

Արի փուշ չեմ, որ ցուրտ քամուն դիմանամ,
Կակաչի պես իմ թերթերը կթափեմ,
Նույնիսկ եթե քամին սաստիկ չէ այնքան։

Ես կմեռնեմ, կապրի փուշը դժնադեմ,
Գիտե՞ս, այստեղ (մեծ սառույցի միջոցին)
Մամոնտն ընկավ, բայց գայլերը ապրեցին։

5 (155)

Մամոնտն ընկավ, բայց գայլերը ապրեցին
Ու սարերը լցրին իրենց ոռնոցով,
Ու սարերը, ու դարերը՝ կաղկանձով,
Որ դնչեդունչ ձգվեց հասավ մեր դարին։

Նրանց երկար ոռնոցում կա թաքուն խինդ,
Որ մամոնտը շունչը փչեց այն ցրտում,
Հիմա նրա ոսկորներին են նստում,
Որ նախանձն էր շարժում իրենց՝ քայլքով խինդ։

Սոսկալի է ծաղրը հաղթող նախանձի,
Օ՜, եկ, սեր իմ, մեկտեղ ատենք մենք նրան,
Ախր քիչ է իմ ատելը առանձին։

Գայլերի դեմ հեշտ չէ կռվել անվարան,
Այլ է մարտը և կռվելու զենքն այլ է,
Որովհետև նենգ են նրանք ու գայլ են։

6 (156)

Որովհետև նենգ են նրանք ու գայլ են,
Պիտի ոռնան ու հոշոտեն գայլաբար,
Նրանց առջև չկա սիրո ճանապարհ,
Լույս չի վառվում, այնպես մռայլ, անփայլ է։

Լույսն ինչքան էլ կանաչ ներկես կամ կապույտ,
Կարմիր, դեղին, նարնջագույն՝ մեկ է այդ,
Նա կմնա էլի լույս ու ճառագայթ,
Միայն սևն է, որ կդարձնի ողջը մութ։

Սևը գույն չէ, սևը մահ է ու խավար։
Եվ գայլերը այդ սևն ունեն անքանակ,
Լույս մարելով՝ ճամփա անցան դարեդար։

Ա՜խ, կմարեն իմ սիրո լույսն էլ նրանք,
Սեր իմ, ախր շատ են ագահ, փուչ ու նենգ
Ու մամոնտի ազնվությունը չունեն։

7 (157)

Ու մամոնտի ազնվությունը չունեն
Աղվեսներն էլ՝ ցեղակիցները գայլի,

Նրանց խելքը թրի նման էլ փայլի,
Էլի խարդախ-խորամանկ են ի ծնե։

Մամոնտներ իմ, գայլն ու աղվեսն այնքան շատ,
Իսկ ձեզանից մեկն էլ չկա, չտեսանք,
Դուք մեզ համար մի անմարմին անրջանք,
Բարի, բարի, անհունորեն գթառատ։

Դուք այդքան մեծ, այդքան ուժեղ և սակայն
Փոքրին, թույլին երբեք չէիք հոշոտում,
Սնվում էիք թուփ ու խոտով միմիայն։

Ով ազնիվներ, սեր ու լույս կար ձեր սրտում,
Այդ է որ գայլն ու աղվեսը չունեին,
Որ ոչ մսով, միայն խոտով սնվեին։

8 (158)

Որ ոչ մսով, միայն խոտով սնվեին,
Չարության տեղ ունենային պիտի խիղճ
Ու լինեին ջրի նման արարիչ,
Հրի նման տաք-տաք հացեր թխեին։

Ինձ բաց թողնես, ասաց ջուրը, չեմ կորչի,
Այնտեղ եմ ես, ուր որ կանաչ կտեսնես,
Հուրը ասաց՝ հաց կթխեմ սիրով ես,
Հացի բույրը տեղս ստույգ քեզ կասի։

Խիղճն հառաչեց՝ ինձ բաց թողիր թե հանկարծ,
Ջուր մի փնտրիր, ինձ չես գտնի ոչ մի տեղ։
Գայլ ու աղվես բաց են թողել խիղճն անդարձ։

Պահեց մամոնտն իր խիղճն անբիծ ու լուսեղ,
Փառք այդ վեհին և նրանց, որ խղճով լի
Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի։

9 (159)

Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի,
Որ իմ առջև մարդու պատկեր է առնում,
Մամոնտ ասում, վսեմ մարդ եմ հասկանում,
Գայլ ու աղվես՝ հոգիներ նենգ, տմարդի։

Փառք այն մարդուն, որ մամոնտի օրերին
Գթաց հանկարծ իր պես մարդուն չկերավ,
Փառք մեծ գութին, որ ջինջ լույսի պես հարյավ
Ու բաժանեց մարդ ու գազան իրարից։

Նա առաջին բանաստեղծն էր աշխարհում,
Ես հոգուս մեջ լսում եմ երգը նրա,
Ղողանջում է այդպես կարոտդ անհուն։

Հիմա, սեր իմ, մամոնտն ու մարդն այդ հսկա
Ոգի դարձած՝ թափառում են անկապանք,
Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք։

10 (160)

Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք՝
Սուրբ ոսկորներն այն անժանիք էակի,
Որ բնույթով պիտի լոկ խոտ ճարակի,
Ապրի իր պես, իր պես մեռնի անճարակ։

Ես էլ այդպես անճարակ եմ սիրուս մեջ,
Սերը չունի ոչ մի ժանիք, ոչ մի ճանկ,
Ես ինչ ունեմ՝ տանջանք է լուռ, հառաչանք,
Նույնիսկ այստեղ, իմ լեռներում երկնամերձ։

Անգամ նրանք իմ կսկիծը չեն մեղմում,
Անհունն ինչպե՞ս փոքրացնես, չունի ծայր,
Սկիզբն ու՞ր է և ո՞ր կողմից ես սեղմում։

Ու թե թաղվեմ այստեղ սիրուս հետ անճար,
Գեթ կսփոփվեմ՝ ոսկորներ կան մամոնտի,
Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի։

11 (161)

Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի՝
Իմ լեռներին՝ հանճարների պես անզույգ,
Ինձ հոգի եք ախր տվել, լեռներ՝ դուք,
Ինչ առել եմ՝ ձեզ կբերեմ վերստին։

Ձեզ կձուլվեմ, կլեռնանամ ես ձեզ հետ,
Իմ սրտից էլ կծլեն հուր ծաղիկներ,
Գուցե այստեղ կշրջես դու, սեր իմ, սեր,
Ու կհարբես սիրուս բույրով առհավետ։

Սերս բուրեց քո ճամփեքին՝ զգացիր,
Ծաղիկ դառնա՝ չես տրորի դու նրան,
Կշնչես բույրն օր ու գիշեր անձանձիր։

Կրծքիդ խփած՝ կգուրգուրես ինձ անձայն...
Օ՜, ինչ բախտ է բայց իմանաս այս մասին,
Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին։

12 (162)

Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին,
Մի խեղճ բլրի լեռ դառնալու խեղճ երազ,
Ա՜խ, ի՞նչ տենչամ, որ չծաղրես, ինձ զգաս,
Ինչպես լեռներն հառաչանքն իմ զգացին։

Մենակ ես չէ, որ հառաչել եմ սիրուց,
Ինձնից առաջ Պետրոս Դուրյան է եղել,
Հայնեն աշխարհին արցունքով է հեղեղել՝
Գութ հայցելով, ինձ պես, սիրո աստծուց։

Մեղա՛, մեղա, ա՛խ, այս ինչե՜ր ասացի։
Բաղդատվեցի թեկուզ վշտով այսքան մեծ
Վսեմաշուք այրերի հետ Պառնասի։

Աչքերիդ մեջ ծանոթ հեգնանքը զարթնեց,
Օ՜, մի խոսիր, սիրտս կառնես ոտքիդ տակ
Ու կծաղրես, որ փառատենչ եմ անհագ։

13 (163)

Ու կծաղրես, որ փառատենչ եմ անհագ,
Մերթ մամոնտի հետ եմ ես ինձ բաղդատում,
Մերթ լեռներն իմ իբր զգում եմ իմ սրտում,
Մերթ մեծ մարդկանց նման սգում գլխահակ։

Այդ է վարքը գաճաճների՝ կասես դու,
Լուռ կմնամ, դարձյալ քեզ չեմ առարկի,
Չէ՞ որ իրավ ես մղվում եմ մեծ փառքի,
Շատ մեծ փառքի՝ քո ժպիտին կենսատու։

Բայց բառերով ինչպե՞ս ասեմ ես այդ քեզ,
Ա՜խ, իմանաս, շատ կտխրես երևի,
Որ ինձ համար սիրո մի տաք խոսք չունես։

Միայն ծաղր է, միայն հեգնանք վերևի,
Իսկ ես ցածում, իմ օրերում մահածին
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին։

14 (164)

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին,
Կյանքում չեղա տիտանների նման վեհ,
Գեթ մահվան մեջ պիտի նրանց նմանվեմ,
Մեռնեմ հպարտ, ինչպես պատգամ տվեցին։

Մահվան պահին, եթե նստես սնարիս,
Հեշտ կմեռնեմ, ինչպես հերոսն է մեռնում,
Արծվի նման՝ կյանքից մահ է սավառնում,
Ոչ ախ ու վախ, ոչ էլ սարսափ՝ գնալիս։

Իմ աչքերը ես կփակեմ քեզ կարոտ,
Եվ կփակվեն երկու թափուր լուսամուտ՝
Ճամփիդ վրա բացված ամեն առավոտ։

Սեր իմ, եղիր վերջին պահին բարեգութ
Եվ մի հեգնիր գեթ այս իղձը իմ լռին.
Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին։

15 (165)

Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին,
Ինչպես մամոնտն այս հողի տակ թաղված խոր,

Նրա նման՝ սիրուս մեջ մեծ ու հզոր,
Թեև սիրտս պարզված է սուր քո փշին։

Մամոնտն ընկավ, բայց գայլերը ապրեցին,
Որովհետև նենգ են նրանք ու գայլ են
Ու մամոնտի ազնվությունը չունեն,
Որ ոչ մսով, միայն խոտով սնվեին։

Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի,
Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք,
Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի։

Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին,
Ու կծաղրես, որ փառատենչ եմ անհագ,
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին։

ՓՈՒՆՋ 12

1 (166)

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին,
Որ հաստատեմ, թե հողն ինձ զուր չի սնել,
Հուրը, ջուրը, օդը զուր չեն դաշնակցել,
Որ ես լինեմ, լիքը լինեմ, ոչ թե սին։

Չորսի կողքին կա և տարրը հինգերորդ՝
Եվ սերն է այդ, առանց որի չեմ ապրի,
Սերը՝ աղը մայր բնության ու երկրի,
Սերը՝ հոգու կրակ և ջուր, հող և օդ։

Բախտն ուզել էր, որ երբ մի օր գամ աշխարհ,
Սե՛ր լինես դու, դո՛ւ սեր լինես ինձ համար
Կրակներով, հմայքներով քո շռայլ։

Այս ի՞նչ եղավ, հանդիպեցինք, և սակայն,
Չի ճառագում քո ժպիտը դյութական,
Կյանքում դու ինձ պիտի տայիր խորք ու փայլ։

2 (167)

Կյանքում դու ինձ պիտի տայիր խորք ու փայլ,
Սառած ձյուն եմ խոր ձորերում տխրության,
Ինձ չի հասնում նույնիսկ արևը ամռան,
Ու՞ր ես, կյանքս ալիք դարձնող իմ ձնհալ։

Ահա եկել հին լողափը վերստին,
Քո հետքերն եմ ալիքների մեջ փնտրում,
Այն ալիքներն, ա՛խ, էլ չկան աշխարհում,
Որ հաղորդեն քո տաք շունչը իմ սրտին։

Չկան և այն վայրկյանները տեսլական,
Երբ իմ սրտին հանկարծ շողերդ ընկան,
Եվ դու դարձար սրտիս արև-տիրակալ։

Ա՛խ, ծիլերս չայրեիր դու խոլաբար,
Երգ-ծիլերով հիմա լցված ծայրեծայր
Կարող էի ծովի նման ես ծփալ։

3 (168)

Կարող էի ծովի նման ես ծփալ,
Բայց հիմա լուռ, անհույս կանգնած եմ ափին,

Ծովն էլ ինձ հետ հառաչում է տխրագին,
Չես այցելում, ինձ պես նա էլ է մռայլ։

Ես ու ծովը՝ երկու լքված հոգիներ,
Մերթ փոթորկվում քո անարդար վարմունքից,
Մերթ խաղաղված, լռիկ թախծում ենք նորից՝
Իրար խառնած երկու կարոտ, երկու սեր։

Լուռ է ծովը, լիքն հուշերով մարգարտյա,
Իր գրկի մեջ գուցե քեզ է տեսնում նա
Եվ ժպտում է երազների մեջ վերին։

Ես էլ իր պես այդպես ժպտալ կուզեի,
Տանջանքի մեջ լինել իր պես լույսով լի
Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին։

4 (169)

Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին,
Երգով լցնել, քեզ մոտ չգալ ձեռնունայն,
Բայց ես լիքն եմ երազներով միմիայն,
Որ ամեն մի անձրևի հետ ծաղկեցին։

Սեր իմ, ծովը կապույտ-կապույտ է այնքան,
Կապույտ-կապույտ է երկինքը իր վրա,
Մեկ էլ կապույտ է երազն իմ յոթնաջահ,
Քանզի երեքն էլ անհուն են, անսահման։

Կարող էի երկնքի պես ես ժպտալ,
Ծովի նման կուրծք տալ, ելնել փրփրափայլ,
Թե տեսնեի քեզ իմ ճամփան պահելիս։

Ա՛խ, փակեցիր ինձ երազի սահմանում,
Երազը կա, վիշտս ինչքան էլ անհուն՝
Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս։

5 (170)

Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս,
Մինչև անգամ իմ տանջանքի համար այս,
Իմ հուշերի, որ վառում են բյուր երազ,
Ուր էլ լինեմ՝ առկայծում են ճամփեքիս։

Ծովն եմ հիշում, ջրահարսիդ լող տալիս,
Ինձ եմ հիշում ծովի ճերմակ բոցերում,
Քեզնով դյութված՝ լողում էի քո հեռուն,
Խեղդվում էի, փրկեցիր ինձ սուզվելիս։

Բայց փրկեցիր, սիրո ծովը նետեցիր,
Խեղդվում եմ ես անհուսության մեջ անծիր,
Վրաս վշտի քանի ալիք փուլ եկած։

Ավաղ գիտեմ, ինձ չես փրկի այս անգամ,
Սակայն բախտից էլի պիտի գոհ մնամ՝
Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց։

6 (171)

Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց,
Այն, որ ահեղ ալիքներին պլլվում,
Ճախրում էիր բոցափրփուր այս ծովում,
Ճախրող դու հուր՝ ջրերի մեջ չհանգած։

Խենթություն էր նետվել ծովը ամեհի,
Բայց, դու գիտեմ, ուզում էիր այդ պահին
Խիզախության սահմանները մարդկային,
Ոգու ուժը ճշտել շնչի տակ մահի։

Սարսափելին ալիքը չէր կատաղի,
Սարսափելին վախն էր, ստվերն իսկ վախի,
Թե արթնանար քո խենթ սրտի մեջ հանկարծ։

Գինով էի խիզախությամբ քո վերին,
Դեռ գինով եմ շողքով քո լույս թևերի,
Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց։

7 (172)

Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց
Եվ բերկրանքն այս, որ ծովն անվախ նետվեցի՝
Հրապուրված քո թովչանքով կանացի,
Քո խենթությամբ ինքս էլ հանկարծ խենթացած։

Եվ այդ պահից միշտ հանելուկ մնաց մեծ,
Թե հրայրքդ, որից ծովն էր փոթորկվում,
Լուսե կուրծքդ, ձայնիդ ղողանջն անպատում,
Մայր բնությունն ի՞նչ հանճարով ստեղծեց։

Եվ որտեղի՞ց քո աչքերի հուրն առավ,
Որ չգիտեմ ցուրտ հյուսիս են, թե հարավ,
Նույնիսկ ցրտով այրում են ինձ՝ նայողիս։

Ուր գնում եմ՝ վառվում եմ ես դառնագին,
Քո շունչը կա, քո պատկերը իմ ճամփին,
Եվ իրերին՝ հայացքը քո՝ նայելիս։

8 (173)

Եվ իրերին՝ հայացքը քո՝ նայելիս,
Սեր իմ, միայն շողի հետ եմ բաղդատում,
Պարզևում ես խորհրդավոր քնքշություն,
Ինչի նայում, ինչի որ ձեռք ես տալիս։

Ինձ են նայում նրանք քո ջինջ աչքերով,
Լեզու առած շշնջում են իմ սրտին,
Որ դու հեռու, բայց փռված ես իմ չորս դին՝
Կանչող-դյութող, ինչպես ծովն այս անխռով։

Քո նայվածքի ցոլանքներն եմ հավաքում,
Եվ հյուսում քո լուսապսակն իմ հոգում
Անեղծելի, ինչպես լազուրը բարձրիկ։

Եվ դա իմն է, միայն իմը հավիտյան,
Բախտավոր եմ, որ քո ցոլքերն իմ մեջ կան,
Պահել եմ ես քո ձևերը սլացիկ։

9 (174)

Պահել եմ ես քո ձևերը սլացիկ,
Իսկ նա, ասա, ինչ՞ է պահում նա քեզնից,
Ինչպե՞ս նրան դու ժպտացիր, իմ անբիծ,
Նա վախեցավ նետվել ծովը փրփրալիք։

Նա ի՞նչ ունի, ի՞նչ ես նրա համար դու՝
Սիրուն աչքեր, սիրուն բերան, սիրուն քիթ,
Բայց նա չունի լուսապսակը դեմքիդ՝
Գանձս միակ, երանությունն իմ հոգու։

Հարուստ եմ ես, բայց նա ինձ չի նախանձում,
Քանզի լույս է ունեցվածքն իմ, չի տեսնում,
Ինչպե՞ս տեսնի և ի՞նչ տեսնի կույր սրտով։

Ինչպե՞ս զգա, որ տեսնում եմ լուսարբած
Քո սուրբ, քո նուրբ երազները թևաբաց,
Որ մտքիս մեջ հար ճախրում են հոգեթով։

10 (175)

Որ մտքիս մեջ հար ճախրում են հոգեթով
Քո վարսերը՝ տրված հողմին այն օրվա,
Ասել է, թե՝ քեզ տեսնելուց մինչ հիմա
Ես նույն խենթն եմ՝ դյութված սիրուդ հեքիաթով։

Ծովն է ծփում՝ ամռան արևը խորքում,
Ալիքները ցոլցլում են շողարձակ,
Մեր է արևն ու շողերը նրա տաք
Խորքից ծովի դեմքն է լույսով ողողում։

Շուրջս՝ ափին, ինչքա՜ն աչքեր կան սիրուն,
Բայց ես անվերջ քոնի նմանն եմ փնտրում,
Զո՜ւր, նմանը չկա, թեկուզ խաբուսիկ։

Ուրիշ աչքեր, ինչքան էլ ջինջ ու պայծառ,
Ո՞նց բաղդատեմ աչքերիդ հետ լուսավառ,
Մաքուր-մաքուր, աստվածորեն գեղեցիկ։

11 (176)

Մաքուր-մաքուր, աստվածորեն գեղեցիկ
Ցոլքդ է փռխվել ալիքներին վետվետուն,

Լողում ես դու՝ հազար երազ քո սրտում
Եվ այս անգամ՝ ջրերի մեջ հանդարտիկ։

Ես քեզ տեսա... մի վայրկյան էր դյութական,
Բայց տեսիլք էր, ցնդեց անհետ, էլ չկա,
Իմ կարոտն էր վառել ծովում արևկա
Աչքերիս դեմ քո պատկերը մի վայրկյան։

Սիրուն պատկեր, անվերջորեն թող տևեր,
Թե այդ չեղավ՝ գեթ մի անգամ կրկնվեր,
Մի անգամ էլ ինձ պարգևեր ծով բերկրանք։

Դեռ մտքիս մեջ քո տեսիլքը լուսածին՝
Ափին նստած՝ երգ հյուսեցի քո մասին,
Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ։

12 (177)

Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ,
Ոչ կարկաչում, ոչ էլ ծարավ է կոտրում,
Ո՞վ է եկել, ոսկին որտե՞ղ է փնտրում,
Ա՛խ, ասացեք՝ զո՞ւր է ամեն ճիգ ու ջանք։

Կարծում էին հարուստ երակ եմ ոսկու,
Սակայն, ինչպես ծանոթ հեքիաթն է ասում,
Ոսկու տեղակ մոխիր էր իմ կարասում,
Թե երբ փոխվեց՝ չեմ հասկանում, չեմ զգում։

Գուցե այնօր, երբ ես, սեր իմ, տեսա քեզ
Հողմի պահին կանգնած այնտեղ՝ ժայռին վեհ,
Օ՜, ի՜նչ պահ էր՝ վեհացած քո տեսիլքով։

Երգիս պահին ոսկին ինչպե՞ս մոխիր չդառնար,
Կորցրեցի ինչքան երգ ու ոսկի կար,
Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թովչանքով։

13 (178)

Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թովչանքով,
Մեկ էլ ծովի բռնկումով այն շքեղ,
Երբ նետվեցիր ալիքների մեջ ահեղ,
Դու՝ բոցկլտուք՝ լիքը ծովի հրայրքով։

Սեր իմ, եթե չլինեիր այդպիսին,
Խեղճ լինեիր՝ գուցե թե ինձ սիրեիր,
Կամ հուսահատ՝ իմ տան ճամփեն բռնեիր,
Երբ այլ դռներ սիրուդ առաջ փակվեին։

Ի՞նչ ասացի, մուրացկա՞ն եմ, աստված իմ,
Շատ եմ կարոտ, սեր իմ, խոսքիդ մտերիմ,
Բայց ինձ պետք չէ այդպիսի սերն անկրակ։

Դու ցած իջնես քո բարձունքից աստղային՝
Ինչպե՞ս զգամ տիեզերքը ես կրկին
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ։

14 (179)

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ
Արծիվներ են ճախրում հոգուս երկնքում,
Եվ մի արծիվ սավառնում է ու երգում,
Երգը նրա հնչում է միշտ կրծքիս տակ։

«Դու ինձ տեսար՝ ցնցոտիներ ունեի,
Աղքատ էի, բայց ոչ իբրև մուրացկան,
Ես ժայռեղեն կղզու նման անսասան
Կանգնած էի հորձանքների մեջ մահի»։

Երգում է զիլ, ինձ է երգով ակնարկում,
Որ կանգնած եմ սիրո անվերջ հորձանքում
Ես ժայռեղեն կղզու նման անխորտակ։

Ոչ, չեմ լինի երբեք սիրո մուրացկան,
Ա՛խ, գերվել եմ թեկուզ մի պահ, մի վայրկյան՝
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին։

15 (180)

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին,
Կյանքում դու ինձ պիտի տայիր խորք ու փայլ,
Կարող էի ծովի նման ես ծփալ,
Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին։

Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս,
Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց,
Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց,
Եվ իրերին՝ հայացքը քո՝ նայելիս։

Պահել եմ ես քո ձևերը սլացիկ,
Որ մտքիս մեջ հար ճախրում են հոգեթով՝
Մաքուր-մաքուր, աստվածորեն գեղեցիկ։

Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ,
Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թովչանքով,
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ։

ՓՈՒՆՋ 13

1(181)

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ
Վառ աստղերն են հավերժորեն բոցկլտում,
Հանգավ, նայիր, ասուպի գիծը օդում,
Ա՛խ, ի՞նչ հավերժ, վախճան ունեն և նրանք։

Բայց ես էլի, ունայնության մեջ անգամ,
Խոնարհվում եմ գեղեցկության առաջ քո,
Տիեզերքն եմ լցնում սրտիս հառաչքով,
Երբ զգում եմ, որ քո սրտի մեջ չկամ։

Երբ որ դու կաս՝ ունայնությունն ինչ է որ,
Ես չեմ դողա, կելնեմ հազար մահի դեմ,
Քո հուր սիրով և իմ երգով կհաղթեմ։

Բայց դու, սեր իմ, խեթ ես նայում ու խոժոռ,
Որ սրտիդ հետ՝ իմ ցնորքում լուսեղեն
Ես ուզեցի իմ երգերը բաբախեն։

2 (182)

Ես ուզեցի իմ երգերը բաբախեն
Սիրող սրտիդ զարկերի հետ միասին,
Կշրշայի ի՛նչ սոնետներ քո մասին,
Թե աչքերդ չընդհատեին սառնորեն։

Ցոլքերի մեջ սոնետներիս պսակի
Ինչպես հիմա՝ դու կլինես, պարզ է այդ,

Ես կլինեմ ու տիեզերքն աստղազարդ,
Կընթերցես դու, և քար սիրտդ կփափկի։

Ավաղ, հիմա քո ձեռքերով անտարբեր
Դուրս ես նետել երգս՝ մահվան մատնելով,
Ցուրտ քամին է թերթում հողոտ մատներով։

Տեսնես կգա՞ այնպիսի մի օր, սեր իմ, սեր,
Որ դու ասես՝ երգով լեցուն ես եղել,
Ու ես ասեմ՝ փուչ չէր կյանքս հողեղեն։

3 (183)

Ու ես ասեմ՝ փուչ չէր կյանքս հողեղեն,
Ես էլ ահա հաղորդվեցի հրճվանքին,
Ինչ կար իմ մեջ՝ ես բաշխեցի հրճվագին,
Ով ստացավ՝ լիքն ու հարուստ է արդեն։

Ու հայացքս հառած բարձր կատարին՝
Մագլցում եմ իրավունքի լեռն ի վեր,
Որ տեղ հասնեմ, այդ խոսքն ասեմ անհամբեր
Վերելքիս մեջ ինձ քար նետող սրտերին։

Եվ քեզ ասեմ, իմ անհավատ, քեզ ասեմ,
Ամենից շատ կուզենայի ասել քեզ
Ու զղջումիդ խոսքը լսել վերջապես,

Հետո փուլ գալ զղջումի դեմ քո վսեմ։
Օ՜, իմ կյանքը վերջում շքեղ էր ինչքան,
Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան։

4 (184)

Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան
Իմ երազի թռչող գորգը՝ լայն բացված։
Որ այն հյուսեմ, քեզ նվիրեմ սիրարբած՝
Թելեր առա անձրևներից խնդաձայն։

Եվ իմ միտքը, որ տիեզերքն է չափում,
Նախշեր բերեց աստղաշխարհից անստվեր,
Նյութի խորքից պեղեցի նոր արևներ,
Որ գույները շողշողան նոր լույսերում։

Նկարեցի նոր դուրս թափվող ծիլերով
Կյանքի գետը, որ տանում է մի դիակ,
Դին է մահվան, որ նետեցի ոտքիդ տակ։

Մահն է մեռել, ե՛ս մեռցրի իմ սիրով
Ու իմ թռչող գորգին նստած, գլխիս թագ՝
Անցա ես էլ հաղթանակի կամարով։

5 (185)

Անցա ես էլ հաղթանակի կամարով,
Բայց մտքիս մեջ մի գերագույն տեսիլքում,
Եվ ինձ թվաց՝ հոգիս լույս է ճառագում,
Այնպես լիքն եմ մտքի փունջ-փունջ լույսերով։

Ու խորհեցի՝ այն է կյանքը վեհագույն,
Երբ շփվում ես դու վեհագույն մտքի հետ,
Որ պեղել են այրերն ընտիր, խորագետ,
Ընտիր պահին, սուրբ վայրկյանին բռնկուն։

Ինչքա՜ն շատ են, ինչքա՜ն տաք են պահերն այդ,
Բազմապիսի, բազմալեզու, բազմաշերտ,
Միշտ նորացող, միշտ խորացող ոգու երթ։

Ես ապրեցի նման մի պահ լուսացայտ,
Լույսը՝ հոգուս լուսե անձրև էր տեղում,
Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն։

6 (186)

Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն,
Որ դնում է քանդումի դեմ արարում,
Պատ ու պատնեշ քանդած ելնում, վարարում,
Իր քանդումն իսկ արարումի է հանգույն։

Մտքի հսկա ալիքները լեռնացած,
Սեր իմ, ցավից լվանում են իմ հոգին,
Գիտես ինչպես գերվում նրանց հմայքին,
Մոռանում եմ քո հմայքը ես հանկարծ։

Գեղեցիկ են նրանք էլ շատ, ինչպես դու,
Խորն են, խոհուն, խորախորհուրդ քեզ նման,
Բայց չեն խոցում, այլ սփոփում են միայն։

Լույս են տալիս գիշերիս մեջ ահարկու
Մեծ խոհերը, որ քո ցրտից ինձ խլում,
Հրի նման վառվում են իմ ուղեղում։

7 (187)

Հրի նման վառվում են իմ ուղեղում
Կարմիր-կարմիր կրակները սուրբ խոհի,

Բռնկվում են, ինչպես կայծակ ամեհի,
Նրանք երկրի ու երկնքի մեջտեղում։

Մտքի լիցքերն են կուտակվում աննկատ
Ու շողում է հանկարծ շանթը հայտնության,
Ամպերն հետո պիտի բարձր որոտան
Ու աշխարհին հայտնեն լուրը լուսացայտ։

Լույսի անձրև պիտի տեղա մտքերին,
Օ՜, ինչպե՜ս եմ այդ անձրևը ես սիրում,
Որ քշում է մտքից բորբոսն ու տանում։

Կյանք են բերում ու թարմություն մի վերին,
Տիեզերքն են լցնում լույսով չմարող
Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող։

8 (188)

Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող
Քո հոգում էլ, գիտեմ, լույսեր են վառել,
Դու տենչում ես գուցե ինձնից առավել
Այրվել մտքի արևներում չմարող։

Դու չես փնտրում գրքերի մեջ մոռացում
(Ի՞նչ վիշտ ունես, որ նրանց մեջ թաղես խոր)
Քեզ դյութում է ոգու ճախրանքը հզոր,
Որ թողնում է փուչն ու ճղճիմը ցածում։

Սեր իմ, էլի ուժիդ սահմանն ես ճշտում՝
Այս անգամ էլ մտքի ծովը քեզ նետած,
Լող ես տալիս ալիքներում սրընթաց։

Ծիծաղում ես գաճաճների վրա դու,
Ծիծաղիդ տակ կուչ են գալիս մաղձով լի,
Փոքրանում են թզուկները ավելի։

9 (189)

Փոքրանում են թզուկները ավելի
Եվ ուզում են ցեխ շպրտել անունիդ,
Այդպես է միշտ՝ երբ չեն հասնում անհունիդ,
Արձակում են նետը մանրիկ դավերի։

Ես կուրծքս բաց գրոհի եմ նետվում գոռ՝
Մտքիս բոլոր գնդերն հանած նրանց դեմ,
Որ պաշարված ամրոցներդ ազատեմ
Ու հաստատեն քո իղձերը լուսավոր։

Դու չգիտես, թե ես ինչպես եմ կռվում,
Ես այդ մասին քեզ չեմ ասում ոչ մի բառ,
Պետք է միայն կռիվ մղել քաջաբար։

Զարկում եմ ես, նրանց դիերն են փռվում,
Իրենց ուժին, երբ նայում են իմ զարկին,
Կասկածում են հսկաները իմ կողքին։

10 (190)

Կասկածում են հսկաները իմ կողքին,
Որ ինձ թողած՝ կընտրես մեկին իրենցից,
Չի սփոփում սակայն նրանց խոսքը ինձ,
Սառն ես այնպես ու անտարբեր դու կրկին։

Հանդիպեցինք գոնե մտքի ոլորտում
Ու տեսնեիր, որ ցածր չէ սլացքն իմ,
Համընթաց է քո արծվենի թռիչքին՝
Մենք թև թևի կթռչեինք երկնում նույն։

Ու մեր որդին գուցե պոետ կծնվեր,
Երազել եմ միշտ այդպիսի մի որդի,
Որի երգը գարնան գետի պես հորդի։

Այնպես հորդի, որ բազում լավ պոետներ
Նրա կողքին չհավատան ցավով լի,
Թե եղել են Ապոլոնին սիրելի։

11 (191)

Թե եղել են Ապոլոնին սիրելի,
Պիտի ձգտեն միշտ էլ սիրվել նրանից,
Պոետները այդ լավ գիտեն առանց ինձ
Եվ սրում են իրենց սուրը ավելի։

Իմ սրտում էլ այդ ձգտումն է ալիքվում,
Ուռճանում է հույզի ալիքը անվերջ,
Ես գոռալ եմ ուզում հիմա ցավիս մեջ,
Որ ալիքի ճնշմանն է՛լ չեմ դիմանում։

Պիտի երգեմ, թող լինի երգս ազդու,
Աշխարհով մեկ սնկաձև մահն է աճում,
Սարսափի մեջ մարդկությունն է հառաչում։

Եվ թող ցրվի մութն իմ երգով ահարկու,
Ի՜նչ խնդություն, դարձնել աշխարհն արևկա,
Բայց չի պահել բախտն ինձ համար նման պահ։

12 (192)

Բայց չի պահել բախտն ինձ համար նման պահ,
Որ ներշնչված՝ հավատայի, զգայի,
Թե արարիչ իմ ուժի դեմ հսկայի
Չարերն ահա խոնարհվել են աներկբա։

Այնինչ նրանք ի՜նչ հաճույքով դիվային
Հորինում են մահվան զենքեր նորանոր,
Կարծում են, թե այդպես դառնում են հզոր,
Ուժը դա է, և այդ է պետք աշխարհին։

Որտե՞ղ գտնեմ, սեր իմ, ճարտար խոսք ու խելք,
Որ համոզեմ, թե դու ես ուժն իսկական,
Եվ աշխարհին պետք է ժպիտդ միայն։

Եվ ինձ է պետք, ամենից շատ ինձ է պետք,
Բայց իմ առաջ, ամենից պինդ, իմ անգին,
Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին։

13 (193)

Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին,
Ո՞ւմ զանգատվեմ, որ սրտնեղած ինձ չասի,
Թե աշխարհը կրակի մեջ ու բոցի,
Սիրո դուռն է անվերջ բախում իմ հոգին։

Թե այս պահին դրվեց հիմքը մի շենքի,
Զուլվեց իսկույն այն կործանող և մի ռումբ,
Ամայացման ահն է դռանն համառում,
Իսկ դու անվերջ, սեր իմ, իմ սեր, իմ անգին։

Մարդիկ, եթե սեր չլինի աշխարհում,
Ցուրտ կլինի այս աշխարհը և ուրիշ,
Չի ունենա կյանքը լավի չափանիշ։

Ամեն հեռվում սիրո լույս եմ նշմարում,
Ով չի ուզում՝ թող ինձ լքի, թող չգա։
Էհ, ի՞նչ արած, մենակ կընկնեմ ես ճամփա։

14 (194)

Էհ, ի՞նչ արած, մենակ կընկնեմ ես ճամփա,
Ու էլ գնամ՝ քեզնով լեցուն եմ էլի,
Քեզ եմ փնտրում, լույսի սկիզբ ըղձալի,
Որ իբրև սեր հայտնվում ես ինձ ահա։

Մռայլ ամպ եմ, քո արևն է ներկում ինձ,
Երիզվում եմ քո շողերով խնդագին,
Ուր էլ հասնեմ՝ կյանքիս բոլոր ճամփեքին
Ինձ լեռն ի վեր պիտի կանչես անհունից։

Բարձր է լեռը, անվերջ բարձր ու դժվար,
Թե ուզում ես ելնել նրա լանջն ի վեր՝
Պիտի մարզես մկաններդ զօր-գիշեր։

Սեր իմ, դու ինձ չես ուղեկցի սիրավառ,
Չի գուրգուրի ժպիտդ ինձ գեթ մի պահ
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ։

15 (195)

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ
Ես ուզեցի իմ երգերը բաբախեն,

Ու ես ասեմ՝ փուչ չէր կյանքս հողեղեն,
Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան։

Անցա ես էլ հաղթանակի կամարով,
Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն,
Հրի նման վառվում են իմ ուղեղում
Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող։

Փոքրանում են թզուկները ավելի,
Կասկածում են հսկաները իմ կողքին,
Թե եղել են Ապոլոնին սիրելի։

Բայց չի պահել բախտն ինձ համար նման պահ,
Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին,
Էհ, ի՞նչ արած, մենակ կընկնեմ ես ճամփա։

ՓՈՒՆՋ 14

1 (196)

Էհ, ի՞նչ արած մենակ կընկնեմ ես ճամփա,
Մենակ՝ մարմնով, բայց կլինի հոգուս մեջ
Ողջ աշխարհը՝ իր քնքշությամբ լուսառեջ,
Ավաղ, նաև աղմուկներով անոպա։

Դու կլինես իմ հոգու մեջ, միշտ ինձ հետ,
Բայց ոչ մարմնով, ոչ էլ հոգով կլինես,
Քեզնից ես քեզ կգողանամ պարզապես,
Ինչ որ իմն է՝ քեզ իսկ չեմ տա ես հավետ։

Իմն է քո ողջ կախարդանքը, փայլը քո,
Իմ տեսածը, զգացածն իմ, ապրածն իմ,
Որոնց այնպես դարձել եմ ես մտերիմ։

Օ՜, ես պիտի այդքանից էլ լինեմ զոհ
Ու զոհ կրկնեմ քեզնից հեռու, բայց քեզ մոտ՝
Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ։

2 (197)

Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ,
Որ դժվար են, բայց տանում են լեռն ի վեր,
Սիրտս հազար տեղից խոցված կարեվեր՝
Դարձյալ հանում են բարձունքը արևոտ։

Ինչքան դժվար, քարքարոտ ու անընտել,
Այնքան լիքն են պայծառ լույսով հայտնության,
Այս ճամփան ցած, վեր է տանում այն ճամփան,
Բայց ես դեպի խորքը տանողն եմ ընտրել։

Տառապանքի խորքն եմ անվերջ մխրճվում,
Լույսի երակն այնտեղ է լոկ թաքնված,
Երբ որ հասնեմ՝ պիտի ցոլա լիարծարծ։

Հայտնության լույսն այնպես մոտ է ինձ թվում,
Ես ուր որ է կունենամ իմ գետերն հորդ,
Որ վառել են ծով հասնելու մի կարոտ։

3 (198)

Որ վառել են ծով հասնելու մի կարոտ,
Պիտի նաև ծով հասցնեն լույսերն ինձ,

Երբ տեղ հասնեմ, ծովը ելած ափերից՝
Ողջույն կտա շառաչյունով իր ծանոթ։

Սերս ծնվեց հողմի պահին, ծովի մեջ,
Երբ, ջրահարս, ափ հանեցիր խեղդվողիս,
Այն խենթ ծովից, թե՞ հեքիաթից է գալիս
Սերս դեպի հրեղեն ձին, հուրն անշեջ։

Ես տեսնում եմ, ինչպես փրփուր ջրերից,
Հրեղեն ձին ցոլանում է իմ դիմաց,
Այդպես այնօր ծովից իմ սերն էլ ցոլաց։

Ծովից ծնվեց, ծովի կապույտ բոցերից,
Ծովն էլ պիտի կապույտ երազ կյանքին տա,
Որտեղ պիտի սերս անուշ ծփծփա։

4 (199)

Որտեղ պիտի սերս անուշ ծփծփա,
Այնտեղ հիմա լույս է իջել երկնքից,
Իմ սերն ու լույսն իրար հավերժ դաշնակից
Իրար գտել, չեն բաժանվել ոչ մի պահ։

Եվ անբաժան կաճեն այդպես լույսում հորդ
Մեր ծառերը՝ մեկը դու ես, մեկը ես,
Ասում են, թե հասկացել ես ու գիտես,
Որ թաքուն եմ ծառն իմ տնկել քոնի մոտ։

Հասկացել ես, չես զայրացել, իմ միակ,
Նույնիսկ շոյել ես ճյուղերը քնքշորեն,
Իրա՞վ է այդ, թե՞ պարզապես ասում են։

Պիտի ձգվեն երկինքն ի վեր կապուտակ,
Որ թաթախված կանգնեն լույսի մեջ վերին,
Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին։

5 (200)

Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին,
Ծառին իրեն, որ հողմն ինչքան էլ ահեղ՝
Պահպանում է իր մեջք-բունը փառահեղ,
Չի կոտրվում, շտկվում է վերստին։

Հողմը նրան արմատախիլ է անում,
Ու նա ընկած՝ ուզում է դեռ կանաչել,
Եթե նույնիսկ մի արմատ է մնացել,
Որ կարող է ջուր հասցնել գեթ մի կում։

Մեր ծառերը արմատախիլ չանես, հողմ,
Մեր երկու ծառն հասակ առնող կողք կողքի,
Ամեն մեկը իմ հույսի հետ թող ծաղկի։

Կտարածեն իրենց ճյուղերն ամեն կողմ,
Ճյուղերի հետ անուշ սոսափ, սեր ու կյանք,
Արմատներին բյուր հազար փառք և օրհնանք։

6 (201)

Արմատներին բյուր հազար փառք և օրհնանք,
Միշտ գետնի տակ, ի՞նչ է լույսը՝ չգիտեն,
Միշտ գետնի տակ, սոված ընկած դես ու դեն,
Միշտ արևի շողի կարոտ՝ գետնի տակ։

Ու գետնի տակ հազար քարի հանդիպած՝
Քար են ծակում, քար են մանրում անդադար,
Որ ինչ է թե սնունդ ճարեն մի պատառ,
Հանգիստ չունեն ու քուն չունեն, մի՜շտ հոգնած։

Ցուրտն է սեղմում՝ սառած գետնի մեջ թաղված,
Ոչ շարժվել են կարողանում, ոչ խոսել,
Ա՛խ, կփչեն շունչը շուտով, ափսո՛ս են։

Ձմռանը մահ, գարնանն ի՞նչ կյանք է, աստված.
Ամբողջ օրը սոված, ծարավ, բեռան տակ,
Խորն են խրվել տառապանքի մեջ նրանք։

7 (202)

Խորն են խրվել տառապանքի մեջ նրանք՝
Արմատներն ու մազարմատներն անհամար,
Մի՞թե քիչ էր, որ ցավ ունեն բյուրհազար,
Հազար փորձանք տրվեց նաև ու վտանգ։

Օ՜, անկշտում, խենեշ միջատ, ի՜նչ արագ
Հողի տակով տեղից տեղ ես շտապում,
Ուր հասնում ես՝ արմատներ ես հոշոտում,
Մահ ես սփռում ու կոտորած հողի տակ։

Իսկ արմատներն անգամ անլուր տանջանքում
Խորհում էին, որ ծառին պետք են իրենք,
Պիտի ապրեն, թեկուզ այսպես հոգնաբեկ։

Պիտի ապրեն ու հոգսերի մեջ անքուն
Շարունակեն իրենց կռիվը լռին,
Որ հասցնեն հյութ ու ծիծաղ ճյուղերին։

8 (203)

Որ հասցնեն հյութ ու ծիծաղ ճյուղերին,
Կյանքում ինչքա՜ն արմատ-մարդ է տնքում լուռ,
Ա՛խ, այստեղ էլ կա այն միջատը զարհուր,
Որ սարքում է կոտորածներ դիվային։

Սուր են սրա ատամները ավելի,
Ատոմափայլ, ջրածնափայլ ու ժահրոտ,
Ամեն շարժում մահ է կամ թե մահվան բոթ,
Կյանքի ծառը մի կրծելով կավերի։

Հեյ դու, միջատ, հեյ դու, վիշապ դժնդակ,
Թող մարդն հրճվի, որ իր ծառն է բարձրանում,
Իր տանջանքով պտուղներն են քաղցրանում։

Չէ՞ որ հեշտ չէ լինել արմատ հողի տակ
Ու տառապել, որ անարդար է այնքան,
Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա։

9 (204)

Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա,
Հողն ի՞նչ անի, եթե դառն է շատացել,
Ուր տեսնում է չարի աչքը մի սև ցել,
Ձեռքը իսկույն սերմ է զցում մեղսական։

Սեր-հանճարը հանց մեծաբուռ սերմնացան
Նույն հերկերում շաղ է տալիս լույս ու սեր,
Եվ ես տեսա ոգորումի մեջ վսեմ
Ինչպես իմ մեջ լույսի ծիլերն արթնացան։

Ա՜խ, իմ սերը ուրախ ծիլեր չարձակեց,
Բախտ էր, սակայն, որ զգացի աշխարհում
Ինչպես բարու պտուղներն են քաղցրանում։

Եվ հպարտ եմ այս վեհացման համար մեծ,
Այս քաղցրության, ինչքան էլ որ լիուլի
Բաժին ընկավ ինձ դառնահամն ավելի։

10 (205)

Բաժին ընկավ ինձ դառնահամն ավելի,
Բայց ես ահա ելած դառն բախտիս դեմ՝
Ամբողջ սրտով պիտի այդ բախտս օրհնեմ,
Որ քո շնչով, քո շողով է այսպես լի։

Քո անունն է իմ այս ցավից անբաժան,
Քո անունով դառն բախտս է քաղցրանում,
Ցավս լցվում է քաղցրությամբ քո անհուն,
Իմ վերքի մեջ զնգում մի երգ սրբազան։

Սեր իմ, եթե չունենայի վերքն այս տաք,
Պիտի խինդի ի՜նչ լինելը չզգայի,
Ապրեի լոկ ակնթարթով ներկայի։

Ու իմ լեզուն պիտի մնար քո դեմ փակ,
Չասեր՝ բախտն իմ ինչքան էլ դառն ու դաժան,
Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն։

11 (206)

Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն,
Ուրիշների խնդուն բախտով ապրեցի

Եվ քո բախտով, իմ հազարան սիրելի,
Եվ քո բախտով, որ իմ բախտն է անձնական։

Քեզ հետ ծառեր տնկեցի ես ներշնչված,
Թեև մտքով, դու ինձ կողքիդ չտեսար,
Մտքով քեզ հետ՝ մտքի երկնի մեջ անծայր
Հիացա ես քո թռիչքով սրընթաց։

Սքանչացա, երբ ծովի մեջ մոլեգին
Շուլալվեցիր ալիքներին փրփրուն,
Ու փորձեցի քեզ հետ լողալ դեպ հեռուն։

Պարտվեցի ես, դու հաղթեցիր տարերքին,
Մեծ ոգին էր քեզ առաջնորդ, փառք նրան,
Քեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան։

12 (207)

Քեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան,
Թող ծնկի գա գոռոզ մահը քո դիմաց,
Բայց գուշակը, հետո բժիշկը փորձված...
Չէ, կատակ են նրանք արել անպայման։

Մեկ տարվա կյանք, արդեն հասել ես կեսին,
Չէ, սիրելիս, խենթացել են անկասկած
Նախ գուշակը, հետո բժիշկը փորձված
Կամ ցանկացել մի քիչ տանջել քո հոգին։

Նրանք այդ ի՞նչ ցավի անուն տվեցին,
Ասա, ես էլ մի ճար փնտրեմ անդադրում,
Կասկածներն են սիրտս անվերջ քրքրում։

Չէ, ծիծաղդ կարկաչում է վերստին,
Մի սուտ լուր էր, մշտադալար կյանքով լի
Լույս ես եղել, փառք, որ լույս ես դու էլի։

13 (208)

Լույս ես եղել, փառք, որ լույս ես դու էլի։
Չի հանգցնի մահը ջահդ հուրհրան,
Կճառագես գիշերներն էլ ինձ վրա,
Ինչպես մի նոր, ուրիշ արև պաշտելի։

Էլ ինչո՞ւ է տանջում կասկածն ինձ այսպես,
Երբ դու ուրախ ծիծաղում ես լիաթոք,
Ա՜խ, ես գիտեմ, կյանք չես խնդրի ծնկաչոք,
Ծիծաղելով մահվան վրա՝ կմեռնես։

Չսոսկացիր ծովի անկուշտ երախից,
Խիզախ ոգիդ մահից առաջ համարձակ
Վայելում էր խիզախության գինին բարկ։

Ի՜նչ հրաշք ես, բոցկլտուն կյանք անթախիծ,
Արարիչ լույս, պոռթկում հոգու, լիություն,
Քո լույսով են ներկված երկու պատուհան։

14 (209)

Քո լույսով են ներկված երկու պատուհան,
Ու ներկված են երազներս քո լույսով,
Մի երազ էլ զարթնեց ահա՝ լի հույսով,
Որ մոտ չի գա լույսիդ ստվերն իսկ մահվան։

Ծաղրել ես ինձ, վրաս սառույց շպրտել
Նրա՞ համար, որ իմ սերը հանգցնես,
Քո կորստի ցավը թեթև տանեմ ես,
Այնինչ դու էլ ինձ հետ շատ ես տառապել։

Դա էլ, սեր իմ, խիզախություն է իրավ,
Սիրել, տանջվել, բայց չտանջել ուրիշին,
Ճի՞շտ է, արդյոք, սիրե՞լ ես ինձ, իմ անգին։

Թե՞ ինձ թվաց, ախր շատ եմ ես ծարավ...
Երբ կորստիդ ցավն իմ սրտին մորմոք տա,
Էհ, ի՞նչ արած մենակ կընկնեմ ես ճամփա։

15 (210)

Էհ, ի՞նչ արած մենակ կընկնեմ ես ճամփա,
Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ,
Որ վառել են ծով հասնելու մի կարոտ,
Որտեղ պիտի սերս անուշ ծփծփա։

Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին,
Արմատներին բյուր հազար փառք և օրհնանք,
Խորն են խրվել տառապանքի մեջ նրանք՝
Որ հասցնեն հյութ ու ծիծաղ ճյուղերին։

Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա,
Բաժին ընկավ ինձ դառնահամն ավելի,
Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն։

Քեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան,
Լույս ես եղել, փառք, որ լույս ես դու էլի։
Քո լույսով են ներկված երկու պատուհան։

ՓՈՒՆՋ 15 (ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ)

1 (211)

Քո լույսով են ներկված երկու պատուհան, Փունջ 1 (1)
Ես կանգնում եմ ամեն գիշեր նրանց դեմ, Փունջ 1 (2)
Որ քո լուսե տեսիլքի դեմ աղոթեմ, Փունջ 1 (3)
Բայց բառերը ծուխ են դառնում ու չկան: Փունջ 1 (4)

Իմ կարոտը բառեր չունի մեղսական, Փունջ 1 (5)
Քո այդ երկու պատուհանի լույսի պես, Փունջ 1 (6)
Քո այդ երկու պատուհանի լույսն է կեզ, Փունջ 1 (7)
Արթուն է նա, երբ ես քնած եմ անգամ: Փունջ 1 (8)

Պատուհանից դուրս չնայես դու հանկարծ Փունջ 1 (9)
Ու չփշրես իմ երազը լուսալիր, Փունջ 1 (10)
Թող ես հսկեմ քունդ մինչև լուսաբաց: Փունջ 1 (11)

Ու բարկացած չմարես լույսը, սեր իմ, Փունջ 1 (12)
Քո այդ երկու պատուհանի լույսերն հիր Փունջ 1 (13)
Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին: Փունջ 1 (14)

2 (212)

Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին Փունջ 2 (16)
Քո լույսերը որպես արև գիշերվա, Փունջ 2 (17)
Նրանց միջով եմ ես տեսնում ինձ ահա, Փունջ 2 (18)
Նրանց ցոլքում ստվեր թվում ինքս ինձ: Փունջ 2 (19)

Դու՝ մաքրություն, ներիր, մթնում եմ մեկ-մեկ, Փունջ 2 (20)
Չեմ սրբանում մտածելիս քո մասին, Փունջ 2 (21)

Խեթ եմ նայում թեկուզ քո մեն մի մազին, Փունջ 2 (22)
Ես՝ տաճարիդ ուխտավորս հուսաբեկ։ Փունջ 2 (23)

Եթե գահդ երկնքի մեջ չլինի, Փունջ 2 (24)
Սուտ կդառնան աստվածները և պատրանք, Փունջ 2 (25)
Սրբությունը դեռ բողբոջում կմեռնի։ Փունջ 2 (26)

Քո աչքերը չեն նայում իմ աչքերին, Փունջ 2 (27)
Բայց տանջում են մեղքիս համար ինձ նրանք, Փունջ 2 (28)
Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին։ Փունջ 2 (29)

3 (213)

Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին, Փունջ 3 (31)
Սիրտս է բեկված քո աչքերի հայելում, Փունջ 3 (32)
Ուրիշները կյանքի գինին վայելում, Փունջ 3 (33)
Ես բարձում եմ նոր-նոր մեղքեր իմ սայլին։ Փունջ 3 (34)

Ես փնտրում եմ մի դուռ՝ մեղքից դուրս գալու, Փունջ 3 (35)
Մխիթարվում հազիվ բացված ճեղքով իսկ, Փունջ 3 (36)
Ուրիշները արդեն հարբել են նույնիսկ, Փունջ 3 (37)
Ես իմ փոքրիկ շողքն եմ կում-կում վայելում։ Փունջ 3 (38)

Վախենում եմ լույսի այդ ցոլքն էլ կորչի, Փունջ 3 (39)
Ե՛ս որբ մնամ խավարի մեջ գիշերվա, Փունջ 3 (40)
Մնամ կարոտ մի հոգեբուխ ճաճանչի։ Փունջ 3 (41)

Մագլցում եմ մտքով կատարը լեռան, Փունջ 3 (42)
Բայց այնտեղ էլ նորից իմ մեղքն է լալիս, Փունջ 3 (43)
Իմ աչքերը, իմ արցունքները վրան։ Փունջ 3 (44)

4 (214)

Իմ աչքերը, իմ արցունքները վրան՝ Փունջ 4 (46)
Գալարվում է տիեզերքը ցավի մեջ, Փունջ 4 (47)
Փշրվում են աստղաբույլերը անվերջ, Փունջ 4 (48)
Ուր նայում եմ՝ մոխրի բուք է անսահման։ Փունջ 4 (49)

Մոխիրներից արևներ են ծնվում արդ, Փունջ 4 (50)
Որ վերստին մոխիր դառնան անընդմեջ, Փունջ 4 (51)
Դղրդում է տիեզերքը մահվան մեջ, Փունջ 4 (52)
Կան և չկան, կան թե չկան՝ մեկ է այդ։ Փունջ 4 (53)

Այս վիթխարի քաոսի մեջ ես մի կետ, Փունջ 4 (54)
Ում ինչ պետքն է՝ կորչում եմ, թե հայտնվում, Փունջ 4 (55)
Կամ երազում լինել կողքիդ, միշտ քեզ հետ։ Փունջ 4 (56)

Հոգնում եմ ես այս մոխրի մեջ անհատնում, Փունջ 4 (57)
Քեզ եմ գալիս, սակայն ինձ չես կանչում դու, Փունջ 4 (58)
Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում։ Փունջ 4 (59)

5 (215)

Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում, Փունջ 5 (61)
Հազար ձևով քո մերժումն ես կրկնում դու, Փունջ 5 (62)
Բայց իրերի հորձանքի մեջ ահարկու Փունջ 5 (63)
Միակ հաստատն աչքերն են քո անխոստում։ Փունջ 5 (64)

Նրանց ցոլքում մոռանում եմ ինքս ինձ Փունջ 5 (65)
Եվ իրերի հոսքն ու մոխիրն անկայուն, Փունջ 5 (66)
Ապրում եմ ես ինչ-որ ուրիշ ներկայում, Փունջ 5 (67)
Ուր մահ չկա, և իրերն են անթախիծ։ Փունջ 5 (68)

Քո աչքերն են միակ հաստատն աշխարհում, Փունջ 5 (69)
Երբ նայում ես, ողջը փոխվում է իսկույն, Փունջ 5 (70)
Էլ ինձ հավերժն անիմաստ բառ չի թվում։ Փունջ 5 (71)

Բայց պատրանք է, ինձ չես նայում սիրավառ, Փունջ 5 (72)
Սիրտս էր ցավից այդ հրաշքը հորինում, Փունջ 5 (73)
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար։ Փունջ 5 (74)

6 (216)

Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար, Փունջ 6 (76)
Որ բարձրանամ, հասնեմ աստղոտ աչքերիդ, Փունջ 6 (77)
Մեկ էլ երգի ակունքներին մաքրաշիթ, Փունջ 6 (78)
Որ ծարավս գոնե երգով մեղմանար։ Փունջ 6 (79)

Ասում ես, որ քնար ունեմ ես փայտե, Փունջ 6 (80)
Մեղեդու տեղ չոր թխկթխկոց ես լսում, Փունջ 6 (81)
Ճիշտ որ, սեր իմ, մուրճն է այդպես հարվածում, Փունջ 6 (82)
Ու քո ձեռքով մեխում դագաղս արդեն։ Փունջ 6 (83)

Այս իրերի հողմագալար քառսում Փունջ 6 (84)
Մեկ էլ պիտի երգն ինձ կայան պարգևեր, Փունջ 6 (85)
Բայց պոետ չեմ, երբ որ դու ես այդ ասում։ Փունջ 6 (86)

Իմ թևերին խոսքդ ինչպես ծանր քար, Փունջ 6 (87)
Ես՝ ուժասպառ, չեմ սավառնի երբեք վեր Փունջ 6 (88)
Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար։ Փունջ 6 (89)

7 (217)

Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար, Փունջ 7 (91)
Որոնք պիտի ինձ ուղեցույց լինեին, Փունջ 7 (92)

Ես հաղթեի կասկածներն իմ ամեհի, Փունջ 7 (93)
Ափ դուրս գայի հաստատաքայլ, հուսավառ։ Փունջ 7 (94)

Լավ է լինել բրածեծ շուն աշխարհում, Փունջ 7 (95)
Քան թե ծեծվել կասկածներից իր ներքուստ, Փունջ 7 (96)
Բաժին ընկավ վատթարագույնն ինձ վերուստ, Փունջ 7 (97)
Էլ ես նույնիսկ ցնորքներ չեմ արարում։ Փունջ 7 (98)

Ու դառնացած գնում եմ ես աշխարհից՝ Փունջ 7 (99)
Եվ ոչ մի երգ այս աշխարհին չթողած, Փունջ 7 (100)
Որ մայր հողը իմ մահից ետ՝ զգար ինձ։ Փունջ 7 (101)

Հոգիս ինչպե՞ս ցուրտ խոհերից չմրսեր, Փունջ 7 (102)
Ո՞ւմ գանգատվեմ քեզնից բացի, իմ աստված, Փունջ 7 (103)
Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր։ Փունջ 7 (104)

8 (218)

Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր, Փունջ 8 (106)
Ու նայեի ես նրանցով աշխարհին, Փունջ 8 (107)
Ինձ աշխարհն ու կյանքը հեքիաթ թվային, Փունջ 8 (108)
Ու լինեի արքայազնը ես կրտսեր։ Փունջ 8 (109)

Ծովերի մեջ, ծովերից դեն բոցկլտար Փունջ 8 (110)
Հրեղեն ձիս՝ տեսիլքի պես հուրհրան, Փունջ 8 (111)
Գիրկս առած երգի բլբուլն հազարան՝ Փունջ 8 (112)
Քեզ մոտ գայի, որ նա երգեր քեզ համար։ Փունջ 8 (113)

Ու երգեի, ե՛ս երգեի քեզ համար, Փունջ 8 (114)
Նսեմանար իմ դեմ բլբուլն հազարան, Փունջ 8 (115)
Ա՜խ, ցնորքս ինչքան շատ է անհնար։ Փունջ 8 (116)

Երազում է միայն աղքատը ինձ պես, Փունջ 8 (117)
Իմ աչքերում ոչ սեր, ոչ էլ երգեր կան, Փունջ 8 (118)
Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես։ Փունջ 8 (119)

9 (219)

Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես, Փունջ 9 (121)
Կարեկցում են ինձ թզուկները նույնիսկ, Փունջ 9 (122)
Երբ նայում են կույր աչքերիս ու գույնիս, Փունջ 9 (123)
Շշնջում են թզուկերեն՝ ի՜նչ մեղք ես։ Փունջ 9 (124)

Նրանք՝ երգի թզուկները, չգիտեն, Փունջ 9 (125)
Որ կարող եմ քո մի խոսքով տառապել, Փունջ 9 (126)
Քո մի խոսքով դարձնել աշխարհն առասպել Փունջ 9 (127)
Ուր ծաղիկներն հավերժորեն կփթթեն։ Փունջ 9 (128)

Ցատկոտում են ճամփաներում աստղային, Փունջ 9 (129)
Գոհ են այնպես, որ կարող են ցատկել դեռ Փունջ 9 (130)
Լվերի պես՝ քնից հանել մուսային։ Փունջ 9 (131)

Շնորհակալ եմ քեզանից, սեր իմ, սեր, Փունջ 9 (132)
Որ քո խոսքում ես ինձ պոետ չեմ կարծում, Փունջ 9 (133)
Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ։ Փունջ 9 (134)

10 (220)

Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ, Փունջ 10 (136)
Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի, Փունջ 10 (137)
Այսպես ջահել, դեռ չդարձած ծերունի՝ Փունջ 10 (138)
Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր։ Փունջ 10 (139)

Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ, Փունջ 10 (140)
Աշխարհը չի աղքատանա դրանից, Փունջ 10 (141)
Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից, Փունջ 10 (142)
Ու՞մ է նրա տնքտնքոցը հարկավոր։ Փունջ 10 (143)

Գոնե հիմա կասեն՝ ջահել մեռավ նա, Փունջ 10 (144)
Կասեն՝ այնպես խորն էր սիրում մեկին՝ քե՛զ, Փունջ 10 (145)
Եվ սրտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա։ Փունջ 10 (146)

Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին, Փունջ 10 (147)
Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լսես, Փունջ 10 (148)
Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին։ Փունջ 10 (149)

11 (221)

Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին, Փունջ 11 (151)
Ինչպես մամոնտն այս հողի տակ թաղված խոր, Փունջ 11 (152)
Նրա նման՝ սիրուս մեջ մեծ ու հզոր, Փունջ 11 (153)
Թեև սիրտս պարզված է սուր քո փշին։ Փունջ 11 (154)

Մամոնտն ընկավ, բայց գայլերը ապրեցին, Փունջ 11 (155)
Որովհետև նենգ են նրանք ու գայլ են Փունջ 11 (156)
Ու մամոնտի ազնվությունը չունեն, Փունջ 11 (157)
Որ ոչ մսով, միայն խոտով սնվեին։ Փունջ 11 (158)

Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի, Փունջ 11 (159)
Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք, Փունջ 11 (160)
Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի։ Փունջ 11 (161)

Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին, Փունջ 11 (162)
Ու կծաղրես, որ փառատենչ եմ անհագ, Փունջ 11 (163)
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին։ Փունջ 11 (164)

12 (222)

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին, Փունջ 12 (166)
Կյանքում դու ինձ պիտի տայիր խորք ու փայլ, Փունջ 12 (167)
Կարող էի ծովի նման ես ծփալ, Փունջ 12 (168)
Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին։ Փունջ 12 (169)

Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս, Փունջ 12 (170)
Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց, Փունջ 12 (171)
Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց, Փունջ 12 (172)
Եվ իրերին՝ հայացքը քո՝ նայելիս։ Փունջ 12 (173)

Պահել եմ ես քո ձևերը սլացիկ, Փունջ 12 (174)
Որ մտքիս մեջ հար ճախրում են հոգեթով՝ Փունջ 12 (175)
Մաքուր-մաքուր, աստվածորեն գեղեցիկ։ Փունջ 12 (176)

Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ, Փունջ 12 (177)
Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թովչանքով, Փունջ 12 (178)
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ։ Փունջ 12 (179)

13 (223)

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ Փունջ 13 (181)
Ես ուզեցի իմ երգերը բաբախեն, Փունջ 13 (182)
Ու ես ասեմ՝ փուչ չէր կյանքս հողեղեն, Փունջ 13 (183)
Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան։ Փունջ 13 (184)

Անցա ես էլ հաղթանակի կամարով, Փունջ 13 (185)
Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն, Փունջ 13 (186)
Հրի նման վառվում են իմ ուղեղում Փունջ 13 (187)
Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող։ Փունջ 13 (188)

Փոքրանում են թզուկները ավելի, Փունջ 13 (189)
Կասկածում են հսկաները իմ կողքին, Փունջ 13 (190)
Թե եղել են Ապոլոնին սիրելի։ Փունջ 13 (191)

Բայց չի պահել բախտն ինձ համար նման պահ, Փունջ 13 (192)
Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին, Փունջ 13 (193)
Էհ, ի՞նչ արած, մենակ կընկնեմ ես ճամփա։ Փունջ 13 (194)

14 (224)

Էհ, ի՞նչ արած, մենակ կընկնեմ ես ճամփա, Փունջ 14 (196)
Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ, Փունջ 14 (197)
Որ վառել են ծով հասնելու մի կարոտ, Փունջ 14 (198)
Որտեղ պիտի սերս անուշ ծփծփա։ Փունջ 14 (199)

Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին, Փունջ 14 (200)
Արմատներին բյուր հազար փառք և օրհնանք, Փունջ 14 (201)
Խորն են խրվել տառապանքի մեջ նրանք՝ Փունջ 14 (202)
Որ հասցնեն հյութ ու ծիծաղ ճյուղերին։ Փունջ 14 (203)

Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա, Փունջ 14 (204)
Բաժին ընկավ ինձ դառնահամն ավելի, Փունջ 14 (205)
Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն։ Փունջ 14 (206)

Քեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան, Փունջ 14 (207)
Լույս ես եղել, փառք, որ լույս ես դու էլի: Փունջ 14 (208)
Քո լույսով են ներկված երկու պատուհան: Փունջ 14 (209)

15 (225)

Քո լույսով են ներկված երկու պատուհան, Փունջ 1 (15), 15 (211)
Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին, Փունջ 2 (30), 15 (212)
Ես ուր գնամ՝ հետս է քո լույս հայելին, Փունջ 3 (45), 15 (213)
Իմ աչքերը, իմ արցունքները վրան: Փունջ 4 (60), 15 (214)

Շշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում, Փունջ 5 (75), 15 (215)
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար, Փունջ 6 (90), 15 (216)
Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար... Փունջ 7 (105), 15 (217)
Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր: Փունջ 8 (120), 15 (218)

Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես. Փունջ 9 (135), 15 (219)
Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ, Փունջ 10 (150), 15 (220)
Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին: Փունջ 11 (165), 15 (221)

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին. Փունջ 12 (180), 15 (222)
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ՝ Փունջ 13 (195), 15 (223)
Էհ, ի՞նչ արած, մենակ կընկնեմ ես ճամփա… Փունջ 14 (210),
(1975թ.–1977թ.)

ՊՈԵՄՆԵՐ

ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

1

Թե որ դարում՝ անհայտ է ինձ, թե որ երկրում՝ չգիտեմ,
Ծաղկում էր մի կախարդ այգի, մշտադալար մի եդեմ։
Ով շնչում էր բույրը նրա՝ բուժվում էր չար բարքերից,
Մոռանում էր քեն ու նախանձ, ասես ծնվում էր նորից։
Ծաղկում էր նա հազար տարի ու այդ երկրում ծաղկաբույր
Հազար տարի չկար մի սիրտ, որ չար լիներ կամ տխուր։
Ալամ արքան՝ մշտաժպիտ, տերը երկրի և այգու,
Կանչում էր իր մարդկանց այնտեղ՝ արդար քրտինք թափելու։
Գալիս էին ամեն կողմից ու հեռանում վեհացած,
Ոչ թե արքան՝ բարությունն էր իշխում երկրում այդ մարդկանց։
Դալարագեղ հրաշք այգում, սեգ ծառերի շարքում ձիգ
Կար մի զարմանք խնձորենի՝ ցնորքի պես գեղեցիկ։
Փարթամ էր շատ, բայց բռնում էր միայն երեք հատ խնձոր,
Ողջ ուժն ասես տալիս էր այդ խնձորներին մեղրաձոր։
Ի՜նչ խնձորներ՝ երեք արև, երեք ճյուղից կախված վար,
Ցոլում էին գիշերն անգամ, ցրում մշուշ ու խավար։
Այդ ծառի պես երեք արև, երեք որդի ուներ քաջ
Ալամ արքան, ծերուկ արքան՝ իր օրն ապրած անհառաչ։
Մի խնձորը՝ ավագ որդուն, մի խնձորը՝ միջնեկին,
Եվ երրորդը պատկանում էր փոքր որդուն՝ Արեգին։

2

- Մեռնում է որդիս, բարի այգեպան,
Լույսը բացվում է, հանգչում է որդիս,
Խնձոր է ուզում, որ տանեմ նրան։

Մեկը լավերից տուր տանեմ բալիս։
- Մեկի տեղ տասը քաղեմ ու քեզ տամ,
Թող ուտի որդիդ ու լավի գնա։
- Մեկը տուր, սակայն այս ծառից փարթամ,
Այս մի խնձորը, որ չմարի նա։
- Դա թագավորի մեծ որդունն է, մայր,
Այգու մեկ քառորդ բերքը ուզիր, տամ։
- Չէ, այս մյուսը տուր որբուկիս համար,
Սա էլ իմ հանգչող աստղին կյանք կտա։
- Դա թագավորի միջնեկ որդունն է,
Այգու կես բերքը ուզիր և կտամ։
- Թող փրկիչ լինի քո օգնությունը,
Ա՛յ, էն խնձորն եմ ուզում այս անգամ։
- Դա թագավորի որդունն է կրտսեր,
Այգու ողջ բերքը քաղիր, տար, պառավ,
Բայց այդ խնձորը դու միտդ մի՛ բեր,
Ախ, ինչո՞ւ աչքդ հենց դրան առավ։
Եվ արշալույսի վառ ցոլքերի մեջ
Պառավն իր ձեռքերն երկինք կարկառեց,
Ու թպրտացին ցոլքերում այդ պերճ
Երկու խեղճ ձեռքեր ասես շնչահեղձ.
- Բարի աստված, արդար աստված,
Որ քո վերից նայում ես ցած,
Դու լավ տեսար ի՛նչ արեցին,
Մեռավ որդին իմ միածին։
Դու, որ տվիր կյանք բոլորին՝
Թագավորի որդոցն ու իմ,
Չդրեցիր տարբերություն,
Տվիր միսն ու արյունը նույն,
Ասիր՝ ցուրտ կա, նույն կերպ մրսեն,
Սով կա՝ նույն կերպ քաղցից տանջվեն,
Կանչում եմ քեզ, ահեղ աստված,

Քո արդար կամքն է անարգված,
Չորացրու ծաղիկ ու ծառ,
Այգին դարձրու փուշ ու մացառ,
Որ որդուս պես, արքայորդին
Կարոտ մնա իր խնձորին։
Փուշ բուսցրու սրտերի մեջ,
Թող ծակծկվեն մարդիկ անվերջ,
Որ հասկանան խեղճն ինչ բան է։
Որ հասկանան խիղճն ինչ բան է։
Կանչեց այսպես, ու մթնեցին
Երկինք-գետինք լուսաբացին,
Ու երբ մեկ էլ շողեր հագան,
Մարդիկ տեսան ծառեր չկան,
Մացառներ են տեղը նրանց
Ու խճճված փշեր անանց։

3

Հազար ափսոս ծաղկած այգուն՝ դարձած այսպես մացառուտ,
Հազար ու բյուր ափսոս մարդկանց, որ կորցրին սեր ու գութ։
Նրանք եղծված՝ ձգտում էին վեհ ու վսեմ երևալ,
Առաքինի, արդարամիտ ոչ թե լինել, այլ թվալ։
Ու խմբովին գրոհ տվին այգեպանի վրա խեղճ,
Թե դու ինչու ժլատ եղար, մեզ զցեցիր ցավի մեջ։
Անիծեցին, հայհոյեցին, անարգեցին աջ ու ձախ,
Հազար ձևով կրկնեցին, որ եղել է նա խարդախ,
Դիտմամբ մերժել է պառավին, նրան խնձոր չի տվել,
Որ չորանա այգին այսպես, մի ճյուղ անգամ չի փրկվել։
Ու պոկեցին իբր անարգանք թավ մորուսից մի-մի մազ,
Թե՝ դու ցածր ես, իսկ մենք՝ բարձր ու հավիտյան քեզ անհաս։

Նույնն արեցին ավագ որդին ու միջնեկը արքայի,
Միայն Արեգն հեռու մնաց՝ սրտում մի ցավ ամեհի։
Ցավով խորհեց, բայց լոկ իր մեջ, ձայն չտվեց դառնակեզ.
Ի՞նչ եք ուզում այգեպանից, մեր այգու կարգն է այսպես,
Ծառայել է հավատարիմ, ո՛չ խաբել է, ո՛չ դավել,
Նա սոսկ մերը պահել է մեզ, ուրիշներին չի տվել...

4

Պալատ կանչեց Ալամ արքան գիտուններին իր բոլոր.
- Մի ճար արեք,- ասաց նրանց,- մնացել եմ ես մոլոր։
Այս ի՞նչ աղետ-պատուհաս էր, որ ուղարկվեց երկնքից,
Ո՞ւր են խաղաղ օրերը այն, վեճ են սարքում դուռ-դրկից։
Վարակվում են մեկը մեկից տենչանքներով ընչաքաղց,
Մեկը մեկին հեգնում, ծաղրում, մեկը մեկին՝ օձ ու դաղձ։
Փոքր ցավը դեռ չբուժած՝ մեծն է գալիս ցավերի,
Խարդախության աճող ցեցը ողջ երկիրս կավերի։
Գիտունները վեճ բացեցին, իբր մի ճար գտնելու,
Բայց նենգաբար բամբասեցին, բանսարկեցին իրարու։
Ալամ արքան լսում նրանց, լաց էր լինում գլխահակ,
Եվ արցունքն էր հոսում նրա մորուքն ի վար սպիտակ...

5

Երկու փերի եկան, երկու հրաշք ու ցոլք,
Սևաչյա էր մեկը, մյուսը՝ կապուտաչյա,
Երկու փերի՝ թեթև, երկու կրակ, ցնորք
Ալամ արքայի դեմ բոցկլտացին ահա.
- Ողջո՛ւյն, Ալամ արքա,- գլուխ տվին խոնարհ,
Քո հառաչանքն հասավ մեր ափերին։

Ու զգվեցին նրանք արքային վշտահար՝
Փերին կապուտաչյա և սևաչյա փերին։
- Շատ մեծ է անեծքը՝ իջած աշխարհին ձեր...
Հեշտ էր տրվում կյանքում ձեզ ամեն բան,
Դուք ազնիվ էիք, վեհ, բայց ձեր շնորհքը չէր,
Այլ պարգևն էր այգու կախարդական։
Դուք կոտրեցիք սիրտը թեկուզ մեկի, մի մոր,
Եվ զայրացավ աստված, ուզեց այնպես լինի,
Որ տանջանքով գտնեք ձեր կորցրածը մի օր։
Մենք եկել ենք, արքա, որ քեզ ճարը ցույց տանք։
Եվ այդ ճարը մեկն է՝ բլբուլը հազարան։
Սակայն նրա ճամփին հազար ու մի վտանգ,
Հազար դև ու հրեշ, փորձանքներ կան։
Ու լռեցին մի պահ ու նայեցին միմյանց
Փերին կապուտաչյա և սևաչյա փերին.
- Բայց չեք հասնի, արքա,- կապուտաչյան ասաց,-
Դուք երբեք չեք հասնի մեր ափերին։
Ես հազարան հավքի տիրուհին եմ, արքա,
Եվ հանգիստ եմ, որ չեմ կորցնի նրան,
Միայն մաքուր սրտով, միայն ձեռքով մաքուր
Կարելի է բռնել բլբուլն իմ հազարան։
Իսկ քո մարդիկ պիղծ են և անմաքուր այնպես,
Որքան խարդախ ու չար, նույնքան և տկար,
Եվ արարիչ սերը չի բնակվում արդեն
Նրանց սրտերի մեջ՝ եղծված ու ցավագար։
Ապա խոսեց, ասաց սև աչքերով փերին.
- Իսկ ես հավատում եմ, կգա մարդը, արքա,
Թեկուզ միլիոն դևեր կանգնեն ճանապարհին,
Եվ հնազանդ նրան՝ կերգի հավքը ճարտար,
Նա չի կարող չգալ, իր աշխարհում ցավ կա,
Ցավն ուժ է սիրուց մեծ, սիրուց՝ ստեղծարար։
Ապա խոսեց, ասաց կապուտաչյան էլի.

- Մեր աշխարհից, արքա, այստեղ իջա,
Որ հուշեի ու գար ձեր քաջն անպարտելի,
Ե՞ս եմ ճիշտը, տեսնենք, թե՞ սևաչյան։

6

Ալամ արքան որդիներին իր մոտ կանչեց հայրաբար,
Իր տեսածը պատմեց նրանց, իր լսածը բառ առ բառ։
- Դե գնացեք, բարի ճամփա, բերեք բլբուլն հազարան,
Տեսնեմ ձեզնից ո՞վ կլինի անպարտելի մարդը այն,
Որ կունենա մաքուր ձեռքեր, սիրտ կունենա լուսավոր
Ու կենթարկվի նրա կամքին այն հրաշքը փետրավոր։
Երեք կտրիճ ձիեր հեծան, երեք կայծակ շողացին,
Հրեղեն հավքը բերելու թռան երեք հողածին։
Զուր կամեցավ այգեպանը օրհնել ճամփան քաջերի,
Նրանք անցան օտարի պես, չառան օրհնանքը բարի։
Հողմի թափով անցան այդպես, բայց քաղաքից ելան հենց,
Ժայռին բախված հողմի պես էլ դանդաղեցրին թափն իրենց։
Խորհում էին միջնեկ ու մեծ, որ էլ արքան չի տեսնում,
Ինչո՞ւ այդպես թափով գնան և դեպի ո՞ւր են գնում։
Ցնորվել է իրենց հայրը, ո՞վ է տեսել, ա՛յ խենթ հայր,
Որ հազարան բլբուլ լինի, ու մենք բերենք քեզ համար։
Երկրե-երկիր կթափառեն ու ետ կգան ձեռնունայն,
- Չկար, հայր իմ, հավքերի մեջ քո ասած հավքն հազարան։
Շատ փնտրեցինք, շատ հոգնեցինք, խառնեցինք ծով ու երկինք,
Քո ուզածը չկա՛ր, չկա՛ր, որ հետներս բերեինք։
Ու մինչ նրանք խորհում էին խաբել իրենց հորն այդպես,
Մղկտում էր փոքրի խիղճը, աղ ցանած վերք էր ասես։
Եվ ասում էր ինքը իրեն՝ ի՞նչ արեցիր դու, Արեգ,
Քո փոքրոգի խեղճությունը չի ներվելու քեզ երբեք։

Տվել էր քեզ բարի հայրդ մարդու սիրտ ու կերպարանք,
Բայց դու ընկար մարդու կերպից, ինչպես ընկել են նրանք,
Որ իրար դեմ մարտ են մղում իբր հանուն վսեմի,
Այս ինչ ուժ կա քո սրտի մեջ, խավար մի ուժ երկդիմի,
Քեզ չի թողնում ուրիշի դեմ բացվես ինչպես հենց քո դեմ,
Աղաղակես, որ վախկոտ ես եղել այնքան ու նսեմ,
Չես գնացել այգեպանի բարի օրհնանքն առնելու,
Մարդիկ տանջել են անարդար, չես սփոփել նրան դու։
Մազ չես պոկել իր մորուքից, բայց այդ, խղճուկ, ինչ է որ,
Պոկողների դաժան ձեռքը պինդ բռնել էր հարկավոր։
Ինչպե՞ս պիտի դու դեմ գնաս չար դևերին քո ճամփի,
Երբ նստած են քո մեջ նրանք այդպես խարդախ, տմարդի,
Եվ անմաքուր քո այդ սրտով, քո ձեռքերով անմաքուր,
Ասա, ինչպե՞ս պիտի բռնես այն հազարան հավքը հուր...
Ինչ-որ թախիծ անհուն-անտես սրտի վրա ծանրանում,
Ու քաշում էր սանձը ձիու, ի՞նչ թախիծ էր անանուն։
Այգեպանն էր վշտից մեռել, նա դեռևս չգիտեր,
Բայց լուրն առել սիրտն իմաստուն ու ողբում էր կարեվեր։

7

Գնում էին, գնում, գնում զօր-գիշեր
Երեք եղբայր, հեծած ձիեր հրաշեկ։
Ճամփան մեկ էր, դարձավ հանկարծ նա երեք,
Փունջ-հանգույցում՝ մի ծերունի լուսահեր.
- Բարև, պապի, աղոթո՞ւմ ես առ աստված։
- Բարով եկաք, թագավորի որդիներ։
- Իրավ, պապի, թագավոր է հայրը մեր,
Բայց որտեղի՞ց դու այդ գիտես, ո՞վ ասաց։
- Հա՛, հա՛, հա՛, հա՛, ով ինչ գիտի՝ ինչ ասի,
Ինձանից են ամենքը բան իմանում,

Ոչինչ չկա մարդուս մտքի սահմանում,
Որ իմ աչքը մինչև հատակ չտեսնի։
Գիտեմ, ինչպես վշտացել է հայրը ձեր,
Չորացել են այգին ու սիրտը մարդկանց։
- Դրա համա՞ր ես աղոթում առ աստված,
Թող երկինքը ձայնդ լսի, բարի ծեր։
- Հի՛, հի՛, հի՛, հի՛, աղոթում եմ, այն էլ ո՞ւմ...
Իմ շուրթերը բան խնդրելու սովոր չեն,
Մատս շարժեմ՝ այս լեռները կկորչեն,
Աստվածներ եմ ես մի մատով կործանում։
- Ո՞վ ես, պապի, սարսռում ենք քո խոսքից։
- Անուն չունեմ կամ անուններ ինչքան կան,
Եվ ինչքան էլ հետո ծնի ապագան,
Բոլորն իմն են, բոլորը ես եմ նորից։
- Պապի, մի՞թե դու ապագան էլ գիտես։
- Գիտեմ, գիտեմ, թագավորի որդիներ։
- Ասա, պապի, զո՞ւր է արդյոք ջանքը մեր,
Կբերե՞նք մենք հազարան հավքն իսկապես։
- Ձեզնից մեկն է գնում նրան բերելու,
Բայց չեմ ասի՝ լիքը կգա, թե դատարկ,
Ինչո՞ւ դարձնեմ կյանքն անգաղտնիք, անպատրանք,
Այդպիսի կյանքն հավասար է մեռնելու։
Բայց ինչ արդեն կատարվել է անցյալում,
Պիտի ողջը գիտենաք դուք թել առ թել.
Այգեպանը սառն հողի տակ է մտել,
Այնպես խորն էր նա ձեզ սիրում իր սրտում։
Երբ դուք նրա կողքով անցաք անտարբեր,
Չդիմացավ սիրտը վշտին ու հանգավ,
Բայց ձեզանից մեկն է միայն զգում ցավ
Ու ցավելով պիտի կտրի ճամփաներ։
Ահա, տեսեք, երեք ճամփա ձեր դիմաց,
Ամեն մեկդ մեկը բռնեք գնացեք,

Այս մի ճամփան, որ ուղիղ է ինչպես տեգ,
Ուր որ տանի՝ ետ կբերի անկասկած։
Գնացողը այս մի ճամփով մի քիչ կոր
Տարիներ անց կամ ետ կգա, կամ չի գա,
Իսկ երրորդը անդարձ ճամփան է ագահ,
Ում տարել է, ետ չի բերել մինչ այսօր։
- Ի՞նչ ճամփա է, որը տանում է անդարձ։
Եթե պիտ ետ չբերի մեզ ճամփան,
Ինչպե՞ս պիտի բերենք բլբուլն հազարան,
Մենք ընտրում ենք առաջինը անվթար։
Այնպես ասին՝ մեկմեկու խոսք կտրելով
Թագավորի ավագ որդին ու միջնեկ։
- Շատ խելոք եք,- հեգնեց ծերը,- գնացեք,
Ուր էլ գնաք, դուք ետ կգաք ապահով։
Ու հեռացան եղբայրները ցնծալից,
Կանչեց Արեգն՝ ինձ սպասեք, երբ ետ գաք,
Ես գնում եմ անդարձ ճամփով, մեն-մենակ,
Բայց ետ կգամ, դուք սպասեք այստեղ ինձ։

8

Անդարձ ճամփով գնում է նա, ճամփան երկար, քունը՝ կարճ,
Մեկ էլ հանկարծ մի սպիտակ աշխարհ փռվեց իր առաջ։
Սպիտակ են սար ու ձորեր և անտառն է սպիտակ,
Ձյուն է ասես եկել թաղել ամենն իր հաստ շերտի տակ։
Կարկաչում է, երգում առուն իր սպիտակ ափերում,
Սպիտակ է ջուրն էլ նրա, ասես կաթ է փրփրուն։
Ողջը մեռած ու անշարժ են, լոկ առուն է կենդանի,
Կարկաչելով հոսում է նա՝ առվի նման հայրենի։
Ախ, ջրերը ամեն տեղ էլ նույն ձևով են խոխոջում,
Եվ ինչ գույն էլ որ ունենան՝ նույն արծաթ երգն է հնչում։

Կարոտել է Արեգն արդեն իր հայրենի ջրերին,
Տեսնես մեկ էլ ե՞րբ կլսի նրանց անուշ մեղեդին։
Գնում է նա առուն ի վար՝ այդ մեծ իղձը սրտի մեջ,
Մեկ էլ մահվան կսկիծն անքուն, որ բզկտում է անվերջ։
Հիշում է նա այգեպանին (ախ, նա ինչպես էր տանջվում,
Ցանկանում էր օրհնանքն իր տալ նույնիսկ վերջին իր շնչում),
Եվ ասում է ինքը իրեն՝ ի՞նչ արեցիր դու, Արեգ,
Քո փոքրոգի խեղճությունը չի ներվելու քեզ երբեք,
Նա լոկ քեզ էր ապավինել, իբրև վերջին իր հույսին,
Բայց դու նրան շիրիմ հրող անգութն եղար առաջին։
Սիրով ապրեց, սիրուց մեռավ, թող զղջումը այրի քեզ,
Հոգիդ լցնի ցավով այսպես, հառաչանքով աղեկեզ։
Ծանր է ինչպես, գոնե մի մարդ ելներ հիմա իր ճամփին,
Պատմեր նրան, թեթևանար սիրտը ցավից սաստկագին։
Ոչ ոք չկա, խիղճն է միայն քրքրում սիրտն իր ներսից,
Խիղճն ամենից գթառատը և անգութը ամենից։
Ախ, թող մարդուս մարմնի վրա հազար վերքեր լինեն խոր,
Բայց չլինի նրա խիղճը գեթ մի տեղից վիրավոր։

9

Ձայն տվեց հողը սպիտակ դևին.
- Արեգն է եկել, մահով է եկել, վերջ քո արևին։
Բուք-բորան ելավ, ոռնացին գայլեր հազար ու հազար,
Բայց գայլեր չկան, ոռնոցն է միայն լսվում միալար,
Որ ոռնոց էլ չէ, մտքերն են դևի,
Խորհում է դևը մահվան ահով լի.
«Հատվել են արդեն իմ և իր ուղին,
Կամ ես, կամ նա ինձ, երկու դեպքում էլ վերջ իմ երկյուղին։
Բայց նա էլ ինձնի՛ց պիտի երկյուղի,
Չէ՞ որ իր սրտում ես կամ լիուլի,

Նախ իր սրտի մեջ պիտի հաղթի ինձ,
Նախ իր սրտի մեջ, հետո նոր դրսի կռվում շանթալից։
Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, նա պիտի հաղթի, հողածին է խեղճ,
Ես՝ ձյուն իր խղճին, ես ցրտահարող ամեն ուժ իր մեջ։
Յոթ հազար տարի, յոթ հազար տարի
Ցրտի սկիզբն եմ եղել աշխարհի,
Կապանք եմ դրել ես լեզվին մարդկանց,
Որ սիրտը իրենց պահեն անթափանց
Եվ չհասկանան, որ եթե այս են, ցույց են տալիս այն,
Հենց դրանից է, որ չի տաքանում աշխարհը համայն»։
Խորհում էր դևը, չէ, գայլեր էին հազար ու հազար
Ձեն ձենի տված ոռնում միալար...

Առուն ի վար գնում էր նա՝ Արեգը լուռ, գլխահակ,
Մեկ էլ հանկարծ իր դեմ ելավ դևի ամրոցն սպիտակ։
Իր ձին կապեց քաջը ծառից, մտավ ամրոցն ու՝ զարմա՛նք,
Մի լուսեղեն աղջիկ տեսավ, ծով քնքշություն ու նազանք։
- Սիրուն աղջիկ, դու կյանք, դու լույս, նորաբողբոջ դու գարուն,
Ի՞նչ ես անում այս անկենդան, այս մահաշունչ ձյուներում։
- Իմ կամքով չեմ եկել, կտրիճ, ինձ բերեց դևն սպիտակ,
Ա՛խ, սև օր էր, մեր աշխարհը եկավ արեց ոտնատակ,
Քանդեց, ջարդեց, արքա հորս և զորքերը կոտորեց
Եվ ինձ բերեց փակեց այստեղ, որ լամ այսպես դառնահեծ։
Պատմեմ ինչից այդ սկսվեց։ Կռվում էին երեք դև
Ծովի հզոր արքայի դեմ, ուզում Քամի ձին զավթել։
Երեք աղջիկ ուներ արքան, մեծը մրրիկ էր վայրի,
Ծնվել էր նա ծովի անհուն հրայրքներից ամեհի,
Ծովի խորունկ խոկումից էր ծնվել աղջիկը միջնեկ,
Դրա համար իմաստուն էր, ուներ սուր աչք ու ծով խելք։
Իսկ կրտսերը, որ ծնվել էր ծովի անուշ ծիծաղից,
Այնպես քնքույշ, գեղեցիկ էր, կապուտաչյա ձնծաղիկ։
Ասում են, թե ինչ-որ արքա փրկեց դստերը երեց,

Կարմիր դևի բաժինն էր նա, ու դևը շատ փրփրեց։
Դարան մտած սև դևը նենգ հափշտակեց միջնեկին,
Սպիտակ դևն էլ կրտսերին ուզեց տանել իրեն կին,
Բայց փախցրին տարան նրան ինչ-որ բարի ոգիներ,
Սպիտակ դևը կատաղեց ու աշխարհը մտավ մեր,
Ջնջեց, ջարդեց, ինձ խնայեց, առավ այստեղ բերեց նա,
Որ երբ նայի՝ իր ուժն զգա և կորուստն իր մոռանա։
Որս է անում հիմա սարում, երնեկ ինքը որս դառնար,
Փախիր, կտրիճ, հոտդ առնի, հիմա կգա խոլաբար։
Դու չես շարժվում, ա՛խ, աստված իմ, իրա՞վ քաջ ես դու այնքան,
Որ կարող ես հաղթել նրան քո այդ բազկով առնական։
Ո՞վ ես, ի՞նչ ես անում դու էլ այս մահաշունչ ձյուներում։
- Ճամփա ելել, երկրե երկիր հազարան հավքն եմ փնտրում։
Ու Արեգը լռեց իսկույն, շարունակեր՝ ի՞նչ ասեր,
Դևն էր զարթնել նրա սրտում, արթնացրել այլ հույզեր։
Զզգաց հսկան ինչպես փոխվեց, Արեգը չէ առաջվա,
Էլ կրծքի տակ չի մղկտում արյունլվա խիղճն հիմա,
Այգեպանի մահն հիշում է, սակայն արյուն չի լալիս,
Սառն է, ինչպես եղբայրները մահվան բոթը լսելիս։
Իզուր այնքան տառապում էր, բավական է սուգ անի,
Չկա ոչինչ, որ լինի իր արցունքներին արժանի։
Երկու եղբայրն էլ ընտրեցին այն անփորձանք, ձիգ ճամփան,
Ասել է, թե չէին գնում բերելու հավքն հազարան,
Դու էլ եղիր նրանց նման, միշտ մտածիր քո մասին,
Այս աշխարհի կարգն է՝ ջոկես քո օգուտը վնասից։
Ասի այդպես՝ այս աղջիկը կհամարի եսասեր,
Չասի այդպես, բայց սուտ խոսելն իրեն մի՞թե կսազեր։
Ոչ, չի ստի դևն, ուրեմն, սրտին լրիվ չի իշխել,
Մյուս կեսը մարտ է մղում խոհերի դեմ այդ դժխեմ,
Եվ ճչում է, թե դու էլ ես եղծվել ինչպես որ նրանք,
Որ չեն փնտրում ճշմարտություն, այլ ստեղծում են պատրանք,
Թե ճշմարիտն են որոնում, և՛ ազնիվ են, և՛ անքեն,

Այնինչ ներքուստ միայն, միայն իրենց օգուտը գիտեն։
- Ո՞վ ես, կտրիճ, և որտեղի՞ց,- աղջիկն իր հարցն է կրկնում,
Եվ Արեգը տառապում է երկու խոհի սահմանում,
Մեկ ուզում է խոստովանել, որ եղծվել է ինքն իրոք,
Մեկ անսալով դևի ձայնին, որ հնչում է անողոք,
Կամենում է հորինել, թե քրքրում է խիղճն իրեն
Առաջվանից էլ սաստկագին, ահեղորեն, դառնորեն։
Քրքջում է դևը հեռվում՝ հաղթում եմ քեզ, հողածին,
Հիմա, հիմա դու սուտ կասես, մի սուտ՝ վայել քեզպեսին,
Ա՛յս ես, սակայն ցույց կտաս այն, կպակասի ուժը քո,
Եվ աշխարհին կավելանա մի շունչ ցուրտ էլ քո մեղքով։
Ու այդ պահին հողն հառաչեց՝ այնպե՛ս անօգ, այնպե՛ս խոր,
Հառաչելով ասաց քաջին, որ դեռ կանգնած էր մոլոր.
«Ա՛խ, լսիր, Արեգ, եթե մայր հողի զավակն ես ընտիր,
Բաց լեզուդ, խոսիր, ինձ այս սպիտակ մահից ազատիր։
Հերկվոր չեմ տեսել յոթ հազար տարի,
Չեմ լսել երգը ջահել հնձվորի,
Սպիտակ դևը ինչ ոտքը դրեց իմ կրծքի վրա,
Ինձ ձյունով պատեց և իմ ծիլերը խեղդեց անխնա։
Բաց լեզուդ, ասա ճշմարիտը դու,
Ոչինչ մի պահիր, ողջն ասա, ինչ կա խորքում քո հոգու։
Իմի պես սև է բախտն էլ քո երկրի,
Ու խղճի սով է այնտեղ սկսվել մոլուցքով վայրի։
Երբ խիղճն է լռում, թե՛ սիրտ և թե՛ կյանք անհամ են ու սուտ,
Մարդը դառնում է խարդախ ու լպիրշ, այգին՝ մացառուտ։
Թե այսպես գնա՝ ձեզ մոտ էլ կիջնի ձյունն այս դժնդակ
Ու բերքի կարոտ հողը կտնքա դևի ոտքի տակ»։
Լսում էր Արեգն ու չէր հասկանում՝ հո՞ղն է այդ ասում,
Թե՞ իր երկփեղկված սիրտը իր ներսում։
Իր երկրի ցավը սրտի խորքերում զարթնել է կրկին,
Զարթնել, մաքրում է չնչին մտքերից, կեղտերից հոգին։
Մի մաքո՛ւր-մաքո՛ւր լույս է ծավալվում նրա սրտի մեջ,

Լույս, որ ծնվում է կեղտին բախվելուց՝ հոգիներում մեծ։
- Ես մեծ անգութն եմ, չքնաղ, ինձ իզուր կոչեցիր կտրիճ...
Ու պոռթկաց սիրտը, չթաքցնելով էլ ոչի՛նչ, ոչի՛նչ։
Հետո ասաց նա՝ սպիտակ դևը փակել է ճամփաս,
Սուր իմ, շանթ լինես, ձեռք իմ, չդողաս,
Սպանեմ նրան ու բերեմ շուտով բլբուլն հազարան,
Որ այգին անվարդ, մարդիկ աներազ, չարսիրտ չմնան։
- Այդ երազն ի՞նչ է,- խորհեց դևը չար,-
Ես թուլանում եմ, բայց դեռ պարտված չեմ։
Հասավ ժամն արդեն,
Մեր սրերն հիմա դրսում կբախվեն։

Եկավ դևը և ահաբեկ
Ձյուն ու մրրիկ արձակեց.
- Քեզ սառած միս կանեմ, Արեգ,
Հում-հում կուտեմ հիմա քեզ։
Ձին թռցրեց Արեգն իսկույն,
Անցավ թիկունքը դևի,
Զարկեց, թռավ գլուխը ձյուն,
Ցրտի սկիզբն աշխարհի։
Նվաց դևը հոգևարքում.
- Ով հողածին, զարկ մեկ էլ։
- Մի անգամ է քաջը զարկում,
Քեզ շատ-շատ էր այդ մեկն էլ։
Դևը ձյան պես հալվեց, ընկավ,
Հանգավ հույսն էլ իր վերջին։
Զարկեր քաջը երկրորդ անգամ,
Նա կյանք կառներ վերստին։
Փարվեց աղջիկն հրաշագեղ
Ազատարար Արեգին.
- Մնա, կտրիճ, ապրիր այստեղ,
Դու ինձ այր-մարդ, ես քեզ՝ կին։

- Ճամփա ունեմ, պիտի գնամ,-
Մերժեց Արեգը նրան։
- Ա՛խ, մի գնա, ես կդառնամ
Քո բլբուլը հազարան։
Կամ ուր գնաս՝ ինձ հետդ տար,
Ես քեզ հարճ ու աղախին։
- Չէ, ես ունեմ երկու եղբայր,
Դու կդառնաս մեծին կին։
Ու իր ճամփան բռնեց նորից
Արեգը քաջ ու անահ.
- Ես դեռ կգամ, սպասիր ինձ,
Հարսիկ, բարով դու մնա։

10

- Արեգն է գալիս, քո մահն է գալիս, արյունարբու դև,
Կարմիր էր օրդ, նա կդարձնի սև։ -
Ձայն տվեց հողը ու կարմիր մի հողմ ելավ, մռնչաց,
Հազար բորենի ոռնացին ահեղ, ձեն-ձենի տված,
Բորենի չկար, լոկ ոռնոցը կար,
Այդ կարմիր դևն էր խորհում մոլագար,
Եթե թարգմանես խոհ-ոռնոցը այդ, կինչի այսպես.
- Չընկավ ցուրտ մահից, կընկնի տա՛ք մահից, բոցերում իմ կեզ։
Ո՞վ է դիմացել իմ թեժ բոցերին, որ նա դիմանա,
Յոթ հազար տարում միայն մի անգամ չեն տարածել մահ,
Լոկ կռվում ընդդեմ ծովի արքայի,
Իմ հուր ու բոցով ես եռացնում եմ ջրերն ամեհի,
Սառեցնում էր ճերմակ եղբայրս իր բուք-բորանով,
Ու ծովը դարձյալ նույն ծովն էր մնում, նույն ջերմությունով։
Հիմա այս կռվում մենակ կլինեմ,
Այդ Արեգն ո՞վ է, որ կանգնի իմ դեմ։

Բայց որ հաղթել է իմ քաջ եղբորը, հասել է այստեղ...
Ի՞նչ եմ երկմտում, աշխարհում չկա մեկն ինձնից զորեղ,
Մարդկանց սրտերում ես արյան տենչ եմ բորբոքել դարեր,
Սուզվել են նրանք արյան ծովերում, չեն բարձրացել վեր,
Հարբել են արյամբ, քանի խմել են, այնքան ծարավել,
Քանի ծարավել, դաժան են դարձել այնքան առավել։
Ես կբորբոքեմ այդ խիզախի մեջ
Արյան խենթ ծարավ, սպանելու տենչ,
Թունդ կբորբոքեմ, որ պատահածի արյունը թափի,
Օ՜, նա կխրվի արյան ծովի մեջ, արյամբ կհարբի։
Ոչ ոք չի հաղթի ինձ արյան ծովում,
Այստեղ չեմ մեռնում, ծնվում եմ այստեղ և բազմապատկվում։

Արեգի դեմ փրփրեց ահա մի գետ կատաղի,
Կարմիր է ջուրը վարար՝ նման արյան հեղեղի,
Կարմիր են դաշտ ու անտառ, ասես կռիվ է եղել,
Ե՛վ հող, և՛ քար, և՛ ծառեր ալ կարմիրով ողողել։
Արեգն առաջ է գնում ասես միջով արյունի,
Ձին մոլեգնած վրնջում, հողն է դոփում վայրենի։
Արթնացել են, ճչում են, խռովում Արեգին
Սպանելու մի խուլ կիրք, արյան ծարավ մոլեգին։
Մութ բնազդը այս արնոտ, որ քնած էր իր հոգում,
Հիմա մահվան ի՜նչ ահեղ պատկերներ է բորբոքում։
Ու մոլեգնած, արնատենչ հասավ ամրոցը դևի,
Շեմքին մի կին էր կանգնած՝ դևի գերին երևի։
- Ոչ, դևն ինքն է իմ գերին ու այս շնիկն է գերիս,
Շատ եմ տանջել ես նրան, բայց փարվում է ոտքերիս։
Արքա էր նա՝ աչքը կուշտ, գանձեր ուներ անհամար,
Գանձերից շատ՝ քնքուշ խոսք, խենթ սեր՝ պահած ինձ համար։
Հողեր ուներ ծովի չափ, չկար հաշիվն իր զորքի,
Անվանում էին արքա անհուն սիրո, քնքշանքի։
Ծովի արքան՝ իմ հայրը, երբ դևերի դեմ կռվեց,

Ինչպե՞ս եղավ, չգիտեմ, սա ինձ մահից ազատեց,
Տարավ պալատն իր շքեղ ու ինձ դարձրեց թագուհի,
Բայց ես ծնվել եմ ծովի հրայրքներից ամեհի,
Ինչպես քույրը իմ կրտսեր՝ ծովի անուշ ծիծաղից,
Ինչպես միջնեկ իմ քույրը՝ ծովի խորունկ խոկումից։
Թողած սիրո արքային՝ ամեն գիշեր ես թաքուն
Գալիս էի դևիս մոտ, լուսաբացին դառնում տուն։
Սիրո արքան հասկացավ, ինձ հետևեց խավարում
Եվ շնիկ է խեղճն հիմա, արքա՝ միայն հուշերում։
Կախարդական գավազանն իջավ, քերծեց նուրբ կաշին,
Կտրիճ, թե խելք ունենաս, այլ բախտ կընկնի քեզ բաժին։
Խուլ տնքաց հողը, երբ տեսավ հանկարծ,
Որ ձեռքն Արեգի ահա իր սրի դաստակին գնաց։
«Այս լիրբ թագուհուն կխողխողի նա,
Սուրը կխրվի արյան ծովի մեջ ու կծանրանա,-
Խորհեց հողն իր մեջ մերթ տագնապահար ու մերթ հույսով լի,
Որ ծարավն արյան ուր որ է կանցնի, սուրը չի փայլի,-
Ախ, ետ տար ձեռքդ, կհարբես արյամբ ու կթուլանաս,
Դևի դեմ հետո ինչպե՞ս կկռվես ուժով քո պակաս։
Անսա ինձ, կտրիճ, եթե մայր հողի զավակն ես ընտիր,
Յոթ հազար տարվա այս կարմիր մահից դու ինձ ազատիր,
Յոթ հազար տարի դևն իր բոցերով ծիլերս է այրել,
Իմ պտղավորման քաղցր սարսուռը արյամբ է մարել։
Դու լսո՞ւմ ես ինձ, թե՞ ձայնս միայն իմ մեջ է հնչում,
Իմ տնքոցները արձագանքո՞ւմ են և քո ականջում։
Ախ, ո՞վ է լսել, որ դու լսես ինձ,
Կոխկռտել են լոկ, աչք իսկ չեն թարթել իմ հոգոցներից»։
Հող, մի հառաչիր, նա լսում է քեզ,
Նրա հոգու մեջ դու քո վիճակով ձայն ես աղեկեզ։
Զարթնել է դարձյալ նրա սրտի մեջ խիղճը առաջվա
Եվ պիտի խոհերն արյունից լվա։
Խորհում է խիղճը, ծանր ու թեթև է արյան տենչն անում,

Բռնել է ձեռքը ու կտրիճը, տես, սուրը չի հանում.
«Սրով չես մաքրի սիրտը ախտերից,- մտածում է նա,-
Սրի շնորհքը արյուն հեղելն է աշխարհի վրա։
Ո՞ր ախտավորի արյունը թափես և ինչո՞ւ թափես,
Էլ ինչու եմ ես գնում հուր հավքի հետևից այսպես,
Մարդկանց սրտերը նա՛ պիտի մաքրի
Իր հրաշագեղ դայլայլով բարի։
Իմ ճանապարհը դևն է փակողը, ոչ թե թագուհին,
Նա է թշնամիս, իսկ սա՝ միայն կին,
Որ հրայրքից է ծնվել գոռ ծովի,
Եվ իր հրայրքն էլ սահմաններ չունի։
Չէ, չեմ սպանի, չի ջնջվում հետքը զուր թափած արյան,
Արնոտ ձեռքերով ես ինչպե՞ս բռնեմ բլբուլն հազարան»։
Եվ գավազանը թագուհուց խլեց ձեռքով իր հզոր,
Զարկեց շնիկին՝ թագավոր էիր, դարձիր թագավոր։
Մարդու կերպ տվեց, տվեց գավազանն այդ կախարդական,
Սեփական վրեժն ինքը թող առնի ձեռքով սեփական։
«Դև, վերջդ եկավ, պատյանում մնաց քաջի սուրն ահեղ,
Թագուհին ողջ է, արյան կաթիլ իսկ չթափվեց զուր տեղ։
Ընկար իր սրտում, ձեր դրսի մարտում նույնպես կընկնես դու,
Բավ է, քանի՛ դար ճզմել ես՝ ինչ կար իմ մեջ կենսատու»։
- Հա՛, հա՛, հա՛, կընկնեմ, և դա չի լինի զուր թափած արյուն,
Ի՞նչ բան է զուրը, որ հասկանում են մարդկանց աշխարհում։
Ես հուր եմ, ես մահ, իմ երեք գլխում միայն այրել կա,
Իմ երեք գլխից երեք բոց ժայթքած, հողածին, եկա...

Չին խթանեց, սուրաց հսկան
Շանթի թափով կատաղի։
- Արեգ,- ձայնեց սիրո արքան,-
Զարկ դու գլխին մեջտեղի։
Զարկեց Արեգն ու դևն ընկավ,
Ոռնաց, կանչեց՝ մեկ էլ զարկ։

- Մի անգամ է քաջը զարկում,
Մեկով ճամփում էն աշխարհք։

Կարմիր դևը հանգավ լուռ, փչեց վերջին շունչը իր,
Կարմիր արյունը հոսեց, ծծվեց հողի մեջ կարմիր
Ու խառնվեց մի մասն էլ դեմի կարմիր առվակին,
Առվակը հորդեց ու ելավ, դարձավ առու մի կարգին։
Կուրծքը բացեց թագուհին ու Արեգին մրմնջաց.
- Խրիր սիրտս սուրը քո, թող լինեմ ես էլ մեռած։
Բայց Արեգը չտարավ ձեռքը սրին իր արդար,
Արյան ծարավը կարմիր ընդմիշտ մարել էր, չկար։
Ու սրի տեղ գավազանն իջավ կրծքին լայնաբաց,
Սիրո արքան էր խփեց, արքան խաբված, տառապած,
Խփեց թեև ցասումով, բայց չդարձրեց նրան շուն,
Սիրում էր դեռ սրտի մեջ, դարձրեց սրինգ նվագուն։
Ապա ասաց Արեգին՝ թագավոր եմ ես հարուստ,
Կտամ՝ ինչքան գանձ ուզես, ինչքան հագուստ ու կապուստ։
- Թագավորի տղա եմ ու կարոտ չեմ ես գանձի։
Ոսկու տեղակ, ով արքա, տուր պատասխանն իմ հարցի.
Ո՞ր երկրում է բնակվում հրաշք հավքը հազարան,
Ասա, բարի թագավոր, ինչպե՞ս գտնեմ ես նրան.
Բայց չէր լսել նման բան սիրո արքան մինչ հիմա,
Գիտի լեզուն հավքերի, կհարցնի, կիմանա։

11

Գնում են, գնում, զօր-գիշեր գնում
Մռայլ Արեգը և արքան մռայլ,
Ոչ մի հավք չկա այս մեռած երկնում,
Ոչ մի ծլվլոց, մահ է արնափայլ։
Հանկարծ, օ՜, բերկրանք, մի արծիվ եկավ,

Ուժասպառ եկավ սև դևի երկնից,
Արքայի կանչին անսաց ու իջավ,
Տեսածից պատմեց, պատմեց լսածից։
- Չեմ տեսել, արքա, հավքը քո ասած,
Բայց կա մի աղջիկ, տեղը կիմանա,
Իմաստուն էակ, բայց դևից գերված,
Ամեն ինչ գիտի այս երկրի վրա։
Միջնեկ աղջիկն է ծովի արքայի,
Ես տեսա նրան իր սևերի մեջ,
Սրտիկը կարոտ մի տաք արևի,
Մի տաք բարևի՝ լալիս է անվերջ։
Սակայն ձեր միջև ու սև աշխարհի
Մի ծով կա անանց, չեք անցնի երբեք,
Քամի ձին է պետք, որ ձեզ թռցնի,
Ծովի արքայի Քամի ձին է պետք։
Խոստացեք փրկել դստերը գերի,
Ցնծությամբ կտա հայրը Քամի ձին։
Ասաց ու թռավ արքան հավքերի՝
Կարմիր աշխարհի ցոլքը կտուցին։
Այնպես մոտ թվաց մի պահ Արեգին,
Այնպես իրական հավքը բաղձալի,
Լսում էր, լսում արդեն իր հոգին
Երգը իր փնտրած հրաշք բլբուլի։
Բայց չէ, այդ սիրո արքան էր դալուկ
Դրել շուրթերին սրինգ-թագուհին
Ու նվագում էր մորմոքն իր խորունկ
Իր ու իր փրկչի անջատման պահին։
Մեղեդի՞ էր այդ, թե՞ սիրո ծարավ,
Աստված իմ, Արեգն իր ամբողջ կյանքում
Նման մեղեդի չէր լսել բնավ,
Խոսք էր, կարոտ էր, լաց էր հեկեկուն,
Թե՞ ուրիշ մի բան, որ դեռ չգիտի,

Մտավ սրտի մեջ մեղեդին քնքուշ,
Մերթ տաք ու մերթ ցուրտ, ինչպես օր մարտի,
Մերթ հույսի ժպիտ, մերթ ցավ դժնդակ,
Սիրո արքայի սրտում ինչ որ կար
Իր սրտի մեջ էր լցնում մեղեդին,
Եվ ինչ կար սրտում թագուհու այն չար,
Իր սիրտն էր քամում կաթիլ առ կաթիլ։
- Իմ լավության դեմ, սիրո թագավոր,
Մի լավ բան արիր, մի հատ էլ վատ բան,
Քո նվագի մեջ ի՞ժ կար թունավոր,
Ես ինձ զգում եմ խայթվածի նման։
Ես զուլալ առու, անցնում եմ անվերջ
Ցեխերի միջով ու պղտորվում եմ,
Ինչ-որ բնազդ է զարթնել սրտիս մեջ,
Չի ուզում ննջել, ասա, ի՞նչ անեմ։
Եվ ուրիշ-ուրիշ բնազդներ զարթնում,
Տանջում են միտքս, բզկտում հոգիս,
Ես արատների շղթա անհատնում
Ու քառս եմ ես վեր աստնվորիս։
- Բայց քայլում ես դու, գնում ես առաջ
Դեպի հազարան հավքը բաղձանքիդ։
- Գնում եմ, սակայն, աչքերիս առաջ
Ուր էլ նայում եմ՝ ժպտում է մի կին,
Քո թագուհին է, ամոթ ինձ, արքա,
Որ դարձել եմ ես այսպես վավաշոտ,
Երկրներ կտամ, և՛ դափնի, և՛ գահ
Տիրելու համար կնոջն անամոթ։
Այդպես են արել քանի՛ արքաներ
Եվ ուրիշ մարդիկ տարփանքում ագահ,
Որ իրենց կիրքն են բարձրացրել վեր
Սուրբ ճշմարտության դիակի վրա։
- Բայց դու քայլում ես, գնում ես էլի

Դեպի հազարան հավքը երազիդ։
- Գնում եմ, սակայն թույն-մաղձով եմ լի,
Ասես կրծքիս տակ օձ է, ոչ թե սիրտ։
Դու ինչո՞ւ, ինչո՞ւ դարձրիր ինձ քաոս,
Եվ քաոսի մեջ, խառն ձայներում
Բիրտ բռնակալի ձայնը բարբարոս
Արդար ճիչերն է ոտքի տակ մարում։
Իրավունքներ է նա բռնաբարում,
Օրենքներ՝ վաղուց դարձած սրբազան,
Եվ ազատ միտքը ազատ չի ճախրում,
Ոտքի տակ ինչպե՞ս կճախրի բազեն։
Ինչո՞ւ արեցիր, որ բարձր են հնչում
Ձայնն ազահության, ձայնը նենգության,
Ձայնը նախանձի, որ քեն է տենչում,
Ձայնը եսամոլ փառասիրության...
- Բայց դու քայլում ես, գնում ես վստահ
Դեպի հրաշքը կախարդ բլբուլի,
Նվագն ինչքան էլ քեզ ցավերս տա,
Դու ետ չես դառնա, կգնաս էլի։
Ի՞նչ են իմ գահը, իմ թագն ու ոսկին
Քո այդ աննահանջ մղումի դիմաց,
Որ քեզ կմաքրի կրքերից չնչին,
Ու էլ չես զգա խայթոցը նրանց։
Սակայն դու նենգ չես կամ քինախնդիր,
Բռնակալ ազահ, կամ էլ հեշտասեր,
Թե չէ դու դժվար ինձ տուն ճամփեիր,
Ինչքան էլ թափուր գահս սպասեր։
Ինձ հուշեց սերը և արթնացրի
Այդ սաղմ կրքերը, որ քո մեջ դեռ կան,
Ներսիդ սև դևին կյանք տվի, կտրիճ,
Որ արյունաքամ հաղթես դու նրան։
Եթե չհաղթես ներսիդ սև դևին,

Դրսի սև դևին երբեք չես հաղթի,
Սաղմ-արատները քնած մնային,
Դրսի սև դևից պարտվեիր պիտի։
- Փրկված թագավոր, փրկիչ թագավոր։
Բայց ինձ թվում է, թե սիրտս են լցվել
Աշխարհի բոլոր կրքերը ստոր,
Աշխարհն այս ինչքան մեղսոտ է եղել։
Տուր կախարդական այս գավազանն ինձ,
Խակ է ու խարդախ մեր աշխարհը հին,
Մի լավ բան անի, տասն էլ հետևից
Վատ գործեր կանի աշխարհի ձեռին։
Ու առավ փշրեց ու վառեց իսկույն
Արեգն այդ փայտի կտորն ավերիչ։
- Այս վիճակում էլ քեզ մտահոգում,
Աշխարհի բախտն է հուզում քեզ, կտրիճ։
Դեհ, մնաս բարով, մոտ է ծովն արդեն,
Ուր Քամի ձին է ու ծովի արքան,
Բարի ճանապարհ, իսկ ես կաղոթեմ,
Որ քո երկիրը դառնաս հաղթական։

12

Սև է ջուրը սև աշխարհի, սև է վարդը, փուշը՝ սև,
Մի մրոտված թիթեղի պես երկինքը սև, անարև,
Սև է սարը, դաշտը սև է, ինչպես հերկը խավարում,
Ու սևի մեջ ճամփան Արեգն հազիվհազ է նշմարում։
Գնում է նա, Քամի ձին է ցոլում գրկում խավարի,
Ծովի արքան տվել էր ձին հանուն դստեր իր գերի։
Անցած անանց ծովը անծիր, հիմա մտած հողը սև՝
Խռովահույզ, բայց աներեր քեզ է գալիս, ով սև դև։
Հանկարծ լսվեց մի դղրդյուն, այդ սև ա՞մպ էր՝ որոտաց,

Ինչո՞ւ հապա կայծակ չկա, որ ամպերից ցոլար ցած։
Քիչ էլ գնաց Արեգը քաջ, տեսավ երկու ժեռուտ սար,
Երկու սև սար, բարձր-բարձր, կատարներով հավասար,
Գնում գալիս ու բախվում են ու հեռանում, որ էլի
Ցուլերի պես բախվեն իրար դղրդյունով ահռելի։
Միակ ճամփան հրաշք հավքի նրանց միջով է անցնում,
Ի՞նչ թռիչքով կտրես կանցնես, երբ որ բացված են լինում։
Ախ, իր ներսում սև դևը կա, իր թռիչքն է սանձում նա,
Անցնի՝ մահ է, չանցնի՝ վայ է, հողն իր եղծված կմնա։
- Հե՛յ հողածին, ետ դարձիր, ետ,- սև սարերն են ասում գոռ,-
Քեզ կճզմենք մեր արանքում, տես, մենք ինչքան ենք հզոր։

13

- Արեգն է եկել ու հերթն է եկել քո մահվան, սև դև,
Օ՛, ես վերջապես կտեսնեմ արև,-
Ձայն տվեց հողը, և օձանման մի պտուտահողմ
Ծառս ելավ, կանգնեց, նայեց ամեն կողմ։
Եվ անթիվ օձեր ֆշշացին ահեղ,
Բայց օձեր չկան՝ լոկ ֆշշոցը կա այստեղ ու այնտեղ,
Այդ դևն է խորհում ու թարգմանվում է խոհ-ֆշշոցն այսպես.
«Չընկավ ցուրտ մահից, տաք մահից չընկավ, բայց թույն մահն եմ ես,
Սարերից անցնի, յոթ գլուխներս կելնեն նրա դեմ,
Իմ յոթ օձերը յոթ հազար տեղից նրան կխայթեն։
Բայց ինչպե՞ս կանցնի, իր երակներով իմ թույնն է հոսում,
Ես կամ իր կրքի պղտոր քառսում։
Յոթ հազար տարի սերմանել եմ ես մարդկանց սրտի մեջ
Քեն, նախանձ և մաղձ, փառասիրություն և լլկելու տենչ։
Սև, բազմապիսի աղտեղության մեջ ինձ ո՞վ կհաղթի,
Այդ հլու գերի՞ն իր մեղսոտ սրտի։
Նայիր, ուզում է քշել Քամի ձին սարերի միջով,

Լցվել է փառքի աննահանջ տենչով,
Գուցե թե կանցնեմ, երազում է նա, բախտ է, ի՞նչ գիտես,
Եվ այնուհետև կփառաբանվեմ ողջ աշխարհում ես։
Չի էլ ափսոսում, որ կճզմվի իր հետ Քամի ձին,
Նրա պետքն էլ չէ մտածել ինչ-որ ուրիշի մասին։
Ամեն եսասեր այդպես է խորհում՝
Նախ ինքը, հետո՝ վերստին ինքը՝ միակն աշխարհում։
Եվ այդ նշան է, որ իր մեջ բոլոր արատները կան,
Նա ինձ չի հասնի, ժեռուտ սարերը կճզմեն նրան,
Եվ կճզմվի Քամի ձին նույնպես,
Նրա շնորհքն էր, որ ծովի արքան կռվում նեղեց մեզ։
Ինչո՞ւ կանգ առավ և ի՞նչ է խորհում այլայլված այդպես,
Իջնել է ուզում նա ձիուց կարծես։
Թե իրոք իջնի, ուրեմն, վայ ինձ,
Օտար մի ուժ կա նրա սրտի մեջ, զորեղ իմ ուժից։
Ի՞նչ ուժ է տեսնես, որ դիվային չէ, զորեղ է, սակայն,
Դև եղբայրներս այդ ուժից ընկան»։

Ձիուց իջավ Արեգը քաջ՝ մնաս բարով, Քամի ձի,
Ինձ թոցրիր անանց ծովով, երբ այդ քեզնից խնդրեցի,
Հիմա ոտքով անց կկենամ այս սարերի արանքով,
Լավություն ես արել դու ինձ, վերադարձիր ապահով,
Բան է՝ հանկարծ թե ճզմվեմ, չեմ ցանկանա նույնը քեզ,
Նայիր, բախումն ինչքան է գոռ, դարձիր ծովդ, ափսոս ես։
Հե՛յ, սև սարեր, ճամփա տվեք, դադար առեք գեթ մի պահ,
Չեմ վախենում ես իմ մահից, ինձ համար չեն ահ ու մահ,
Ա՛խ, կմեռնի հույսն էլ ինձ հետ, հիմա այնտեղ իմ երկրում
Ելնում է ոխն իր պատյանից, խոցում սրտեր, մահ սփռում,
Եվ հանում է բամբասանքը փեշի տակից իր երկար
Սև օձերի վտառներ սև, որ խայթում են նենգաբար,
Պիտի տանեմ հավքն հազարան ու նրա հետ՝ բարի լուր,
Թե մարդն էլի մարդ կդառնա, կցնծա սիրտն ամենուր։

Ճամփա տվեք, գնամ հասնեմ ես բլբուլին հազարան։
Կանչեց քաջը, բայց սարերը չլսեցին էլ նրան։
Ու ձին ասաց՝ ով հողածին, քեզ չեմ թողնի ես մենակ,
Քո սրտում կա հազարան հավքը բերելու ի՛նչ տենչանք,
Այդ տենչի դեմ բոլոր ստոր բնազդները չարածին
Անզորացան, ընկան պարտված, ոչ թե նորից քնեցին։
Ամուր նստիր դու իմ մեջքին, զարկ, այնպես զարկ կողերիս,
Որ մորիցս ծծած կաթը բերանս գա զարկելիս,
Ես քեզ այնպես կթռցնեմ այդ սարերի արանքով,
Չես հասցնի աչքդ թարթել, շուրջդ նայել վարանքով։
Եվ Արեգը այնպես խփեց, որ ձին տնքաց կարեվեր,
Փոթորկվեց ձին այրող ցավից, ցոլաց, թռավ դեպի վեր
Ու մինչ տերը ուշքի կգար՝ արդեն այն կողմն էր անցել,
Բայց արանքում ժեռ սարերի, ափսոս, պոչն էր մնացել,
Սպասում էր դևը այնտեղ, այդ սարերի ետևում,
Ահը սրտում, սիրտն ահի մեջ՝ դեպքերին էր հետևում։
Տեսավ քաջին, իր յոթ գլխից յոթ օձ ժայթքեց ֆշշոցով,
Գալար-գալար, ինչպես հողմից ալեկոծվող մի սև ծով։
Արեգը ձին թռցրեց վեր, թռչունի պես թևավոր,
Ու մինչ դևը վեր կնետեր իր օձերը թունավոր՝
Արեգի սուրն իջավ հատու նրա գլխին մեջտեղի,
Թռավ գլուխն ու ահազդու մաղձ դուրս թափեց և լեղի,
Մյուս վեցն էլ ընկան իսկույն ու ֆշշացին՝ մեկ էլ զարկ։
- Մի անգամ է քաջը զարկում, մեն մի անգամ, հանց կայծակ։
Եվ այդ պահին լուռ արթնացան մութից ելած դաշտ, անտառ,
Երևացին ձոր ու կածան, բայց էլի սև, էլի մառ։
Ինչքա՛ն շատ էր ծծվել սևը այդ աշխարհի հողի մեջ,
Կար արևը, չկար դևը, բայց դեռ սևը չուներ վերջ։

Սև սարին ալ արև կա վառ,
Սև սարին ու սև ամրոցին,
Սև քարին կանգնած լուսավառ՝

Կաքավներն ուրախ երգեցին։
Կանգնեցին Արեգն ու իր ձին
Սև դևի ամրոցի դիմաց
Ու դևի չքնաղ գերուհին
Դուրս եկավ ամրոցից, ասաց.
- Բարև սև դևին հաղթողին,
Փրկարար հերոսին բարև,
Սև հողին արև բերողին
Բյուր հազար օրերի արև։
- Լույս աղջիկ ծովի արքայի,
Ո՞վ բերեց քեզ բարի համբավ,
Ո՞վ ասաց մինչ ես կգայի,
Թե կռվում սև դևը ընկավ։
- Արևի շողերն ասացին,
Ասացին երգերն հավքերի,
Որ այսպես ուրախ հնչեցին,
Ասացին՝ էլ չես դու գերի։
Եվ ասաց մեր խոլ Քամի ձին,
Որ կայտառ փնչում է տակիդ,
Իմ աչքերն այնքան նայեցին՝
Ձեր ճամփին հառված անքթիթ,
Եվ այն էլ ասաց Քամի ձին,
Կտրված իր պոչով ասաց,
Որ հոգիդ մի այգ լուսածին,
Բայց ունի մի ծալ դեռ մթնած։
Մարդկանցից վեհագույնն ես դու,
Բայց էլի պղտոր ես մի քիչ,
Հոգուդ մեջ խոհեր լուսատու՝
Գնում ես այսպես ո՞ւր, կտրիճ,
- Գնում եմ իմ երկրի համար
Հազարան բլբուլը բերեմ,
Ցույց տուր ինձ, քույր իմ, ճանապարհ,

Ես գնամ մուրազիս հասնեմ,
Ետ դառնամ երկիրս տեսնեմ,
Այնպես եմ կարոտել նրան,
Թող ծաղկի, ծիծաղի իմ դեմ,
Երբ տանեմ բլբուլն հազարան։
- Կարոտել եմ, կտրիճ, ես էլ
Մեր ծովին, ջրերին ծփուն,
Յոթ տարի հորս չեմ տեսել,
Նա աղի արցունք է թափում։
Բերել ես մեր խոլ Քամի ձին,
Մեր ծովի կարոտն եմ առնում,
Ես բոցե աղջիկ ծովածին,
Բայց հեռու ծովս չեմ դառնում։
Քո սիրով կմնամ այստեղ
Կամ կգամ ձեր հողը քեզ հետ,
Այնքան են իղձերդ լուսեղ,
Կթողնեմ ծովս առհավետ։
- Ծովածին, նազելի աղջիկ,
Կտանեմ քեզ հողն իմ տոչոր,
Քեզ խոսքեր կասեմ ես քաղցրիկ,
Բայց իբրև կնոջն իմ եղբոր։
Կլինես դու հարսն իմ միջնեկ,
Իմ միջնեկ եղբոր կինն անուշ,
Բոլորս քեզ շատ կսիրենք,
Չի լինի քո ճամփին մի փուշ։
Իսկ հիմա, հարսիկ իմ սիրուն,
Ինձ ճամփա ցույց տուր ես գնամ,
Որտե՞ղ է հրաշք հավքն ապրում,
Ո՞ր երկրում, այգում անթառամ։
- Քո ասած բլբուլն հազարան
Ապրում է վերին աշխարհում,
Իմ քույրն է տիրուհին նրա,

Իմ կրտսերն՝ ինձանից սիրուն։
Բայց ճամփիդ, իմացիր, կտրիճ,
Այնքան շատ արգելքներ դեռ կան,
Մերթ ահեղ ու մերթ գրավիչ
Փորձանքներ քո գլխին կգան,
Բոլորին դու հաղթես պիտի,
Երկաթե բազուկին հաղթես,
Ապրում է հրեշն այդ երկաթի
Բարձր մի սարում ամպաղեզ,
Թռչում է ամպերում անհաս,
Սարից սար թռչում շանթի պես,
Քո ճամփին՝ որ կողմով գնաս,
Դու նրան պիտի հանդիպես։
Քեզ սար կտանի Քամի ձին,
Չես հաղթի դու առանց նրա,
Կարոտս չեմ առել կարգին,
Բայց նրան քեզ հետ տար հիմա։
Երկաթե բազուկին մահ տաս,
Քամի ձին կարձակես կգա,
Քեզ վերին աշխարհը անհաս
Կհանի զմրուխտ հավքն հսկա։
Կկապես դու բաշից ձիու
Իմ գործած թաշկինակն այս խաս,
Կիմանամ, որ հաղթել ես դու,
Օրերից մի օր ետ կգաս։
Իսկ որ դու բարով դառնաս տուն,
Դեռ էլի ականջ դիր խոսքիս,-
Ու չքնաղ աղջիկն իմաստուն
Տվեց նոր խորհուրդներ քաջին։
Գրկեց, ձիու բաշն համբուրեց
Ու հետո՝ ճակատն Արեգի։
Չիմացավ ինչպե՞ս պատահեց,

Ցած իջավ, հասավ շուրթերին,
- Չէ, հարսիկ, դու կինն ես, գիտցիր,
Դու կինն ես իմ միջնեկ եղբոր։
Ասաց ու քշեց Քամի ձին
Արեգը՝ ճամփեքով ոլոր։

14

Ճանապարհը սարն է տանում այն երկաթե բազուկի,
Եվ գետեր են գնում իր հետ հանդարտ, առանց աղմուկի։
Գետերի մեջ ահա մի գետ ճերմա՛կ-ճերմա՛կ, փրփրուն,
Կաթնագետն է, որի մասին ասաց աղջիկն իմաստուն։
Ու Արեգը իջավ ձիուց, խմեց մի բուռ փրփուր կաթ,
Զգաց, ինչպես ամրանում է, ասես դառնում է երկաթ...
Կաթի ամեն մի կաթիլը շշնջում է իր ներսում՝
Գիտես թե ի՛նչ խմեցիր դու, երկրի զավակ սիրասուն։
Սա մայր երկրի կաթն էր արդար ու խմելով դու մի բուռ
Դարձար նրա սիրած որդին, նրան սիրողն ամենուր։
Այդ իմացար, իմանալով է՛լ ավելի ամրացար,
Մայր աշխարհի ուժը քո մեջ գետ կդառնա՝ հորդած հար։
Ու Արեգը գոտեպնդված հեծավ էլի Քամի ձին,
Չանցած մի կիրճ՝ մեղրագետի ալիքները ծփացին։
Խմեց մի բուռ, քաղցր ձայնեց մի բուռ մեղրը իր սրտում՝
Գիտե՞ս թե ինչ ճաշակեցիր, երկրի զավակ իմաստուն,
Իմացության ծաղկունքից էր անուշ մեղրը պատրաստված,
Երազներից, տենչանքներից, տանջանքներից վեհ մարդկանց։
Ի՞նչ է ուժը առանց անհուն իմաստության սերուցքի,
Իմաստությամբ՝ չարի առաջ կյանքի դուռը կծածկի,
Ու Արեգը խոհերով լի շարունակեց իր ճամփան,
Հաջորդ կիրճում փրփրում էր գինու գետը հուրհրան,
Խմեց մի բուռ ու արյան մեջ պայծառ մի բոց խլրտաց,
Երակներից լցվեց հոգին գարնան առվի պես հորդած։

Օ՜, արարման սրբազան դող, ստեղծումի բեղուն սեր,
Ի՞նչ է ուժը, ի՞նչ է խելքը, երբ դու լուռ ես ու ստվեր։
Երբ ստվեր չես, երբ մարմին ես՝ քո մեջ կրակն ավյունի,
Ուժը ուժ է և խելքը՝ խելք, տալիս է ողջն՝ ինչ ունի։
Եվ հողածին Արեգն հիմա իրոք հզոր է այնքան,
Որ երկաթե բազուկն անգամ չի փակելու իր ճամփան։
Մեկտեղումն է սա սպիտակ, կարմիր ու սև դևերի,
Արյուն է սա ու պատերազմ, որ աշխարհը կավերի։
Հեռվից ահա երկարեց նա իր բազուկը արնագույն,
Դեպի կոկորդը Արեգի, բայց խույս տվեց քաջն իսկույն,
Թռցրեց ձին երկինքն ի վեր, կորավ ամպի մեջ մթին,
Որ շանթի պես իջեցնի սուրն հրեշի ճակատին,
Իսկ երկաթե բազուկը գոռ քրքջում է ու փնտրում
Ձիու սիրտը կամ Արեգի պարանոցը ամպերում։
Բայց Արեգը բռնեց ահա հաղթ բազուկը երկաթե,
Երկու բազուկ իրար քամում և ուզում են երկատել,
Ով՝ ում արդյոք, ո՞վ է ուժեղ, ի՜նչ կռիվ է ամեհի,
Ո՞ւմ հավատն է ավելի մեծ կռվում կյանքի ու մահի։
Քաջ Արեգի սրտի խորքում տրոփում են միլիոն սիրտ,
Մատների մեջ միլիոն մատներ ուժ են տալիս միասին։
Հանուն բոլոր այդ սրտերի մի անգամ էլ սեղմեց նա,
Ու ճարճատյուն լսվեց մի չոր, էլի, էլի և ահա
Ճարճատելով ջարդվեց բազուկն այն երկաթե հրեշի,
Դարեր ապրի, այս վայրկյանը Արեգը միշտ կհիշի։
Հսկայական երկաթե դին փռվեց ոտքի տակ նրա։
«Ինչ-որ գյուղ եմ տեսնում հեռվում, այնտեղ գնամ ես հիմա,
Ասեմ, թող գան, տանեն երկաթն ու խոփ ձուլեն գութանի,
Հերիք ինչքան այս երկաթը շնչավորներ կործանի,
Թող հիմա էլ սերմի համար բացի փափուկ անկողին,
Ծլեն սերմեր արարումի, փառք տան բարի ցանողին։
Քեզ էլ, քեզ էլ, իմ Քամի ձի, իմ ախպերս, արձակեմ,
Գնա, պատմիր քո տիրուհուն, որ հրեշին հաղթել եմ»։

15

«Ինձ գյուղ թվաց հեռվից հեռու, բայց քաղաք է մի հսկա,
Դիակներ են փռված չորս դիս, մի կենդանի մարդ չկա,
Ախ, գյուղ լիներ, դարբնոցներում կրակն ուրախ բոցկլտար,
Ու երկաթե բազուկի դին գութան դառնար, բահ արդար,
Այդ հրեշը ինձնից առաջ եղել է այս քաղաքում,
Պատերազմ է սարքել այստեղ ու նախճիրներ ժանտագույն։
Բայց ինչպե՞ս է, որ շներ իսկ ու կատուներ էլ չկան,
Անգամ մկներ, որ տերեր են դառնում ամեն անտեր տան։
Խանութները մթերքներով, ապրանքներով լեփ-լեցուն,
Խանութպաններն ընկած, սակայն, էլ գնորդ չեն սպասում։
Մսեղենն է արդեն հոտել, շորեղենը՝ ընկել ցեց,
Տեր իմ աստված, ի՞նչ աղետ էր, որ այս մարդկանց պատահեց։
Այնտեղ ահա մի բան շարժվեց, մա՛րդ է, մա՛րդ է կենդանի,
Միակ մարդը, որ շնչում է, մի տառապյալ ծերունի»։
- Բարև, պապի, այս ո՞վ դարձրեց ձեր քաղաքը շիրմատուն։
- Բարով եկար, ազնիվ կտրիճ, փառք իմ բարի աստծուն,
Որ ուղարկեց գոնե մի մարդ իմ վշտերը լսելու,
Պատմեմ, դու էլ ողբա ինձ հետ, ով գթառատ այցելու։
Ապրում էինք ուրախ ու լի, ամեն ինչ կար կրկնակի,
Ես բանաստեղծն էի առաջ ուրախ ու շեն քաղաքի,
Հիմա ի՞նչ եմ՝ շարժվող դիակ, մեռելների մեջ անթաղ,
Դիակներ են իմ գրքերն էլ, որոնք փտում են դանդաղ,
Ի՞նչ գիրք, եթե բացող չկա, ողջը մեռան քաղաքում,
Արձաններին նայող չկա, մեկն էլ իմն է դեռ կանգուն,
Այ, այն մեկը, սակայն հիմա այնպես նման չենք իրար,
Նա արծվաբար վեր խոյացող, իսկ ես՝ դողդոջ ու թշվառ։
Չլսեցին բանաստեղծին, նրա խոսքին չանսացին,
Դևը հզոր էր ինձանից իր մտքերով չարածին։
Մեր քաղաքը եկավ մի օր, սովորական մարդ էր նա,
Միայն աչքերն էին դեղին։ Սա էլ արձանն է նրա։

Մարդիկ արձան կանգնեցրին նաև նրան՝ այդ դևին,
Թույն է թափում դեռ սրտիս մեջ նա աչքերից իր դեղին։
Գեղեցիկ էր, և ամեն կին թաքուն սիրում էր նրան,
Պաշտվեց դեղին գույնը կյանքում, չէ՞ որ ոսկու գույնն էր այն։
Բերեց իր հետ մի մեծ թմբուկ, մեկ էլ թմբուկն էր դեղին,
Այնքան ծանր, մեր հսկան իսկ այն չշարժեց իր տեղից։
Ով որ խփեր թեթևակի, նա մի ոսկի կստանար,
Ու կստանար ավելի շատ՝ ինչքան հարվածն ուժգնանար։
- Բայց, իմացեք, ասաց դևը, եթե խփեք շատ ուժգին,
Պայթեցնեք իմ թմբուկը, վերջ կլինի ձեր կյանքին,
Այնքան ուժեղ կդղրդա, որ որոտից կմեռնեք,
Դե, մոտ եկեք, ձերն է ոսկին, առեք տարեք մեկ առ մեկ։
Կտրիճ, ոչ ոք չար թմբուկին չմոտեցավ սկզբում,
Սակայն հետո ով ասես, որ չէր մոտենում ու խփում։
Փախել էր քունը քաղաքից։ Ասես կարկուտ էր տեղում,
Մերթ թույլ ու մերթ ուժեղ ձայնից դողում էի անկողնում։
Մարդիկ, ի՞նչ եք անում ախր, գոռում էի սարսափած,
Հազար ձևով, հազար երգում նույնը ասում ես նրանց,
Հեշտ վաստակով մահն եք ընտրում, մի մոտեցեք թմբուկին,
Արտը վարեք, հանքը փորեք, հողից հանեք ձեր ոսկին։
Դնում էին իմ արձանին մեծարանքի ծաղիկներ,
Բայց ասածս չէին լսում հոգիներում իրենց նեռ։
Փնտրում էի շքեղ հանգեր, անգամ հնչյունը հղկում,
Ճոխ պատկերներ էի փնտրում, որ լիներ երգս զնգուն,
Բայց իմ երգից ոսկու զնգոցն ավելի էր քաղցրալուր,
Կորած բառ էր իմ գտածը, կորած պատկեր, կորած հուր։
Ի՞նչ էր երգս, թեկուզ վսեմ, մարդիկ խոհեմ չդարձան,
Որ չար կրքից մաքրվեին՝ պետք էր բլբուլն հազարան։
Ձագ է հանում ամեն տարի Զմրուխտ հավքը իր բնում,
Ամեն տարի օձն է գալիս ու ձագերին հոշոտում,
Եթե նրան սպանեի, Զմրուխտ հավքը գութով լի
Ինձ կհաներ վերին աշխարհն հրաշագործ բլբուլի։

Բայց երբ գալիս էր վիշապը, ես կարկամում իմ տեղում,
Աչքի տակով, հեռվից-հեռու նայում էի ու դողում։
Ծաղրում էր ինձ վիշապ օձը, մարդիկ՝ օձից ավելի,
Ախ, երանի ոչ թե պոետ, այլ դյուցազուն ծնվեի։
Անցյալ տարի, երբ ես նորից այնտեղ էի, այն հեռվում,
Ուր սգավոր Զմրուխտ հավքն է իր վշտի հետ բնակվում,
Լսեցի զոռ մի դղրդյուն, որ ուժեղ էր ավելի,
Քան երկնքից մութ ամպերի որոտմունքը ահռելի։
Կատարվել էր այն սոսկալին։ Մինչև որ չի կատարվում,
Աղետը իր ողջ մեծությամբ, մեր աչքին չի երևում։
Քրքջում էր ու հեռանում դեղին դևը մեր հողից,
Զայնն հեռանում ու մարում էր, ինչպես նետը՝ աղեղից։
- Պապի, պապի, ախ, ես գիտեմ, նա մեր քաղաքը գնաց։
Եվ Արեգի սիրտը զարկեց անհունորեն տագնապած։

16

Սպասում են վիշապ օձին ստվերի տակ ժայռի,
Մեկը՝ հոգսով, մյուսը՝ բազկով, նաև հոգով արի։
- Այ, այս ձորով գալիս է նա,- ասաց ծերը տխուր,-
Ձորն է լցվում մարմնով նրա, ֆշֆշոցով զարհուր։
Աչքը աչքիս հառած ազդու՝ սողում, գալիս է նա,
Ծառն է ելնում, թվում գերան այլ գերանի վրա։
Տես, տես, եկավ ոնց էլ գիտի ժամանակը հարմար,
Զմրուխտ հավքը այսօր թռավ կեր բերելու համար,
Մեր քաղաքն է թռչում այդպես շաբաթը մեկ անգամ,
Անիծյալ օձ... Ախ, թե հանկարծ նախկին ուժս զգամ...
- Դու կաց, պապի, գալը տեսար, գնալը չես տեսնի։
Ու պատյանից Արեգն հանեց սուրը իր հավլունի։
Շուլալվում էր վիշապն արդեն, ծառն ի վեր բարձրանում,
Ծվում էին ու ծվծվում խեղճ ձագերը բնում։

Զարկեց Արեգն ու օձն ընկավ գալար-գալար հատված։
- Ապրես, կտրիճ, միշտ հաղթ պահի քո բազուկը աստված։
Քոնն է ճամփան ու դու գնա այն աշխարհը վերին,
Բեր բլբուլը, տեսնեմ, սեղմեմ կարոտ իմ աչքերին։
Ու երկու ձեռք, մեկը՝ շատ ծեր, մյուսը՝ ջահել, կայտառ,
Ու երկու ձեռք բարեկամի խոսք տվեցին իրար,
Որ սպասի մեկը այստեղ, մյուսը՝ ճամփան գնա,
Փորձանքներ կան հազար տեսակ, բարով վերադառնա։
Տեսավ նրանց հեռվից-հեռու Զմրուխտ հավքը հսկա,
Սպանողներն իր ձագերի սրանք են կա-չկա։
Մի մեծ ժեռ քար հանեց երկինք, մի սրածայր ժեռ քար,
Որ ցած նետեր նրանց գլխին ու սիրտը հովանար։
Լեզու առան մարդու նման ձագերը միասին,
Լեզու առան ու մորն իրենց ծվծվալով ասին.
- Մայրիկ, մի՛ արա, մայրիկ մի՛ արա,
Ցածում, տես, սատկած վիշապն է ահա,
Մեզ ուտեր պիտի, մեզ ուտեր պիտի,
Բայց զարկեց նրան սուրը պողպատի,
Ցած իջիր, մայրիկ, ցած իջիր, մայրիկ,
Մեր փրկիչի հետ խոսիր դու քաղցրիկ։

17

Քնեց, երազ տեսավ կապուտաչյա փերին՝
Հազարան բլբուլի տիրուհին հազարան,
Տեսավ՝ մարդն է գալիս Զմրուխտ հավքի թևին,
Ոչ մի դև ու հրեշ չի խանգարել նրան։
Դև եղբայրներն հերթով նրա սրից ընկել,
Երկաթե բազուկն էլ ժանգոտվում է մեռած,
Նրանք իբրև պահակ ճամփան էին փակել,
Իր հազարան հավքի ճամփան մարդու առաջ։

Ախ, դավաճան հայրիկ, նաև անխելք մի քիչ,
Դու տվեցիր մեր ձին, անցավ նա ծովն անանց.
Ախ, դավաճան քույրիկ, մատնիչ, մատնիչ,
Ցույց տվեցիր նրան իմ բլբուլի ճամփան,
Երա՞զ է սա արդյոք, թե՞ իրական տեսա,
Եթե երազ է սոսկ, թող արթնանամ՝ ցնդի։
(Արթնացավ, երազ էր) իզուր ես վախեցա,
Իմ բլբուլի տեղը քույրիկս չի մատնի,
Նույնիսկ եթե ուզի՝ ո՞ւմ կարող է ասել,
Դևի ահից նրան ո՞վ կայցելի։
Ի՜նչ անիմաստ երազ, մարդն ինչպե՞ս էր հասել
Իր անմաքուր սրտով իմ բլբուլին։
Ինչ խենթ է սևաչյան, կրկնում է անդադրում,
Ասում է՝ կտանեն երգչիդ ոսկեկտուց,
Կգա մարդն, ասում է, ցավ կա իր աշխարհում
Եվ ցավը իբր թե զորավոր է սիրուց։

18

Ցածում սարեր ու հովիտներ, ցածում դաշտեր ամայի,
Ցածում՝ ցածի աշխարհն անխինդ, սարսափների մեջ մահի։
Ու գնում են անթև մարդը և թևավոր հավքն հսկա
Ցածի ծմակ աշխարհներից վերին աշխարհն արևկա։
Ու գնում են, գնում, գնում, հասան ահա վերջապես,
Ինչքա՞ն ճամփա անցան արդյոք, ինչպե՞ս, ինչո՞վ կչափես.
- Գնա կտրիճ, ես կսպասեմ այս ծառի տակ, մինչև գաս,
Փրկել ես դու իմ հինգ ձագին, միայն մեկի վարձքն է այս։

19

- Ողջույն քեզ, ով վերին աշխարհ,
Բույրերի, թույրերի իշխան։

Բայց ուր է, բույր չունես անուշ,
Ախ, դու էլ տատասկ ես ու փուշ,
Չեն թողնում ինձ առաջ գնամ,
Կծում են, խայթում չարակամ։
Ես այսքան ճամփա կտրեցի,
Հաղթեցի բազկով առնացի
Զազրադեմ երեք դև հսկա,
Երկաթե բազուկին անգամ,
Բայց այստեղ ուժս չի զորում,
Տատասկի, փշի անտառում։
Հա, բան էր հարսիկս ասել,
Լավ է մտքիցս չեմ գցել։
Ու քաղեց Արեգը մի փուշ,
Հոտոտեց, ասաց փաղաքուշ՝
Ի՜նչ անուշ հոտ ունես, ծաղիկ,
Հոտ չկա քոնից անուշիկ։
Ու ծաղիկ դարձան իսկապես,
Բուրեցին փշերը այնպես
Ու ճամփա տվեցին, գնաց
Արեգը՝ բույրերով հարբած։
Բայց ճամփան կտրեց ինչպես սուր
Մի պղտոր աղի-լեղի ջուր,
Չի թողնում, որ առաջ գնա,
Պինդ փակել է ճամփան նրա։
Ու խմեց Արեգը մի բուռ՝
Ա՜խ, ինչքան անուշ ես դու, ջուր,
Քեզ նման ջրիկ քաղցրահամ
Խմում եմ առաջին անգամ։
Ու ջուրն էլ տվեց ճանապարհ,
Ուր կուզես, գնա քեզ համար։
Բայց սիրտը ծարավն է այրում,
Բոցեր են վառվում բիբերում։

Ո՛ւր գնա Արեգը ծարավ,
Շատ աղի-լեղի էր իրավ
Այդ ջուրը, այդ գետը պղտոր,
Սև մահ էր, մահվան պես հզոր,
Արեգը էլ չի դիմանում,
Ճամփան էլ այս ո՞ւր է տանում,
Ախ, մեկ է՝ հյուսիս, թե հարավ,
Այնպես է, այնպես է ծարավ,
Թվում է վայր կընկնի հիմա
Ու տեղից էլ վեր չի կենա։
Տենչում է հրաշք մի աղբյուր,
Ա՛խ, ինչպես կխմեր բուռ-բուռ։
Ու հանկարծ աղբյուրը ցոլաց,
Մահվան մեջ ժպիտ էր կենաց,
Կանչում էր՝ խմիր և կապրես,
Տանջում էր ծարավը այնպես
Եվ Արեգն աղբյուրին թեքվեց,
Ուզում էր խմել և հիշեց
Խրատն հարսիկի՝ չխմես,
Հորդորն հարսիկի՝ զսպիր քեզ։
Բայց այնպես, այնպես էր ծարավ,
Չիմացավ, թե ինչպես ընկավ
Պաղ ջրին ու խմե՛ց, խմե՛ց,
Մինչև որ ծարավը կոտրեց։

Ու զրնգաց աստվածային մի մեղեդի սրտահույզ,
Փերիները ջրի տակից թռվռալով ելան դուրս,
Եվ ինչ մերկ էր՝ դարձավ կանաչ, ինչ թույլ շող էր՝ վառ ճաճանչ,
Փռվեց չորս դին դրախտն անուշ՝ աղբյուրներով մեղմականչ։
Մշտադալար ծառ ու ծաղիկ օդը լցրին բույրերով,
Պես-պես հավքեր, ծիածաններ՝ հազար ու մի թույրերով։
Արեգն զգաց՝ վերին աշխարհն իրոք աշխարհ է վերին,

Ուր բնակվում են լուսեղեն ոգիները երկնային։
Կտրեց մատը ու աղ ցանեց վերքի վրա, որ ցավի,
Մրմռա սիրտն ու չլինի վայելքներին ծարավի։
Բայց փերիներն այնպես թեթև թռվռում են, երգ ասում,
Որ հիշում է վերքի ցավը ասես հեռու երազում։
Ինչքան դյութիչ ձայներ ունի չքնաղ աշխարհը վերին,
Ինչքան քաղցր ու զրնգուն ծիծաղում է այս փերին։
Երգում է նա, ինչպես կերգեր ինքը՝ բլբուլն հազարան,
Երգով դյութում է Արեգին ու հորդորում է նրան.
- Օ՜, հանդարտվիր այսուհետև, խաղաղվիր դու, հողածին,
Չար կրքերը անցած հեռու օրերի մեջ մնացին,
Ինչ որ վատ էր ու վհատ էր՝ թողիր այնտեղ, ներքևում,
Մաքուր, մաքուր անուրջներն են հիմա ճամփադ արևում։
Արժանի ես մեր դրախտին, մեզ հետ մեկտեղ ապրելու,
Օտար հեռվից այս տեղերի դու առաջին այցելու։
- Արի այստեղ, ամբրոս ըմպիր,- կանչում է այլ մի փերի,-
Կամ ուզում ես նստիր ինձ հետ ճերմակ թևին ամպերի,
Տե՛ս, տե՛ս, ինչպես սահում եմ ես թեթև՜, թեթև, բախտավոր,
Դու էլ արի սահենք մեկտեղ, ոգի եղիր, ինչ կա որ։
Ու կանչում են ամեն կողմից փերիները ձյունափառ
Ու ամբրոս են հրամցնում, արբեցնող երգ ու պար։
- Մեզ նայելիս չեն պղտորվում այդ աչքերը քո մաքուր,
Դու էլ մեզ պես լուսեղեն ես, դու՝ մեզ եղբայր, մենք քեզ՝ քույր։
Քո սրտի բյուր ծալքերի մեջ էլ մութ չունես, թեկուզ քիչ,
Ընդունում ենք քեզ դրախտի հավերժական բնակիչ։
Ու երգում են, էլի երգում այնպես անուշ, հոգեթով,
Ու պարում են, էլի պարում աղավնորեն ճախրելով,
Թվում է, թե մոռացել է հարբած Արեգն ամեն բան,
Մատից արյուն է կաթկթում, վերքը անցավ է սակայն։
- Թող մի կաթիլ ջուր քսեմ ես այս աղբյուրից քո վերքին,
Ու կբուժվի անմիջապես, չի մնա հետք իսկ չնչին։
Սարսափում է Արեգն հանկարծ, ինչ կլինի, թե լռի,

Չխոսի վերքն անկման ցավից իր հեռավոր աշխարհի,
Սպասում են հիմա այնտեղ հայրն ու այգին իր դարձին,
Ինչ իմանաս մարդիկ այնտեղ հիմա ինչեր արեցին,
Մեռյալ է այն քաղաքի պես իր քաղաքն էլ երևի,
Դեղին դևը հաղթանակած՝ քրքջում է վայրենի։
- Ախ, թողեք ինձ, ով փերիներ, խղճացեք ինձ, բարիներ,
Գիտեք, ինչքա՛ն եմ տառապել, մինչ հասել եմ հողը ձեր։
Մեր երկիրը ձեռքից գնաց, պիտի տանեմ ես նրան
Իբրև հույս ու սպեղանի փրկիչ բլբուլն հազարան։
Ասաց Արեգն ու դրախտով, կախարդական աշխարհով
Մի դյութական շշուկ անցավ՝ թողեք, գնա անխռով,
Նա ամենից դժվարն հաղթեց հանուն տխուր իր երկրի,
Արժանի է, որ լիասիրտ ցնծա հոգին ու բերկրի։
Նայեց Արեգն իր չորս կողմը, չքացել է ամեն բան,
Մնացել է իր ծարավը կոտրող աղբյուրը միայն։

20

Աչքովդ տեսածին ինչքան շատ հավատաս,
Հավատա մի քիչ էլ երազներին։
Ընկողմանած փափուկ անկողնում խաս՝
Տեսավ մի նոր երազ կապուտաչյա փերին։
Տեսավ ինչպես եկավ Արեգն ահա,
Անցավ տատասկների ու փշերի միջով,
Աղի-լեղի ջուրն էլ նրան տվեց ճամփա
Եվ ուղեկցեց անուշ իր կարկաչով։
Անգամ փերիները բաց թողեցին նրան
Իրենց հրապույրի գույն-գույն որոգայթից,
Եկավ, եկավ, եկավ այդ քաջասիրտ տղան,
Հասավ ահա դռանն իր պալատի։
Միսը խոյի դեմից առավ տվեց գայլին,

Խոտը գայլի դեմից դրեց խոյի առաջ,
Եվ ուտելով ընկած՝ նրան ճամփա տվին
Նույնիսկ խոյն ու գայլը՝ պահնորդները իր քաջ։
Պալատ մտավ Արեգն ու խրատված ասես՝
Բաց դռները փակեց, փակ դռները բացեց,
Սանդուղքներով մարմար ելավ տանտիրոջ պես,
Ննջարանն իր մտավ, մի պահ դյութված կանգնեց։
Ճակատն իր համբուրեց քաջը անվախ,
Հետո շրթունքները համբուրեց տաք,
Առավ իր հազարան հավքը չքնաղ,
Կրծքին սեղմեց, տարավ լույսն իր ոսկեվանդակ։
Բացեց աչքերն ահով տիրուհին բլբուլի,
Ի՜նչ լավ է, երազ էր, մղձավանջ էր մի չար,
Բայց շուրթերն այրվում են կրակով լի,
Տաք համբույրի հետքը նրանց վրա դեռ կար,
Իսկ բլբուլն հազարան, իր բլբուլը... չկար,
Երազ չէր, ուրեմն, կտրիճն իրոք տարավ,
Հե՜յ, փակ դռներ, ամուր սեղմվեցեք իրար,
Փակեք նրա ճամփան, դռներ իմ լավ։
- Օ՜ֆ, տիրուհի, փակ մնացինք,
Այս էլ քանի՜ հազար տարի,
Մենք ժանգոտել, մգլել էինք,
Մեզ բաց արեց ձեռքն օտարի,
Թող բաց մնանք էլի մի քիչ,
Հետո էլի բռնենք նրան,
Բռնվեց՝ լավ, չբռնվեց՝
Բարով գնա նա իր ճամփան։
- Հե՜յ, բաց դռներ, շարժվեք, բռնեք նրան իսկույն,
Ներս եք թողել գողին, այդ ինչպե՞ս եք հսկում։
- Օ՜ֆ, տիրուհի, բաց մնացինք,
Այն էլ քանի՜ հազար տարի,
Այնպես հոգնել, թմրել էինք,

Երբ մեզ փակեց ձեռքն օտարի,
Սպասիր քիչ հանգստանանք,
Հետո էլի բռնենք նրան,
Բռնվեց՝ լավ, չբռնվեց՝
Թող երկարի նրա ճամփան։
- Խոյ, դու բռնիր, իմ խոյ, գայլ, դու բռնիր, իմ գայլ,
Չթողնեք, իմ քաջեր, առաջ անցնի մի քայլ։
- Այս էլ քանի՜ հազար տարի
Միս էր դրված խոյիս առաջ։
- Այս էլ քանի՜ հազար տարի
Խոտ էր դրված գայլիս առաջ,
Փոխեց տեղը միս ու խոտի,
Որ չմնանք մենք անոթի,
- Հիմա խոյս՝ խոտ եմ ուտում։
- Հիմա գայլս՝ միս եմ ուտում։
- Օ՜ֆ, տիրուհի, մի քիչ ուտենք,
Հետո էլի բռնենք նրան,
Բռնվեց՝ լավ, չբռնվեց՝
Օրհնված է նրա ճամփան։
- Խնդրում եմ, փերիներ, կախարդեցեք նրան,
Գողացել տանում է բլբուլս հազարան,
Գողացել է սիրտս էլ բլբուլի հետ,
Շուրթերը շուրթերիս դրոշմել են հետք։
- Հերիք մնար զառ վանդակում
Հրաշք հավքը քո հազարան,
Կյանքդ հերիք մնար դժգույն,
Չսիրեիր դու ոչ մի բան։
Տարավ սիրտդ, հավքդ տարավ,
Մի վախենա, անմահ մեր քույր,
Մաքուր ձեռքեր ուներ իրավ,
Մաքուր խոհեր, իղձեր մաքուր։
- Հե՜յ, աղի-լեղի ջուր, լսիր ինձ գոնե դու,

Կտրիր քաջի ճամփան, կրծքով կանգնեցրու։
- Չէ՛, տիրուհի, թող որ գնա,
Աղի-լեղի ջուր չեմ հիմա,
Նրա շուրթերն ինձ փոխեցին,
Կաթիլները իմ դառնածին
Հիմա քաղցր ու սառն են այնպես,
Որ դու ինքդ էլ խմել կուզես։
- Դուք մնացիք միայն, տատասկ ու փուշ,
Քրքրեք ոտքերը, դարձրեք նրան անուժ։
- Ես տատասկ չեմ։
- Ոչ էլ ես՝ փուշ։
- Նրա խոսքով դարձանք քնքուշ,
Մենք ծաղիկ ենք, մենք ծաղիկ ենք,
Նրա ոտքերն համբուրեցինք,
Ու դրանով երջանիկ ենք
Ու դրանով միշտ գեղեցիկ,
Մենք թույլ տվինք կտրիճն անցնի,
Զմրուխտ հավքի թևին հիմա
Արդեն անցավ կեսը ճամփի,
Մյուս կեսն էլ բարով գնա։

21

Էլ վերջ, հերիք էր ողբար ու թախծեր,
Պարեց ու երգեց բանաստեղծը ծեր.
- Քաջը բերեց քաջաբար
Իմ երազանքը աշխարհ,
Էլ չեն լինի մաղձ ու ոխ,
Սրտեր՝ իրար հոշոտող,
Փրկությունն է աշխարհի,
Ի՛նչ առավոտ է բարի։

Ապա համբուրեց բանաստեղծը ծեր
Հազարան հավքի թևերը բոցե,
Խաս փետուրները քսեց երեսին,
Ու... հոգնած աչքերն հավետ փակվեցին։
Թաղեց Արեգը իր բարեկամին,
Կաղնուց ճյուղ կտրեց ու տնկեց շիրմին,
Որ աճի, խշշա՝ կյանքի ծառ դարձած։
Ու Զմրուխտ հավքը սլացավ դարձյալ,
Հասավ սև դևի աշխարհը դեռ սև,
Ողջը սև, թեև շուրջն արև՛-արև՛։
- Բլբուլ ջան, երգիր, շնորհքդ ցույց տուր,
Աշխարհն այս հերիք մնա սև, տխուր։
Նոր տիրոջ խոսքը դեռ չվերջացած՝
Երգեց բլբուլը, անուշ գեղգեղաց,
Երկինքը կապեց շքեղ ծիածան,
Գույն-գույն ծաղիկներ դաշտում արթնացան,
Կանաչ գորգ փռվեց սարերի լանջին,
Սև ծառը իսկույն տվեց կանաչին,
Սև ջուրը կապույտ ալիքներ տվեց,
Սև ջրընկեցը ճերմակ փրփրեց։
Սև մնաց միայն հողը բարեբեր,
Բայց սև, որ կանաչ ու կարմիր կապեր։
Ծովի արքայի դուստրը կապտաչվի
Երբեմնի գերին ահեղ սև դևի,
Արեգի հարսիկն անուշ ու խելոք
Տեսավ, հասկացավ, որ եկել իրոք,
Արեգն է եկել հրաշք հավքի հետ,
Արարել հրաշքն այս գարնանավետ։
Հագավ ծովագույն զգեստն իր շքեղ,
Սանրեց մազերը իր հրաշագեղ,
Ելավ իր երազ քաջին ընդառաջ,
Որը գալիս է ճամփեքով կանաչ։

- Բարև՛, կտրիճ, բարո՛վ եկար,
Սպասել եմ ես քեզ երկար,
Ամեն ցերեկ՝ իմ մտքի մեջ,
Ամեն գիշեր երազ եկար։
Ասաց ու գրկեց աղջիկն Արեգին,
Համբուրեց նրա ճակատը կրկին,
Ու էլի իջավ շուրթերին հասավ,
Սիրտը շուրթերի գինուն էր ծարավ։
- Չէ՛, հարսիկ իմ սիրավոր,
Կինն ես իմ միջնեկ եղբոր։
Իմ սիրտը այնտեղ մնաց՝
Քո քրոջ տեսքին գերված։
Հասցնեմ բլբուլն այգին,
Ետ դառնամ կարոտագին,
Ու առնեմ վառ քույրիկիդ,
Տուն տանեմ զառ քույրիկիդ։
Լսեց գեղուհին, չընդվզեց հոգին,
Քրոջ պես նայեց այս անգամ՝ քաջին
Ու հարսիկի պես,
Ե՛վ անդորր, և՛ հեզ։

22

Կարմիր աշխարհն ու աշխարհն էլ սպիտակ
Կանաչ հագան հրաշք հավքի երգի տակ։
Արեգն եկավ՝ հետը հարսներն իր սիրուն,
Ձեզ, եղբայրներ, տեսեք, ի՛նչ գանձ է բերում։
Ու վերջացավ ճանապարհն էլ այն անդարձ,
Էլ ի՞նչ անդարձ, եղավ ահա վերադարձ։
Երեք ճամփի փունջ հանգույցում վերստին
Նստած էր նա՝ այն իմաստուն ծերունին։

- Բարև, պապի, ամենագետ ու անհուն,
Ո՞ւր են, ասա, իմ եղբայրներն աշխարհում,
Նրանք եկել մեր երկի՞րն են գնացել,
Թե՞ հուսահատ օտար հողում մնացել։
- Ոչ եկել են, ոչ էլ կգան պարզերես,
Ինքդ պետք է գնաս հիմա և բերես։
Ես տեսնում եմ նրանց քաղաքը ահա,
Քիչ որ գնաս՝ քո աչքին էլ կերևա։
Ողջը թողած՝ ուղիղ բաղնիս կշտապես,
Աշխատում են նրանք այնտեղ ճորտի պես,
Մեկն հնոցի կրակն է միշտ պահում վառ,
Մեկը մոխիրն է դուրս թափում անդադար։
...Ոտքով գնաց, ձիով եկավ քաջարին,
Մենակ գնաց, մենակ չեկավ նա կրկին,
Կողքին երկու եղբայրներ են՝ ձի հեծած։
- Օրհնիր, պապի, դու մեր ճամփան մնացած։
- Գնա, կտրիճ, քո հազարան հավքը տար,
Տեղ կհասնեն ձեզնից երկուսն անվթար,
Մեկը, սակայն, ավելի ուշ կհասնի,
Դեռ իր ճամփին մի փորձանք էլ կտեսնի...
- Հե՛յ վախ, պապի, դու մեզ լավ բան չասացիր,-
Տնքաց քաջը և ուզում էր քշել ձին։
- Կաց դեռ, կտրիճ, կանչեց գերին սև դևի,
Ինձ արձակիր, ծովը գնամ իմ ծավի,
Ես չեմ ուզում կինը լինել քո եղբոր,
Մոխրոտի հետ ես չեմ ապրի բախտավոր։
Ասաց, ձիու մի մազ հանեց իր ծոցից,
Վառեց մազը ու հայտնվեց Քամի ձին։
- Ներիր դու ինձ, բարի կտրիճ,- ու ցոլաց,
Թռավ դեպի իր կարոտի ծովը բաց։
- Ինձ էլ ներիր,- ասաց չքնաղը երկրորդ,-
Այս եղբայրդ էլ նույնքան գարշ է և մոխրոտ,

Ես կգնամ պայծառ ճամփով մարդկային
Սփոփելու սիրո տխուր արքային։

23

Վերադարձի ճամփան ինչ ուրախ է, ինչ լավ,
Բայց չեն ցնծում երկու եղբայրները բնավ,
Սակայն ինչպե՞ս ցնծան, երբ իրենց ականջում
Այն լույս աղջիկների ծաղրն է հնչում։
Այդպես պիտի տանն էլ ծաղրեն անգթաբար,
Եվ փնտրում են նրանք ազատվելու մի ճար։
Ու գտան, ի՜նչ գտան, վայ ձեր գտած ճարին,
Խոր ջրհորի վրա գորգ փռեցին մի հին,
Իրենք երկու ծայրին, իսկ Արեգին ազնիվ
Մեջտեղ նստեցրին իբրև պատիվ.
- Հաց կեր, մեր քաջ եղբայր։ - Ու իրենք կանգնեցին,
Քաջը ջրհորն ընկավ՝ ձեռքը մեկնած հացի։
Տուն կգնան նրանք՝ երկու եղբայր մոխրոտ,
Ի՜նչ ստեր կփչեն արքա հոր մոտ։
«Մի հավատա, հայր իմ, դու ստերին նրանց,
Քո Արեգն այստեղ է, սուտ է, դեռ չի մեռած։
Նրանք մեռցրին ինձ, որ հավատաս, հայր իմ,
Թե իսկապես իրենք հրաշք հավքը բերին»։

24

Այգու խորքում, այգու դռան
Ծովացել են մարդիկ,
Պիտի բլբուլը հազարան
Հիմա երգի քաղցրիկ։

- Դե, սիրասուն իմ զավակներ,
Ասեք, երգն սկսի,
Իր մեծ երգը գարնանաբեր,
Փրկիչ երգը ասի։
Առաջ եկավ ավագ որդին.
- Ջան, բլբուլ ջան, երգիր։
Բլբուլը լուռ նայեց չորս դին,
Ոչ մի հնչյուն երգի։
Բայց աչքերից նրա տխուր,
Հրաշք է իսկական,
Որպես արցունք՝ թափվող բուռ-բուռ,
Մարգարիտներ ընկան։
- Նա երգ չունի, հայր իմ արքա,
Նա մարգարիտ ունի,
Ավելի լավ, ուզում է նա
Հարստանանք էլի։
- Ի՞նչ եմ անում մարգարիտը,
Գանձարանում լիքն է,
Լալիս է նա, ճշմարիտ է,
Լցված է սրտիկը։
Առաջ եկավ միջնեկ որդին,
Կանգնեց բլբուլի դեմ.
- Շատ ես երգել, երգիր կրկին,
Մեկ էլ ձայնդ լսեմ։
Բայց բլբուլը լուռ է նորից,
Այնպես լուռ է, տխուր,
Մարգարիտներ է աչքերից
Էլի թափում բուռ-բուռ։
Ծիծաղեց ամբոխը այդ լուռ լացի վրա,
Այնպես եղծված ու բիրտ, չար էր սիրտը նրա։
Ծաղրի քարեր նետեց, բայց հազիվ մի վայրկյան,
Աչքերի մեջ ինչ-որ շողեր ընկան։

Կապուտաչյա փերին՝ ճառագայթներ ձեռքին,
Կապուտաչյա փերին՝ հրեղեն ձին տակին,
Գալիս էր մեջտեղով երկնքի ու երկրի,
Մի մոտեցած արև, ողջը հիմա կայրի։
Գալիս ու բարկացած ձայն էր տալիս.
- Հեյ, հե՛յ, ո՞վ է ձեզնից տիրացել բլբուլիս,
Ալամ արքա, լսիր, բլբուլս տուր
Եվ բերողին տուր ինձ, նա ո՞ւր է, ո՞ւր,
Եթե չտաս՝ ողջը կայրեմ ու կավերեմ,
Դուք ցած՝ չորացած խոտ, ես բոց՝ ձեզնից վեր եմ։
Ալամ արքան նայեց որդիներին մթնած,
Ավագ որդին վախով դեպ աղջիկը գնաց.
- Իջիր, չքնաղ, իջիր, ես քեզ պատմեմ մեկ-մեկ,
Մեղմացրու շողերդ, ծակում են, ինչպես տեգ։
Մի անտառում, բարձր ծառի վրա
Թևերն իրար տալիս, երգում էր նա...
- Հե՛յ, ուղարկիր, արքա, իսկական բերողին,
Ես վեր ինչպես կայծակ, դուք ծառ՝ կպած հողին։
Գնաց միջնեկ որդին, նա էլ՝ այսպես, այսպես,
Մի դև կար, հաղթեցինք եղբայրս ու ես...
- Հե՛յ, թագավոր, տուր ինձ իսկական հերոսին,
Եվ ոչ թե ուղարկիր հաջորդ ստախոսին։
Նայեց մռայլ արքան որդիներին երկու,
Ցասման ամպ էր կարծես տխուր ու ահարկու.
- Պիտի բռնած լինեն լոկ ձեռքերը արդար,
Լոկ ձեռքերը մաքուր բլբուլն այս լուսավառ,
Կեղտոտ են ձեր ձեռքերն ու արյունոտ,
Ո՞ւր է Արեգն իմ քաջ, անեծք ձեզ ու ամոթ։
Լուռ են որդիները, խոսքեր չկան,
Դողում են վախվորած, դողում է և արքան,
Ի՞նչ պատասխան կտան, չա՞ր, թե՞ բարի,
Ահ, դողում են, պարզ է, գործ են արել չարի,

Եվ այդ պահին եկավ, քաջ Արեգը եկավ,
(Հանել էր ջրհորից մի գթասիրտ պառավ)
Կապուտաչյա փերին նայեց՝ սիրուց դողաց,
Նայեց՝ ժպտաց անուշ և ձիուց իջավ ցած։
- Ողջույն, ծովի աղջիկ, ի՜նչ լավ արիր եկար,
Էլ չեմ անցնի անցած ճանապարհը երկար։
Պիտի գայի, չքնաղ, պիտի գայի քեզ մոտ։
Իմ ողջույնը տայի գայլ ու խոյին ծանոթ,
Աղի-լեղի ջրից՝ հիմա ջինջ, քաղցրահամ,
Պապակած խմեի երկրորդ անգամ,
Ու տուն բերեի քեզ սիրո ճամփով պայծառ,
Բայց դու ինքդ եկար, ի՜նչ լավ արիր եկար։
Գրկեց Ալամ արքան խիզախ իր Արեգին,
Խնդությունից լացեց՝ նրան սեղմած կրծքին։
Իբրև հին ծանոթի տվեց ողջույն
Մարդու բնույթքն հեգնող կապուտաչյա փերուն։
Հետո խնդրեց որդուն արքայաբար.
- Դե թող երգի հավքը, սպասել ենք երկար։
Մոտեցավ Արեգը ոսկեվանդակ հավքին,
Բաց արեց վանդակը, հորդորեց քնքշագին.
- Բաց քո լեզուն, բլբուլ, երգիր, իմ հազարան,
Թող այգին ու մարդիկ առնեն փայլն առաջվան։
Թռավ, կանգնեց հավքը մի չորացած ճյուղի,
Երգեց այնպես, ասես քնար էր յոթնաղի,
Չէ, քնարն ի՞նչ, ասես ինչ-որ լույս էր երգում
Կախարդական, թեթև, վսեմորեն զնգուն,
Նախ կանաչեց ճյուղը նրա ոտքի տակի,
Մարդիկ տեսան հրաշքն ու լուռ իջան ծնկի,
Մեկ էլ, երբ նայեցին շուրջը իրենց,
Վառ կանաչը նրանց աչքը շոյեց։
Այգին առաջվա պես շեն է ու լի,
Բայց դեռ ծորում էր երգն արարիչ բլբուլի,

Որ սրտերն էլ այդպես լինեն անփուշ,
Միտքը լինի անչար, խոսքը՝ սրնգանուշ։

25

Հառաչանքով է բռնվել երկիրն Ալամ արքայի,
Հառաչում են հոգիները, որ չար էին, ամայի,
Ամեն մեկը մեղքն իր լալիս, հեծեծում է խղճի հետ,
Հեծեծանքն է երկիրն առել, դա ցավ է մեծ, ոչ աղետ։
Մաքրվում են հոգիները արատներից բյուրանուն,
Ու նորոգված ծնվում նորից տառապանքի մեջ անհուն,
Մոռացվում է քիչ-քիչ հինը, հառաչանքն է պակասում,
Եվ երկիրը ցնծության մեջ՝ անբիծ կյանք է սկսում,
Բայց երկու սիրտ, երկու եղբայր հեծեծում են նորից նոր,
Նրանց վերքը բուժում չունի, ոչ էլ նրանց խիղճն՝ անդորր։
Եկան նրանք արքա հոր մոտ, ավագ որդին խոսեց նախ.
- Հայր իմ, ինչպե՞ս կոչվեմ որդիդ, երբ եղել եմ ես խարդախ,
Արժանի եմ ես գլխատման, բայց չտվիր դու վճիռ,
Նույնիսկ երկրից չարտաքսեցիր, անարժանիս խղճացիր։
Ես, քո որդին, պիտի այդքան, պիտի այդպես չեղծվեի,
Ի՞նչ էի ես, գծուծ ու նենգ՝ ուրիշներից ավելի։
Ինչպե՞ս ասեմ մարդ եմ հիմա, երբ եղծվեցի ես այդքան,
Դավ նյութեցի իմ հարազատ, բարի եղբոր դեմ անգամ,
Ոչ մի վայրկյան ու ոչ մի ժամ չեմ մոռանում, հայր իմ, հայր,
Որ մարդ չեղա ու թաղվեցի մեղքերի ճահիճը անծայր,
Ու դա անվերջ սիրտս է ճզմում, ճչում խորքում իմ հոգու,
Որ իրավունք չունեմ բնավ մարդ ու որդիդ կոչվելու։
- Իրավ ասաց մեծ եղբայրս,- խոսեց միջնեկն էլ տխուր,
Այդ նույն ցավը իմ սիրտն էլ է արյունաքամ անում լուռ,
Քեզ տեսնելիս կամ Արեգին, սաստկանում է ավելի,
Ես գլուխս ցած եմ կախում ամոթահար, խղճալի։

Հայր իմ, թույլ տուր մենք հեռանանք, գնանք օտար մի աշխարհ,
Քարշ տանք այնտեղ ոչինչ չարժող գոյությունը մեր թշվառ։
Չի մնալու գահդ թափուր, մենք անարժան ենք գահին,
Արժանավոր Արեգը կա իր վեհ հոգով մարդկային։
Այն աշխարհում, ուր մենք եղանք, այնքան ցավեր կան արթուն,
Թե ճար անենք՝ մեր մեղքերին դա կլինի թողություն...
Ալամ արքան լսեց, լսեց ու շշնջաց՝ գնացեք։
Ու դուրս եկան հառաչանքով ավագ որդին ու միջնեկ։
Ասում են, թե մինչև այսօր նրանք ապրում աշխարհում,
Որտեղ մարած օջախ տեսնում, ձեռք են մեկնում ու վառում.
Եվ ապրում է Արեգն անմեռ, դրանից է, որ այսպես
Այն հազարան հրաշք հավքին հավատում ենք դու և ես։

(1982 թ.)

ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ՄՈՐՄՈՔԸ

1

Փակվեց Միերը Ագռավաքարում,
Ու գլխի վրա ծանրացավ-իջավ
Մի քարե երկինք, անաստղ երկինք,
Սասնա հովերը չեն շրշում այնտեղ,
Սասնա ջրերի կարկաչն անուշիկ
Չի հասնում հիմա ականջին նրա։
Մարդ չկա այնտեղ, ու ոչ էլ մարդու
Արդարություն կա կամ մարդու օրենք,
Մինչևիսկ չկա անարդարություն,
Խավար է միայն ու խավարի մեջ
Ինքն է մեն-մենակ իր խոհերի հետ։
Դարեր են անցնում ու դարերի մեջ
Մահ չկա նույնիսկ, որ գա ու փրկի
Մռայլ Միերին խոհերից մռայլ։
Էլ չի այցելում հովիվը նրան
Մեկ վարդևորին, մեկ համբարձմանն,
Մեռել է վաղուց, չէ՞ որ ոչ մեկը
Անեծք չէր արել, որ անմահ մնա
Ու տանջվի իր պես այս խավարի մեջ։
Այն ե՜րբ էր լսել նա մարդկային ձայն,
Երազի պես է հնչում ականջին,
Որ հովիվն ասաց, թե ե՞րբ ես, Միեր,
Ե՞րբ ես դուրս գալու Ագռավաքարից։
Ինքն այն ժամանակ պատասխան տվեց.
«Ես ո՞նց դուրս ելնեմ, հողն ինձ չի պահի,
Ղալբըցեր է շատ։
Աշխարհք ավերվի ու մեկ էլ շինվի,
Ցորենն աշխարհքում լինի հանց մասուր,

Գարին՝ հանց ընկույզ,
Նոր էն ժամանակ կելնեմ էստեղեն»։
Դարեր են անցել, ոչ ոք չի գալիս,
Որ լուր տա իրեն, թե եղավ, Միեր,
Ուզածդ եղավ, աչքդ լույս լինի։
Է, ցորենն ինչո՞ւ, ո՞ւմ ձեռքով պիտի
Լինի հանց մասուր, գարին՝ հանց ընկույզ,
Ինքն այստեղ պարապ, ձեռքերը ծալած,
Ո՞վ պիտի քանդի աշխարհը մեղսոտ,
Նորմեկանց շինի։
Ուրիշն այդ անի, ինքը տե՞ր դառնա,
Ինքը վայելի՞ շինածն ուրիշի,
Էլ ինչո՞ւ իրեն այսքան ուժ տրվեց,
Չէ, կելնի հիմա այս քարե բանտից,
Կելնի, բայց հողը շատ է ծերացել,
Հույս կա՞, որ բուժես՝ կջահելանա,
Ղալբըցել է շատ, հույս կա՞, որ ցանես,
Գեթ մի ծիլ կտա։
Ու երազ տեսավ Միերը մռայլ,
Տեսավ գարուն է բացվել աշխարհում,
Ծաղկած բալենու ճյուղերն են թռչում
Կռունկների պես՝ երկնի կապույտով։
Ի՜նչ պայծառ, պայծառ ծաղկած ճյուղեր են,
Նրանց հետևից կռունկների պես
Հրեշտակներ են շարեշար թռչում։
Չէ, խորհեց հսկան, իմ հույսն է էդպես,
Մեծ հույսն է ճախրում վեր աստնվորիս,
Դուրս կգամ աշխարհ, քանդեմ ու շինեմ
Ու աղերսագին խնդրեց աստծուց,
Որ փոխարինի անեծքն անեծքով,
Այս հավերժական խավար բանտի տեղ
Թույլ տա շրջելու վեր աստնվորիս,

Աշխարհում ինչքան ցավ ու հառաչ կա
Իր սիրտը լցվի, տանջի, քրքրի,
Այդ նոր անեծքից անբաժան մնա,
Միայն թե տեսնի արևը մեկ էլ,
Տառապի, հուսա, որ կա ցավին դեղ,
Լավ բան անելիս ցավն իր սրտի մեջ
Դույզն-ինչ մեղմանա։
Եվ լսեց աստված խնդիրքը նրա։

2

- Բարև, Մհեր,- ասացի ես,-
Բարով ելար դու լույս աշխարհ,
Հիմա պիտի ճամփա գնանք
Դեպի հարավ, դեպի հյուսիս,
Կամ արևելք, կամ արևմուտք։
Ինչ որ անես այս մեր դարում,
Իմ մտքի մեջ պիտի անես,
Իմ տեսածը պիտի տեսնես,
Իսկ իմ տեսածն այս է, Մհեր.
Քուռկիկ Ջալալին զվարթ խրխնջաց,
Երբ որ դուրս ելաք Ագռավաքարից,
Նա էլ քեզ նման արևի կարոտ,
Արևից արբած՝ խայտաց մի վայրկյան,
Հաջորդ վայրկյանին տխրեց քեզ նման,
Քեզ հասկանում էր, զգում քեզ քո ձին,
Ինչպես եղբայրն է եղբորն հասկանում։
Դու տխրել էիր հաջորդ վայրկյանին,
Սիրտդ լցվում էր ցավով աշխարհի,
Հառաչանքները բոլոր կողմերից
Գալիս, ծով էին կապում սրտիդ մեջ։

Դու Սասուն էիր գնում ծանրացած։
Գարուն էր շուրջդ, արտույտներն ուրախ
Գեղգեղում էին արտերի վրա,
Որ արտեր չէին վաղուց, շատ վաղուց,
Այլ խամ ու խոպան, անմշակ, անտեր։
Ո՞ւր են գնացել նրանց տերերը,
Մարդ չկա, հարցնես,
Իսկ արտույտները երգում են միայն՝
Անվերջ շատացող ցավիդ անտարբեր։
Շատ մոտիկից է ցավն հոսում-լցվում
Սիրտդ կարեվեր։
Թփերն են պատմում, քարերն են պատմում
Այստեղ կատարված եղեռնի մասին,
Դու չես հասկանում, թե ինչ են պատմում,
Բայց սիրտդ ցավն է տանջում, բզկտում։
Դու ոսկորներ ես տեսնում մարդկային՝
Այստեղ ու այնտեղ թափված ցիրուցան,
Եվ աստվածային մի կամքով վերին
Անբառ լեզուն ես հասկանում հանկարծ
Թփի ու քարի։
Եթե լավ նայես, ասում են նրանք,
Չորացած արյան հետքեր կտեսնես
Մեր ծալքերի մեջ։
Կոտորած եղավ, կեռ յաթաղանը
Լողաց արյան մեջ ազգակիցներիդ։
Ո՞ւր էիր, Մհեր, ամեն երեխա
Հարցնում է՝ ո՞ւր էր քո Թուր-կայծակին,
Ո՞ւր էր Սասունցի Դավիթը այնժամ,
Նա, որ կարող էր բանակներ ջնջել,
Ինչո՞ւ չհասավ, ինչո՞ւ թույլ տվեց,
Որ յաթաղանը անպատիժ մորթեր։
Ու հասկանում է երեխան հանկարծ,

Որ մեռել Դավիթն ու հող էր դարձել,
Բայց ո՞ւր էր նրա անմահ ժառանգը,
Ինչո՞ւ էր փակվել Ագռավաքարում։
Քար ու թուփն այդպես պատմում են, Մեր,
Մորթոտվող մանկանց ճիչերը զարհուր
Սուր դաշույնի պես խրվում սրտիդ մեջ
Ու դուրս չեն գալիս,
Ինչքան փորձում ես քաշել ու հանել,
Ավելի խոր են խրվում ու մնում։
Ամեն ճիչ դարձած մի սուր նախատինք՝
Անվերջ կրկնում է՝ ո՞ւր էիր, չեկար,
Մենք քեզ կանչեցինք, քեզ ու աստծուն,
Բայց դուք խուլ էիք, մեզ չլսեցիք։
Մորթվող հարսներն են նույնը հանկերգում,
Մորթվող ծերերը, ջահելներն անզեն։
Ի՞նչ էիր անում քո մենարանում,
Երբ աշխարհն այսքան չար էր ու դաժան։
Ու դու աղեկեզ խորհում ես քո մեջ,
Որ դավաճան ես եղել արյունիդ,
Հետո դառնում ես խորհում վերստին,
Որ աշխարհն էլի մեղքից է շինված,
Սուտ էր երազդ, այն, որ դու տեսար
Ծաղկած բալենու ճյուղերն են թռչում
Կռունկների պես՝ երկնի կապույտով։
Հույսի նշան չէր դա ամենևին,
Որ բարու սերմը դալբրցած հողում
Կարող է ծիլ տալ։
Քուռկիկ Ջալալին քեզ պես գլխիկոր
Քայլում է դանդաղ, ասես նոր թափված
Արյունի միջով։

3

Դեպի Սասուն է ճամփան երկարում,
Շտապում եք դուք՝ քո նժույգն ու դու։
Մի փոքրիկ գետ է ելնում ձեր դիմաց,
Ափին երկու մարդ՝ կանգնած դեմուդեմ,
Դաշույններն հանել և այս է պիտի
Միմյանց խողխողեն։
Նայեցիր նրանց, և մի տնքոց էլ
Գումարվեց սրտիդ խուլ տնքոցներին.
- Կանգ առեք, մարդիկ,- ձայն տվեցիր դու,-
Է՞ր եք դուք ուզում իրար սպանել։
Մեկն ասաց՝ սա իմ ոսոխն է անհաշտ,
Ուզում եմ այստեղ իմ ծառը տնկել,
Այստեղ, լոկ այստեղ, բայց նա չի թողնում։
Մյուսն առարկեց՝ այստեղ, լոկ այստեղ
Իմ ծառը պիտի տնկեմ ես, հիմա,
Սա իմ պապերի ցույց տված տեղն է։
- Քո ծառն, ասում եմ, ուրիշ տեղ տնկիր։
- Քո ծառը, տնկիր այդ ուրիշ տեղը։-
Ու դաշույններն են՝ արյունի ծարավ
Կայծկլտում կրկին։
Նրանց պապերը հենց այստեղ մի օր
Ընկել են արնոտ այդ դաշույններից,
Նրանց հայրերը ընկել են նույնպես,
Եվ հերթը հիմա սրանց է հասել։
- Կանգ առեք, ծռեր,- կրկնեցիր դու,
Ահեղ էր ձայնդ, նրանք կանգ առան.
«Ծռեր» ասացիր, բայց նրանք բնավ
Սասնա ծուռ չէին,
Չարակամ էին ու նաև խաբված
Իրենց արյան հետ վաղուց խառնված

Օձային թույնի չար շշուկներից,
Որ լոկ մի բան էր ասում՝ սպանիր,
Խլիր, քոնն արա կյանքում ամեն ինչ։
- Ծառ տնկելու պես լավ բան չի լինի,
Տնկեք ձեր ծառեր,- ասացիր նրանց,-
Էս տեղ, որ կասեք թող իր տեղ մնա,
Ձեր ծառեր տնկեք, մեկդ քիչ վերև,
Մեկդ քիչ ներքև։
Տնկեցի՞ք, պրծա՞ք։
Դե հիմի տնկեք իմ խաթեր համար,
Երկուսով տնկեք էստեղ էլ էս ծառ,
Թող լինի դա ծառ ձեր բարիշության,
Էս տեղի համար շատ-շատ եք կռվել,
Անխելքներ, վա՞տ է, որ համ ապրեք դուք,
Համ էլ երեք ծառ կանաչեն, բերք տան
Էս ջրի ափին։
Ազդու էր ձայնդ, խոսքդ՝ բանական,
Անսացին նրանք քո արդար խոսքին
Եվ էլ առավել քո ձայնին ազդու
Եվ սկսեցին երրորդն էլ տնկել՝
Ծառը հաշտության։
Չէ, բարու սերմը կարող է ծիլ տալ,
Հողը այնքան էլ շատ չի դալբըցել,
Կյանքում էլ, ինչպես երազում բարի,
Ծաղկած բալենու ճյուղեր են թռչում
Կռունկների պես՝ երկնի կապույտով։

4

Արևն է խայտում Սասնա սարերում,
Բոցկլտում ծփուն կանաչի վրա

Եվ Սասնա բերդի,
Բերդ չէ, մի սար է վեռ սարի վրա,
Ժեռ-ժեռ քարեր են, քարեր են հսկա
Մեկմեկու վրա ոտք դրած ելած
Գիրկը երկնքի։
Առավոտ ծեգին կանգնեց բերդի դեմ
Քուռկիկ Ջալալին։
Վար իջավ Մհերն ու հազար տարվա
Անհուն կարոտով պատերն համբուրեց։
Ախ, ո՞ւր եք, ախ, ո՞ւր, Սասնա տան ջոջեր,
Ո՞ւր ես, Սանասար, ո՞ւր ես Բաղդասար,
Ո՞ւր ես, պապ Մհեր, ո՞ւր ես հայր Դավիթ,
Ձեր ձայները կան, դուք չկաք, չկա՛ք։
Այս պատերի մեջ առաջվա նման
Ձեր անուշ ձայնից կյանքն է արթնանում,
Հոգով լսում է Մհերն ու խորհում,
Որ մարդուց միայն մի հուշ է մնում։
Ոտնաձայներ են ասես թե լսվում,
Դավի՞թն է գալիս՝ որսը շալակած,
Չէ, այդ Մհերին մի վայրկյան թվաց,
Սիրտն ախր շատ էր ուզում, փափագում,
Որ այդպես լինի։
Դավիթը հիմա իր Խանդութի հետ
Խաղաղ հանգչում է այնտեղ, պատի տակ։
Ու գնաց Մհերն աղոթք անելու,
Բեկված ընկնելու հոր ու մոր շիրմին։
Տեսավ քար չկա,
Տարել են, ավաղ, շիրմաքարերը։
Բերդի քարերը ջոջ-ջոջ ապառաժ
Չեն կարողացել թե տեղից շարժեն,
Շիրմաքարերը ջարդել են, տարել։
Գնաց Մհերը ու երկու ջոջ քար

Գլորեց, բերեց հոր ու մոր շիրմին,
Երկու հսկա ժայռ դարձրեց շիրմաքար,
Դե գան թող հիմա գողանան տանեն։
Փուլ եկավ հետո հոր ու մոր շիրմին,
Փուլ եկավ, լացեց Միերը անմահ.
- Հերիկ, ի՞նչ անեմ, մերիկ, ի՞նչ անեմ,
Աստված ինձ մահ էլ չի տա, թե մեռնեմ,
Մեռնեմ ու պրծնեմ ցավերի ձեռքից.
Երկնքից կուգան, գետնքից կուգան
Կլցվեն իմ մեջ աշխարհքի ցավեր,
Իմ սիրտ կպած է ցավի ակունքին,
Թեթև հոգոց մի հենց հառաչ դարձավ
Իմ սրտիկ կէրի,
Էս ինչքան արցունք մարդոց սրտում կա,
Դեռ էնոնց սրտից աչքին չի հասել,
Իմ սիրտ կծորի էդ աղի արցունք։
Ասի չմնամ քարի մեջ բանտված,
Իմ խնդիրք լսեց բարերար աստված,
Փոխեց հին անեծք էս նոր անեծքով,
Հերիկ, ի՞նչ անեմ, մերիկ ի՞նչ անեմ,
Ախր նոր անեծք ծանր է առավել,
Էլ չեմ դիմանա։
Մի լավ բան արի, իմ ցավ մեղմացավ,
Բայց հիմի նորեն էն ցավն է սաստիկ։
Մի դույլ ջուր պակսեց ջրհորի միջեն,
Վռազ երկու դույլ տեղն ավելացավ,
Էս աշխարքի ցավ հա՛ կավելանա։
Հերիկ, խորհուրդ տուր, մերիկ, խորհուրդ տուր,
Ես ինչպե՞ս ապրեմ։
Ու գերեզմանից Դավթի ձայնն հնչեց.
- Գնա բարակիկ մեր աղբյուրի մոտ։
- Աղբյուրն ի՞նչ ասի, էն լեզու չունի։

- Գնա բարակիկ մեր աղբյուրի մոտ,-
Նույնն ասաց մայրը։
- Էն ջուր է, դուք մարդ, ձեր խորհուրդ ասեք,-
Խնդրեց Միերը,
Բայց ինչքան խնդրեց և ինչքան լացեց,
Էլ գերեզմանից ոչ մի ձայն չեկավ։

5

Ջուրն է բխում քուլա-քուլա,
Հողի տակից ելնում է դուրս,
Ելնում, հոսում է սարն ի վար՝
Կարկաչելով անուշ-անուշ։
Որոնեցին ակն աղբյուրի
Ու շինեցին նրան մոտիկ
Իրենց անառ բերդը Սասնա
Սանասարն ու Բաղդասարը,
Հիմա բերդի պատկերն իր մեջ՝
Ջուրն է հոսում գլոր-գլոր
Ու քարեքար թռչկոտելով,
Թռչկոտելով, փրփուր տալով։
Սասնա քաղցրիկ արևի տակ
Ցոլցլալով, ալիք-ալիք
Ջորն է վազում մանկան նման,
Կտրում գետը ձորով հոսող,
Հսկա գետը կիսում թափով,
Ջարնվում է դեմի ափին
Ու նոր հոսում այդ գետի հետ։
Ախ, աստված իմ, ջինջ է ինչքան,
Մաքո՛ւր-մաքո՛ւր։
Խորհեց Միերն ափին կանգնած.

«Իմ հեր, իմ մեր ինձ ասացին,
Որ բարակիկ էս ջրի պես
Անցնեմ ճամփես»։

6

Իջավ Միհրը Սասնա սարերից,
Գնաց շրջելու աշխարհ-աշխարհ,
Իր ճամփին տեսավ այն երկու մարդկանց,
Որ դաշույն էին հանել իրար դեմ,
Ոչ ոք չէր ուզում իր ծառը տնկել
Իր ասած տեղից վերև կամ ներքև։
Բայց ի՞նչ տեսնել էր, նրանք չկային,
Էլ չէին ապրում, դիակներ էին,
Պառկած էին լուռ, մեկի դաշույնը
Մյուսի սրտում։ Ջարդոտված, ընկած
Դիակներ էին ծառերը նույնպես։
Անգթորեն էր ջարդված ավելի
Ծառը հաշտության։
Կեղտոտ արյունը մոլեգնել կրկին,
Հաղթել էր, ավա՛ղ, այդ մարդկանց սրտում,
Բայց ախր պիտի մաքուրը հաղթեր,
Տեսավ Միհրը, թե ինչպես քիչ-քիչ
Զուլալվում էին աչքերն այդ մարդկանց։
Սուտ էր, երկնքով՝ կռունկների պես՝
Ծաղկած բալենու ճյուղեր չթռան։
- Էնոնք իմ ահու տնկին էս ծառեր,
Իմ ճշմարիտ խոսք չհասավ էնոնց,
Սուտ ու նենգություն քանց հեղեղ՝ շատ էր։
Ասաց ու քշեց Միհրը իր ձին,
Որտեղ էլ եղավ՝ ցավը իր հետ էր,

Գիշեր ու ցերեկ նա դադար չուներ,
Ցավն ստվերի պես հետապնդում էր,
Սակայն ստվեր չէր, թե ստվեր լիներ,
Գեթ գիշերները հանգիստ կթողներ։
«Արդար գործ անեմ՝ իմ ցավ մեղմանա,
Կամուրջ կապելուց լավ բան, չէ՛, չկա,
Իմ կամուրջ կապեմ էս գետի վրա»։
Ու ծառեր բերեց մոտիկ անտառից
Ու քարեր բերեց՝ մեկ-մեկ քարափներ,
Ու կամուրջ կապեց Միերը բարի,
Ուզեց անց կենալ կամրջով հսկա,
Բայց դեմը կտրեց մի լխպոր մարդուկ.
- Սա իմ կամուրջն է, փող տուր՝ նոր անցի։
Գազազեց Միերն ու գետը նետեց
Ծակաչք մարդուկին,
Բայց խիղճը տանջեց, ուզեց դուրս հանի
Ծակաչքին ջրից,
Տեսավ խրվել է գետի հունի մեջ,
Մեռել է, չկա,
Թափով էր նրան գետը շպրտել։
«Մեռավ՝ թող մեռնի, էն չար էր, ագահ»,
Խորհեց Միերը ու բռնեց ճամփան։
Դհոլ-զուռնայի ձայն եկավ հեռվից,
Ձայնը մոտեցավ, հարսնառ էր գալիս,
Հարսանքավորներն ուրախ, ցնծալից
Հարս էին տանում մի հուրի-փերի
«Աշխարհքում շատ կա ուրախություն էլ,
Քեֆ, ուրախություն ինչ է, չեմ գիտեր,
Իմ սիրտ չեն լցվի,
Մենակ արցունք է ինձ ընկել բաժին»։
Ու գինի խնդրեց վշտահար հսկան,
Որ անհուն ցավը գինու մեջ խեղդի,

Բայց ինչքան խմեց՝
Սրտի մեջ ցավերն այնքան շատացան.
- Էս ի՞նչ կար խառնած ձեր էս գինու մեջ,
Ես ոչ խնդումով, ցավով հարբեցի։
Ասին՝ ոչ մի բան, մաքուր է գինին։
Եվ գինին իրոք մաքուր էր, զուլալ,
Ու պարում էին այդ գինուց հարբած
Ուրախ, երջանիկ ահել ու ջահել։
Լոկ հարսն էր տխուր,
Մի սև մորմոք էր՝
Ճերմակ, թրթռուն հարսնաքողի տակ.
Ախ, զոռով էին նրան հարս տանում,
Միերը, սակայն, ինչպե՞ս իմանար։
Իմանար՝ հարսին կխլեր իսկույն,
Քուռկիկ Ջալալու գավակին առած՝
Կտաներ նրան իր սիրածի մոտ,
Որ ուրախությունն իսկական լիներ,
Եվ հազար ցավով լեցուն իր սրտից
Գոնե մի կաթիլ արցունք պակասեր։
Կասեր՝ ծաղկի թող ու բար տա ձեր սեր,
Եվ ուրիշ քնքուշ խոսքեր կասեր նա,
Ջարթնել բուրում էր իր էության մեջ
Սիրո մի քաղցր, հազարամյա հուշ։
Իրիկվա դեմ էր, ձիուց իջավ ցած,
Կամեցավ գետում լողանալ մի քիչ,
Ջրի մեջ տեսավ մի լուսե աղջիկ։
- Ամա՛ն, անծանոթ,- կանչեց աղջիկը,-
Ես մորե մերկ եմ, ինձ մոտիկ չգաս,
Էն ժայռի հետև կանգնիր մի պուճուր,
Իմ շորեր հագնեմ։
Կանգնեց Միերը «էն ժայռի հետև»,
Սպասեց մինչև աղջիկն հագնվեց,

Բայց կոպերի տակ նա մերկ էր կրկին,
Ցոլցլուն լույս էր նա կոպերի տակ,
Որ թեև հագավ խավարի սև շոր,
Բայց էլի մերկ էր, ոնց լույսը՝ մթնում։
Նայում էր դյութված, հետո չիմացավ
Ձեռքն ինչպես գցեց մեջքից աղջկա,
Բայց սրա ապտակն իջավ երեսին,
Խռովեց քաջը, ձին հեծավ ահա,
Կանգնեց ձիու դեմ գեղուհին փափկած.
- Կտրիճ, մի գնա, կտրիճ, մի գնա,
Ախր ես քեզ եմ էսքան սպասել։
Իմ հասակ, նայիր, մեկ բարդի ծառ է,
Քո հասակի հետ իսկը հարմար է։
Մեր երկրում ինչքան ազապ տղերք կան,
Եկան չափվեցին, իմ կեսից եղան,
Ես ո՞նց լինեի մի թզուկի կին։
Իմ մեր ինձ ծնեց, սիրուն աչք տվեց,
Դեռ սիրունից էլ մի բան առավել,
Իմ մեր ինձ ծնեց, ճերմակ մաշկ տվեց,
Դեռ ճերմակից էլ մի բան առավել.
Եվ բարձր հասակ իմ մեր ինձ տվեց,
Ավա՛ղ, բարձրից էլ մի բան առավել։
Հիմի որ եկար, էլ ախ չեմ անի,
Գտանք մենք իրար՝ դու ինձ ու ես քեզ։
Հիշեց Միերը, բայց չքաղցրացավ
Սիրտը գեթ մի պահ այդ քաղցր հուշից,
Լոկ դառնությունն էր բաժինը նրա
Ու նա դառնացած խորհեց հոգու մեջ,
Որ հող է դարձել աղջիկն այդ վաղուց,
Ավաղ, չգիտի ո՞ր սև քարի տակ,
Որ գնա փուլ գա նրա սուրբ շիրմին։

7

Սասունն հեռու է, Սասունը՝ երազ,
Ինչպես օրերն այն հեռու մանկության,
Որ հազար տարի առաջ են եղել։
Ավաղ, ետդարձի ճանապարհ չկա,
Ինչպես որ մեկ էլ չի կարող գնալ
Ու փակվել մթին Ագռավաքարում,
Սասնա քաջերը, որ խոսք ասացին,
Էլ հետ չեն վերցնում։
Գնում է, գնում Մհերը խոժոռ
Ճամփեքով օտար,
Ու մեկ էլ ահա մի դաշտ է փռվում
Նրա միշտ տխուր հայացքի դիմաց։
Մի տրակտոր է այստեղ հոնդում
Ու շարում թեթև ակոս ակոսի,
Երգը խառնելով խուլ հոնդյունին՝
Իր վար ու ցանքն է մեկն այստեղ անում։
Էս ի՞նչ հրաշք է, Մհերն է ապշում,
Բա եզներն ո՞ւր են,
Ոչ եզ կա, ոչ լուծ, ոչ էլ մաճկալ կա,
Չէ, մաճկալն ահա նստած քշում է
Էս արմանք-զարմանք երկաթե բանը։
Մարդն է ստեղծել, փառք նրա խելքին,
Ուրեմն անցած էս հազար տարում
Մարդն աստծո հետ մրցման է ելել։
Մհերը աչքով տեսած չլիներ,
Չէ, չէր հավատա,
Ուրեմն զուր չէր տեսել երազում՝
Ծաղկած բալենու ճյուղեր են թռչում
Կռունկների պես՝ երկնի կապույտով։

Աշխարհում ցավը պիտի պակասի,
Մարդը բարի է։
- Հեյ, ո՞ւր ես գնում, դարձիր, մի գնա,-
Ձայն տվեց, ասաց գութանի մարդը,-
Այդ ճամփով գնաս՝ վատ բան կտեսնես,
Կռիվ է, կռիվ այնտեղ, առջևում։
Թեկուզ հսկա ես, հսկա է ձիդ էլ,
Քեզ էլ, ձիուդ էլ մեկտեղ կսպանեն։
- Չէ, կերթամ,- ասաց Միերը նրան,-
Մարդը բարի է։
Ասաց ու քշեց Քուռկիկ Ջալալին,
Ճիշտ որ՝ Սասնա ծուռ։
Մի ժամվա ճամփա հազիվ գնացած՝
Մի թռչուն տեսավ (ինքնաթիռ էր այն)
Նման թևավոր դեռ տեսած չկար,
Թռչո՞ւն է, թե՞ դև երկնքով կերթա։
Նրանից պոկվեց, ցած ընկավ մի բան
(Միերին թվաց թռչունը ծրտեց)
Մի պայթյուն լսվեց, զարհուրելի ձայն,
Եվ մի հսկա շենք փոշու մեջ կորավ,
Երբ ցնդեց փոշին, էլ շենքը չկար։
Աստծու ստեղծած թռչուններից չէր,
Մա՞րդն է ստեղծել, թե՞ դևը նրան։
Կանգնեց Միերը միտքը շվարած,
Սիրտը՝ ցավի մեջ։
Ախ, այդ ռումբն ի՞նչ, երբ կան աշխարհում
Աշխարհը քանդող ռումբեր ուրիշ
Չգիտի Միերն ու թող չիմանա,
Որ մեր աշխարհը այնպես հիվանդ է
Ատոմի ցավով,
Եվ տնքոցները հիվանդ աշխարհի
Իր սիրտն են լցվում։

Չգիտի միտքը, բայց սիրտը գիտի
Ու դրանից է, որ աշխարհի հետ
Տնքում է անվերջ։

8

Մնաս, բարով, ազնիվ Միեր,
Քո ցավի հետ մնաս բարով,
Քեզ բերեցի մինչև այստեղ
Ես՝ մերօրյա մի վիպասաց,
Սակայն մինչև բաժանվելս
Ես իմ մտքով պիտի հյուսեմ
Դեռ մի դրվագ վեհիդ մասին։
Իմ մտքի մեջ ահա նորից
Գնում ես դու ճամփով դժվար
Ու մտնում ես մի առավոտ
Ցնցոտիներ հագած մի գյուղ։
- Է՞ր եք, մարդիկ, էսքան աղքատ։
- Բա ի՞նչ անենք, ասում են քեզ,
Խռովել է աստված մեզնից,
Երկրի տերն էլ չի հիշում մեզ։
Չորս կողմ, նայիր, քար ու քռա,
Մեր արտերում բան չի բուսնում։
Գյուղին մոտիկ մի մեծ գետ կա,
Բայց ի՞նչ օգուտ, հնար չունենք,
Թե էդ գետից մի ջուր բերենք,
Ջրենք մեր հույս արտն ու այգին։
Ջրի ճամփին վիշապի պես
Այ, էն չորուկ սարն է կանգնել
- Ելեք, քլունգ ու բահ առեք,
Թե դուք մի բահ հող կփորեք,

Ես՝ հազարը։
Շողշողացին քլունգ ու բահ,
Մի շաբաթից մի օր պակաս՝
Ջուրը հոսեց գլոր-գլոր
Դեպի ծարավ արտն ու այգին։
Ու նման էր ջուրն այն ջրին,
Որ հայրենի քո Սասունում
Սասնա բերդի մոտից իջնում,
Ձարկում ձորով հոսող գետին,
Կտրում հասնում դեմի ափին
Ու գետի հետ հոսում գնում
Մաքո՛ւր-մաքո՛ւր։

(1987 թ.)

ԴՅՈՒՑԱԶՆԱԿԱՆ

«Քաջաբար մեռան՝ որք մեռանն...»
Ղազար Փարպեցի

1

Ականջս դրած մայր հողին ահա
Ոտնաձայներն եմ լսում դարերի,
- Ելնենք,- լսում եմ մի ձայն առնական,-
Բավ մնանք այսպես պարսիկին գերի,
Բավ լռենք ձմռան գետի պես հլու,
Չոքել են նոքա կրծքին մեր երկրի,
Զանգերն են ջարդում մեր եկեղեցու,
Մեր գինուց հարբած՝ հայհոյում են մեզ,
Տալիս մեր հացից մեզ ողորմություն...

Եվ այդ առնական ձայնը հայորդու
Դառնում է ցոլանք սուրսայր նիզակի
Ու սրի շառաչ,
Ու երգ է դառնում՝ կանչող միշտ առաջ.
- Հոգյակիս համբույր ճամփեմ,
Խաբրիկ մի, լավ լուր ճամփեմ
Ու ասեմ, թե ահ չունեմ,
Մեռնեմ էլ՝ ես մահ չունեմ,
Զինվորն եմ ես հայրենյաց,
Իմ ձիուց լավ գահ չունեմ...
Եվ այդ զինվորը գերվել է ահա,
Գերվել են իր հետ հայեր տասներկու,
Արյուն է հոսում աջ թևից նրա,
Ա՜խ, չկա ձեռքը, կտրվեց մարտում,
Ցած ընկան աջ ձեռքն ու սուրն ահարկու։

Եվ նա գերի է ու գերողն է նա,
Ով պիտի լիներ սրատված հիմա։
Երկյուղը ինչ էր՝ սա դեռ չգիտեր,
Իր քառասնամյա սրտում երկաթե
Չէր զգացել այդ,
Ու դրա համար բանակում պարսից
Բոլորը նրան կոչում են «Փոլադ»,
Այսինքն՝ երկաթ։
Իսկ այսօր մարդ է նա սովորական,
Այսօր նա ապրեց երկյուղն առաջին։
Գերված տասներկու այս հայերը ի՞նչ,
Թեկուզ հայոց ողջ այրուձին ջնջի,
Սիրտն էլի պիտի մեկի դեմ մխա՝
Այս մի զինվորի...
Մաղձ կա և հրդեհ աչքերում նրա,
Կար ուժ մի ահեղ, մի դև կար նստած,
Սրից ահավոր, սրից ամեհի
Այդ բորբ աչքերի շանթերն իջան ցած,
Եվ ինքն ընկրկեց առաջին անգամ,
Կար մի խոր ճեղքվածք լանջպահ զրահին,
Մի խոր ճեղքվածք էլ սրտի մեջ՝ ահից...
Ինչու փողփողաց սուր մի գողեգող,
Հատեց բազուկը հաղթող հայորդու,
Եվ ինքը չընկավ այդ բազկից անդող
Կռվի դաշտի մեջ, ընկերների հետ,
Մնաց, որ այսպես տանջվի այսուհետ,
Որ էլ փոլադ չէ...

2

Թիկունքում ժայռոտ լեռն է իր գյուղի,
Ինչքա՜ն է ելել մանուկ հայորդին,

Քերծերին կանգնել առանց երկյուղի
Ու արծիվ դարձած՝ կարծել է մի պահ,
Թե երկնքի մեջ ճախրում է ահա։
Ցածում, թեք լանջին արտն է մի պատառ,
Ինչքան քրտինք է այդ հողին թափել,
Վարել ու ցանել հայորդին ջահել։
Թիկունքում լեռն է ու արտը իրենց,
Դեմը՝ Փոլադը՝ արնոտ աչքերով,
Ուժեղ է, թիկնեղ, պիրկ մկաններով,
Բայց ի՞նչ ուժ է դա, որ գիտի միայն
Խոնարհել, ջարդել ամեն, ամեն բան,
Չունի ոչ մի կայծ սուրբ արարումի։
Ջարդում է, տանջում մարմինն հայորդու,
Սրով, նիզակով, տեգով իր հատու
Թվում է պիտի աչքերը հանի,
Սակայն չի հանում, լոկ ցույց է տալիս,
Եվ հազար ձևով, հազար հնարքով
Մի բան է անում, այն, որ մեռնելիս
Սարսափ նկարվի ոսոխի դեմքին,
Հաղթել է ուզում, ի՞նչ տենչանք է սին,
Ի՞նչ հաղթանակ է, ի՞նչ ես շահելու,
Դատարկ հաղթանակ սնափառ հոգու։
Ջարկում է, տանջում, բայց էլի, էլի
Անահ են նայում աչքերն հայորդու,
Երկու սև երկինք սև շանթերով լի։
Նա ինչպե՛ս կուզեր իրեն դեռ հաղթող
Այդ խոլ, հրացայտ աչքերն հանգցնել,
Բայց չէ, թող մնան, թեկուզ հրով լի,
Որ երբ սարսափի սիրտը կրծքի տակ,
Դրանք սարսափին դառնան հայելի։
Բայց մոտ է մահը, արյուն չմնաց,
Ի՞նչ, մեռնի այսպես, դեռ չսարսափա՛ծ...

3

- Ափսոս է մեռնես, ջահել ես դեռ շատ,-
Ասում է քաջին նա անկեղծաբար,
Լոկ ծունկի արի դու իմ հանդիման,
Վերքդ կկապեմ, կառնեմ դեմն արյան,
Ի բաց կարձակեմ, չեմ տա քեզ մահվան,
Գնա, քեֆ արա աղջիկների հետ։
Ասում է այդպես և հայորդու դեմ
Փռվում է իրենց գյուղը հովտի մեջ,
Ծուխ է բարձրանում երդիկից իրենց,
Սարերն են զարթնում մշուշի միջից,
Լանջվարդ երկինքը նրանց շուրջբոլոր
Իր կապույտ, կապույտ երազն է փռում...
Ինքը իր ակոս-տողերն է գրում
Իրենց արտի մեջ՝ լեռան հենց լանջին։
Ծարավ է այնպես ու ձորի միջից
Իր սեր-աղջիկն է ելնում՝ կուժն ուսած.
- Լերդիկս կէրի, քչիկ մի ջուր տաս։
Ու կժի բերանն իր բերնին դրած՝
Խմում է, խմում ու չի հագենում,
Ախ, այս ջուրը ի՞նչ, սեր պիտի խմեր
Հոգյակի բերանն իր բերնին դրած...
- Պուտ մի թողնեիր իմ ջրեն, վիշապ.
Ողջը խմեցիր, հորս ի՞նչ մնաց,
Նրա համար էր ջրիկս բերած։
- Ես այս ափն ունեմ, հերիկդ ուրիշ ափ,
Ինձ համա՞ր, ասա, շեղեցիր ճամփադ։
Բայց սեր-աղջիկը չի պատասխանում,
Ծիծաղն է հորդում,
Քնքուշ բերանից թափվում աշխարհին։
Ախ, այդ բերանը դեռ չհամբուրած՝

Գնաց հոգյակը արտերի միջով,
Բայց մնաց կուժը՝ լիքը պաղ ջրով,
Մնաց օդի մեջ, և ինքը ահա
Խմում է, խմում ու չի հագենում,
Մեխել են գետնին ու վեր չի կենում։
Չարն է իր դիմաց, ի՞նչ է կամենում,
Հա, որ ծնկի գա ինքը նրա դեմ,
Բայց, ախր ինչո՞ւ։ Նրանք են եկել
Եվ ոչ թե ինքը՝ երկիրն ուրիշի,
Նրանք ուժեղ են և ուժը նոցա
Այն է, որ խլեն լավը ուրիշից։
Այն է, որ դարձնեն ուրիշին ստրուկ,
Այսպես ստիպեն, որ դու ծնկի գաս,
Իրենցը կրկնես ու քոնը չասես,
Քոնը մոռանաս...
Եվ ընդհատվում են մտքերը նրա,
Արյունն է միայն, որ հոսում է դեռ,
Նորից կուժն ահա լիքը պաղ ջրով,
Դրել բերանին՝ խմում է, խմում,
Քանի խմում է՝ այնքան ծարավում։
Նորից գալիս է աղջիկը սիրած,
Եզներն են փնչում, չէ, ո՞ւր են եզներ,
Ականջների մեջ ինչ-որ բան դժժաց,
Ուր էր, թե նորից հոգյակին տեսներ,
Մտքի խաբկանք էր, եկավ ու գնաց։
Դժվար է մեռնել դեռ չհամբուրած,
Չտեսնել, չզգալ սար, ծաղիկ ու խոտ,
Լորեր՝ արտի մեջ, ծիծղուն առավոտ.
Ոչինչ է շիրմում իշխում առհավետ,
Ե՛վ հող հայրենի, և՛ սեր, և՛ երազ
Այդ ոչնչի մեջ ցնդում են անհետ։
Դժվար է... Բայց թե մեռնելն հեշտ լիներ,

Ո՞ր տկարն ասես հերոս չէր դառնա,
Այնինչ հերոսը մեկն է, միայն նա,
Ով իր կորստի ցավից չի նվա,
Թեկուզ կորցնի ամենաթանկը՝
Ընկերոջ բարև, փառքի պերճ խոստում,
Սեր, երկինք, հույսեր... մի խոսքով՝ կյանքը։

4

- Հայ, բավ է լռես,- Փոլադն է փնչում,-
Շուրթեր չե՞ս ուզում, տաք, փափլիկ շուրթեր։
- Ուզում եմ չքվեք դուք աշխարհից մեր...
Է՞ր եկաք հողը դուք մեր պապերի,
Չգայիք՝ այսպես ծունկ չէիր իջնի,
Որ պարտության խոսք լսես իմ բերնից։
Ու ծառս է լինում Փոլադը խայթից,
Այս անգամ նիզակն առնում է արդեն
Իր գերու ըմբոստ սիրտը խրելու,
Շամփրելու նրա աչքերն հրեղեն,
Որ դեռ զույգ բոց են, զույգ սուր ահազդու։
- Տեր իմ, քո ղուլն եմ, լսիր եղկելուս,-
Դիմում է մեկը աղվեսի հանգույն,-
Զուր չեն ճերմակել իմ հերքն ու մորուս,
Մի բան էլ ես եմ սովորել կյանքում։
Ախր մարմինն ես տանջում դու նրա,
Բայց հարկ է տանջել հոգին զորավոր,
Սպանիր հոգին, էլ չի դիմանա
Տկար մարմինը ցավերին այդ գոռ.
Սպանիր հայոց այս գերյալներին,
Սրանք են այդպես պահում իր հոգին,
Իրենց աչքերով ուժ տալիս նրան։

Սուրն է շառաչում, և քարի նման
Տասներկու գլուխ թմփում են հողին,
Լռիկ խոսում է սարսափ մի դեղին
Մարմրող դալուկ դեմքին հայորդու,
Ահով լի երկու անդունդներ մի պահ,
Երկու աչքեր են հառվում տանջողին,
Քրքջում է սա խենթ ու դիվային.
- Փոլադ անունը չի սազի հային,
Ահա առջևն իմ ծնկի եկար դու։
- Չէ, նենգ,- հնչում է ասես ջրհորից,-
Ես ծնկի չեկա, ես նույնն եմ նորից,
Բայց դու... է՛լ այն չես, դու ստոր ես հույժ,
Դու կինարես պատմություններ սուտ։
Աստված իմ, մի հայ աստղիկ իսկ չկա,
Որ տեսնի մահս, մերոնց մոտ պատմի,
Նա ծնկի չեկավ, ասի իմ մասին,
Կռվեք նրա պես... հողը հայկական...
Լո՛ւր... լո՛ւր... Ու մեռավ հերոս հայորդին։
Իսկ նա, որ մնաց, որ էլ երկաթ չէր,
- Նա՛ էր Փոլադը,- ահեղ մռնչաց,-
Ես չէի կարող հանց նա առնացի
Մահվան գրկի մեջ մահից չդողալ,
Ես մենության մեջ չէի մտածի,
Որ մահով անգամ մերոնց չեմ օգնի։
Հե՛յ, փչեք փողը մեր ծիրանագույն
Ի փառս նրա՝ ինձ հաղթող հայի։

5

Ականջս դրած մայր հողին ահա
Պղնձե ձայնն եմ լսում այդ փողի,

Լսում եմ երգը, որ երգում էր նա,
Այդ երգով հիմա ուրիշն է ճամփում
Հեռու հոգյակին «խաբրիկ մի, լավ լուր»։
Հայոց այրուձին՝ թշնամուն հաղթած,
Անցնում սարեսար, բլուրից բլուր,
Տանում էր իր հետ մի ձեռք կտրված,
Մի սուր էր տանում, սուրը Վարդանանց,
Որի դաստակը այդ ձեռքն էր բռնում։
Պատյան չուներ նա ու այդպես դարեր
Չմտավ պատյան։
Լսում եմ նաև, որ պատմիչը ծեր
Ահեղ մարտերն էր պատմում դարերին,
Դժգույն շուրթերը մրմնջում էին՝
Քաջաբար մեռան բազում շինական,
Ուռչում էր սրտում մի հպարտություն,
Ձեռքը գրում էր՝ քաջաբար մեռան...

(1963 թ.)

ԴԵՂԻՆ ԳԻՇԵՐ

1

Տարին բոլոր ծուխ է ելնում բարձր սարից դիմացի,
Տարին բոլոր ծխի հետ է քաջ հովիվը առնացի,
Ցածում ոչխարն է արածում, հսկում է նա իր հոտին
Եվ հսկում է կենաց ծաղկին՝ բարձր սարի գագաթին։
Աճում է սա հրաբուխի խառնարանին շատ մոտիկ
Եվ ժայթքումից մեկ օր առաջ բացվում թերթիկ առ թերթիկ,
Հովիվն իսկույն լուր է տանում ցածում փռված քաղաքին,
Եվ փախչում են, փրկվում մարդիկ հրաբուխից սաստկագին։
Քաղաք իջավ հովիվն ահա, կանչեց, որ գան, լուր ունի
Ու չորս կողմից եկան մարդիկ, խռնվեցին վախով լի.
- Ի՞նչ է եղել, խոսիր, հովիվ, կենաց ծաղի՞կն է բացվել,
Թե՞ ոչխարդ լեզու առել, մարդու լեզվով է խոսել։
- Առաջվա նման փակ է մեր փրկիչ ծաղիկը կենաց,
Իսկ ոչխարն էլի իր ոչխարերեն լեզվով է մնչում։
Մի աչքս ծաղկին, մի աչքս հոտին՝ հանկարծ ի՛նչ տեսնեմ,
Մի դեղին, մի մեծ թմբուկ է գալիս,
Մեկ ձորն է իջնում, մեկ ելնում սարը, թռչում քարեքար։
Զարմացել էի, թմբուկ է, պիտի գլորվի ներքև,
Այդ ինչպե՞ս է նա սարնիվեր ելնում։
Մոտեցավ, տեսա մենակ թմբուկ չէր, մի մարդ կար տակին,
Շատ սովորական, մեզ նման մի մարդ, մեզ պես հագնված,
Հեշտությամբ առանց որևէ ճիգի թմբուկն է տանում։
Գալիս է դեպի մեր քաղաքը նա։
Իմ քաջ պստիկին հոտի մոտ թողած՝
Իսկույն վազեցի, որ ձեզ լուրն հայտնեմ։
Ահա գալիս է, այ այն բոլորակ լուսինն է դեղին,
Որ գլորվում է երկրի երեսով, օրը ցերեկով,
Այ նա էլ ինքն է՝ մարդը իմ ասած։

Թմբուկ ու մարդ հրապարակն ահա մտան քաղաքի,
Ուր բազմությունն էր խռնվել նման ծովի հորձանքի։
Հոգնած թվաց տեսքն այդ մարդու, թվաց քաղցած է, ծարավ,
Ջուր տվեցին, բայց չխմեց, հաց տվեցին՝ չկերավ։
- Հաց չեմ ուտում, ջուր չեմ խմում երբեք, երբեք,- ասաց նա,-
Ու չգիտեմ հոգնելն ինչ է, չեմ էլ քնում գեթ մի պահ։
Շատ զարմացան, կասկածեցին մարդիկ նրա ասածին.
- Հաց չե՞ս ուտում, չե՞ս էլ քնում, մի թույլ մարդ ես,- ասացին,-
Բայց ինչպե՞ս ես դու քարշ տալիս դեղին թմբուկդ հսկա,
Նա է զուցե քեզ քարշ տալիս, օդով է լի կա-չկա։
Ու ծիծաղեց հյուրը քահ-քահ՝ դե մոտեցեք թմբուկիս,
Թող ամենից զորեղը գա, բարձրացնի մի կես թիզ։
Եկավ զորեղն ամենից, Զորեղ դնենք անունն իր,
Ճկռեց, տնքաց, նորից ճկռեց, դեմքը դարձավ կաս-կարմիր,
Բայց թմբուկը մնաց անշարժ, ինչպես մի ժայռ ահագին։
Այդ ինչքա՜ն է հյուրը ուժեղ, սարսափ պատեց ամենքին,
Փախան դես-դեն, հետո քիչ-քիչ սրտապնդված հետ եկան
Ու գովեցին ուժը հյուրի, որ չունի և ածդահան։
- Ձեր գովքի համար չեմ եկել հեռվից,- սրտնեղեց հյուրը,-
Եկել եմ, որ ձեզ բարություն անեմ կամ թե չարություն,
Նայած թե ո՛րը ձեր սրտով կընտրեք։
Ով իմ թմբուկին թեթև հարվածի՝ կառնի մի ոսկի,
Ով մի քիչ ուժեղ՝ երկու հատ ոսկի,
Ավելի ուժեղ՝ երեքը կտամ և դեռ ավելի,
Հարվածը որքան զորավոր լինի, ոսկին՝ այնքան շատ։
Սակայն իմացեք, եթե հարվածը շատ ուժեղ լինի,
Կպայթի թմբուկն ու դուք պայթյունի որոտից ուժգին
Կմեռնեք իսկույն, բոլորդ մեկտեղ։
Դե, տեսնեմ ձեզնից ո՞վ է առաջին ոսկին առնելու։
Ոչ ոք, ոչ ոք բազմությունից չմոտեցավ թմբուկին,
Պետք չէ, ասին, մենք չենք ուզում մեզ մահ բերող այդ ոսկին,
Ապրող մարդու ցնցոտին իսկ լավ է ոսկի պատանքից,

Դա ոսկի չէ, դեղին մահ է, դեղին վերջն է ամենքիս։
Քաղաքի մեծ բանաստեղծը զովեց վարմունքը նրանց,
Ապա դարձավ հեռվից եկած ահեղ հյուրին և ասաց.
- Ով օտարական, քո բարությունը մեզ հարկավոր չէ,
Քո չարության հետ վերցրու և գնա։
Մեր սիրտն ա՛յդ ընտրեց։
Շարունակեց բանաստեղծին բուսաբանը քաղաքի,
Զվարթաձայն հայտնեց լուրը հուրախություն ամենքի,
Որ մի տարում երկու բերք է ինքն ստանում ցորյանի,
Եվ երեք բերք իր ծառերից, ծով լիություն կլինի։
Ալքիմիկոս իր ընկերն էլ, թե ոսկի են ուզում շատ,
Ոսկի կտա նրանց շուտով իր փորձերով անվհատ,
Եվ չի լինի դա այդ մարդու ոսկու նման գլխակեր,
Տուն գնացեք, բախտն իր ոտքով ինքն է գալիս դուռը ձեր։
Մարդիկ դեպի տուն շարժվեցին, բայց ձեռքերը տարածած՝
Ալքիմիկոսն առաջ եկավ, առաջ եկավ ու ասաց.
- Կացե՛ք դեռ, մարդիկ։ Սուտ է, թե շուտով ոսկի կստանամ
Իմ քուրայի մեջ պղինձը մնաց վերստին պղինձ,
Ապարդյուն անցան բոլոր փորձերս։
Ոսկին իր ոտքով մեր դուռն է եկել, ինչո՞ւ հետ դարձնենք,
Մենք խոհեմաբար օգտվենք բախտից։
Թունդ չենք հարվածի, որ այս մահաբեր թմբուկը պայթի,
Թույլ կհարվածենք, և նա կենսաբեր թմբուկ կլինի։
Մի-մի ոսկուց է գոյանում շատը,
Մենք մի-մի ոսկով շատը կունենանք։
Այս ի՞նչ ասաց, և ո՞վ ասաց, իր ընկե՞րը մանկության,
Բանաստեղծը նայեց, շանթեց, բայց և լսեց պատասխան.
- Ծանր է հայացքդ, այդպես մի նայիր։ Եթե դու երգով,
Ես էլ ոսկով եմ կամեցել մարդկանց սփոփանք բերել,
Երազել եմ շատ, այրվել ու տանջվել քեզնից ոչ պակաս,
Բայց աղքատն էլի աղքատ է, ավա՛ղ։
Մեծ գյուտ է հարկավ՝ տարին երեք բերք, բայց մեզ ի՞նչ օգուտ,

Թող հարուստների աչքը լույս լինի,
Բերքն հոսի պիտի նրանց ամբարներն ու մառանները։
Ես կհարվածեմ հիմա թմբուկին։
- Դու այդ չես անի։
- Կանեմ։ Զգույշ է և խոհուն մեղուն բանականության,
Կարող է անգամ չարության ծաղկից մեղր պատրաստել։
Ու մոտեցավ նա աներեր ու հարվածեց թմբուկին,
Թույլ հարվածեց ու թույլ մի ձայն հանեց թմբուկն ահագին,
Մի զրնգուն, կլոր ոսկի, մի ողջ ոսկի ընկավ ցած,
Եվ թմբուկի տերը խոսեց՝ գլուխը բարձր պահած.
- Կես ոսկու ուժով հարվածեցիր, մարդ,
Բայց ես տալիս եմ մի լրիվ ոսկի, կեսը պարգև քեզ,
Քանզի առաջին խփողը եղար և առաջնորդ ես,
Շուտով կունենաս մի ստվար բանակ։
Ասաց այդպես և դեռ անզորք առաջնորդը ժպտաց լուռ,
Մարդիկ տեսան, որ դեղին են նրա աչքերն ու անհուր,
Ինչպես աչքերն իրենց հյուրի, որոնց դեղին ցոլքն ընկնում
Եվ տիրոջը ոսկուց ձուլված մի կիսաստված է դարձնում։
Նայեց Զորեղն ու մի վայրկյան չհավատաց աչքերին,
Իր հայրն ինչպե՞ս դարձավ ուրիշ, պաղ է հայացքն ու դեղին։
- Հայր իմ, ի՞նչ արիր, խայտառակ եղանք ամբողջ քաղաքում,
Դեղին աչքերով դու ինչպե՞ս պիտի մարդկանց երևաս։
- Դեղինն ինչո՞վ է նրա կապույտից կամ քո սևից վատ։
- Բայց ագահության նշան է ստույգ։
- Հարազատ հորդ ագահ ես կոչում բազմության առաջ
Եվ խրախուսիչ հայացքն ես փնտրում դու բանաստեղծի,
Պարզ է, փեսան ես, համարյա փեսան, դուր գալ ես ուզում,
Բայց այդ «համարյան» մի մազ է բարակ, կտրվեց արդեն։
Դու էլ տեսնում ես, որ էլ փեսա չես,
Հարսնացուդ ահա վառվում է սիրով այս անծանոթի,
Որ քեզնից ուժեղ, սիրուն է քեզնից։
Տես, նրան ինչպես ուտում է ագահ սիրո աչքերով,

Եվ դու նախանձից քեզ կորցրել ես։
- Անծանո՞թ ասիր, նա ի՞նչ անծանոթ։
Մարդի՛կ, նա դև է, նա դևն է դեղին,
Թեև սիրուն է, բայց դև է, դև է,
Ես այդ զգացի, երբ որ չափվեցի ուժով նրա հետ։
- Արդար է խոսում, նա դևն է դեղին,- գոչեց պոետը,-
Նա հաց չի ուտում, նա ջուր չի խմում, ինքը այդ ասաց,
Իր հացն ու ջուրը սրտերն են մարդոց։
Նա սիրտ է ուտում, մարդի՛կ, իմացեք, սրտներդ պահեք,
Ցրվեցեք իսկույն, մի սիրտը բավ էր, որ մեր դեմ կերավ։
Եվ խիղճ է ուտում, մեզանից մեկը արդեն խիղճ չունի,
Թող անխիղճ, անսիրտ այս առաջնորդը բանակ չունենա։
- Կունենա՛ բանակ,- ձայն տվեց մեկը,
Այդ դեղին դևին շատ նման մի մարդ, բայց միաչքանի։ -
Մենք մեր լեռներից այն կողմ չենք անցել,
Ինչպե՞ս իմանանք ի՞նչ աշխարհներ կան, ի՞նչ տեսակ մարդիկ։
Մեր ոսկի հյուրը ասաց, որ ինքը հեռվից է եկել,
Մենք ի՞նչ իմանանք այդ ո՞ր անծանոթ, անսովոր հեռվից,
Որտեղ իսկապես ոչ հաց են ուտում, ոչ ջուր են խմում։
- Արդար չես դատում, սիրելի պոետ,- մեկն առաջ եկավ,-
Իմ այս ձեռքերով փորել եմ հիմքը շքեղ արձանիդ,
Բայց այդ արել եմ անոթի փորով,
Պաշտում եմ ես քեզ ինձ հույս ներշնչող տաղերիդ համար,
Բայց դու անտեղի ու փուչ կասկածով ինձ կոչ ես անում
Էլի տառապեմ աղքատության մեջ։
Ոչ մի մուրացկան թող փող չմուրա կամ մի պատառ հաց,
Այս թմբուկն ահա նրան փող կտա և հաց լիուլի,
Եվ ոչ մի հարուստ ինձ նման մեկին է՛լ չի կեղեքի,
Ինչ ինձնից պիտի կեղեքեր տաներ՝ թմբուկը կտա։
Եթե կա արդեն հրամանատար,
Դառնում եմ նրա զինվորն առաջին։
- Քո էլ աչքերը դեղնեցին իսկույն,- պոետն հառաչեց,-

Ինչքան արագ է ցեցը բազմանում...
Հե՛յ, հովիվ, գնա մեր կենաց ծաղկին հսկիր ակնդետ,
Սարերդ գնա, քանի քո սիրտն էլ ցեցը չի մտել։
Բայց ո՞վ լուր կտա մեզ մեկ օր առաջ,
Թե մեկը պիտի իր ագահ ձեռքով այնպես հարվածի,
Որ պայթի թմբուկն ու ամայանա քաղաքս մեկից։
Վա՛յ մեզ, այս երկրորդ հրաբուխը նոր
Ավելի չար է և աղետաբեր։

2

Անցան օրեր, շաբաթներ մահվան դեղին տագնապում,
Մարդիկ ագահ, դեղնաչյա՝ թմբուկին են հա խփում,
Վախենում են, որ պայթի, վախենում են, բայց էլի
Խաղ են անում մահվան հետ ոսկու դեղին տենդով լի։
Հարվածի ուժն հասցրել մի ոսկու տեղ երեքի,
Սարսափում են, որ հանկարծ բախտը երես կթեքի,
Բայց ե՞րբ, բայց ո՞ր մահաբեր թվի վրա՝ չգիտեն,
Ու չորս ամիս ու չորս օր այսպես անցել է արդեն։
Լուսադեմ է... Թմբուկը առաջվանից զիլ թնդաց,
Բանաստեղծը դուրս նետվեց լեղապատառ, գլխաբաց։
«Չէ, դեռ չի պայթել, իսկ ինձ թվաց, թե պայթել է արդեն,
Ո՞ր անաստվածն էր, որ այդպես ուժեղ հարվածեց սրան։
Սարսափից խելքս թռավ գլխիցս ու չհասկացա,
Որ եթե իրոք սա պայթած լիներ,
Ես հիմա պիտի մեռած լինեի։
Չեն թողնում քնեմ, անվերջ խփում են, խփում, հա՛ խփում,
Ասես կարկուտ է անդադար տեղում քաղաքիս վրա։
Գիշեր ու ցերեկ, ցերեկ ու գիշեր մահն է քրքջում
Մեր փողոցներում ու իմ սրտի մեջ։
Քաղաքս լցվեց աչքերով դեղին,

Կարծես գայլեր են խավարում շրջում վառ-վառ աչքերով,
Ավելանում են նրանք ամեն ժամ, իսկ մենք՝ պակասում։
Ի՞նչ երգով առնեմ ես դեմը դրա,
Այդ դեղին ժանգից մաքրեմ սրտերը և խիղճը մարդոց։
Դեռ մութ է, այս ի՞նչ ճանճ է տզտզում, չի քնել ինձ պես,
Օ՜, սա էլ գուցե ճանճային ցեղի բանաստեղծն է խեղճ,
Անվերջ տզզոցով արթնացնել է կամենում հիմա
Իր խաբված, քնած ցեղակիցներին,
Բայց զուր, վերստին նրանք մնում են խորունկ քնի մեջ։
Լույսը բացվում է, բարի լո՜ւյս, քաղաք իմ տագնապալի,
Ա՜խ, բարի լույսը հանկարծ չփոխես դեղին խավարի։
Բարեգութ աստված, մի ճամփա ցույց տուր դեղնաչյաներին,
Ներշնչիր նրանց, որ դևի հետ են գործակցել իրենք։
Գիտեն, որ դև է, բայց դև չեն կոչում,
Թե դև կոչեին՝ պիտի մերժեին թմբուկը նրա։
Խփում են, խփում, բայց ծաղիկներ են դնում արձանիս։
Սիրուն ծաղիկներ, երբ դաշտում էիք, դուք անմեղ էիք,
Դուք մաքուր էիք ձեր թփի վրա,
Հիմա կեղտոտ եք ու սեր չեք բուրում,
Կեղծավորություն խառնեցին նրանք ձեր անուշ բույրին։
Ընկել են հոգով, բայց վեհություն են խաղում դեռ համառ,
Գայլ են՝ թող ոռնան, օձ են՝ թող ֆշշան,
Ինչո՞ւ են կեղծում գայլությունն իրենց և օձությունը։
Ա՜խ, հա, որ ասեն, թե մարդ են ծնվել, ոչ թե գայլ կամ օձ։
Ու եթե մարդ են ծնվել աշխարհում,
Ուրեմն պիտի բանաստեղծություն սիրեն ու պաշտեն
Ու բանաստեղծի արձանին դնեն սիրո ծաղիկներ՝
Բնավ չանսալով խորհուրդին նրա»։
Խորհում էր պոետն ու խոհն ընդհատեց մի մարդ խելագար,
Մեծ բուսաբանն էր՝ թարմ ճյուղեր հյուսած մազերին երկար.
- Հանիր աչքերս, դե շուտ, խնդրում եմ,
Նրանց մեջ կորած ծառեր կան դալար, ծառերի դիեր,

Հանիր աչքերս, որ էլ չտեսնեմ իմ աչքերի մեջ
Նրանց դիերը, նրանց սպիտակ վերքերն անհամար։
Ասաց ու գնաց։ Բոլոր ծառերը կոտրտել էին
Առաջին զինվորն ու Միաչքանին,
Այն լավ ծառերը, որ տալիս էին տարին երեք բերք,
Կոտրտել էին, որ երբեք, երբե՜ք
Ոչ մեկը չասի՝ եղբայրներ, թողեք թմբուկը մահվան,
Ծառ աճեցրեք, ծառերի մեջ էլ շատ ոսկիներ կան։
- Վա՜յ քեզ, քաղաք իմ,- փղձկաց պոետը,-
Խելագարված է քո հանճարն ահա,
Եվ ավելի են քո հիմարները անսանձ ու հիմար։

3

Խուլ հառաչում են երկու հուսահատ՝ իրար հանդիպած,
Մեկը պոետն է՝ վերքով լի սրտում նոր վերք լայնաբաց.
Ա՜խ, իր աղջիկն էր թմբուկին խփողն այն լուսադեմին,
Ուժեղ էր խփել, որ իր աչքերը
Առավել պայծառ դեղին լինեին, դուր գային դևին։
Երկրորդ հուսահատն ալքիմիկոսն է, նա, որ հուսավառ
Առաջինն ինքը խփեց թմբուկին ու դրա համար
Կարգվեց առաջնորդ դեղնաչյաներին։
Էլ առաջնորդ չէր, պաշտոնանկ արին,
Քանզի չէր թողնում ով ինչքան ուզի՝ խփի թմբուկին,
Նոր առաջնորդ է կարգվել նրա տեղ Զինվորն առաջին։
Ու հառաչում են երկու հուսահատ, ա՜խ, այնպես մեղք են։
Մեկն հուսահատ է, քանի դեռ մեկ է,
Բայց երբ գալիս են հանդիպում իրար երկու հուսահատ,
Էլ հուսահատ չեն, մի ելք են փնտրում։
Բայց ինչ ելք գտան՝ ողջը ապարդյուն,
Մնաց լոկ մի բան, որ պահակ կանգնեն թմբուկին դեղին,
Խնդրեն, աղաչեն, որ անկուշտները չխփվեն ուժգին։

4

Սուրը կողքից կախ՝ Զորեղն է եկել, ասում է նրանց.
- Պահակ կանգնելով աղետի դեմը երբեք չես առնի։
Դևը ինձանից զորընդեղ է շատ,
Սակայն, երբ կռվում սուրն է մերկացած՝
Հավասարվում են շատը և քիչը։
- Զավակս, դևը կարծեմ քնած է, այ այն թփի տակ,-
Շշնջաց հայրը տագնապներով լի,-
Եթե հարվածես նրան թիկունքից, գուցե թե հաղթես,
Կռիվ մի մտիր ազնիվ մարդու պես, մարդ չէ դիմացդ։
- Խփիր թիկունքից,- բանաստեղծն ասաց,-
Այդպես շահելու մի հույս կունենաս։
Կտրիճ ես, գիտեմ, և կուզենայիր կռվել դեմառդեմ,
Բայց պահանջում է քաղաքիս շահը՝ թիկունքից խփես։
- Ոչ, հայրեր, պետք չէ։ Թիկունքից խփել ես չեմ կամենում։
Վեր կացավ դևը և քրքջալով եկավ ահազդու.
- Ես քնած չէի, ես կյանքում երբեք, երբեք չեմ քնում։
Անփորձ հիմարներ, ձեր շշուկն անգամ ես լսում էի,
Այս մո՞ւկն էր ուզում վերջ տալ իմ կյանքին։ Դե խփիր, մկնիկ։
Հարձակվեց խլեց մերկացած սուրը Զորեղի ձեռքից,
Չէ, ճարպիկ չեղար, կարողանայիր քերծել իմ մաշկը՝
Ամբողջ արյունս կհոսեր անկանգ։ Նա չի մակարդվում։

5

Կանչեց դեղին թմբուկի մոտ նոր առաջնորդն իր մարդկանց,
Եկան մեկ-մեկ, եկան խումբ-խումբ, մեծ էր թիվը չափազանց։
- Ես կանչել եմ ձեզ շատ կարևոր բան ասելու համար։
Պիտի պատերազմ սկսենք շուտով։
- Պատերա՞զմ, ո՞ւմ դեմ։

- Եվ ինչի՞ համար։
Նոր առաջնորդն ապշած նայեց, նրա ծիծաղն էր գալիս,
Ի՞նչ մարդիկ են անհասկացող, այս ի՞նչ հարցեր են տալիս։
- Ինչի՞ համար են պատերազմ անում.
Մարդ սպանելու, հողը խլելու, ինչքը վերցնելու։
Բայց մեզ հող պետք չէ, մենք հող շատ ունենք և չենք մշակում,
Ուրիշի հո՞ղը մշակենք պիտի։
Մեզ ինչք էլ պետք չէ, ոսկի շատ ունենք,
Եթե ուզենանք՝ աշխարհի ապրանքն այստեղ կլինի։
Մարդ սպանելուց մեզ օգուտ չկա,
Բայց շատ կսպանվեն, դե պատերազմ է, այլ կերպ չի լինի։
- Թե մեզ բան պետք չէ, սպանելուց էլ բան չենք շահելու,
Հապա էլ ինչո՞ւ պատերազմ անենք։
- Նախ՝ մենք մեր ուժն ենք ցուցադրելու,
Երկրորդ՝ ասացի, որ մեզ ինչք պետք չէ,
Բայց զենք շատ է պետք և շատ զենք է պետք։
- Խլենք, ուրեմն, ուրիշից խլենք։
- Բայց ումի՞ց խլենք, ասա, առաջնորդ։
- Իսկ ինչո՞ւ խլենք, երբ կարելի է պարզապես գնել։
- Այ այստեղ է, որ ես պիտի ասեմ,
Թե մենք ում դեմ ենք պատերազմելու։
Պիտի հարձակվենք մեզ ամենամոտ քաղաքի վրա։
Մենք ոսկի տալիս ու հաց ենք առնում, հաց վաճառում են,
Մենք ոսկի տալիս ու միս ենք առնում,
Հագուստ ենք առնում, միս ու հագուստ էլ մեզ վաճառում են,
Մենք ոսկի տալիս ու զենք չենք առնում, զենք չեն վաճառում,
Էլի մնում ենք այդ խարդախներից կախված վիճակում։
Հարձակվենք պիտի ու զենքը ձրի առնենք նրանցից,
Խաթրով չեն տալիս, բայց զոռով կտան։
Արյուն կթափվի, նրանց արյունը, մենք մեղավոր չենք,
Իրե՛նք այդ անել մեզ ստիպեցին։

- Առաջնորդ, նրանք զենքով, մենք՝ անզեն,
Այդ ինչո՞ւ պիտի նրանց արյունը թափվի, մերը՝ չէ։
- Մենք պիտի դիմենք խորամանկության,
Հարձակվենք սուս-փուս, երբ քնած լինեն, բոլորին մորթենք։
- Մարդի՛կ,- ձայն տվեց բանաստեղծը ծեր,-
Տեսնում եմ, ուժեղ ձեռքեր ունեք դուք
Եվ ջարդուփշուր կարող եք անել ամեն, ամեն ինչ,
Բայց մի հարվածեք։
- Եթե ուժեղ ենք՝ պիտի հարվածենք,- առարկեց մի ձայն։
- Բայց մի հարվածեք։ Ձեզ էլ հարվածող կճարվի, մեղք եք։
- Մենք զենք կունենանք։
- Զենքը ցած նետեք, միշտ էլ սրի դեմ սուր կբարձրանա,
Եվ մահվան դեմ՝ մահ, կսպանվեք դուք էլ։
- Լռի՛ր, պոետիկ,- նոր առաջնորդը բարկաձայթ գոչեց,-
Նման բաներից խելքդ չի հասնում։ Քո գործը լացն է։
Մթնած ամպի պես նախկին առաջնորդն իր շանթն արձակեց.
- Այդ ի՞նչ լեզվով ես խոսում պատվարժան մեր պոետի հետ,
Ո՞վ ես դու, միայն չնչին մարդասպան։
- Ես առաջնորդ եմ, ինչպես դու՝ երեկ։
- Ոչ, ստում ես դու, ես քեզ պես չէի իբրև առաջնորդ,
Քո մեջ զարթնել է ուժն ավերումի։ Երեկ այդ չկար։
- Ես միշտ եմ եղել այսպիսին՝ ուժեղ։
- Լպիրշ՝ ոչ ուժեղ, նոր ուժեղացար։
- Եթե շատ խոսես, կհրամայեմ, որ լեզուդ կտրեն։
Դևը հայտնվեց, արյուն չթափվի, սառնորեն ասաց,
Ոչ ոք ոչ ոքի թող չբռնանա,
Ինչպես որ ես չեմ բռնացել երբեք ոչ մեկիդ կամքին։
Եվ շարունակեց նախկին առաջնորդն իր խոսքը այսպես.
- Լսեցե՛ք, մարդի՛կ,
Ես չեմ զգացել ձեր ուժը իմ մեջ, իսկ սա զգում է,
Գիտի՝ իր ուժն է, այնինչ նա միայն ձեզնով է ուժեղ,
Նա ձեզ կռվի դաշտ կուղարկի հանգիստ,

Դուք իր ձեռքերն եք, ջարդեք ու ջարդվեք,
Ջարդվելիս ինքը ցավ չի զգալու,
Չէ՞ որ դնովի ձեռքերն եք նրա։
- Եթե այդ ձեռքի մի մատն էլ ես եմ, կռիվ չեմ գնա։
- Ում էլ սպանեմ՝ նա էլ ինձ նման ապրել է ուզում։
- Դավադրության ձայներ եմ լսում։ Ոչ մի քնքշություն։
Նոր առաջնորդը արնոտ աչքերով սպառնաց նրանց.
Այսպես, ուրեմն, շուտով պատերազմ։
Ոչ ինչք ու ոչ հող, զենք է հարկավոր,
Եվ մենք կունենանք այդ զենքը շուտով
Ու զենքով նորից քաղաքներ կառնենք,
Սրանց զենքով էլ ուրիշ քաղաքներ,
Մինչև չմնա ոչ մեկն անվնաս։
Մենք այսքան հարուստ՝ ինչու չպիտի իշխենք բոլորին։
- Առաջնորդ, շատ լավ, սուս-փուս հարձակվենք, ինչպես ասացիր,
Բայց եթե նրանք քնած չլինե՞ն։
- Ահա ես էլ ձեզ կանչել եմ այստեղ, որ մի բան խորհենք,
Մեր խելքը քիչ է, դիմենք իմաստուն օտարականին,
Նա շատ աշխարհներ, մարդիկ է տեսել, ճիշտ խորհուրդ կտա։
- Ես ձեզ քառասուն անտես նետ կտամ և մեկ ճիշտ
խորհուրդ,
Դուք այդ նետերով սպանեք նրանց առաջնորդներին
Եվ նրանց, ովքեր փոխարինողներ կարող են լինել,
Մնացածները՝ անգլուխ մարմին, կթպրտան լոկ։
Անտես նետերով մտեք նրանց մեջ,
Ոչ ոք չի տեսնի ինչպես, ում վրա նետն արձակեցիք։
Դրանք թե մարդու ոտքին էլ կպչեն կամ մատի ծայրին,
Արյան հոսանքով կսուրան ուղիղ սիրտը զարկվածի։
- Օ՜, մեր բարերար, բայց ո՞ւր են հիմա անտես նետերը,
Թե՞ քո ձեռքում են ու մենք չենք տեսնում։
- Այստեղ, գետնի տակ։ Փորեք ու հանեք...
Փորում է, փորում Զորեղն անդադար ու դնն է խոսում.

- Քիչ մնաց, շատ քիչ, քաղաքն իր քիթը հիմա ցույց կտա։
Սա հանճարների քաղաք էր հզոր, թաղվեց հողի տակ,
Ամեն դար վրան իր շերտը դրեց։
Բնակիչները այն հին քաղաքի
Ուրիշի վրա չէին հարձակվում, որ զենքեր խլեն,
Այլ իրենք էին արարում զենքեր
Եվ իրար վրա հարձակվում իրենց հանճարի թափով,
Ինչպիսի՜ զենքեր, մեկը մեկից բարդ և սարսափելի,
Անտես նետերը վերջինը եղան։
Ահա նա հանեց, այդ տուփի մեջ են,
Բյուր հազարներից այդքանը մնաց դեռ չգործածված,
Հողի տակ դարեր սպասում էին, որ դուք գործածեք,
Մոտեցեք, վերցրեք (մոտեցան, վերցրին, Զորեղը՝ նույնպես)
Բավ է կամենաք և նետը իսկույն կսուրա անտես
Դեպի այն կետը, որին նշան եք բռնել դուք աչքով։
- Այդքանը մնաց դեռ չգործածված,- տնքաց պոետը,-
Իսկ այն նետերը, որ գործածվեցին
Քանի՜ սիրտ կերան, ի՜նչ հանճարների։
- Հանճարեղ միտքը ելել հանճարեղ մի այլ մտքի դեմ
Լոկ զենք էր երկնում խելահեղորեն։
Երկու խմբերի կռիվն սկսվեց թեթև բառերով,
Հետո շիկացած արճիճ լցրեցին այդ բառերի մեջ,
Որ դարձան նետեր ծանր սուրացող, բայց տեսանելի,
Դա կործանումի սկիզբն էր միայն, դեռ կործանում չէր,
Կործանում եղավ, երբ ծանրերի տեղ
Լույս աշխարհ եկան թեթև սուրացող անտես նետերը,
Եվ նրանք այդժամ մեկմեկու կերան հանճարեղորեն։
- Դու ստում ես, դև,- գոչեց պոետը,-
Հանճարների մեջ կային այնպիսիք,
Որ ուզում էին հաշտ, խաղաղ ապրել
Եվ հանում էին իրենց ուժն արդար և արարչական
Քանդիչ ուժի դեմ անտես նետերին։

- Այո՛, իհարկե։ Հայտնվում էին ձեզ պես նրանց մեջ,
Նրանց կերպն առած՝ գովերգում էին խաղաղ տքնանքը,
Անվերջ տրտնջում, որ իրենց երգը լսում են նրանք,
Բայց երգի խորհուրդն արհամարհում են։
- Ծաղրդ քեզ պահիր։ Եվ մի հրճվիր, դև, որ ուժեղ ես դու,
Դեղին հունդերդ առաջվա նման ծիլ են արձակում,
Դու, ոչնչություն, քանզի կարող ես լոկ ոչնչացնել,
Արարիչ ոգին՝ միշտ թռիչքի մեջ,
Միշտ վերածնվող՝ մոխիրներից իսկ,
Միշտ վերաշինող։

6

Ինչպես ջարդված ծառն է ընկնում, փռվում գետնի երեսին,
Երեսունութ դիակ այդպես այստեղ-այնտեղ փռվեցին,
Բայց փախչելու էլ հարկ չկա, նետ չմնաց ձեռքներին,
Երեսունութ հոգի ընկան, մեկն առաջնորդն էր նախկին,
Չեն մնացել, սուրացել են վերջին երկու նետերն էլ,
Մեկը ահա բանաստեղծի աջ ոտքի մեջ է խրվել,
Միակ նետը, որ չէր մղվել դեպի սիրտը արյան հետ,
Դարերի մեջ հատկությունն այդ կորցրել էր նա անհետ,
Բայց բացել էր խորունկ մի վերք, որին ոչ մի ճար չկա,
Թե ինչ եղավ վերջին նետը՝ այդ ասում է դևն ահա.
- Վերջին նետն անտես իմ ծոցի մեջ է, ինձ չի վնասել,
Սա խփեց՝ անզոր Զորեղը այս ձեր,
Չգիտեր խեղճը, որ հագել էի ես հատուկ զրահ,
Ուզում էր ուղիղ սրտիս մեջ խփել,
Ես այդ գիտեի։ Բայց նա չգիտեր,
Որ անպաշտպան են աչքերս միայն։

7

Եկավ հովիվն էլի, եկավ քրտնամխած,
Մենակ չէր այս անգամ, հետն էր փոքրիկ տղան,
Հայր ու որդի եկան կենաց ծաղկի մոտից,
Որ աճում է ահեղ հրաբուխին մոտիկ,
Եվ ձայն տվին, թե՝ հե՛յ, թերթերն է նա բացել,
Փախեք, շո՛ւտ, հրաբուխն է արթնացել։
Մարդիկ փախան փութով։ Բայց Զորեղը մնաց,
Ինքն է հիմա մենակ և թմբուկն իր դիմաց։
«Մահաբեր թմբուկ, հարվածեմ ես քեզ իմ ամբողջ ուժով,
Քո ամբողջ ուժով ինձ կհարվածես դու էլ անխնա,
Դե ոչնչացնենք մենք մեկս մեկիս։»
Հարվածեց ուժգին, վա՜հ, պայթյուն չեղավ,
Սո՞ւտ էր, ասել է, դևը խաբե՞լ էր,
Որ ուժգին խփենք՝ վերջն է բոլորիս։
Սուտ էր, չար խաղ էր, որ դևն էր սարքել,
Սուտ ու զուր էին մեր տագնապները,
Ա՜խ, ինչքա՜ն, ինչքա՜ն մենք սարսափեցինք։
Բոլորը խաղ էր, դիվային ծաղր,
Խա՞ղ, ո՛չ, ո՛չ, խաղ չէր, ո՛չ ծաղր ու ծանակ,
Հեշտ վաստակն այնպես հեշտ ապականեց
Ազնիվ տքնության սերմանած բարին, խոնարհ բարքերը,
Թմբուկի պայթյունն ա՛յդ ձևով եղավ։
Բայց գուցե այն չէր, թույլ էր հարվածը։
Եվ երկրորդ անգամ ուզեց հարվածել,
Բայց դևն հայտնվեց ու բռնեց ձեռքը.
- Դու ի՜նչ համառն ես, խելագարի պես սևեռուն մտքով,
Մեկ ինձ վրա ես հարձակվել փորձում, մեկ իմ թմբուկի,
Մեռնե՞լ ես ուզում, դե ի՛նչ, կմեռնես,
Չշարժվես տեղից, հիմա ուր որ է պայթյուն կլսես,
Այդ հրաբուխն է իր զսպած ուժը բաց արձակելու,

Դու կայրվես նրա հոսուն հրերում։
Դողում ես վախից, քիչ առաջ այնպես համարձակ էիր,
Քեզ ի՞նչ պատահեց, նույն մահն է դարձյալ, ինչո՞ւ ես դողում։
- Այն ուրիշ մահ էր։ Խեղճ, երբեք, երբեք, այդ չես հասկանա։
- Հա՛, հա՛, հա՛, ես՝ խեղճ, իսկ սա հզոր է։
Լսեցի՞ր, ժայթքեց հրաբուխն ահա,
Հիմա կմեռնես ա՛յս ուրիշ մահով,
Բայց լավան կարծես չի գալիս այս կողմ, քաղաքի վրա։
- Քարերն են գալիս։ Աստված, փրկիր ինձ։
Շիկացած քարը դիպավ Զորեղին, ընկավ նա մեռած...

8

Փախածներն եկան, ու առաջնորդը խոսեց վերստին
Ամբողջ երկու օր ուշացած իրենց մեծ կռվի մասին։
Մտմտում էին գալիք հարձակման նոր ծրագիրներ,
Բայց Միաչքանին նրանց կողքին չէր,
Պահակ էր իբր կանգնել թմբուկին,
Բայց իր մեջ սուզված՝ իր խոհն էր խորհում լուռ ու տենդագին։
«Սաստիկ ամպրոպ էր, բայց որոտի ձայն ես չլսեցի,
Երկու ականջս էլ ամուր, ամուր էր բամբակը փակել,
Իսկ վրան քաշած կաշին զրահ էր գոռ ամպրոպի դեմ։
Թմբուկի ձայնը հազիվ ինձ հասնի այդ ամպրոպի չափ,
Նման ամպրոպներ ես շատ եմ լսել և դիմացել եմ։
Բայց այս մի կտոր բամբակն ու կաշին ոչինչ բաներ են,
Լոկ լրացուցիչ թմբկաթաղանթ են իմ ականջներին,
Դև՛ն է ինձ հուշել, որ ես իմ խելքով այդ հայտնագործեմ,
Ոչ թե ուրիշին, ի՛նձ է ներշնչել, այ դա է բանը։
Իմ մեջ, զգում եմ, դիվային բան կա,
Ես մի քիչ մարդ եմ ու մի քիչ էլ դև,

Թե մի քիչ դև եմ՝ պիտի կամենա ողջ ոսկին ինձ տալ,
Եթե տալիս է՝ ուրեմն պիտի կյանքս պահպանի,
Տալ ու մեռցնել, ասել է չտալ»։
- Հե՛յ, Միաչքանի, հիմա թող պահակ ուրիշը կանգնի,
Դու արի այստեղ, մեզ պետք է խելքդ սատանայական։
- Խորհել չեմ կարող այդ ժխորի մեջ, այստեղ եմ խորհում,
Սպասեք քիչ էլ, կարծիքս կասեմ։
«Թո՛ւ, ընդհատեցին։ Ի՞նչ էի խորհում,
Հա՛, մի քիչ դև եմ, ու մի քիչ էլ մարդ։ Բայց ինչպիսի՞ մարդ։
Առաջնորդն ասաց՝ սատանայական։
Սատանա, թե դև, երկու եղբայր են։
Դևը ինձ պես է, ես դևի պես եմ, մի աչք է պակաս,
Ուրեմն պիտի դիմացկուն լինեմ գեթ իր կեսի չափ։
Հերիք վարանեմ։ Սպասեմ դարձյալ՝
Սրանք ողջը ոսկին քոռուփուչ կանեն
Իրենց անիմաստ կռիվների մեջ։
Ժամն է, որ տեսնեմ ինչպես են մեռնում այս հիմարները,
Բոլորը, բացի կաղ բանաստեղծից։ Դեռ տեղ չի հասել։
Իմ անտես նետը ես արձակեցի աջ ոտքին նրա,
Որ մահվան պահը երկարեր մինչև սրտին հասնելը,
Երկարեր նաև հրճվանքիս պահը։
Դեռ մշակում են այնտեղ հարձակման ինչ-որ ծրագիր,
Պիտի կոտորեն մի ողջ քաղաքի բնակիչների,
Բայց եթե իրե՛նք կոտորվեն հիմա, նրանք չեն մեռնի,
Բյուր հազարի դեմ ուրիշ բյուր հազար,
Մեկ չէ՞ թե որը՝ սրա՞նք, թե՞ նրանք,
Թե արդար դատենք՝ ես հանցագործ չեմ»։
- Հը՛, գտա՞ր մի բան, ձայն տուր, լսում ենք։
- Գտա։ Մի քիչ էլ և ձեր բոլորի ականջին կասեմ։
«Ինչ անհամբեր են։ Որտե՞ղ կանգ առա,
Հա՛, որ ես ոճիր չեմ գործում բնավ,
Այդ ճիշտ է, իրոք ես ոճրագործ չեմ,

Եվ դեռ ավելին՝ բարիք եմ գործում,
Մեկ է՝ վաղ թե ուշ կպայթեցնի մեկը թմբուկը,
Սրանք կմեռնեն, վճիռն է դևի,
Ես սրանց մահով կփրկեմ նրանց։
Եթե մի դեպքում ես ոճրագործ չեմ,
Ապա մյուս դեպքում ես բարերար եմ,
Ու նրանք պիտի ինձ երկրպագեն։
Այս մեռյալներից կստանամ ոսկի,
Իսկ ապրողներից՝ և՛ ոսկի, և՛ փառք։»
Միաչքանին ականջներն ամուր փակեց տենդագին,
Աստված կանչեց ու խփեց ամբողջ ուժով թմբուկին,
Պայթեց թմբուկն ահռելի, որոտից ողջը մեռան,
Ինքն էլ մեռավ նրանց հետ ակնթարթում մի դաժան։

9

Կաղալով եկավ ծեր բանաստեղծը, եկավ ու տնքաց.
- Օ՜, խեղճ դիակներ, ես որի՞դ թաղեմ, դուք այնքան շատ եք։
Այն նետն ինչո՛ւ էր ուժն իր կորցրել,
Ես չէի տեսնի այս արհավիրքը։
Ոչինչ չի շարժվում, նույնիսկ շներ ու կատուներ չկան,
Խեղճ կենդանիներ, ձե՞ր մեղքը ինչ էր, որ էլ չեք ապրում։
Ի՜նչ զարհուրելի պայթյուն է եղել, պատերն են ճաքել։
Սիրտ, դու էլ ճաքիր, բավ չէ՞ դիմանաս, իմ ծերացած սիրտ,
Այնքան ապրեցիր, որ տեսար ահա
Դեղին գիշերը քաղաքիս իջած։
Գնաց դեղին դևն ուրիշ քաղաքներ, թմբուկն իր տարավ,
Գնամ իր հետքով, բայց ինչպե՞ս գնամ իմ այս կաղ ոտքով,
Հեյ-հե՜յ, մարդ չկա՞, որ այս աղետից ազատված լինի,
Ձայն տվեք, ո՞վ կա։
- Ես, ով բանաստեղծ, ես լսում եմ քեզ։

- Ո՞վ ես, չեմ տեսել քեզ ամենևին։
Հագուստդ այլ է, դու մերոնցից չես։
Դու դևն ես, դևը, մարդկային մի նոր կերպարանք առած,
Էլ ի՞նչ ես ուզում, բոլորն են մեռել, բոլորը, անխիղճ...
Հոշոտելու ես եկել դու գուցե դիերը նրանց,
Բայց պիտի գայիր բորենու տեսքով։
- Ես մարդ եմ, դև չեմ, դու ինձ կանչեցիր ու ես էլ եկա,
Ոչ թե հեքիաթից, այլ կյանքից եկա, գալիք մի դարից,
Դու մի պատմիր ինձ այն դեղին դևից, նրա թմբուկից,
Ես ողջը գիտեմ սկզբից մինչև վերջ, բոլորը տեսա։
- Տեսա՞ր, դե գնա ասա բոլորին, որ արթուն լինեն,
Այն դեղին դևը թմբուկն իր տարավ ուրիշ քաղաքներ,
Ասա, քանի դեռ աղետն հեռու է՝ մեզ փոքր է թվում,
Կատարվելիս է նա մեզ երևում իր ողջ մեծությամբ։
- Լսում եմ, իմ լավ, բարի ապուպապ։

(1988 թ.)

ԿԱՐՈՏ

Լեռներ՝ իրար թիկնած...
Այս աշխարհում սորուն
Մեկմեկու թիկնելու կարիքն ունեն
Լեռներն անգամ։
Ես լեռ չեմ,
Ոչ էլ դու նման ես
Ալեհեր Արարատին,
Փուլ ես եկել, պապի, թույլ ուսերիս վրա։
Ախ, հազիվ-հազ քայլող
Մի ծերուկ ես միայն,
Էլ չես ելնում մեր սեգ լեռներն ի վեր,
Լեռ են թվում հիմա, շունչդ կտրող,
Մեր այս քաղաքի տան սանդուղքները։
Ելնում ես հևալով,
Բայց հավատով մի տաք,
Որ շունչ կառնես
Մտերիմ հարկի տակ
Եվ զոհ՝ փառք ես տալիս աստծուն քո,
Որ քեզ օր ծերության
Չզցեց դռնեդուռ։
Բացում ես ծորակը,
Հիշում ես երևի,
Որ ջուր էիր բերում գյուղի ծայրից,
Եվ տնքում են նորից քո թևերը։
Ինչքա՜ն լավ է այստեղ,
Մի քայլ
Եվ աղբյուր ես պաղ երկաթից հանում,
Ասես գավազանով կախարդական։
Իսկական վայելք է,
Հրաշք է իրական

Ջրի կարկաչյունը չորս պատի մեջ։
Եվ տաք է սենյակը։
Սառչում էր ջուրն այնտեղ՝ գյուղի տանը,
Սառչում էր թոնիրը դեռ լուսաբաց չեղած։
Հիմա շոգ է նույնիսկ,
Կուզես բաց-բաց քնիր՝
Մրսել չկա,
Թոնիրը ո՛ւր,
Ջեռուցիչն ո՛ւր։
Ու դնում ես ձեռքդ տաք երկաթի վրա.
- Ուխա՛ա՛յ, ոսկորներս տաքացան։
Մինչ ցնծում ես,
Ես խայթվածի նման վեր եմ թռչում,
Հասկանալով հանկարծ,
Որ դու... մեր սարերին... չես կարոտում։
Ծորակը բացելիս
Չես լսում կարկաչը
Մեր սարերի զուլալ աղբյուրների։
Ու թվում է հանկարծ, թե մրսում են հիմա
Մեր սարերը։
Ինչպե՛ս կուզենայի սեղմել կրծքիս նրանց
Ու տաքացնել։
- Ախ, պապ,
Գարուն բացվի,
Ես քո ձեռքից բռնեմ,
Մեծդոշ սարը տանեմ,
Բայց այս անգամ հոգսդ ստորոտին թողած։
Քեզ գնացքով տանեմ,
Մեքենայով տանեմ,
Ձիով տանեմ,
Ձին վեր չբարձրանա՝
Իմ ուսերին տանեմ,

Որ չհոգնես,
Կանգնես՝ մեկ էլ նայես Մեծդոշ սարին,
Մեկ էլ տեսնես, ինչպես
Բույլ-բույլ կակաչներ են վառվում քարերի մեջ,
Ինչպես հովիվների արած կրակ
Ու ափսոսաս, որ դու է՛լ հովիվ չես այստեղ։
Մեկ էլ տեսնես, ինչպես
Իջնում է մշուշը կապո՛ւյտ-կապո՛ւյտ,
Սարը ծածկում,
Ասես երկինքն իր մով զգեստն է հագցնում
Եղբորը իր կրտսեր
Ու վերևից նայում աստղ-աչքերով,
Թե ինչպես է սազում։
Դու ննջո՞ւմ ես, պապի,
Ախ, արթնացիր, լսիր,
Մեծդոշ սարի լանջին, տաքացող հողի տակ,
Խլրտում են, զարթնում ծիլերն արդեն։
Երբ գարունը հորդի լիածիծաղ,
Մեր հսկային մեծկուրծք այցելենք, հա՞։
- Սարն էլ մի սար լինի,
Քար ու քռա,
Չէ, դու մենակ գնա։
Եվ գնացի մենակ։
Էլ արձակուրդ չունեմ.
Շոգ հուլիսին
Ասֆալտն աչքերիս մեջ ծովակարոտ
Պիտի արտաշնչի դժոխքն իր գաղջ։
Ոչի՛նչ, կդիմանամ։
Ինձ զով կանեն դալար շիվերը այն,
Որ տնկեցի երեկ Մեծդոշ սարի լանջին։
Էլ չես ասի նրան քար ու քռա,
Ուրիշ ոչ մի լեզու այդ չի ասի։

Քո տանն էի քնում, քո խարխլված տանը,
Որի հատակն հողե պահում է դեռ
Բոբիկ ոտնահետքերն իմ մանկության։
Ես այդ զգում էի
Ու ցնծում էր հոգիս,
Ինչքան էլ մարմինս ասում էր տնքոցով,
Որ հարևան տունը և՛ հյուրընկալ, և՛ տաք
Դռները լայն բացած դեռ սպասում է ինձ։
Ցնծությունը հոգու, հասկացա ես,
Բարձր է լինում հաճախ և զորավոր
Ցնծությունից մարմնի։
Մի ողջ ամիս տունդ առաստաղով մրոտ
Խոսեց, խոսեց, խոսեց իմ մանկության մասին։
Լայնացել են ճեղքերը պատերի,
Որոնցով մատները իր սպիտակ
Ներս էր խցկում բուքը
Դեպի թոքերը քո։
Եվ դու հազում էիր։
- Էլի հազո՞ւմ է շատ,
Հարցրին քո մասին։
- Հազում է, բայց շատ քիչ,
Ես ասացի նրանց,
Եվ նրանք ի սրտե ուրախացան.
- Փառք աստծո։
Փառք տվեցին և ինձ,
Որ հիշում եմ իրենց, չեմ մոռանում
Եվ թևքերս քշտած՝ իրենց տղերքի հետ
Ծառ եմ տնկում։
Ես չասացի նրանց,
Որ դու մեր սարերին չես կարոտում։
Չուզեցի քո մասին մտածեին,
Որ ապրել ես գյուղում՝ չսիրելով գյուղը,

Հիմա էլ քաղաքում քաղաքը չես սիրում,
Այլ ջեռուցիչը լոկ
Եվ ծորակը ջրի։
Ներիր, պապի, ներիր,
Որ ես ասում եմ այդ,
Բայց իմ մտքի մեջ եմ ասում միայն,
Դու չես լսում։
Դու ինձ գիժ կկոչես, երբ իմանաս ինչպես
Ես ձայն էի տալիս մեր սարերում,
Ձայնս խլում էին Մեծդոշն ու Թեղ սարը
Եվ սարերը բոլոր՝ թիկնած իրար
Ու սարեսար ուրախ արձագանքում էին։
Զնգում էր սարերում իմ շշուկը անգամ,
Իսկ այս ժխորի մեջ լռում է գոռոցս
Հարյուր մետրի վրա։
Դու չգիտես ինչ է այդ զնգոցը ձայնի,
«Դե զնգոց է, էլի» նա քեզ համար,
Որ պետք կգա կորած ոչխարը փնտրելիս։
Մեծդոշ սարի գլխից
Այնքան ձայն տվեցի, մինչև ձայնս խզվեց
Ու ընկա թուլացած, սակայն հպարտ,
Որ մեր սարը թեև փոքր է Էվերեստից,
Բայց Էվերեստն էլ գա՝
Չի խոնարհի նա իր գլուխը սեգ,
Չէ՞ սերում է ինքն էլ հսկաների ցեղից։
Չեմ հասկանում, պապի, երբ ասում ես մեկ-մեկ՝
Հող ու քար է նա լոկ,
Մարդ հող ու քարի՞ էլ կկարոտի,
Որտեղ ասես հող կա
Եվ քար՝ նույնպես։
Չէ, դու հենց այնպես ես ասում, պապի,
Ախր քո ասածը հասկանալու բան չէ։

Ես նայում եմ ահա կնճիռներիդ խորունկ,
Ինձ թվում է՝ նրանք ձորերն են մեր,
Երկար նայում եմ ես հողանման դեմքիդ,
Ինձ թվում է հակարծ,
Թե դու մի ծվեն ես մեր լեռներից պոկված,
Մի մարդակերպ բեկոր։
Եվ իսկապես,
Նրանցից առել ես միս, ոսկոր,
Չէ՞ որ հաց են տվել արտերը քեզ,
Որ կառչել են ասես մեր սարերից,
Որ վայր չընկնեն։
Կառչիր դու էլ այդպես, չընկնես, պապի,
Ապրիր ինձնից էլ շատ,
Որ միշտ նայեմ դեմքիդ հողանման,
Մեր լեռների կարոտն առնեմ քեզնից։
Բայց դու... չես դիմանում,
Փակում ես աչքերդ,
Նրա համա՞ր արդյոք, որ չտեսնես
Անդունդն ինչքան է խոր...
Փառք աստծո, մահը խնայեց քեզ
Եվ այս անգամ անցավ կողքովդ նա,
Հնար տվեց, որ ես երկար-երկար
Խոսեմ քեզ հետ էլի
Ու հասկանամ մի պարզ, սովորական մի բան.
Մարդը իր ձեռքերին չի կարոտում,
Իր ոտքերին և կամ աչքերին իր,
Դրանք միշտ իրենն են
Ու միշտ իր հետ։
Այդպես սարերը մեր միշտ եղել են քեզ հետ,
Միշտ տեսել ես նրանց,
Չես կորցրել նրանց, որ կարոտես։
Մեր սարերից փչած սառը քամին

Իր մտրակն է զարկել ոսկորներիդ,
Նրանք մրսած են դեռ, չեն տաքացել։
Կարկուտն հարվածել է դաժան հոր պես
Գլխիդ, կրծքիդ, մեջքիդ,
Դեռ թվում է գլխիդ ուռուցքներ կան։
Ոռնացել է բուքը ճանապարհիդ,
Զարկել դեմքիդ՝ խեղդող ձյունափոշով,
Ուզեցել քեզ թաղել,
Ու քեզ մինչև հիմա ծածկոցը ձյան
Թվում է սեփական պատանքդ ցուրտ։
Երազել ես դրախտ,
Չէ, մի տաքուկ անկյուն, որը չես ունեցել,
Որը հիմա ունես։
Երազել ես անվերջ
Ու կարոտել։
Իսկ ես
Մեր սարերը չունեմ հիմա,
Իսկ ես
Մեր սարերը կորցրել եմ։
Ձյուն է գալիս հիմա մեր սարերում,
Սրսուռ, սպիտակ ձյուն,
Ախ, լինեի այնտեղ ու ոտքերով բոբիկ
Վազեի ձյան միջով։
Այդ ժամանակ միայն մեր սարերը բարձրիկ
Իմը կլինեին։
Նրանց գրկում կզգամ, որ շատ հարուստ եմ ես
Եվ աշխարհի անհոգ հարուստների նման
Ինձ կթվա,
Թե չեմ աղքատանա երբեք։
Փորձանոթին հակված՝ մեկ էլ հանկարծ
Մոռանում եմ քիմիան,
Որ խոստանում է ինձ փառք ու անուն։

Ի՞նչ գործ ունեմ այստեղ,
Մեր սարերում հիմա բուքն է ոռնում գուցե
Անդունդներից մինչև գագաթները խրոխտ։
Իմ հոգու մեջ երբեք չի լռելու
Այդ սիմֆոնիան ճերմակ,
Որ մեր սարերն հիմա նվագում են
Եվ նվագեն պիտի ի պատիվ ինձ,
Երբ ինձ տեսնեն հեռվից։
Գնամ հարստանամ։
Բայց քաշում է փեշս անխիղճ քիմիան,
Սպասիր, ասում է, դու սիրում ես ինձ էլ,
Ու ես էլ, գիտես դու, սիրում եմ քեզ։
Չես հասկանա, պապի, եթե բացվեմ հիմա,
Քեզ այդ բոլորն ասեմ.
Ախր շատ ես մրսած,
Դեռ դնում ես ձեռքդ ջեռուցիչի վրա,
Ցրտից նոր տուն բերված մարդու նման
Մրմնջում ես՝ ուխա՛ա՛յ,
Ոսկորներս տաքացան։
Ես չեմ եղել կյանքում սրբերի ցուցակում,
Շատ են իմ մեղքերը, և քավելու համար
Փռում են իմ սերը ոտքերիդ տակ,
Քայլիր, ցնծա,
Թե դու ցնծաս՝ ես էլ կցնծամ, պապ,
Որ աշխարհում
Եթե սուրբ չեմ, գոնե մարդ եմ մի քիչ։
Ախ, դու երկար ապրիր։
Բայց դու ի՞նչ արեցիր, դա անելո՞ւ բան էր,
Ընդհատեցիր իմ այդ զգացումը... մեռար...
Քեզ գնացքով բերել,
Մեքենայով բերել
Ու տանում եմ ահա իմ ուսերի վրա։

Մեծդոշ սարն է կանգնած,
Դու չես նայում նրան,
Բայց նա... նայում է քեզ։
Խառնում եմ քեզ նրան,
Մասնիկն էիր նրա՝ վերադարձիր իրեն։
Ծառ են դարձել կարգին
Այն շիվերն իմ տնկած
Ու խշշում են վրադ։
Նրանք պիտի խշշան և իմ գերեզմանին։
Երբ ես մեռնեմ՝ թող ինձ թաղեն կողքիդ,
Մեծդոշ սարի լանջին
(Եվ դա իմ կտակն է)
Հայացքի տակ նրա ինձ չեմ զգա մենակ
Եվ սարսուռներ կանցնեն
Նրա սրտից իմին։
Իսկ քո սիրտը, պապի, ինչո՞ւ նույնը տենչաց.
Մահվան մահճում պառկած ինձ ասացիր,
Որ քեզ թաղեմ
Մեծդոշ սարի լանջին,
Իմ տաք ձեռքով տնկած մի ծառի տակ։
Գուցե զարթնեց քո մեջ
Վերջին շնչում
Մեր սարերի կարոտն ամենազոր,
Քեզ ձգեցին նրանք։
Ես ինչքան եմ ուզում այդպես լինի,
Չէ, կասկած է միայն,
Թե՝ ուզեցիր լինել ձեռքս վրադ
Քո մահից հետո էլ,
Իմ ձեռքի փոխարեն ծառն իմ ձեռքով տնկած
Պաշտպաներ քեզ
Եվ չթողներ մենակ։

(1987 թ.)

ՄԵՐ ԼԻՃԸ

Ախ, Հովասափ քեռի, զուր մի հիշեցնի,
Չեմ մոռացել բնավ, զգում եմ հիմա էլ
Կոշտ մատներիդ շոյանքն իմ մազերի վրա,
Քո քարե ուսերն եմ իմ ազդրերին զգում...
Ինձ մի հիշեցնի, իմ հուշերի փնջում
Վարդի պես բուրում է առավոտն այն շռայլ,
Երբ ինձ նվիրեցիր կապո՛ւյտ, կապո՛ւյտ տետրեր,
Տետրեր մի տողանի, տետրեր քառակուսի,
Ու ես նայում էի հիացմունքից գինով,
Եվ աչքերս ուրախ շաղվում էին։
Այո՛, ճիշտ ես ասում, չլինեին նրանք,
Գուցե չէի լինի ես այն մարդը հիմա,
Որ եկել է այստեղ երեկ երեկոյան,
Քեզ անծանոթ ինչ-որ չափումներ է անում,
Ուզում է այս դաշտը՝ օրոցքն իր մանկության
Ծածկել պաղ ջրերով մանկուց սիրած գետի։
Դու առաջին մարդն ես, որ գիտես այդ մասին,
Եվ եթե հայացքդ չլիներ պղտորված,
Ինձ հետ կտեսնեիր այստեղ լիճն ապագա՝
Զով շուրթերը վերի արտերին հասցրած։
Քո մտքերի մեջ էլ կյանք-համբույրից նրա
Ուրիշ չորս գյուղերի դաշտեր կծաղկեին,
Քո սիրտն էլ կծփար մեր լճի պես՝ խինդից,
Եթե վեր նայեիր, ոչ թե այսպես ներքև՝
Մեր այս մի բուռ դաշտին...
Դու ուզում ես, որ ես ուր որ հարկն է չասե՞մ
Իմ հղացման մասին, իմ բաղձանքի...
Չէ՛, Հովասափ քեռի, ես երազկոտ եմ շատ,
Մոռացե՞լ ես ինչպես դրվատում էիր ինձ,
Որ երազկոտ եմ ես ու երազիս ճամփին

Քար ու խութերի դեմ ծունկի չեկող։
Դու այն տետրերի հետ, շռայլ այն առավոտ
Եվ այդ խոսքն ինձ տվիր, որ խոսք չէր, այլ պատգամ։
Ի՞նչ, մոռացե՞լ եմ ձեզ...
Դու չե՞ս լսել, գյուղում ինձ անվանում են խենթ,
Գիտե՞ս ինչի համար. ամեն տարի, երբ ես
Գալիս եմ գյուղ, ձեզ մոտ, բլուրն եմ բարձրանում,
Հաշվում եմ շենքերը նորակառույց,
Երևի խենթի պես պարում եմ հաշվելիս,
Երբ բուսնած են լինում նոր տանիքներ ճերմակ,
Ինչպես ճերմակ սունկեր լիության անձրևից։
Մտնում եմ տները, ամեն հեռուստացույց
Խինդի մի ղողանջ է իր երգերից փնջում,
Ուրիշ մի մեղեդի՝ լոկ ինձ հասկանալի՝
«Այս ես եմ,- ասում է,- բայց երեկ չկայի»։
Նշանակում է այդ, որ մեր գյուղն է հասել,
Թեև ուշացումով՝ քսաներորդ դարը,
Մեր գյուղի վրայով արբանյակն է անցել,
Նա, որ ձգում է վեր, տալիս հոգուն թևեր,
Եվ հոգին չի ուզում ապրել առաջվա պես։
Եվ դեռ ասե՞մ, որ ես երեկ երեկոյան,
Երբ գյուղ էի մտնում ճամփի փոշին ոտքիս,
Հենց առաջին տան դուռն անհամբեր բախեցի.
-Հաց ունե՞ք, հա՛ց,- հարցրի,- հերիք կանի՞,-
Նրանք ծիծաղեցին անմիտ հարցիս վրա,
Իրենց մտքում անշուշտ անվանեցին ինձ խենթ։
Իսկ ես երանի թե խենթ լինեի իրոք,
Ես մութ գիշեր էի, քամված էին իմ մեջ
Պապերիս վշտերը և տագնապը անհագ
Վաղվա հացի համար,
Նաև ձեզ վաղուցվա զրկանքները տեսած,
Մի կմախք էի ես՝ դալուկ ու սովահար,

Ի՞նչ հրաշքով իմ մեջ անցյալն էր արթնացել,
Ես քարշ էի տալիս խեղճ ոտքերս հազիվ
Ու քարշ տալով այդպես՝ պատրաստ էի մինչ լույս
Մտնել ամեն մի տուն, հարցնել՝ հաց ունե՞ք, հա՛ց...
Եվ ես ուրացո՛ղ եմ...
Եվ ես փառասե՛ր եմ...
Ախ, սա երազ լիներ, արթնանայի հիմա
Ասածդ մտքիցս թռած լիներ...
Սպասիր, մի գնա, դեռ ինձ լսիր։
...Գնաց։
Դառն արցունքով լիքն էին աչքերը,
Գնաց, որ չտեսնեմ իրեն լալիս։
Հեշտ չէ...
Ե՛ս լինեի Հովասափ քեռու տեղ
Եվ մաքրած լինեի դաշտը խիճ ու քարից,
Անջրդի արտերը ջուր հանած լինեի
Եվ թափած լինեի հողի ամեն շերտին
Քրտինքի մի տաք շիթ, հույսի անմար մի շող
Եվ ես էլ ծլեի ամեն մի ծլի հետ
Կուզենայի՞ դարձյալ, որ մերի տեղ ծաղկեն
Այլ գյուղերի դաշտեր։
Դեռ չգիտի ոչ ոք իմ հղացման մասին,
Ուզենամ՝ կլռեմ, և չի լսի ոչ ոք։
Ո՞վ իմանա, թե երբ կմտածի մեկն էլ՝
Լիճ ստեղծել այստեղ։
Ինչ անողոք է, կյանք, այն բնազդը մարդու,
Որ իր ծառն է ջրում ուրիշ ծառերի մեջ
Եվ ինձ շշնջում է՝ լռե՛լ, լռե՛լ, լռե՛լ...

* * * * * * *

Բայց ես չլռեցի...

Ու տարիներ հետո
Գյուղ եմ գալիս ահա հեռուներից կրկին,
Հովն է փարվում կրծքիս ու մազերս խառնում,
Այդ առաջին անգամ լիճն է ողջունում ինձ՝
Ճամփաս փակած իր ջինջ ալիքներով։
Մեկ էլ... Բայց աչքերիս ինչպե՞ս հավատամ ես,
Գալիս է նավակով իմ Հովասափ քեռին,
Լիճ, ալեկոծվի՛ր դու սրտիս նման։
Սահում է նավակը, մեզ տանում դեպի գյուղ,
Ծփում են ջրերը, ու նրանց պես ցոլուն
Մեր հուշերն են ծփում մի հարազատ շնչից։
Այն կապույտ կողերով տետրակներն ենք հիշում,
Կապույտ՝ այս լճի պես, և սպիտակ նաև,
Երբ ջրերն են քամուց ալեկոծվում,
Հիշում ենք արտերը ջրի տակ մնացած,
Լճի պես նրանք էլ կծփային հիմա,
Եվ Հովասափ քեռին քանի կա աշխարհում
Իր կրծքի տակ պիտի այդ ծփանքը զգա։
Նրանց սիրուց դարձավ այստեղ ձկնորս,
Դժգոհ չէ վաստակից, ոչինչ, ապրում են լավ...
Ես երգում եմ բարձր, որոտում եմ երգով,
Ուզում գրկել լիճը, քեռուն, երկինքը բիլ,
Ախր հրճվանքն այն ծով, որ կյանքում լիճն այս կա,
Նո՛ր է հորդում իմ մեջ...

(1967 թ.)

ԾԱՆՐ ՔԱՅԼԵՐ

1

Ողջույն քեզ, օ՜, դուռ իմ հայրենի տան,
Նորից բացվեցիր դու իմ հանդիման,
Ճռռացիր նորից առաջվա նման,
Երբ դեռ աշխարհում ես մանուկ էի
Եվ քեզ հեծնելով հա քշում էի
Մե՛կ առաջ, մե՛կ հետ։
Ո՛չ մի ճռճանակ, ո՛չ մի ձի աշխետ
Չտվեց հետո հաճույքն այդ անեղծ։
Դա ճռռոց չէր լոկ. ես գիտեմ հիմա
Որ չգիտակցված մի ակորդ էր դա
«Մանկություն» կոչվող մի սիմֆոնիայի։
Եվ գիտեմ նաև, որ և՛ բողոք էր
Իմ ծանրության դեմ ձայնով ճռճռան։
Հիմա ես էլ եմ քեզ պես ճռճռում
Իմ սրտից կախված վշտի բեռան տակ։
Դեռ մնում են, կան տառերն իմ անվան,
Որ ես քո վրա փորագրեցի,
Օ՜, այն ժամանակ ես չխորհեցի,
Որ դու ցավ կզգաս շփումից մեխի։
Իսկ հիմա, գիտե՞ս, իմ սրտի վրա
Փորագրել է մեկն իր անունը,
Բայց այնպես խորունկ, որ արյունոտվել,
Տնքում է ցավից սիրտս կարեվեր։
Տնքում է սիրտս և ամեն տնքոց
Կրկնումն է լոկ նրա անունի։
Փայտե մաշված դուռ իմ հայրենի տան,
Բացվեցիր իմ դեմ մոր գրկի նման,
Իմ առաջ այնքա՜ն դռներ փակվեցին,

Ահա եկել եմ ու կանգնել քո դեմ...
Բայց կոպերիս տակ, այնպես պարզ, հստակ,
Մայթերն են ձգվում հեռու քաղաքի,
Տրամվայներն են զնգոցով անցնում,
Նազում են սիրուն աղջիկներ, կանայք
Շուրթերին կարմիր, անբոց կրակներ,
Որոնք գնված են ինչ-որ խանութում,
Բայց բնականից պակաս չեն այրում։
Այրվում եմ ես էլ. մեկը նրանցից
Երևի ուզեց դառնամ ողջակեզ,
Կարմիր շուրթերից, էն հրդեհներից
Ժպիտի մի կայծ իմ սիրտը գցեց,
Սիրտս բռնկվեց։ Ու հետո, հետո...
Բայց ինչո՞ւ պատմեմ բոլորը հերթով։
Ա՜խ, ճռճռան դուռ իմ հայրենի տան,
Եկել եմ ես քեզ իմ խոցված սրտով,
Որ էլ չհիշեմ, մոռանամ նրան,
Մանկանամ նորից, ճռճվեմ քեզնից կախ։
Դե շարժվենք այսպես, բայց ես ծանր եմ, ա՜խ,
Այն թեթև տղան էլ չկա, չկա...

2

Ձեր գիրկը բացեք հայրենի լեռներ,
Այստեղ դեռ շրջող լույս մանկությունս,
Այս վայրերի հետ մտերմությունս
Պետք է որ բերեն քաղցր մոռացում։
Ա՜յ, հիմա կանգնեմ այս ժեռ քարափին,
Թևերս նորից բացուխուփ կանեմ,
Կարծվանամ կրկին,
Ինչպես մանկության ճախրող օրերին։

Բայց չեմ բարձրանում քարափի վրա,
Ախր մեր գյուղից երևում է նա,
Մարդիկ կտեսնեն ու կծիծաղեն,
Սիրուց գժվել է խեղճ տղան, կասեն։
Նորից քշվում եմ, գլորվում առաջ...
Տոթ է ու փոշի քաղաքում հիմա։
Տեսնես այս պահին ի՞նչ է անում *նա*,
Երևի տանն է կամ զբոսայգում,
Կամ գնացել է... *նրա* հետ... անտառ։
- Ինչո՞ւ տխուր ես,- հարցնում է տղան,
Եվ նա սթափված ժպտում է նազով.
- Տխուր չեմ, սիրտս է մի քիչ անհանգիստ,
Մեկին մերժեցի, չլինի՞ հանկարծ
Մի փորձանք բերի իր գլխին հոգնած։
Ասա, սիրո՞ւմ ես դու ինձ նրա պես։
- Շատ խորն եմ սիրում, նրանից էլ խոր։
Բայց սուտ է ասում, հաստատ գիտեմ ես,
Որ անհնար է ինձնից խոր սիրել
Եվ մինչև հիմա գժված չլինել
Կամ արդեն մեռած։
Հաչում է մի շուն դիմացի հովտում,
Զանձրույթի՞ց արդյոք, որ գայլեր չկան,
Թե՞ սիրո կարոտն այրվում է սրտում
Ու չի դիմանում խեղճ շունը դրան։
Ահա հովիվն էլ։ Չսիրեց նրան
Բարալիկ աղջիկն իր հարևանի։
Երջանիկ տղա, չի սիրում ինքն էլ՝
Տեսնես ինչպե՞ս է այդ կարողացել։
Ա՛խ, ինչո՞ւ իջա ես մեր լեռներից,
Լինեի այնտեղ մի հովիվ ես էլ,
Երբ տուն դառնայի իրիկնամուտին՝
Կսպասեր կինս իմ վերադարձին,

Կժպտար մեղմիկ ու ինձ կպարզեր
Թերթի թարմ համարն ու կասեր՝ կարդա՛։
Բայց հազիվ բացած՝ սիրտս թև կառներ,
Հրճվանքից արցունք կերևար աչքիս,
Երբ որ տեսնեի նկարս թերթում,
Շուրջս իմ հոտը, և շունս՝ կողքիս։
Հուզմունքս զսպած՝ տուն կմտնեի,
Ուր թանով ապուրն ինձ էր սպասում
Եվ ախորժակով աշխատող մարդու
Կուտեի ու փառք կտայի հացին,
Քնելուց առաջ կմտածեի,
Որ անօգուտ է մեր գետը հոսում,
Պետք է ճար գտնել լծելու նրան։
Իսկ հիմա, ավա՜ղ, այս գետի նման
Իզուր հոսում են ջահել օրերս...
Մեր լեռներում էլ դժոխքն ինձ հետ է,
Թվում էր, թե կար մի դուռ դուրս գալու,
Բայց սուտ էր այն էլ...
Օ՜, Հայնրիխ Հայնե,
Այս անդունդն ի վար կախած ոտքերս՝
Ես կարդում էի սիրո երգերդ...
Ի՞նչ իմանայի, որ կգամ նորից
Քո լացին իմը խառնելու այստեղ։
Դու այն ժամանակ ինձ ասում էիր,
Որ սիրտն էլ ունի ատամնացավն իր,
Հիմա սեփական փորձով գիտեմ այդ,
Ցավում է, ցավում սիրտս անընդհատ։
Դու, Հայնրիխ Հայնե, ցավը քո սրտում
Միշտ ծաղրում էիր, մահացու խայթում
Ծուռը և թերին,
Իսկ ես չեմ ծաղրում, այդքան ուժ չունեմ,
Բայց եթե փորձեմ՝ ինձ պիտի ծաղրեմ,

Որ այսպես անզոր նվում եմ ահա,
Դու ասա, Հայնե, ես ի՞նչ եմ ախր,
Իր արարքները գիտակցող լուսնո՞տ,
Տերև՞ ցեխի մեջ, կամքից զուրկ ստվե՞ր...
Դո՛ւ ծաղրիր ինձ, դո՛ւ,
Ավա՛ղ, ուժ չունեմ ես ինձ ծաղրելու,
Ինքս ինձ համար իմ մեջ հերքելու,
Որ կնոջ սերն է այս կյանքի հիմքը,
Միակ արևը,
Եվ մեղք չէ լինել արևածաղիկ
Ու միշտ դեպի նա թեքել գլխիկը։
Այս քանի՛ օր է խորհում եմ, թախծում,
Ու՞մ ինչ իմ թախիծն ու իմ խոհերը,
Այս գետի թքած փրփուրն իսկ չարժեն,
Երբ չի իմանում անգամ իմ սերը։
Եվ չնչին եմ ես փրփուրի նման,
Երբ նա չի հաշվում, որ մի բան արժեմ։
Նա ի՛նչ հեշտությամբ ինձ կհամոզեր,
Որ պետք է ապրել։
Այդպես մի նայիր, օ՛, Հայնրիխ Հայնե,
Չէ՞ որ այդ դու ես ինձ ուսուցանել,
Որ պետք է ցավող ատամը հանել։
Ներքևում գետի արծաթն է հոսում
Այնքան խոր՝ պեծին է տալիս
Ինչպես ջրհորում։
Այս բարձրից ընկնես՝ փրկություն չկա,
Հազար կյանք լինես, մեկն էլ չի մնա,
Որ շարունակի իր ողբը անհույս։
Իմ մեջ պիտի ծաղկեր ինչ-որ վառ գարուն,
Խլրտումն էի զգում ես նրա,
Բայց սիրո արցունքն անձրև չէ, ավա՛ղ,
Հալած արճիճի ծանրությամբ իջավ,

Ջարդեց վարդերս ու թոշնեցրեց։
Մեծ պիտի լիներ իմ կյանքը գուցե,
Բայց լոկ մորմոքս եղավ այսպես մեծ,
Եվ սիրտս կքեց,
Քայլս ծանրացավ՝ փղի քայլի պես...
Եկա ես այստեղ, չէ՞, որ փղերը,
Երբ որ զգում են իրենց մեռնելը
Գնում են հեռու մի սարի հետև,
Անդունդն են ընտրում կամ խորքը ջրի,
Որ դիակն իրենց ոչ ոք չտեսնի։
Ահա իմ անդունդն անհագուրդ ու սև...

* * * * * * *

Բայց կաց, փայտահատ,
Իմ ծառը գուցե դեռ չի չորացել,
Կսպասեմ ես դեռ, գուցե ծիլ կտա,
Կսպասեմ մեկ օր, երկու, երեք, չորս,
Եվ եթե նորից մեռնել կամենամ,
Մեռնելուց հեշտ բա՞ն,
Մի եղնգաչափ ապակի միայն
Եվ փղի չափ էլ արյուն ունենամ՝
Կես ժամ էլ չանցած կաթիլ չի մնա։
Դեռ կաց, փայտահատ, կացինդ հետ տար։
Արևոտ անձրև շողաց ու անցավ,
Սարից սար կապեց շքեղ ծիածան,
Այն հովիվ տղան երգեց լիաձայն
Գովքը նոր սիրո և ծիածանի։
Մոտեցավ նրան նոր սերն էլ ահա՝
Կապույտ շորերով մի գեղջուկ փերի,
Երգեցին մեկտեղ՝ տված ձայն-ձայնի

Նոր սիրո մասին և ծիածանի։
Նրանց սրտերին,
Ո՞վ գիտի՝ ի՛նչ էր ծիածանն ասում
Բայց ինձ ասում էր.
«Ես այս լեռներին այնպես սազում եմ,
Ափսո՛ս, քիչ հետո էլ չեմ շողա ես,
Շատ նուրբ եմ ախր, ճառագայթի՛ պես,
Իմ ծնված պահից մինչ պահը մահվան
Մի քանի ուրախ վայրկյան է միայն,
Ահա մեռնում եմ, բայց դու չտխրես,
Իմ քույրիկները ննջում են հիմա
Ջրի կաթիլում ու շողերի մեջ,
Կուղարկեմ շուտով նրանցից մեկին՝
Ինձ պես յոթներանգ, ինձ պես ջինջ ու պերճ»։
Եվ իմ ականջին ես ամուր բռնած,
Ինձ հետ եմ քաշում անդունդի եզրից։
Ի՛նչ լավ էր. չէ՞ որ երբ տուն հասա ես,
Մի կյանք նամակ էր եկել նրանից.
«Չանե՛ս, գիժ, չանե՛ս, ախր հասկացիր
Այդ բախտն էր չուցեց, որ քայլեմ կողքիդ,
Ո՛ւշ հանդիպեցիր»։
Ու կանգնեց իմ դեմ նա գորովալից,
Տեսնում եմ ահա իմ հեռու-հեռվից
Ինչպես են դողում շուրթերը նրա։
- Ինչո՞ւ ես հուզված,- հարցնում է տղան,
Բայց նա այս անգամ մի պատասխանում,
Որ մեկին մերժեց, չլինի՞ հանկարծ,
Մի փորձանք բերի իր գլխին հոգնած։
Փորձանք չեմ բերի, բայց ինչ որ եղավ
Մի՞թե փորձանք չէր իմ գլխին եկած։
Ես ո՛ւր եմ գնում՝ իմ ճամփան թեքած,
Ախ, ինչքա՛ն գործեր թողած անկատար՝

Լոկ հառաչում եմ,
Մեկ էլ այն անում, որ մեր դռանը
Իմ անվան կողքին փորագրում եմ
Ահա նրանը։

(1988 թ.)

ԽԱՂԱՂ ԱՌԱՎՈՏ

1

Արևն էլի ելավ ձորերն ի վեր,
Սարերն ի վեր ելավ իմ անկողնու,
Ելավ ու խճճվեց մացառներում կրծքիս,
Հետո ճամփա գտավ, ելավ իմ դեմքն ի վեր,
Երբ շուրթերիս հասավ՝ համբուրվեցինք մենք տաք,
Հետո փակ կոպերս նա համբուրեց,
Եվ բացեցի մեղմիվ աչքերս ես
Ու ասացի՝ ողջույն, սեր իմ, արև:
Ես իջնում եմ նորից Բաղրամյանով ներքև,
Ես գնում եմ գործի, սեր արևս՝ նույնպես,
Նրա գործը վերև բարձրանալն է անհոգ,
Ջերմություն ու լույս տալն ամեն շնչավորի,
Ինձ, քեզ, նրան այնպես համբուրելը
Եվ ծիծաղելն հետո արևավարի:
Ես գնում եմ գործի տասնմեկ համարով՝
Ասել է թե՝ ոտքով:
Կոխկռտում եմ փեշերն իմ սեր-արեգակի,
Որ փռվել են նորից սև ասֆալտին:
Ինձ հետ փողոցն ի վար գլորվում է երգը,
Չէ, ես չեմ երգողը, այլ արեգակն՝ ինքը,
Եվ երգում է ձեռքիս ռադիոընդունիչից,
Թե՞ երգն այնքան է լավ, որ ինձ թվում է, թե
Արեգակն է երգում:
Եվ ես ու երգն այսպես գլորվում ենք ներքև,
Ես գնում եմ գործի, երգը՝ նույնպես,
Նրա գործը սրտեր հուզելն է խոր
Եվ մնալը սրտում, որ սիրտը չմրսի:
Այդ նույն բանը կյանքում վիճակված է և ինձ,

Իմ գործն է, որ ես լավ երգերը ընտրեմ,
Լավ մտքերը նույնպես ու հասցնեմ մարդկանց,
Մոխիրների միջից կրակներ ջոկջկեմ,
Որ տաք լինի բացվող առավոտը
Նաև հոգու համար:
Երբ տեղ հասնեմ՝ իսկույն չեմ բացի թղթերը,
Նախ կլսեմ լուրեր սպորտային,
Խմբագիրս կգա, կկախի հոնքերը,
Թե՝ իմ ներկայությամբ անգործ նստած ես դու,
Իսկ ես կասեմ նրան՝ լսեցի՞ք, չէ՞,
Այսինչ շախմատիստը, իմ սիրելի հաղթեց:
Կիջնեն նրա հոնքերն ավելի վար,
Եվ ես դրանք վերև բարձրացնելու համար
Կբացեմ թղթերը,
Կառնեմ գրիչս ու կսկսվի առօրյան:
Բայց դեռ շատ կա մինչև հոնքերին հասնելը
Անխոնջ խմբագրիս,
Ես թեքում եմ ճամփաս դեպի կարապի լիճ,
Ինձ հետ երգն է գալիս և արևը իմ սեր,
Երգը վեր է թևում, իսկ արևը հանկարծ
Իրեն նետում է ցած՝ ջրերի մեջ,
Արդեն շոգե՞լ ես դու, իմ շիկավարս:
Ավարտվում է երգը: Սկսվում է հետո
Ինչ-որ ոտանավոր խաղաղության մասին,
Շատ եմ լսել տողեր ես այսպիսի
Եվ ուզում եմ փոխել ալիքն ընդունիչիս,
Բայց տողերը հանկարծ… բան են ասում:
Որոտում են նրանք ականջիս մեջ:
Թե դու այսպես անհոգ նստած ես լճափին,
Բայց այս պահին գուցե ռումբեր պայթեն
Եվ քո կյանքը շեղեն միանգամից
Կամ թե հատեն:

Պայթում է իմ գլխում ռումբն ատոմային,
Վաղը ողջ աշխարհում կպայթի նա այդպես,
Թե ո՞ր բեմից պիտի Համլետը հանճարեղ
«Լինել-չլինելը» բարբառի տենդահար,
Երբ լինելն, արդեն փաստ է ահեղ,
Նույնիսկ սգո մոցարտյան տխրությամբ
Չի հնչելու վերջին, վերջին անգամ.
Թեկուզ ապրող լինի ի՞նչ սիրտ պիտ ունենա
Երկարելու ձեռքը պաղ ջութակին,
Եվ ո՞վ ուժ կունենա մեկին թաղել,
Երբ ինքն էլ նման է մեռած-թաղածի:
Եվ «Երգերի գիրքը» լոկ քամին կթերթի
Սպառնալով իր սառն, մատներով իր հողոտ…
Իմ մասին չեմ ասում, իմ երգերի գրքի,
Արև, այդպես խեթ-խեթ մի նայիր ինձ,
Ախ, երբ Հայնեն անգամ դառնալու է փոշի,
Ես ի՞նչ, սովոր եմ ես անհայտության…
Դառնալու է փոշի և այս մանուկն անուշ,
Որ խաղում է ահա դեմի նստարանին:
Հեյ, անծանոթ մանկիկ, մոտ եկ, նստիր կողքիս,
Թույլ տուր շոյեմ այսպես մազերդ չսանրած,
Չգիտես դու, ափսոս, չգիտես, չգիտես,
Որ դու ես աշխարհում երջանիկն ամենից,
Երբ իմանաս՝ արդեն այն երջանիկը չես,
Ինչ որ ունես հիմա՝ կորցրած կլինես՝
Մանկությունդ անգետ:
Եվ կհասնես մի օր իմ տարիքին,
Թե չմարի լուցկիդ պատերազմի քամին,
Մտքերիս մեջ ունեմ ես դեռ այնքան կորով,
Որ կարող եմ ելնել սարերը հևալով,
Բայց վաղը ոտքերս կփոխեմ հազիվհազ,
Վախենալով փոսը գլորվելուց:

Դու մի ժպտա մանկիկ, Դավիթ լինես թեկուզ՝
Պիտի կուչ գաս ինձ պես մահվան առջև:
Քո աչքերի լույսը պիտի քիչ-քիչ խամրի,
Եվ ամեն օր պիտի մի իր տեսնես պակաս.
Նախ շատ հեռվում, հետո մոտիկում նաև,
Նշանակում է այդ՝ մահն է մոտենում քեզ
Եվ իրենով ծածկում քեզնից աշխարհը այս:
Սակայն թույլ չեն տա քեզ, որ ծերանաս,
Մի աշխարհ ես եկել, ուր չի եղել մի օր
Մարդը մարդ չսպանի:
Հավատն ապաքինման, հույսը մաքրվելու
Պղպջակներ են լոկ այն հսկա լվացքի,
Որ անում է դարեր ինքն՝ արարիչ-աստված,
Ուզում մաքրել, հանց շոր, աշխարհը կեղտոտված,
Չի հաջողվում սակայն, պատռվում են միայն…

2

Բայց և գեղեցիկ է աշխարհն ինչքան…
Մի պատառը ահա փռված իմ դեմ՝
Այս կարապի լիճը,
Հեռվում Մասիսները՝ երկու կապույտ տաճար,
Շենքերի բացվածքից կանչում են ինձ,
Հորիզոնից վերև ճերմակ ամպեր՝
Ընկած այստեղ-այնտեղ:
Կարկաչում է մեղմիկ մի ձայն եթերային,
Ոչ, այդ արտույտը չէ, փերիներ են շքեղ,
Մտել երկնքի ծովը՝ լողանում են զվարթ:
Ես չեմ տեսնում նրանց, սուզվել են խոր,
Ափին թողած իրենց շորերը սպիտակ,
Խաղ է անում քամին շորերի հետ ամպե,
Մերթ փոխս զցում ու մերթ քշում հեռու,

Իր խենթությամբ արբած՝ սպասում անհամբեր,
Թե դուրս գան փերիները, ի՞նչ են անելու:
Գուցե հիմա մարդիկ ուրիշ մոլորակից
Զմայլված նայում են չքնաղներին
Եվ փորձում են որսալ, ինչպես մեր հեքիաթում
Ջրահարս է բռնում սեգ պատանին:
Բռնվել է ահա այն անզգույշ փերին…
- Ի՞նչ փերիներ, մեր ջինջ աղջիկներն են դրանք,-
Լսում եմ ես մի ձայն ղողանջի պես,
Հետո մի այր՝ շքեղորեն շողում,
Ցոլցլում է իմ դեմ,
Որտեղի՞ց նա եկավ, ո՞ր անկյունից արդյոք
Այս մեր անեզերական տիեզերքի:
- Ուղեկցիր ինձ, ով մարդ, ձեր անծանոթ երկրում:
Ու քայլում ենք: Հյուրն իմ մերթ գլուխն է հակում
Գեղածիծաղ ծաղկանց ու ծիլերին ծփուն,
Մերթ ամպերին՝ բացված կնգուղի պես գանգուր,
Իր մազերի փայլն է շուշաններին ընկնում,
Իրերն են փայլում, ինչպես արեգակից:
Այնպես մաքուր է նա, այնպես քնքույշ,
Որ վախենում եմ ես հանկարծ վատ բան տեսնի
Եվ լեռներն եմ տանում, կատարները անբիծ:
- Մեր աշխարհում էլ կան լեռներ այնպես կապույտ,
Ավազից են սակայն, փուլ են գալիս շուտ-շուտ:
Մենք մեր հեքիաթներում երազել ենք դարեր
Ճիշտ այսպիսի լեռներ, ամուր, ամուր:
Կյանքից հեքիաթ ընկնես, օ՜, ինչ երանություն,
Չեմ ափսոսա, եթե մահանամ ես այստեղ:
Մինչ զմայլված, տարված նա լեռներն է դիտում,
Մի դիակ եմ տեսնում թփերի տակ նեխված,
Շուրթերի արանքում իբրև ծաղր ու ծանակ
Սպանողի ձեռքով գլանակ է դրված:

- Գնանք, ով լույս, շատ կան ուրիշ չքնաղ վայրեր:
Ու գնում ենք նորից, նա կարծես թև առած,
Իսկ ես՝ իմ տեսածից ամոթահար:
Ահա գետը՝ կապույտ վետվետումով այլոց:
- Առատ է ձեր ջուրը և կանաչն է առատ:
Մեր ջուրն այնքան է քիչ, որ հսկում ենք հատուկ
Մեր արևից դեղին, երբեք մայր չմտնող,
Տարին լոկ մի անգամ իբրև շռայլություն
Թույլ ենք տալիս փոքրիկ մի ամպ առաջանա,
Որ հիանան մի պահ գեղեցկությամբ նրա:
Իսկ ձեզ մոտ, օ, ինչքա՜ն, ինչքա՜ն ամպեր,
Մերթ դիզվում են ծալ-ծալ, մերթ թափանցիկ դառնում:
Լսում եմ ես նրան, ասում իմ մեջ, սակայն,
Որ ծալքերում նրանց կան բիրտ շանթեր,
Պետք չէ, թող չիմանա օտար մոլորակցին,
Մրմնջում եմ միայն, որ մեր հեքիաթի մեջ
Հասնում էինք նրանց, այդ ամպերին
Լոկ թևերով արծվի,
Հիմա ամեն մանուկ, ինքն էլ թույլ,
Կարող է վեր ճախրել ինքնաթիռում նստած
Եվ վերևից նայել ամպերին ծալ-ծալ,
Որ կթվան նրան բամբակի արտ
Կամ փրփուր՝ լվացքի տաշտում իր մոր:
Օձն է դանդաղ սողում գետի ափին,
Մինչ ես լռում էի շանթի մասին,
Նա շանթաձև, ասես ներքև ընկած ամպից,
Ֆշշալով անցնում է մեր առջևից:
- Վա՛յ, գետ լինի ասես փոքրացած,
Ես կտանեմ սրան ինձ հետ վերև:
- Չբռնես դու դրան, իր ճամփան գնա թող:
Տես, քարայծը, վազենք ետևից նրա:
Թաքցրեցի դարձյալ ստերը բնության,

Իսկ մարդունը ինչպե՞ս թաքցնես,
Ալ կակաչներ՝ ասես կայծեր խոտերի մեջ,
Թիթեռներ, զեփյուռից քշվող ծաղկաթերթեր,
Մամռակալած քարեր, առվակներ մանր, լիք,
Ետ են փախչում անվերջ ոտքի տակ,
Ես հոգնել եմ արդեն վազքից մարաթոնյան,
Թոքերս թիթեռի թևիկների նման
Բացուխուփ են լինում արագ-արագ,
Ա՞յս էլ պիտ թաքցնեմ, սակայն հանուն ինչի՞,
Բավական է կեղծեմ, ախր ե՞րբ է շահել,
Մեր այս մոլորակը կեղծիքից մարդկային…
- Հարուստ եք դուք ինչքան, գեղգեղում է հյուրս,
Քարայծի վազք սիրուն, ամպեր, ջրեր, գույներ…
- Էհ, բարեկամ, ավաղ, մարդը դրանք չուներ
Դեռ այն տարիներին անհիշելի,
Երբ զույգ ոտքերի վրա կանգնել էր սովորում
Ու չունեցավ երբեք:
Լոկ այն է համարում հարստություն,
Ինչ կարող է հագնել, ուտել, ծախել…
Ես սիրում եմ, սակայն, ամբողջ սրտով՝ մարդուն,
Բերկրանք է իր սերը, և մերժումը՝ կսկիծ,
Իր թռիչքը՝ հավատ, և անկումը՝ խոր վերք…
Հանկարծ սարը թնդաց և քարայծն ընկավ ցած,
Հանգիստ արածում էր ժայռի վրա,
Հիմա էլ չի զգում, հիմա էլ նա չկա,
Իսկ ես կամ, զգում եմ կյանքը նրա անցած
Եվ իմ կյանքն եմ զգում, այս ժայռը, աշխարհը,
Բայց ամպերը հիմա ինձ չեն թվում
Փերիների շորեր՝ ափին հանած անփույթ,
Այլ շանթերի կապարճ, սև, արնաբույր,
Իմն էին քիչ առաջ ամպ, ժայռ, արև, լուսին,
Եվ մի կրակոցով բոլորը խլեցին,

Ահա և խլողը՝ մի կողաձև որսկան,
Դեպի որսն է վազում՝ հրացանը ուսին:
- Հիվանդ է այս մարդը, զենք է կրակում, նայիր,
Մեզ մոտ նույնպես տարին մեկ-երկու մարդ
Բռնվում են այդ վատ հիվանդությամբ,
Մենք տանում ենք նրանց հիվանդանոց
Եվ բուժում ենք մինչև առողջանան:
- Ախ, բարեկամ, այլ է Երկիր մոլորակում,
Այնքան հիվանդներ կան, որի՞ն բուժես,
Ամբողջ պետությունները, ինչքան ուզես
Այդ սև հիվանդությունն է ճարակում:
Դուք եք հարուստը, դուք, երանի ձեզ…
Ասում եմ ես այդպես օտար մոլորակցուն,
Ամոթանքն է հանկարծ սիրտս կրծում,
Ի՞նչ արեցի, ախր, ես վատ, ես դավաճան,
Ի՞նչ կկարծեն այնտեղ մեր աշխարհի մասին:
Բացում եմ աչքերս ու խաղաղված ժպտում,
Կողքիս լոկ մանուկն է՝ չսանրած մազերով:
Ողջը հորինվածք էր բանաստեղծի,
Մտքի մեջ թել առ թել հյուսվող սյուժե:

3

Ավարտվել են արդեն
Ինձ հուզող տողերը խաղաղության մասին,
Նորից երգն է հնչում ռադիոընդունիչից,
Ես քայլում եմ իմ նոր խոհերի հետ,
Շուրջս ծիծաղում է առավոտը խաղաղ
Եվ գնում եմ գործի առավոտի միջով՝
Հիմա լցված անհուն մի բերկրանքով,
Որ մեր մոլորակը գեղեցիկ է այնքան,
Լցված նաև ուժով, որ նետվում է ի մարտ,

Որ ոչ մի բիրտ եղունգ
Բիծ չթողնի դեմքին այս ջինջ առավոտի:

ԱՐԵՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ

«Առավոտ լուսո, արեգակն արդար»...
Մեներգում էի ու ամբողջ գիշեր քեզ տենչում, արև՛,
Զայնակցում էին երգչախումբ-լեռներն ինձ հովով իրենց,
Ես ծանոթ չէի հովերին այս նոր,
Իմ ծանոթ հովերն այստեղից վաղուց գնացել էին,
Բայց հարազատի սրտաբացությամբ ես երգում էի
Եվ հիշում էի, որ անցյալ տարի
Երգն այս՝ մի ալիք՝ ես խառնում էի ծովի շառաչին։
Մեր տղերքն էլի ծովափ գնացին,
Բայց ես երամից շեղված մի կռունկ՝ լեռներն այս եկա
Եվ լեռների հետ քեզ սպասեցի,
Ինչպես օրերին այն լուսազվարթ իմ պատանության։
Եվ դու ծագեցիր ահա, լուսահորդ,
Եվ ես ձեռքերս դեպի քեզ պարզած՝ աղաղակեցի.
-Ե՛կ, գրկվենք, արև...
Բայց քեզ չհասան իմ ձեռքերը կարճ,
Այդ ոչի՛նչ, արև, չէ՞ որ քո հեռվից դու հասնում ես ինձ,
Քո շող-մատները խճճում նորից իմ մազերի մեջ
Ու պատանորեն զվարթ ծիծաղում առաջվա նման։
Քանի՛ տարի է այն օրից անցել,
Բայց ինձ թվում է՝ դեռ երեկ էր այդ,
Որ տրակտորս առաջին անգամ
Պիտի շորորար հարթ դաշտից հետո այս թեք լանջերին,
Ինչպես պատանին, որ պիտի անցնի անդունդի եզրով
Եվ իբրև պարգև իր հաղթանակի
Սիրած աղջկա շրթների նուռը իր սիրտը քամի։
Ես էլ, արեգակ, մի սիրահարված պատանի էի,
Դու լցվել էիր երակներիս մեջ,
Հարբեցրել ինձ արբունքի գինով։
Կինը հրաշք էր,

Կինը դու էիր ու ինձ թվում էր՝ քե՛զ պիտի գրկեմ,
Եվ ես անհամբեր սպասում էի նրա ծագելուն,
Ինձ առավոտյան հաց պիտի բերեր՝ իր բույրը վրան,
Եռում էր արյունն իմ երակներում,
Ինչպես եռում ես դու ինքդ քո մեջ։
Օ՜, ես ունեի միլիոն աստիճան տաքություն քեզ պես,
Հապա փորձեիր չափել այն պահին բռնկումներս,
Հրճվանքս ապրելու, որ նույն ինքդ էիր
Իմ արյան մեջ էլ ուրախ ճառագած։
Նա հաց բերեց ինձ և մնաց երկար։
Քամին քանդել էր մազերը նրա,
Որ բոցեր էին ու վառում էին դեմքիս կպչելիս։
Այդ քիչ էր կարծես՝ քամին իմ կամքը փորձելու համար
Բացեց և կուրծքը նրա սպիտակ,
Հայացքս շաղվեց ճերմակ ցոլանքից,
Էլ չդիմացա,
Գրկեցի նրան ու շշնջացի հարբածի խոսքեր։
Երևի շատ էր իմ շշուկը տաք և կամ գեղեցիկ,
Որ նա թույլ տվեց իմ բազուկները անպարկեշտ լինեն։
Բայց հետո, հետո ես համոզվեցի,
Որ ոչինչ էին իմ շշուկները տաք ու գեղեցիկ,
Նրան էլ, արև՛, սիրտ էիր տվել, մարմին՝ իմի պես,
Քեզանով լցրել, քո հրայրքներով
Ու ներսից տաք-տաք շշնջում էիր խոսքեր պղտորող,
Եվ նա լսեց քեզ։
Ասես կրակ էր մարմինը նրա,
Ասես թե քեզ էր գրկեցի, արև՛, առաջին անգամ
Եվ իմ շուրթերը վառեցի երկար
Քո ստինքների ճերմակ բոցերում...
Հրաշք էր իրոք և չկրկնվեց հրաշքի պես էլ,
Նա... մեռավ, արև՛։
Չգիտեմ ինչպե՞ս ես չխենթացա,

Եվ ինչպե՞ս նորից արյունն իմ եռաց երակներիս մեջ,
Ու վարարեցիր նրանց մեջ նորից դու բերնեբերան։
Բայց գուցե իրոք ես խենթանայի,
Եթե ինձ ցավը չմղեր ուրիշ, օտար մի եզերք.
Քաղաքում, թեքված գրքերի վրա,
Ես հաճախ էի մտքով այցելում մեր դաշտ ու սարին,
Նրա շիրիմն էր ինձ իրեն ձգում կարոտի նման,
Սեղանիս դրված մի պատառ հացը ճեղքվում էր իմ դեմ,
Ու տեսնում էի ես ճեղքի միջից իմ տրակտորը,
Ուրիշն էր նստած ղեկի մոտ նրա,
Ուրիշն էր հողից քամում հողաբույր ու սպիտակ հաց,
Ուղարկում քաղաք, բոլորին և ինձ։
Ես տեսնում էի ոչխարի հոտեր,
Երբ նայում էի շորերիս բրդե,
Ծաղիկներ էի տեսնում և խոտեր իմ հայացքի դեմ,
Որ կովի կրծքում կաթ էին դառնում և ազդրերին՝ միս։
Այդ ժամանակ էր, որ հին հույները ինձ շշնջացին,
Որ որդին եմ քո, ո՛վ կրակ անմար,
Եվ որդին հողի, օդի և ջրի,
Հողը առանց քեզ և առանց ջրի և առանց օդի
Ինձ բույսեր չի տա, և ես չեմ ապրի։
Դուք եք ծնել ինձ ու դուք եք սնում,
Առանց քեզ մթնում ես կխարխափեմ՝ նաև հոգով կույր,
Եվ առանց հողի ես չեմ ունենա կյանքում հենարան,
Եվ առանց ջրի կխեղդվեմ տապից,
Եվ առանց օդի կդառնամ հատնող ինչ-որ բազմակետ։
Ես որդին եմ ձեր, ապրում եմ ձեզնով,
Իսկ նա... չի ապրում։
Վաղ գնաց կյանքից՝ խինդն իմացության դեռ չճաշակած։
Նա մի աղջիկ էր կապույտ աչքերով,
Թեև չգիտեր, որ երազն ունի գույնն իր աչքերի,
Բայց այնքան, այնքան երազներ ուներ։

Ուներ սև մազեր, որ սև բոցի պես այրել գիտեին,
Մի սրնգաթով, զուլալ ձայն ուներ,
Որ թափանցում էր սրտի խորքերը, մնում ծալքերում։
Գուցե դեռ պիտի այդ ձայնն աշխարհի բեմերից հնչեր,
Սակայն առայժմ նա սովորում էր կովն ինչպես կթել
Ու... չսովորեց։
Նա մահից առաջ նայեց քեզ երկար,
Դու նրա աչքից կաթեցիր ինչպես ցոլուն մի արցունք
Ու վերջին անգամ խաճեց նա քեզ թարթիչների մեջ.
-Ա՜խ, ի՜նչ արև է, բայց ես հողի տակ չեմ տեսնի նրան...
Դո՛ւ եղար, արև՛, նրա կարոտը ամենավերջին
Ու ինձ թվում է, թե նա չմեռավ, այլ քեզ միացավ,
Իր սիրո պայծառ շողերն է նորից իմ շուրջը փռում,
Աշխարհի վրա, ո՜ղջ տիեզերքում։
Եվ սիրելի ես դու ինձ կրկնակի։
Նայում եմ ես քեզ, խորհում եմ՝ ինքս էլ չգիտեմ ինչու,
Որ զոհ չեմ գնա ոչ մի փորձանքի,
Ոչ էլ գնդակից կընկնեմ կռվի մեջ,
Այլ այսպես քիչ-քիչ ես կծերանամ՝
Միշտ մտածելով, որ դուրս ես գալիս իմ միջից քիչ-քիչ։
Իմ կյանքը դու ես և այս տերևի կյանքն ես բովանդակ,
Որ սոսափում է այս ծառի վրա խինդն իր գոյության,
Դու նրա մեջ էլ շռայլորեն կաս ու կանաչ է նա,
Սակայն երբ դուրս գաս՝ աշուն կլինի,
Նա դեղնած կընկնի այս ծառից ներքև։
Այդպես կընկնեմ ես...
Ուզում եմ զվարթ ասել, թե՝ ոչի՜նչ,
Հող էի և հող կդառնամ նորից,
Բայց իմ շուրթերից «ավա՜ղն» է պոկվում,
Ավաղում եմ ես, որ էլ չեմ տեսնի քո ճառագելը,
Չեմ զգա ու չեմ շոշափի մաշկով քո ճառագայթը,
Չեմ զգա էլ քեզ իմ էության մեջ։

Ու քեզնով լցված օրհներգում եմ քեզ
Ես՝ հին դարերի կրակապաշտս,
Երեկվա հողս, երեկվա ջուրս, օդս երեկվա,
Օրհներգում եմ քեզ, որ ինձ հանել ես անհայտությունից,
Ինչպես ծիլերը՝ հողի ընդերքից,
Եվ ես լսում եմ մոտեցող սիրո ոտնաձայները,
Թեքված իմաստուն գրքերի վրա՝
Ինձ եմ վերծանում,
Աչքերս սուզած այլ աչքերի մեջ՝
Իմ ներսն եմ նայում։
Օրհներգում եմ քեզ, որ դու այնպես ես խորքերն իմ լցված,
Որ ինձ թվում է, ուր որ է ինձնից շողեր կկաթեն։
Կա՛ս իմ արյան մեջ, երգում ես կարմի՛ր, կարմիր մի ցայգերգ
Եվ բիբերիս մեջ երգում ես, արև՛,
Երբ որ նայում են նրանք աշխարհին,
Երգում ես նաև իմ ոտքերի մեջ,
Երբ որ ինձ նրանք երազիս անհաս կատարն են տանում։
Օրհներգում եմ քեզ և նրա համար,
Որ ինձ օժտել ես մի թանկ հատկությամբ,
Մարդ ես ծնել ինձ,
Որ այս ամենը հասկանամ, զգամ
Եվ իմ ցնծությամբ ողջ տիեզերքը լցնեմ տակետակ,
Կանչեմ ու գոչեմ՝ ես որդին եմ քո,
Գլխիս մի՛շտ փայլիր...

(1967 թ.)

ՄԱՅՐ ԱՐԵԳԱԿԻՆ

1

Ողջույն, արեգակ, գալարումներին քո հրակարմիր:
Լեգենդ չեմ հյուսում, այլ զգում եմ իմ երակներով,
Որ իմ արյունը քամված է կարմիր քո կրակներից,
Իմ բիբերի մեջ, փակ կոպերիս տակ
Զգում եմ ուժն ու պայծառությունը ճառագայթներիդ,
Իմ սրտի խորքում՝ խռովքները քո,
Որ ժառանգաբար փոխանցվել են ինձ և իմն են դարձել,
Այո, անցել են ինձ ժառանգաբար.
Միլիարդ ու միլիարդ տարիներ առաջ
Ինչ-որ քաղցրություն զգացիր հանկարծ ջահել կրծքիդ տակ,
Չիմացար ինչ է, չիմացար՝ ինչից, չիմացար՝ ինչու,
Բայց կռահեցիր, փառք ու պատիվ քեզ,
Որ եթե մնա այդ ինչ-որ բանը քո էության մեջ՝
Պիտի գալարվի քո բոցերի հետ ու մոխիր դառնա:
Եվ հզոր ձեռքդ խփեցիր կողիդ,
Քո բռով մի բուռ կրակ նետեցիր տիեզերքի մեջ,
Քո բռով մի բուռ կրակը սառեց
Ու ծնվեցի ես:

2

Այդպես մի թեքվիր, որ տեսնես որդուդ,
Մի քիչ մոտենաս՝ շնչասպառ կընկնեմ,
Ուզենաս գրկել՝ ես կճենճերամ ու կմոխրանամ.
Դու ինձ չես տվել հզորությունդ,
Ես թույլ եմ, մայր իմ,
Ես թույլ եմ, թեև ջերմամիջուկյան ուժն իմ աչքերում
Այնպես կարող եմ նայել լեռներին, որ վախից փուլ գան:

Ես թույլ եմ աշնան մի տերևի չափ,
Փչում է քամին, ու ես դողում եմ,
Անձրև է գալիս՝ ես սրթսրթում եմ,
Բուքն է ինձ ծեծում՝ ես հազ եմ դառնում ու արյուն թքում,
Դու ես ինձ նայում մի քիչ բարկացած՝
Ես վայր եմ ընկնում գլխապտույտից:
Սոված եմ մնում անգամ ուժերս թոթափելու չափ՝
Ինձնից սոսկում են, ինչպես կմախքից,
Քիչ էլ ուշանա՝ էլ ոչ մի բժիշկ ոչ մի հունարով
Չի միացնի իմ բաժան-բաժան ոսկորներն իրար
Ու հացի համար կռիվ եմ մղում ճանկով ու ջանքով,
Ա՜խ, ինչքան թույլ եմ, մայր իմ, ինչքան թույլ…

3

Ինչո՞ւ ինձ այսքան թույլ ստեղծեցիր,
Դու չգիտեիր, որ տիեզերքում
Իմ ծխանման մարմինը պիտի երերա, քշվի,
Հազիվ ձև առած՝ ցնդել սկսի:
Ուր պետք է լինեմ շիտակ ու հաստատ՝
Ես ծռմռվում եմ՝ մարմինս է հաղթում,
Պետք է «ոչ» ասեմ, «այո» եմ ասում,
Պետք է կաղնու պես կանգնեմ մեն-մենակ՝
Լոկ եղեգնուտ եմ դառնում հողմի դեմ:
Չեմ կարող ապրել առանց նեցուկի,
Ինձ ընկեր է պետք, բարեկամ է պետք, թեկուզ եղեգնյա,
Ինչ տեսակ հողմեր ասես չեն ճկում մարմինս բարակ:
Ֆշշոց լսո՞ւմ ես,
Այդ բամբասանքն է փեշերի տակից
Իմ դեմ վտառներ հանում իժերի,
Որ ֆշֆշալով գալիս խայթում են սիրտս կրծքիս տակ:
Ելնում է ոխը պատյանից սև,

Որ խավարի մեջ թիկունքս խրվի,
Ինձ ընկեր է պետք, որ վահան լինի դաշույնի դիմաց,
Բարեկամ է պետք, որ գեթ մի օձ էլ ինքը սպանի:
Բայց ընկերն ինքն է շատ հաճախ հանում դաշույնը իմ դեմ,
Բարեկամն ինքը օձին սուլոցով իմ կողմը թովում
Ու շողերիդ մեջ մրսում եմ ցրտից:

4

Օ՜, հզոր արև, օ՜, մայր իմ հրե,
Մարմինս ծառ է, մտքերս խնձոր,
Որ նույն ծառից են քամվում շիթ առ շիթ,
Ընկնելիս ծառից հեռու չեն ընկնում:
Իզուր եմ կարծում, թե գլխիս մեջ են մտքերս ծնվում,
Նրանք ծնվում են ցրտից կուչ եկած իմ ուսերի մեջ,
Ներբաններիս տակ, երբ բոբիկ եմ ես,
Ստամոքսիս մեջ, երբ դատարկ է նա,
Հետո գալիս են լցվում գլխիս մեջ:
Իմ գլխում հիմա մտքեր են վխտում զեռունների պես,
Ինչքան ճգնում եմ փրկվել նրանցից՝ հնար չի լինում,
Իսկ դու անտարբեր ժպտում ես վերից:

5

Բայց դու անտարբեր ինձ ժպտում էիր այն ժամանակ էլ,
Երբ ես՝ նորածին քո մինուճարը,
Դեռ գազանի պես անլեզու մի բան,
Իմ ոռնոցն էի խառնում վագրերի խոլ մռնչյունին,
Որսի գնացող իմ աղաղակով
Լռությունն էի խեղդում անտառի
Ես՝ մինուճարդ, նոր-նոր մարդացող,
Քո մինուճարը, բայց ոչ միակը:

Ինձ նման քանիսն այլևս չէին քայլում չորեքթաթ,
Նրանք ես էի,
Իմ կոտորակված, «ես» էին նրանք:
Մեկը նրանցից, որ շատ էի ես,
Իր ծանրագլուխ մահակը երբեք ներքև չէր դնում,
Լոկ դրանով էր նա ինձնից տարբեր:
Ինչ անում էի՝ նա նույնն էր անում,
Ինչ զգում էի՝ նա նույնն էր զգում:
Եվ մենք երկուսով սիրեցինք մեկին:
Ինչ քաղցրություն էր, ես չգիտեի,
Ինչ երանություն հպումն այն մեկի,
Որին երկուսով սիրահարվեցինք:
Ես ոռնում էի՝ առ՛ւ, առլո՛ւ,
Միշտ իմը եղիր, մի թող քեզ լիզի այդ մահակովը,
Եվ ոռնում էր նա՝ առ՛ւ, առլո՛ւ,
Միշտ իմը եղիր, մի թող քեզ լիզի այդ անմահակը:
Բայց մահակ ես էլ ունեի անշուշտ,
Ծանրագլուխ էր մահակն իմ նույնպես:
Մինչ ես խորհեցի, որ խփեմ նրան,
Նրա մահակը իջավ իմ գլխին:
Ես ընկա մեռած,
Չէ, բնազդներով սերնդեսերունդ շարունակվեցի:
Հիմա կոստյում եմ հագնում բոստոնե,
Այն մահակովը նույնպես սիրում է այդ նույն կտորը:
Ես մահակի տեղ չինական ընտիր գրիչ եմ բռնում,
Այդ նույն գրիչն է և նրա ձեռքին:
Շուբերտ եմ սիրում, սիրում է և նա,
Բայց մենք երկուսս էլ երգել չգիտենք:
Կա և այն կինը,
Վաղուց նետել է վագրի մորթին դեն,
Որով իր զորեղ կոնքերն էր ծածկում այրական աչքից:
Հագնում է հիմա երկնագույն շորեր,

Գլխին երկնագույն գլխարկ է դնում:
Ալ են շուրթերը, բայց ոչ արյունից,
Որ մի ժամանակ խմում էր բացված վերքից եղնիկի:
Հիմա այնքան է, այնքան քնքշացել,
Որ կուշաթափվի, թե արյուն տեսնի,
Շուրթերը ալ են թեժ կրակի պես…
Եվ նորից ես ու այն մահակովը սիրում ենք նրան,
Դա հավերժական անեծք է՝ կախված մեր գլխի վրա:

6

Կանաչ աչքեր կան իմ աչքերի մեջ,
Խանդը, նախանձը և քենն են նայում աչքերիս միջից,
Նայում եմ նրան, կանաչ թույն թքում
Ու երկարում եմ ձեռքս մահակին,
Որ էլ մահակ չէ, այլ մի կաթիլ թույն:
Ուժ տուր ինձ, արև,
Ուժ տուր իմ ձեռքին, ոչ նրա համար, որ նա չդողա,
Այլ հաղթահարված ետ քաշվի թույնից:
Մենք դար ու դարեր ոչնչացրել ենք իրար անխնա,
Հարություն առել նորից մեկմեկու արյուն խմելու:
Ուժ տուր՝ ազատվեմ ինքս ինձանից,
Ուժ տուր՝ մոռանամ, որ նա է սիրված:
Այդ կինն իմ գրկում նրան է տենչում, նրա գրկում՝ ինձ:
Մեր նախորդ կյանքում տենչում էր նա ինձ,
Այս կյանքում, մեկ է՝ ես կամ, թե չկամ,
Իր համար նույնիսկ սպիտակ մազ էլ չեմ,
Որի ընկնելուց տխրում են գուցե:
Արդեն քանի դար դրախտ կոչվածին ես չեմ հավատում,
Բայց տենչա նա ինձ՝ դրախտի ծաղկումն իմ սրտում կզգամ,
Խավար եմ՝ ժպտա՝ սիրտս հանց բողբոջ պայծառ կպայթի,
Հնում եմ՝ ձեռք տա՝ սարերը կելնեմ մանուկ քայլվածքով,

Թողնի խոր նայեմ խորքը աչքերի,
Հարբած սոխակի հորդաբուխությամբ ես կդայլայլեմ
Ի՜նչ հրաշալի սիրո պոեմներ:
Ուժ տուր՝ մոռանամ և այդ կնոջը:
Ուժ տուր, որ հանեմ աչքերիս միջից աչքերը կանաչ,
Պարզ նայեմ կյանքին, իրերին բոլոր,
Այլևս չզգամ, որ իմ խոհերը
Ծնվում են նաև երակներիս մեջ, ուր փրփրակալած՝
Եռում են խանդը, քենը, նախանձը…

7

Շատ եմ հանդիպում ես իմ ոսոխին,
Նրան, որ ե՛ս եմ և այնքան եմ ես,
Որ նրա պես եմ սիրում և տենչում.
Հենց այդ պատճառով ատում եմ նրան,
Հենց այդ պատճառով ատում է նա ինձ:
Չգիտեմ՝ նա՞ ինձ, թե՞ ես եմ կյանքում նրան խանգարում,
Բայց գիտեմ, ուր նա՝ այնտեղ եմ և ես,
Ուր ե՛ս՝ այնտեղ է և նա անբաժան:
Ես հանգիստ չունեմ ոչ մի ակնթարթ
Քո կողից պոկած երբեմնի հրե այս գնդի վրա,
Որ հիմա հող է, ավազ, քար ու կիր:
Հազիվ տուն դարձած մի պատերազմից՝
Մյուսի սաղմն արագ մարմին է առնում,
Վերջին կրակոցն հազիվհազ լռած՝
Իմ նմանն ու ես նախ իրար վրա բառ ենք կրակում,
Արճիճ ենք հետո լցնում բառերում,
Բառը մնում է,
Արճիճը թռչում իմ նմանից ինձ և ինձնից նրան:
Եվ ես համոզված ասում եմ նրան.
- Դեմ ես ծաղկումին, ձյուն ես, քեզ պիտի իմ հրով հալեմ:

Նա ինձ ասում է նույնպես համոզված.
- Դեմ ես ծաղկումին, ձյուն ես, քեզ պիտի իմ հրով հալեմ:
Եվ հենակներ են դոփում ամենուր...

8

Ես ինչպես թվեմ բոլոր պատճառներն արյուն թափելու,
Երբ պատերազմ է բռնկվում անգամ մի կաթիլ մեղրից:
Իմ նմանն ու ես այնքան պատճառ ենք գտնում կռվելու.
Կամուրջ է կապում նա գետի վրա,
Գնում եմ, ասում՝ քանդիր քոնն իսկույն,
Այստեղ ես պիտի կամուրջն իմ շինեմ:
Թե ես եմ կապում, նա է ինձ ասում՝
Քանդիր քոնն իսկույն,
Այստեղ ես պիտի կամուրջն իմ շինեմ:
Ասում եմ՝ դու էլ ներքևում կապիր, կուզես՝ վերևում,
- Չէ, միայն այստեղ, հենց քոնի տեղը:
Եվ նույնը ես եմ ասում քանի՛ դար.
- Չէ, միայն այստեղ, հենց քոնի տեղը:
Պետք է նույն տեղում, պետք է միասին կամուրջը շինել,
Պետք է մեկ լինել, մեկ «ես», մեկ մարմին:
Եվ իմ նմանը սպասում է ինձ, որ ես ձեռք պարզեմ,
Եվ սպասում եմ ես իմ նմանին, որ նա ձեռք պարզի,
Եվ կպակասեն հենակներն այնքան:

9

Բազում հենակներ ես ունեմ կյանքում,
Բայց ամենից շատ անմահությունն եմ գործածում ու հույսը:
Հույսն ինձ ասում է, որ իմ նմանը
Ինձ հետ կլինի հագուստի նման, որ ես չմրսեմ,
Ես չորս պատի պես նրան կփրկեմ ցրտից ու քամուց,

Ասում է, որ երբ իմ դուռն էլ բախի քաղցկեղն աննահանջ,
Բուժման գյուտն արդեն արած կլինեն,
Եվ ուրիշ-ուրիշ հաճելի բաներ հույսն ինձ ասում է:
Անմահությունը՝ հենակն իմ երկրորդ,
Ես գործածում եմ հույսի հետ մեկտեղ՝
Հավատում եմ, որ չկա մահ գործերիս, ուրեմն և ինձ:
Իսկ քեզ, արեգակ, մայր իմ հրեղեն,
Կոչում եմ հանգչող մահկանացու…

10

Մի՛, մի՛ մոտենա, կա՛նգ առ, մոխրացնող,
Մի՛ խորհիր այդպես, թե քո մեծ ճամփին
Ինչ խեղճ, բայց և չար էակ ես ծնել,
Չարժի, որ ապրի:
Մեզ մոխրացնես՝ ոչ ոք չի մնա, որ քեզ երգ ձոնի:
Մեր անմահությունն իրոք քո հանդեպ պղպջակ է լոկ,
Բայց մենք ենք, լսիր, քո ճառագայթին ասում ճառագայթ,
Քո ջերմությանը ջերմություն ասում,
Մենք ենք քեզ ջոկում մեզնից բյուր անգամ փոքր մժեղից,
Մեզ մոխրացնես՝ դու թե մժեղը, ի՞նչ տարբերություն:
Հետո, իմացիր, այնքան էլ շատ չես տարբերվում ինձնից.
Դու էլ ես բախվում քո մեջ ու քեզ հետ,
Անվերջ պայթյուններ, հրե մրրիկներ,
Միշտ կռվի մեջ ես, միշտ խռովահույզ,
Ե՛վ անագորույն, և՛ ժանտ, և՛ ագահ:
Չլիներ եթե օդի շերտը հաստ,
Ինձ կուլ կտայիր,
Ինչպես շանթարձակ Զևսն էր կուլ տալիս իր զավակներին,
Եվ որտեղ օդը ճեղքել ես փոքր-ինչ,
Անապատներ ես փռել տոթակեզ,
Ուր որպես քո սև խոհերը բեկ-բեկ

Օձերն են սողում:
Հազար անգամ չար, մեկ անգամ բարի,
Բայց ես, արեգակ, որդիդ հրեղեն,
Քո հազար չարը իմ մտքից ջնջած՝
Այդ մեկ բարին եմ օրհներգում հիմա,
Քո չարն ուրիշինն, այդ բարին իմն է:
Քո այդ բարությամբ ինձ ժպտա հեռվից:

11

Կա՛նգ առ, բարեգութ,
Ես իմ էության խորխորատներում քեզ եմ որոնում,
Ես մարդանում եմ սակավ առ սակավ.
Իմացիր, երեկ ես ետ քաշեցի իմ ձեռքը թույնից
Եվ իմ նմանը չմեռավ, ապրեց,
Իսկ ես մարդացա էլի մի քայլ էլ:
Իմ շուրթերն էլ են ճաքում ծարավից,
Երբ անապատում նա ջուր է տենչում,
Իմ աղիքներն են գալարվում քաղցից,
Երբ նա երկու օր բերանը ոչինչ դրած չի լինում:
Նրա մեջ ինձ եմ տեսնում ես քիչ-քիչ,
Եվ իր մեջ՝ նա ինձ:
Իմացիր նաև,
Որ Դոնկիխոտի իմ երկար հասակն ինչքան էլ ընկնում,
Բայց էլի վեր է կենում անկոտրում
Եվ ի մարտ նետվում ընդդեմ քսության,
Որ իմ ֆաուստյան անհագ ծարավով ատոմն եմ քրքրում,
Մտորում նաև, թե ոնց է լինում,
Որ իմ գտածից Մեֆիստոֆելը ռումբեր է ձուլում,
Կախում իմ գլխին մահը սնկաձև:
Չէ, նրանից չէ, որ ես փախչում եմ իմ աստղանավով,
Պարզապես մեծ է կիրքն իմանալու,

Խենթանում եմ ես:
Ի՞նչ, լվի ցա՞տկ է իմ թռիչքը մեծ:
Չեմ վիրավորվում, ասա ու կրկնիր:
Բայց վաղը, վաղը իմ աստղանավով քո մոտից կանցնեմ,
Հեռվից ձայն կտամ տեղում մեխվածիդ.
- Հե՛յ, մնաս բարով, ես հյուր եմ գնում
Յոթ հարյուր երկինք այն կողմ գտնվող արեգակների:
Բայց ուր էլ գնամ՝ ետ կգամ կրկին քո կարոտով լի
Ես՝ տառապյալս, որ տանջանքներիս փոթորիկներում
Իմ սրտի խորքում պահել եմ անկեղծ այն ինչ-որ բանը,
Որ դու չուզեցիր քո բոցերի մեջ մոխրանար, կորչեր
Ու ինձ ծնելով՝ ժառանգեցիր ինձ…

12

Վախ, ի՞նչ պատահեց…
Մթնեց երկինքը իմ գլխին հանկարծ:
Դու չես մոտեցել, դու քո տեղում ես,
Բայց ես ընկնում եմ,
Երերվում է հողն իմ ոտքերի տակ:
Արյուն է ժայթքում իմ կրծքից, նայիր,
Գնդակ է անցել իմ սրտի միջով,
Եվ ես մեռած եմ,
Բայց բոլորովին մեռած չեմ, մայր իմ,
Չէ՞ որ անցնում եմ սերնդից-սերունդ:
Այդ նա կրակեց ուղիղ իմ սրտին,
Նա, որ նման է ինձ բոլորից շատ:
Ինչո՞ւ, հարցնում ես, ինչո՞ւ կրակեց.
Այն կինը, գիտե՞ս, նրան լքում էր,
Ինձ էր սպասում պատուհանի մոտ՝
Անքուն ականջը իմ վերադարձող ոտնաձայներին,
Չդիմացավ նա, կրակեց սրտիս…

Բայց ես, արեգակ, չէի կրակի:
Ճիշտ է, որ թույլ եմ,
Որ ես իմ քաղցն եմ,
Ցրտից կուչ եկած իմ ուսերն եմ ես,
Սիրուս տենչանքն եմ,
Ինձ իմ նմանից գերադասելու մշտական ջանքն եմ,
Բայց մեկ է՝ նրան չէի սպանի,
Կընկներ իմ ձեռքից ատրճանակը,
Կլիցքաթափվեր իմ ձեռքով ռումբն ատոմային:
Ես հիմա այն չեմ, ինչ իմ նմանը,
Նա իմ երեկն է,
Իմ անհորիզոն գիշերն արյունոտ,
Ես մեծ ու շքեղ մի լուսաբացի
Շողերն եմ զգում իմ բիբերի մեջ:
Եվ իմ գիշերը կրակեց վրաս,
Ես նրա վրա չէի կրակի,
Նշանակում է՝ իսկապես նա իմ երեկն է այսօր,
Ես՝ իր գալիքը:
Ընկնում եմ, սակայն հարություն կառնեմ
Դեպ շքեղ վաղն իմ քայլելու համար…

13

Դու մեղմ ժպտում ես, իմ շիրմի վրա,
Դու էլ հաղթում ես ինքդ քեզ, արև,
...Դե, մենք միասին ընկնենք ճանապարհ…

ԽՌՈՎԱՀՈՒՅԶ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

1

Իր շող մատներով նվագեց արփին,
Նվագեց ձմռան ծառերի վրա,
Ու բողբոջները ուրախ բացվեցին,
Զնգաց ամենուր երգը զմրուխտյա։
Ու սառցի վրա արփին նվագեց,
Ջրերի կարկաչն հնչեց օրն ի բուն։
Դարձան ծովերը երգեր ծփծփուն,
Ժեռ ափերի մեջ հնչեցին էլի,
Երկինքը երգեց շող մատների տակ
Իր կապույտ երգը՝ ծիծաղներով լի։
Իր շող մատներով նվագեց արփին
Նաև սիրավառ իմ սրտի վրա,
Ու սրտիս խորքից հնչեց մեղեդին
Սուրբ խաղաղության ու սիրո մասին։
Ախ, տեսեք, ասի, սև հողի խորքից
Կանաչ հեղեղն է հորդել երգի պես,
Արտույտն է զվարթ սուզվել կապույտում,
Անտես զանգակ է, կախված երկնքից,
Զնգում է բարձր, կանչում սրտաբաց.
«Գարո՛ւն է, գարո՛ւն, և ի՛նչ թարմություն»։
Կարծես թե կյանքը նոր է սկսվում...
Բայց ծիլ ու ծաղկին՝ հենց ելան հողից
Ճառագայթները իջան ատոմի,
Եվ նրանց անմեղ, զուլալ աչքերից
Նայում է մթին ատոմախտն հիմի,
Ծովի ջինջ երգին իր սևն է խառնում,
Երկնքից, գետնից, քո իսկ հագուստից
Անտես ու անձայն քո դեմ է հառնում

Եվ օրըստօրե, վայրկյան առ վայրկյան
Մի քիչ ավելի կյանքիդ սպառնում։
Այդ հիմա, իսկ երբ ռումբերը պայթեն
Մեր գլխի վրա, մեր աչքերի դեմ...
Երնեկ քեզ, արտույտ, որ դու զվարթուն
Գարուն ես երգում՝ սուզված կապույտում,
Այնպես ուրախ է երգդ դողանջում։

2

Եվ ես ուզեցի իմ երգը հյուսել,
Բայց ինչպե՞ս արդյոք, ինչի՞ց սկսել,
Որ դուք իմանաք որքան եմ ուզում
Ցնծա ինժեներն այն բանի համար,
Որ նոր տեսակի պոմպ է ստեղծել,
Տեսնի այգեպանն ամեն առավոտ,
Թե դեղձ ու խաղողն ինչքան են հասել,
Վարորդ ունենա ջրցան մեքենան,
Փողոցի ծառերն ամեն օր ջրի,
Այս տրամվայը զնգոցով անցնի,
Այս մանկան կանչը սրտեր լեփ-լցնի...
Ո՞ր մեկից արդյոք իմ երգն սկսեմ։

3

Ու խոհերով լի քայլում եմ այսպես
Վաղ գարնան միջով, իմ ընկերոջ հետ,
Ես հանգ եմ փնտրում, նա՝ գույներ պես-պես։
Նա էլ ինձ նման գարուն է սիրում,
Ինձ պես օրհներգում արևն ապրիլյան,

Մի բացված բողբոջ, հովի մի սոսափ,
Հավքի մի դայլայլ հուզում են նրան։
- Տես,- ասում է ինձ,-
Կյանքն է ծիծաղում կույս բողբոջներից,
Որ պայթել են լուռ ու դարձել ահա
Վառ կանաչ պուտեր ծառերի վրա։
Դեռ բողբոջներն այս տերև պիտ դառնան,
Խենթուկ քամու հետ համբուրվեն անհագ,
Ու քամին, նայիր, ճամփեքով գարնան
Նրանց է գալիս կարոտով վառման,
Էլ չհիշելով, որ փոքր են նրանք,
Գալի՛ս է՝ սիրուց դարձած այնպես տաք...
Իսկ արևն հապա, արևն ապրիլյան,
Ուզում եմ բացել կուրծքս նրա դեմ,
Որ մոտիկ լինեն գոնե մի վայրկյան,
Իմ սիրտը և նա,
Մեկտեղ տրոփեն, այրվեն ու չզգան,
Որ իրենց միջև պաղ հագուստներ կան։
Ու կկոցում է աչքերն իր շաղված,
Որ ասես միայն արևը տեսնի,
Ուշքը չտանեն ուրիշ պատկերներ.
Իսկ այդ արևը աղջիկ է հուրհեր,
Ասես կցնդի տեսիլքը հանկարծ,
Էլ ինչպե՞ս պիտի և ո՞ւմ գանգատվի,
Որ իրենց միջև պաղ հագուստներ կան։
Ոչ, իմ բարեկամ, ինձնից չես պահի,
Ես էլ եմ եղել քսան տարեկան։
- Արմեն, նա թո՞ւխ է, թե՞ ձյուն սպիտակ։
- Նա-ն ո՞վ է, ի՞նչ նա։
- Դե նա, որ հիմա երգ է կրծքիդ տակ,
Այս ծաղկից, գետից, այս քար ու թփից
Եվ սրտիդ խորքից նրան ես լսում։

Շիկնում է Արմենն, ինչպես մի լուսայգ,
Որ անկարող է այլևս պահել
Ծագող արևը իր ամպերի տակ։

4

Ցածում քաղաքն է՝ ծանր ու ձուլածո,
Շարք-շարք նստել են շենքերը հողին,
Ցածում անտառն է գործարանների,
Որոնց աղմուկին դեռ չեն սովորել
Նուրբ ականջները ծիծեռնակների,
Եվ նրանք ահա այստեղ են թռել,
Խառնել ծլվլոցն իրենց հրճվալից
Երեխաների ուրախ կանչերին։
Իսկ մեկն էլ ահա իր բույնն է հյուսել
Արմենի փոքրիկ արվեստանոցում։
Հայացքս մի պահ ցած է թևածում
Եվ շենքերի մեջ այն շենքը փնտրում,
Որտեղ բացվել է մի ցուցահանդես,
Որ իմ ընկերոջ անունն է կրում։
Այստեղից իջան այլ ծիծեռնակներ,
Որ մեծ գարուն են նրան ավետում։
Չէ, իմ թռչուններ, այլ է ուղին մեր,
Մենք այս լուռ ափից քաղաք ենք ձգտում.
Թե մարդ լինեիք՝ կհասկանայիք,
Թե նա ինչու է այդքան խոր հուզվում,
Երբ որ կարդում է մարդկանց հայացքում
Ու կարծիքների լղարիկ գրքում,
Որ ինքն արվեստում աստղ է նորածագ։
- Ահա իմ սերը,- ու ետ է տանում
Սպիտակ թուղթը նա իր նկարից՝

Բացելով միայն կեսը կտավի,
Մի լույս-աղջիկ է պայծառ ժպտում ինձ,
Ա՜հ, քիչ է պակաս մարդն հրեշտակից...

5

Նորից ձնհալի ջրերն են իջնում,
Գլգլում, իջնում բարձրիկ սարերից,
Բանաստեղծական հնչուն տողի պես
Երկնում կռունկի երամն է զնգում։
Անցած աշունքվա տերևն է ընկնում,
Բայց ոչ թե քամուց, այլ այն նոր ուժից,
Որ մայր ծառերն են արդ գործադրում
Տեղ տալու համար
Իրենց մայրության նոր պտուղներին։
Նայում եմ, նայում ես այս նկարին,
Ոչ, չկան այստեղ ջրեր գլգլան,
Ոչ էլ մայր ծառեր ու կռունկներ կան.
Մի խոր երկինք է վերում ծովացած,
Ի՜նչ թարմ գույներ են, ի՜նչ լուսե կապույտ,
Թվում է, պիտի արծիվը անփույթ
Իր թևը քսի ու կապույտ ներկվի։
Թվում է, պիտի ինքն իրեն երգվի
Այս ջինջ կապույտը այս զույգի վերև.
Մեկն իմ ընկերն է, մյուսն՝ աղջիկն այս,
Սիրվարդ է անունն ու ինքն էլ սիրվարդ։
Մի շոգ ամառ է այս նկարի մեջ,
Բայց ես ձնհալի ջրերն եմ տեսնում.
Արդյոք նրանի՞ց, որ սերն է այստեղ
Ինքնաբուխ հորդում հեղեղի նման.
Արդյոք նրանի՞ց, որ դու, իմ ուղեղ,

Այսօր լցված ես շնչով վաղ գարնան,
Ու քեզ թվում է նոր է սկսվում
Կյանքը հինավուրց մեր մոլորակում։
Արև է շուրջս, նկարում՝ նույնպես,
Օ, այս արևն է կյանքը նորոգում։
Մարդիկ, արևին հավերժ կենարար
Եթե պետք լինի մի երկրորդ անուն,
Դուք Խաղաղություն անունով կնքեք,
Ուրիշ ոչ մի բան այդպես չի սազի,
Ուրիշ ոչ մի բան ակունք չի լինի
Արևի նման, կյանքի, երազի։
Ծովերը նետեք զենքերը մահվան,
Բավ է խռովեն մեր քունը նրանք,
Նետեք ծովերը, մի երկու վայրկյան
Մեր տեղ թող ձկներն անհանգստանան,
Կամ խոփեր դարձրեք, մահվան տեղ կյանք տան։
Արդյոք այստեղից չսկսե՞մ երգս
Սուրբ խաղաղության ու սիրո մասին։

6

Սե՛րը։ Քանի՛սը այսպես ժպտացին,
Թևանցուկ արած քայլեցին այսպես.
Այդ սերը ծնեց մեծ Հոմերոսին
Ու ծնեց Ներոն։
Այդ սերը ծնեց և՛ այն «հերոսին»,
Որ սպառնում է ատոմամահով,
Ե՛վ ընկերոջն իմ, որ իր վրձինով
Երգում է սերը,
Եվ լավ է երգում, որ իմ խոհերը
Այսպես վարարել և ելք են ուզում։

Հիմա եկել է իրեն է հասել
Այդ անմեռ սերը՝ սերունդներ ծնող։
Նա Սիրվարդի հետ քայլում է թեթև
Արձակ դաշտի մեջ, հայացքը հեռուն,
Սիրո պահապան արծիվն է ճախրում
Նրանց սրտի մեջ ու գլխի վերև։
Ասես ամեն ինչ այստեղ ունի թև
Ե՛վ սիրող զույգը, և՛ այս դաշտն անգամ,
Որ շատ է հոգնել վարվել-ցանվելուց
Եվ նմանվել է հիմա կամենում
Սիրո հեքիաթի թևավոր գորգին։
Բայց ախր... չեն էլ ասել իրարու,
Որ երջանիկ են սիրելով միմյանց.
Իմ ընկերն ահա հենց նոր շշնջաց,
Որ ինքն այդ մասին չի էլ ասելու։
Պետք է ավարտի իր կտավը այս,
Որը կհնչի այնժամ աշխարհում,
Որպես իր սիրո խոստովանություն։
Իսկ եթե մերժի՞ Սիրվարդը նրան.
Ախ, իմ բարեկամ, չգիտես դու դեռ,
Որ ծիծաղում է մի աչքը սիրո,
Մյուսը թափում է արցունքի գետեր։
Եթե քեզ նայեց արցունքոտ աչքով,
Մի՞թե կպատռես այս կտավը դու։
Բայց ինչո՞ւ ծնվեց կասկածն իմ սրտում,
Ախր նա ինչո՞ւ չպետք է սիրի.
Շա՞տ կան տղաներ այսքան գեղեցիկ,
Այսքան ձիրքառատ տղաներ շա՞տ կան,
Եվ այսպես խորունկ սիրող հոգիներ։
Սակայն ով ասես չի մերժվել սիրուց,
Նույնիսկ Արմենից կատարյալները.
- Լսիր, սիրելիս, ետ տար թղթերը,

Պետք չէ, մի ծածկիր կտավդ այսպես,
Մի կեսն ինձ դյութեց, ցույց տուր մյուս կեսն էլ,
Ուզում եմ գործդ ես լրիվ տեսնել։

7

Արվեստանոցը մթնել է ասես,
Սև է լռությունն այստեղ ծվարած։
Ծիծեռնակները վերը բուն դրած
Ինչո՞ւ լռեցին, էլ չեն ծլվլում,
Նրա՞նք էլ գիտեն, որ օձն է պառկած,
Գլուխը դրած սև հողին խարկած՝
Արևի լույսն է կլանում ագահ,
Թե մի բան անում՝ լոկ այն երևի,
Որ թույնի փոխի շողն իսկ արևի։
Եվ ստեղծողը այս պատկերների
Ծանր ասում է՝ մատն օձին մեկնած.
- Երբ մեզ նկատի՝ սողեսող կգա
Ու երջանկության կանաչ ճամփեքին
Կխայթի մեր սերն ու մեզ թիկունքից։
Ախ, կյանքում այդպես մարդկանց թիկունքում
Պատերազմը միշտ թույն է հավաքում,
Քո գործն ես անում, քո սերը սիրում,
Ու մեկ էլ ահա թիկունքից հարված...
Դողում են բարակ շուրթերը նրա,
Բայց նա զայրույթը խեղդել է ուզում։
- Իմ այս կտավը ո՞նց է, չի՞ հուզում,
Թեև կիսատ է, բայց քո խոսքն ասա։
Ու ես ասում եմ, իսկ նա ժպտալով՝
Մի քիչ, ասում է, դարձրիր պլակատ,
Իսկ ես կուզեի, որ սի՛րտը խոսեր,

Եվ ոչ թե միտքը մտքին բան ասեր,
Սի՛րտը խոսք բացեր,
Սի՛րտը կոչ աներ,
Սի՛րտը թրթռար ուրիշ սրտի մեջ։
Ասա, քո սրտում
Ինչ-որ մի թաքուն ուժ չի՞ խլրտում։
- Այո։ Ուզում եմ ստեղծագործել
Հանուն վսեմի և խաղաղության։
Եվ այդ օրվանից ես սկսեցի
Այս երգը հյուսել
Եվ կենսագիրը դառնալ մի հոգու,
Որ ինձնից առաջ ու խորն է ուզել
Նայի այգեպանն ամեն առավոտ,
Թե դեղձ ու խաղողն ինչքան են հասել,
Ցնծա ինժեներն այն բանի համար,
Որ նոր տեսակի պոմպ է ստեղծել,
Վարորդ ունենա ջրցան մեքենան,
Փողոցի ծառերն ամեն օր ջրի...

8

Նա եկավ ինձ մոտ գունատ ու մռայլ,
Աչքերում վշտի երկու սև երկինք.
Մերժել էր Սիրվարդն, ու նա մի բերան
Լոկ այն էր ասում, որ իր սիրելին
Վառվռուն կյանք է, բայց ոչ իր համար,
Իրական կին է, իր համար՝ նկար։
- Բախտ, մի՞թե կյանքում քիչ կային վշտեր,
Սիրուց նվաղած աչքեր արցունքոտ,
Ինչո՞ւ ինձ տարար այն աղջկա մոտ,
Որ իր սերն ուներ,

Քո ինչի՞ն են պետք այսքան արցունքներ։
- Նա իմ արվեստն էր, ոչ թե ինձ սիրում։
Իսկ ինձ թվում էր, թե իմն է արդեն։
Գնաց... ինձ թողեց մենակ ու գնաց,
Թեկուզ և նրան թևանցուկ չարած…-
Ու այսպես անվերջ իր սերն էր լալիս,
Իսկ ես իմ սրտում հարց էի տալիս,
Թե տեսնես պիտի նկարն ավարտի՞...

9

Անցան շաբաթներ, ծառերից ընկան
Ճերմակ, վարդագույն ծաղիկներն ամեն,
Ճերմակ, վարդագույն բոցերն հանգեցին,
Մնաց կանաչը վառված խենթորեն։
Հասել է թութը, կանչում է արդեն,
Որ գան ու թափ տան ծառերից իրեն,
Ճաշակեն, զգան,
Որ քաղցրություն է ամբարել միայն,
Կյանքում չի եղել տատասկի նման։
Քամին է գալիս, քամին չարացած
Ու թափում թութը, հողերին խառնում,
Այն էլ ամենից լավերը հասուն,
Թողնես՝ ոչ մի հատ չի պահի մարդուն։
Բայց մարդը ահա ծառն է բարձրանում,
Թափ տալիս բարիքն ու բերում է տուն,
Շատ հաջողակ է նա այս գործերում։
Իսկ մարդը ահա... կքել վշտի տակ
Ու իր կտավը էլ չի նկարում...
Մերթ ահեղ ու մերթ շշունջի նման
Թերթերը նոր-նոր լուրեր են բերում,

Նոր են արտաքուստ, բայց խորքում իրենց
Արդեն զառամյալ դարձած հնություն.
Այսինչն ու այնինչն արին շնություն,
Իրենց երկիրն ու խիղճը ծախեցին,
Այսինչի ձեռքով աշխարհի վրա
Կռվի ամպերը նորից կախվեցին,
Այսինչի կամքով նոսրացան մի քիչ
Եվ կայծակ չեն տա մոտ ապագայում,
Այսինչ քաղաքում կոնգրես գումարվեց,
Կամ հանդիպեցին մեծերը այսինչ,
Բայց կռվի կիրքը էլի չմարեց.
Այսինչն սկսեց փորձարկումն էլի,
Եվ ատոմախտը, անտես ու անձայն,
Մարդիկ, բռնում է արդեն ձեր բկից։
Շատ են գազազել լորդն ու բուրժուան
Չեն ուզում ապրել իբրև հաշտ դրկից...
Նոր լուրերն այսպես գալիս են անվերջ,
Նոր են արտաքուստ, բայց խորքում իրենց
Արդեն զառամյալ դարձած հնություն,
Սակայն այնպիսին, որից չի պրծնում
Մեր մոլորակը, ինչպես քաղցկեղից։
Ի՞նչ, պատյա՞ն մտնել, երբ որ այս պահին
Թե հազար շենքի հիմքեր դրվեցին,
Հազար ռումբեր էլ ձուլվեցին իսկույն,
Որ քանդեն դրանք
Ողջն հիմնահատակ,-
Չէ, իմ բարեկամ, պիտի ավարտես
Այս քո կտավը վերջնականապես,
Վրձնի մի երկու տաք հարված - և վե՛րջ։
- Բայց կյանքում ե՛ս չեմ Սիրվարդի կողքին։
- Մեկ է, ավարտիր։ Գեթ նկարի մեջ
Քայլիր նրա հետ երջանիկ այսպես։

- Չեմ կարող ստել։
- Եթե այդպես է, ջնջիր ինքդ քեզ,
Ինչպես կյանքում է, և ձեռքով ուժեղ
Քո տեղ նկարիր նրա ընտրածին։
Բայց հառաչելով ասում է նա ինձ.
- Չեմ կարող. մարդ եմ, աստված չեմ ծնվել,
Եվ փոքր մարդ եմ, կեղծել չեմ ուզում,
Այստեղ, կրծքիս տակ, մի բան է եռում,
Մի տա, զոչում է, եթե ծարավ ես,
Մի տա քո ձեռքով քո ջուրն ուրիշին,
Թեկուզ ջուր չէ այն,
Այլ միրաժ միայն,
Լոկ արտացոլված քո անապատում,
Բայց քո, լսո՞ւմ ես, քո՛ անապատում։
...Ես հույսս կտրած՝ չեմ շարունակում,
Պետք չէր, ախ, իզուր նրան ընտրեցի,
Նա շատ հարմար էր ուրիշ մի գործի՝
Սիրային վեպի հերոս էր տրտում...

10

Արևն ուրախ ծիծաղում է։ Բայց ո՞ւմ վրա,
Ո՞վ է, տեսնես, մի բան անում հիմարավուն։
Չէ, արևը շատ չի սիրում զվարճանալ,
Ծիծաղում է նրա համար,
Որ բոլորին կարող է տալ
Շող ու ժպիտ ու ջերմություն,
Լույս ու բերկրանք ու սեր հորդուն...
Նրանից է այդպես խնդում,
Որ այս մամիկն ահա անցավ թոռնիկի հետ,
Քարի տակից գլուխն հանեց այս ծիլը սուրբ,

Այս աղջիկը հագավ մի նոր շրջազգեստ,
Սունկը պատռեց հողի կուրծքը և ելավ դուրս,
Այս դհոլը և այս զուռնան...
Բայց սպասիր, մի՛ ծիծաղիր, բարի արև,
Հարսը այս նոր հարսանիքի... Սիրվարդն է, տես,
Ճանաչեցի կտավից ես։
Նույն աչքերն են, միայն լցված խնդությամբ այլ,
Նույն մազերն են, բայց ավելի կոկիկ սանրած,
Նույն ոտքերը, որոնց դիմաց շողն է անփայլ,
Նույն գլուխը, որ պիտ դրվի ուրիշ բարձի,
Լոկ զգեստն է, որ նույնը չէ,
Նկարի մեջ բաց կապույտ է, այստեղ՝ ճերմակ...
Ախ, սպասիր, մի՛ ծիծաղիր, բարի արև,
Իմ ընկերը հիմա անցնում է գլխահակ։
Ծանր, ինչպես մառախուղը, գնում է նա,
Սիրտը լիքն է արցունքներով, բայց չի լալիս,
Որ ամպի պես թեթևանա,
Չի որոտում, կայծակ տալիս,
Որ ինքն իրեն ծվատի ու հանգստանա...
Մի՛ ծիծաղիր, դու չար արև,
Գուցե ամպ է, և... էլ չկա կտավը իր։
Ա՜հ, ասում էր, թե Սիրվարդը բաժանվելիս
Թևը չընկավ այս տղայի,
Ուրեմն ի՞նչ, դեռ չէր մարել իր հույսը նա,
Որ կունենա դեռ իրավունք
Նկարի մեջ Սիրվարդի հետ զբոսնելու
Եվ դրան էր սպասում լուռ։
Հիմա հանգավ հույսը վերջին,
Պետք է փրկել գեթ կտավը ծվատվելուց։
Բայց ո՞նց գնաս, գուցե չի էլ նա իմացել,
Իսկ դու հանկարծ կարող ես մի հառաչանքով,
Մի «հարսանիք» կամ «դիմացիր» անմիտ խոսքով

Նրա հույսը անդարձ մարել։

11

Առավոտն ուրախ զրնգաց կրկին,
Ինչպես որ երեկ
Կամ միլիոն տարի սրանից առաջ,
Բայց իմ սրտի մեջ իջավ մի գիշեր՝
Չար ու ծանրագին,
Ու կուրծքս ճնշեց մի զսպված հառաչ։
Իմ դեմ է ահա կտավն Արմենի
Ախ, էլ ի՞նչ կտավ,
Ասես թե օձը այստեղ նկարված
Մի երկու վայրկյան շունչ առել հանկարծ
Ու դրոշմել է կտավի վրա
Հետքերը իր սև ու քստմնելի,
Եկել իր տեղը պառկել է էլի։
Ու սևի տակից Սիրվարդն է նայում,
Մի հոնք է կամար,
Այտից մի պատառ,
Մի մատ է ձեռքից,
Կրունկից մի մաս։
Սիրտ իմ, էլ ի՞նչ, ասա, էլ ի՞նչ էիր ուզում,
Դու գիտեիր, զգում էիր քո մեջ թաքուն,
Որ այսպիսի մի խոր հուզում,
Եվ կտավն իր նա կջնջի։
Դու գիտեիր, զգում էիր, բայց չհասար...
Հապա լորդը և բուրժուան,
Չէ՞ նրանք էլ Սիրվարդ ունեն, թե ինչպիսի՞,
Կարդա Մարքսի «Կապիտալ»-ում,
Եվ կիմանաս, որ երբեք չի օձը ննջի,

Կբարձրանա, որ աշխարհը... սևով ջնջի։
Իսկ աշխարհը այդ իմանա և սպասի՛,
Բայց սպասի ախր ինչի՞,
Որ սխալն իր զգա ժամին լոկ օրհասի՞,
Երբ որ ջնջվի այս մի փոքրիկ կտավի պես։
Ծանր է ինչպես, ես տեսնում եմ ահազարհուր
Այս քաղաքում միայն մի բան մնաց շարժվող՝
Այս գետակը, այն էլ լռեր, պապանձվեր թող,
Ու չպատմեր այն շինարար մարդկանց մասին,
Որ քարերի տակ մնացին։
Խելք ունեին, սակայն, ավա՛ղ, ոչ այն խելքից,
Որ կառուցածն ատոմային մահից փրկեն,
Ձեռք ունեին, սակայն, ավա՛ղ, ոչ այն ձեռքից,
Որ պատերազմ սկսողի գլխին իջներ։
Մի այլ տեղում ոնց են պարում խելագարված,
Սրտերը մութ, մտքերն անկապ ու խաթարված։
Շատ չեն պարի ու քրքջա,
Թե որ հանկարծ վիհեր չընկնեն իրենց բախտից,
Ո՛ւր կփախչեն ատոմախտից։
Այնտեղ ահա ուրվականներ եմ նկատում,
Բռնվել են այդ կապտաշուրթ հիվանդությամբ,
Պիտի մեռնեն արագ, ինչպես չար հեքիաթում,
Ու նոր մարդիկ աշխարհ չգան,
Իսկ եթե գան՝ հիվանդ, անուժ, տկար, այնքան,
Որ աշխարհը թվա նրանց լոկ գերեզման։
Պիտի մեռնեն... Ախր ուր էլ ոտք ես դնում՝
Թակարդներ կան ատոմային,
Որ դիպվածով ճառագայթներ են անվանվում.
Թե ջուր խմես, ցավ ես խմում անբուժելի,
Թե չխմես՝ ծարավից էլ մարդ է մեռնում.
Թե օդ շնչես՝ օդը մահվան շնչով է լի,
Իսկ առանց օդ ինչպե՞ս կապրես.

Նախնիներիդ օրինակով թե բույս ուտես,
Բույսերի մեջ մահն է աճում սնունդի տեղ...
...Սիրտ իմ, էլ ի՞նչ, ասա, էլ ի՞նչ էիր ուզում,
Դժգոհ էիր, որ շատ հարմար չէր Արմենը
Խաղաղության երգի համար,
Խաղաղության երգ է իրավ այս ամենը։
Եթե ջնջեց նա իր գործը - դո՛ւ շահեցիր,
Դե, ուրեմն, ուրախացիր...
Բայց դու ինչպե՞ս ուրախանաս,
Թե գտար մի ցորենհատիկ՝ արտը կորցրիր,
Քո դեմ ելան պատկերներն այս։

12

- Տես, հաղթ շենքերը կանգուն են նորից,
Իրենց բազմազան հատկանիշներից
Մեզ չեն ծառայել լոկ չունեցածով՝
Գերեզմանի քար դառնալով միայն։-
Ասում է Արմենն ու ես սթափված,
Կարծես թե նոր եմ նկատում նրան։
Կոպերն ուռած են, պարզ է, չի քնել
Եվ ամբողջ գիշեր այն է մտորել,
Ինչ որ ես հիմա։
- Չեկար։ Չհասար։ Ես կործանեցի։
Օ, ինչ ուժեղ է եսը մարդու մեջ։
Հեշտ չէր, ողջ գիշեր իմ դեմ կռվեցի
Եվ իմ տեղ պիտի նկարեմ նրան.
Նույնը կլինի՝ մի երկինք անբիծ,
Կապույտում ճախրող սեգ արծիվը այն,
Թե խաղաղությունն հսկեք արծվաբար։
Լուսե Սիրվարդը կլինի նորից,

Հիմա ուրիշին թևանցուկ արած։
Լոկ ես չեմ լինի,
Մեկ էլ այն օձը չի լինի պառկած.
Պիտի նկարեմ թռիչքի պահին,
Իբրև սև շանթի՝ սև հողից ծնված.
Պառկած չէ կյանքում մարդու թշնամին...
Եվ նա ձգում է մի ուրիշ կտավ
Ու սկսում է ամեն ինչ նորից,
Բայց մի կտավ չէ աշխարհը այս հին,
Ջնջեցին՝ հեշտ չէ սկսել կրկին։
Իսկ աշխարհն այս հին այն է, որ տեսնես՝
Ցնծա ինժեներն այն բանի համար,
Որ նոր տեսակի պոմպ է ստեղծել,
Նայի այգեպանն ամեն առավոտ,
Թե դեղձ ու խաղողն ինչքան են հասել,
Վարորդ ունենա ջրցան մեքենան,
Փողոցի ծառերն ամեն օր ջրի,
Այս տրամվայը զնգոցով անցնի,
Այս մանկան կանչը սրտեր լեփ-լցնի...

(1963 թ.)

ՄԵՂԵԴԻ ՍԻՐՈ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

1

Իր շող մատներով նվագեց արփին,
Նվագեց ձմռան ծառերի վրա,
Ու բողբոջները ուրախ բացվեցին,
Զնգաց ամենուր երգը զմրուխտյա։
Ու սառցի վրա արփին նվագեց,
Ջրերի կարկաչն հնչեց օրնիբուն,
Դարձան ծովերը երգեր ծփծփուն,
Ժեռ ափերի մեջ հնչեցին էլի։
Երկինքը երգեց շող մատների տակ
Իր կապույտ երգը՝ ծիծաղներով լի։
Իր շող մատներով նվագեց արփին
Նաև սիրավառ իմ սրտի վրա,
Ու սրտիս խորքից հնչեց մեղեդին
Մեծ սիրո մասին ու խաղաղության,
Առա ես վրձին ու ներկեր առա,
Որ ձև տամ, մարմին իմ զգացածին։
Արև նկարեմ կանաչի վրա,
Արև՝ դուրս հորդած կույս բողբոջներից,
Որ պայթել են լուռ ու դարձել ահա
Վառ կանաչ պուտեր ծառերի վրա։
Դեռ այս պուտերը տերև պիտ դառնան,
Խենթուկ քամու հետ համբուրվեն անհագ,
Ու քամին, նայիր, ճամփեքով գարնան
Նրանց է գալիս կարոտով վառման,
Էլ չհիշելով, որ փոքր են նրանք,
Գալիս է՝ սիրուց դարձած այնպես տաք։
Օ՜, այս արևը, արևն ապրիլյան,
Ուզում եմ բացել կուրծքս նրա դեմ,

Որ մոտիկ լինեն, գոնե մի վայրկյան
Իմ սիրտը և նա,
Մեկտեղ տրոփեն, այրվեն ու չզգան,
Որ իրենց միջև պաղ հագուստներ կան։
Ու կկոցում եմ աչքերս շաղված,
Որ միայն, միայն արևը տեսնեմ,
Ուշքս չտանեն ուրիշ պատկերներ։
Իսկ այդ արևը աղջիկ է հուրհեր,
Ասես կցնդի տեսիլքը հանկարծ,
Հետո ո՞ւմ պիտի իմ հոգին տա հարց,
Թե ինչո՞ւ, ինչո՞ւ, այդ ո՞ր օրենքով
Իմ ու իր միջև պաղ հագուստներ կան։
Եվ նկարում եմ արև-աղջկան։
Արև կա, գարուն իմ կտավների
Դեռ երեկ բացված ցուցահանդեսում։
Հաճախ եմ կարդում հայացքում մարդկանց
Եվ կարծիքների լղարիկ գրքում,
Որ ես արվեստում աստղ եմ նորածագ,
Բարի են մարդիկ, խոսքերում նրանց
Ճշմարտության տեղ գովք կա չափազանց։
Բայց ես իսկապես իմ այս նկարով,
Իմ այս գույներով տաք, սիրագորով
Կասեմ ձեզ, մարդիկ, որ չեք սխալվում,
Իրոք արվեստում աստղ եմ նորածագ։
Իր շող մատներով արփին լուսարձակ
Իմ սրտի վրա նվագում ահա
Եվ այլ, մի ուրիշ երգ է թրթռուն
Ջիլ հնչեցնում կտավի վրա։
Եվ նկարում եմ արև-աղջկան,
Ինձ եմ նկարում ես կողքին նրա։
Չեն շշնջացել իմ շրթունքները
Նրա ականջին իմ թաքուն սերը,

Ոհ, պետք չեն բառեր, բառերը ի՞նչ են,
Թող գույներն ասեն, որ այսքան ջինջ են,
Թե ինչքան խորն եմ սիրում ես նրան,
Թող այդ կերպ լինի խոստովանանքս,
Թող այդ կերպ ասեմ, որ լույս ես, կյանք ես,
Այս կանաչ շողն ես ծիլերի վրա,
Այս բողբոջներից ճառագած արփին,
Տիեզերական մեծ լուսաբացը
Եվ չձանձրացող առօրյա հացը։
Բանաստեղծական հնչուն տողի պես
Երկնում կռունկի երամն է զնգում,
Թող զնգա նաև կտավիս վրա։
Անցած աշունքվա տերևը վերջին
Քամուց չի ընկնում, այլ ուժից վերին,
Որ մայր ծառերը հրահրում են
Տեղ տալու համար
Իրենց մայրության նոր պտուղներին։
Օ՜, արարչագործ իմաստուն ոգի,
Դեռ չգիտեմ ես, թե ինչպես պիտի
Քեզ վերստեղծեմ կտավիս վրա,
Դու հեշտ ես տրվում երգում պոետի,
Սակայն գույներում փախչում ես հեռու,
Բայց կհանդիպենք մենք դեռ իրարու։
Մի խոր երկինք է վերում ծովացած,
Ի՜նչ թարմ գույներ են, ի՜նչ լուսե կապույտ,
Թվում է, պիտի արծիվը անփույթ
Իր թևը քսի ու կապույտ ներկվի,
Թվում է, պիտի ինքն իրեն երգվի
Այս ջինջ կապույտը անտառի վերև։
Սիրո պահապան արծիվն է ճախրում
Ահա նաև իմ կիսատ նկարում։
Սակայն կապույտը այն չէ, ո՞նց ասեմ՝

Ի՜նչ թարմ գույներ են, ի՜նչ կապույտ լուսե։
Բայց հավատում եմ, դեռ պիտի զնգա։
Սիրո պահապան արծիվը թե կա,
Ուրեմն պիտի ոսոխ էլ լինի,
Որից արծիվը սերը պաշտպանի։
Օձը... Բայց այս ջինջ գեղեցկության մեջ
Նա իր ֆշշացող սևը կխառնի։
Ի՞նչ արած, կյանքում այդպես է, ավա՜ղ,
Ամեն մեկիս դեմ ու գեղեցկության։

2

Արև-աղջիկը իր շող մատներով
Հետ տարավ ծածկոցն իմ նոր կտավի,
Հիմա ինձ նման ինքն էլ կհուզվի,
Կշիկնի հիմա ու լույս կարձակի
Իմ սիրո անբառ խոստովանանքից։
Սակայն լուռ է նա ու դեմքը սառն է,
Իմ շուրջը ասես մի մութ անտառ է,
Ու մոլորվել եմ ես ծառերի մեջ.
Ի՞նչ է մտածում, ինչո՞ւ չի խոսում,
Թե՞ չի հասկանում ես ի՜նչ եմ ասում։
- Հասկացա,- ասաց ու լուռ դուրս գնաց։
Մի պահ կանգնեցի ես շանթահարված,
Հետո վազեցի ու հասա նրան։
- Ես քեզ հասկացա,- ասաց տրտմալից,-
Դու էլ երանի հասկանայիր ինձ
Ու չստիպեիր, որ ասեմ խոսքեր,
Որոնք ինչքան էլ մեղմությամբ ասեմ
Սիրտդ կխրվեն՝ դարձած սուր ասեղ։
Ա՜խ, ծակծկված է իմ սիրտն էլ հիմա

Եվ ծակծկողը քո փառքը չունի,
Ոչ էլ քեզ նման գեղեցիկ է նա,
Բայց ես չորս տարի սիրում եմ նրան
Ու սիրամերժ եմ։
Արև-աղջիկը դառն հեկեկաց,
Գուցե թե խորհեց, որ այսպես դյութված
Ինձ նման մեկը սիրում է իրեն,
Այն մեկն ինչո՞ւ է մերժում սառնորեն։
Ես իմ սեփական ցավը մոռացած՝
Այնպես ուզեցի սփոփել նրան,
Ուզեցի լինել ոչ սիրուն տղան,
Միայն թե այսպես լինեի սիրված։
Ի՞նչ է իմ փառքը, ախր ի՞նչ եմ ես՝
Մի քիչ նկարիչ, մի քիչ բանաստեղծ,
Իսկ նա, այդ տղան բախտավոր է մեծ,
Բայց և մեծ անբախտ, որ չի ըմբռնում
Արև-աղջկա հմայքը անհուն։
- Գուցե չես կարող դու ինձ մոռանալ,
Սակայն խնդրում եմ չհետապնդես։ -
Ասաց, հեռացավ՝
Սրտի մեջ նոր ցավ։
Դեռ տաք էր վերքը ու չէր ցավում դեռ,
Սառեց և ահա
Իր ցուրտ մատներով բուքը նվազեց
Սիրամերժ, լքված իմ սրտի վրա։
Թե մարդ ես, ելիր այս ցուրտ քամու դեմ,
Մի թող, որ հոգիդ ձյունն ամայացնի,
Գոհացիր, որ կա արև վսեմ,
Նրա պատկերով այս աղջիկը կա,
Որ լույս է, սեր է, բայց ոչ քեզ համար,
Իրական կին է, քեզ համար՝ նկար։
Իսկ եթե մի օր այն տղան սիրի,

Ջնջիր քեզ, քո տեղ նրան նկարիր։
Այդ երբեք, երբեք, երբեք չի լինի,
Ես մարդ եմ, վեր է դա իմ ուժերից։

3

Արևն ուրախ ծիծաղում է, բայց ո՞ւմ վրա.
Ո՞վ է տեսնես, մի բան անում հիմարավուն։
Չէ, արևը շատ չի սիրում զվարճանալ,
Ծիծաղում է նրա համար,
Որ բոլորին կարող է տալ
Շող ու ժպիտ ու ջերմություն,
Լույս ու բերկրանք ու սեր հորդուն...
Նրանից է այսպես խնդում,
Որ տատիկը հարյուրամյա
Հեռախոսով ձայնը լսեց հեռու թոռան,
Սունկը պատռեց հողի կուրծքը և ելավ դուրս,
Այս դհոլը և այս զուռնան...
Բայց սպասիր, մի ծիծաղիր, բարի արև,
Հարսը նա է... փլվեց հույսիս սյունը վերջին։
Նրանք ցնծում են միասին՝
Այն ոչ սիրուն տղան և նա,
Չեն էլ խորհում, որ այս պահին
Խորտակվում է մի սիրտ ահա,
Մի ծիծաղիր, օ՜, չար արև։

4

Իր բիրտ մատներով հողմը նվագեց
Մոլեգնած, մթնած իմ սրտի վրա,

Այս ի՞նչ արեցի, այս ե՞ս արեցի,
Թե՞ կենդանացավ օձն իմ նկարած,
Կտավի վրա վեր ու վար սողաց,
Թողեց հետքերն իր սև, քստմնելի,
Եկավ իր տեղը վեր ընկավ էլի.
Սեփ սևի տակից իմ սերն է նայում,
Մի հոնք է կամար,
Այտից մի պատառ,
Մի մատ է ձեռքից,
Կրունկից մի մաս։
Եվ ես զարհուրած, և ես լաց դարձած՝
Ուզեցի մաքրել սևը կտավից,
Ախ, էլ ի՞նչ մաքրել, կորստի ցավից
Կրծքիս տակ սիրտս հուսահատ տնքաց։
Բարի արեգակ, դու, որ ցրում ես
Գիշերվա մութը քո շողով ցնծուն,
Ցրիր իմ մութն էլ, տուր ինձ մոռացում,
Որ գեթ չտանջվեմ իմ արածից ես,
Էլ չմտածեմ, որ կտավն իմ այս
Մեծ սիրո երգն էր գույներում գարնան,
Բայց նաև երգը մեծ խաղաղության,
Սիրո մեջ դարձա հետին ստահակ
Եվ խաղաղության երթում՝ դավաճան։
Օձն է փաթաթվել մարմնիս ու սրտիս
Ու չի հագենում մեն մի խայթելով,
Նույնը կրկնում է անվերջ ու անվերջ։
Օ, Լաոկոոն, և՛ մարդ, և՛ ոգի,
Հառնում ես իմ դեմ, ինչպես քանդակում,
Որդիներիդ հետ, օձի կապանքում։
Օձը գալարուն՝
Իմ օձի նախնին անտիկ աշխարհում,
Ինչպես է սեղմում մարմինն իր զազիր

Քո մարմնի շուրջը և որդիներիդ,
Ատելություն է, սև ուժ վիթխարի
Եվ խայթելու տենչ, կործանման մղում։
Ու թեև խայթված՝ վիթխարիդ այդպես
Մինչ վերջին շունչդ պիտի մաքառես,
Եվ չես ճչում դու, կռվում ես միայն՝
Մարմինդ ու դեմքդ ցավից ծռմռած,
Ցավն ահռելի է, ինչու՞ չես ճչում։
Օ, հզոր ոգի, հասկացա ինչո՛ւ.
Մի մեծ խոհով ես դու լուսավորված,
Դու սերն ես բեղուն, օձն՝ ատելություն,
Դու կյանքն ես անհուն, օձը՝ մահ ու թույն,
Ճչաս՝ պարտված ես, պարտվածն է ճչում,
Դու՝ խաղաղություն, օձը՝ պատերազմ,
Հաղթել ես տենչում այս գոտեմարտում,
Որ դարեր տևել ու հասել է մեզ։
Իսկ ես՝ մի դիպված
Եվ ընկա պարտված։

5

Նա եկավ ինձ մոտ՝
Արև-աղջիկը՝ գունատ ու թախծոտ,
- Ես գիշերները չեմ քնում,- ասաց,
Մինչև լուսաբաց տեսնում եմ արթուն,
Ինչպես սև օձը այստեղ նկարած
Աշխարհի վրա վեր ու վար սողաց,
Ողջը ավերեց, ինչպես պատկերն իմ,
Դու ինչո՞ւ, ինչո՞ւ ձեռքով ոխերիմ
Այդ բանն արեցիր,
Որ հանգիստ չունեմ տագնապում անծիր։

Իմ ուղեղի մեջ ռումբեր են պայթում
Ու ես տեսնում եմ ողջ գիշերն արթուն՝
Շեն քաղաքից միայն մի գետ մնաց շարժվող՝
Նա էլ լռեր, պապանձվեր թող
Ու չպատմեր այն շինարար մարդկանց մասին,
Որ քարերի տակ մնացին։
Ինչ-որ մարդիկ պար են բռնում խելագարված,
Սրտերը մութ, մտքերն անկապ ու խաթարված.
Շատ չեն պարի ու քրքջա,
Թե որ հանկարծ վիհը չընկնեն իրենց բախտից,
Ո՞ւր կփախչեն ատոմախտից։
Մի քիչ հեռվում ուրվականներ եմ նկատում,
Բռնվել են այդ կապտաշուրթ հիվանդությամբ,
Պիտի մեռնեն արագ, ինչպես չար հեքիաթում։
Ես զարհուրում եմ այդ պատկերներից,
Որ կրկնվում են անվերջ ու անվերջ,
Անիծում եմ քեզ մղձավանջիս մեջ,
Որ կրքիդ գերի՝ ոչ միայն քունս,
Այլև աշխարհը կործանել ես դու,
Դու, որ այդքան զուսպ ու խոհեմ էիր,
Անզուսպներն ի՞նչ են, գիտե՞ս, անելու։
Տուր ինձ ապացույց, որ կրքի վիհից
Մարդը կարող է՝ մեծ սիրուն հլու
Ելնել կատարը բանականության.
Ինչ ավերել ես՝ վեստեղծիր դու,
Քո տեղ նկարիր քո ախոյանին՝
Ինձ գարնան գրկում թևանցուկ արած,
Քուն բեր աչքերիս, ընկեր իմ անգին։
Ներիր, որ շատ է պահանջն իմ դաժան։
Թե խաղաղության վահանն ես դու էլ
Ու սուրը նաև,
Պիտի տակետակ քո եսն անարև

Լցնես արևով մի անխտրական,
Լոկ չպահանջես, այլև տաս շատ բան։
Ասաց, հեռացավ ու նորից ահա
Արծիվն է ճախրում կտավի վրա,
Նույն կռունկների երամն է զնգում,
Նույն կանաչներն են արևի ցոլքում,
Ամեն ինչ կարծես նույնն է, ինչպես կար.
Լոկ օձն այս անգամ պոկված իր տեղից
Պիտի զիգզագվի սև շանթի նման
Թիկունքում սիրո և գեղեցկության,
Մեկ էլ անանուն, ոչ սիրուն տղան
Իմ սեր աղջկան թևանցուկ անի։
Ու նկարում եմ... սակայն ծալեծալ
Կտավիս վրա ծփում են դարձյալ
Իմ սիրո հույսը և կարոտներս,
Անկարող եմ ես մոռանալ սերս։
Ախ, արև-աղջիկ, ներիր, ներիր ինձ,
Բայց մի՞թե քիչ է, որ իմ փոխարեն
Նա է քո թևը բռնել քնքշորեն,
Ամբողջը նրան, իսկ ինձ, իմ սիրուն,
Գեթ այս կարոտը, այս լույսը մնա,
Այս լացը թաքուն։
Այս լացը մնա և մի սփոփանք,
Որ քո աչքերին կիջնի քաղցր քուն
Եվ մեծ, անսահման մի երջանկություն,
Որ խաղաղության վահանն եմ ես էլ
Ու սուրը նաև,
Ուրեմն պիտի իմ եսն անարև
Լցնեմ արևով մեր անխտրական,
Լոկ չպահանջեմ, այլև տամ շատ բան։
Ու նկարում եմ քո բախտավորին
Գույներով այնպես տաք ու մտերիմ...

Իր թաց մատներով աձրևն է հիմա
Նվագում անվերջ իմ սրտի վրա։

(1988 թ.)

ՎԵՐԱԴԱՐՁ

1

Գարնան ջրերը հորդել, գալիս են,
Գնամ սարերը, գարունն այնտեղ է,
Տամ իմ ճակատը սարերի հովին,
Ձեռքս երկարեմ երկնքի մովին
Ու ինձ թվա, թե արծիվ եմ դառնում։
Լսեմ շշուկը զարթնող ծիլերի,
Ես բանաստեղծ եմ, նրանց հետ շրշամ,
Երակներիս մեջ վարարումն զգամ
Այս նորեկ գարնան։
Թե չէ քաղաքի գարունն ի՞նչ գարուն,
Այստեղ ցամաքած երակ է առուն,
Իսկ պուրակները թվում են աչքիս
Քրքրված շորին կանաչ կարկատան։
Ողջույն ձեզ, լեռներ,
Ողջույն պոետից՝ ձեր գիրկը եկած։
Դուք ինձ ուժ կտաք,
Եվ ես կվանեմ մեզը տխրության,
Որ սրտիս իջավ սիրուն աչքերից
Մի լավ աղջկա։
Նա ինձ խեթ նայեց, երբ ես ասացի՝
Սարերը ելնենք, սե՛ր բանաստեղծի,
Նա ասաց, որ ես չեմ ծնվել պոետ,
Կես ճանապարհից լավ է դառնամ ետ,
Թողնեմ Դուրյանին ու Նյուտոն կարդամ,
Չէ՞ որ սիրում եմ
Ես չոր ու ցամաք բանաձևերը։
Ծաղրեց նա երգս իրեն նվիրած,
Բայց թող իմանա իմ գոռոզ սերը,

Վրեժ են լուծում բանաստեղծները։
Ես այնպիսի երգ կգրեմ հիմա,
Որ երբ նա կարդա՝ խիղճն իրեն տանջի,
Ներիր, մրմնջա, ես չհասկացա,
Որ... Դուրյան ես դու։
Ախ, գարնան ջրերն ինչպես հորդել են,
Ասես անցնում են իմ սրտի միջով,
Այդ իմ տողերն են ծնվում շառաչով
Ու թափվում թղթին։
«Սարերի գարուն»... Վատ վերնագիր չէ։
Տողերի միջից պիտի խոխոջե
Առվի հետ և ջինջ սերս դեպի նա,
Եվ որոտի հետ ականջին նրա
Իմ խոցված սրտի ճիչը կհասնի։
Կարդամ մի անգամ։
Ախ, չէ... ես ինչպե՞ս գարնան հետ ցնծամ։
Սահել է ասես գրիչն իմ փութով,
Ոչ թե սպիտակ թղթի վրայով,
Այլ բարակ սառցի,
Եվ իմ հույզերը ընկել են հերթով
Ու սառցի վրա անշշուկ մարել։
Երևի այն է ձիրքը աշխարհում՝
Ինչ սիրտը զգա՝ գրիչն արծարծի
Նույնը տողերում։
Եթե այդպես է...
Ո՛չ, ո՛չ, լռեցեք, հիմար կասկածներ,
Ինձ ձիրք տրված է,
Պարզապես ձեռքս դեռ շատ անվարժ է,
Այ, համալսարան կընդունվեմ շուտով,
Որ փորձն ուսանեմ ես ուրիշների։
Երբ վարժվի ձեռքս,
Կհնչի երգս։

2

Հինգ գարուն անցավ, հինգ անգամ ելան
Գարնան ջրերը ափերից իրենց։
Նորից գարուն է։ Ծառերն են ծաղկում,
Այդ արեգակն է հորդաբուխ երգում
Մեր այս աշխարհի երգերի երգը։
Դողով լի բռնել Նազիկի ձեռքը,
Նրա հետ սարն եմ ելնում ես ահա,
Ելնում եմ, բայց ինձ այնպես է թվում,
Թե ցածրանում եմ, մնում ներքևում.
Իմ «Տաղարանը» կարդացել է նա
Եվ ասում է, թե իմ երգերի մեջ
Մոխիր կա միայն և կայծեր չնչին։
- Բայց դու,- ասում է,- կրակ ես անշեջ,
Դու ուղևոր ես՝ լայն ճամփից շեղված
Եվ կածաններում մոլորված անհույս։
Այս մեծ աշխարհում
Ի՞նչ չի պատահում,
Եվ պատահում է օրը ցերեկով,
Որ դեղնափորիկ ճնճղուկի նման
Խաբում է մուսան, ետևից տանում,
Էն է՝ կարծում ես բռնեցիր արդեն,
Բայց նա, պո՛ւկ, թռավ դիմացի ճյուղքին,
Կանգնել ծլվլում, կանչում է կրկին,
Թե խելքդ տեղն է՝ մի հետապնդիր,
Թե խելքդ տեղն է՝ թող այդ ճնճղուկին...
Բայց դու, Խնդունի, ինձ չլսեցիր,
Դու համալսարան մտար հրճվագին՝
Մեր ֆակուլտետը բանասիրական,

Որ երգեր կարդաս ու երգեր գրես։
Ու կարդացիր դու, գրեցիր երգեր
Ամբողջ հինգ տարի՝ մինչ ավարտեցիր։
Ախ, դեղնափորիկ ճնճղուկն այդ սուտլիկ
Քեզ շատ խորքերը քաշեց անտառի,
Կածան եմ ասել, որ քեզ ետ բերի.
Ով որ նայել է սիրուն մուսային՝
Նրան հեշտությամբ մտքից չի հանում։
Կորած ճամփա կա քո «Տաղարանում»։
- Իսկ ասա, նրա երգերում չկա՞
Մի կորած ճամփա։
- Նա բանաստեղծ է։
- Իսկ ես... ի՞նչ եմ ես։
- Դու բանաստեղծ ես, երբ ամբողջովին
Խորասուզվում ես այն գրքերի մեջ,
Որ «տեխնիկական» անունն են կրում,
Դու արձաններ ես արճիճից կռում
Եվ ալյումինից՝ կաղինկոտրիչներ...
- Ախ, Նազիկ, Նազիկ, մի շարունակիր,
Քո ամեն խոսքը սիրտս է քրքրում...

3

Կարդում եմ պոեմն աչքերի մասին,
Այդ քո աչքերի մասին է, Նազիկ,
Որ նա գրել է մի գիշերվա մեջ։
Ինչո՞ւ տվեցիր դու ինձ կարդալու,
Որ հասկացնե՞ս ինձ հեռվից-հեռու,
Թե երազում է քայլել քո կողքին
Մի տաղանդավոր, իսկական պոետ,
Իսկ դու ընտրել ես անտաղանդ մեկին։

Յոթ օր է չկաս,
Յոթ տարի անցնի՝ չես գա ինձ այցի,
Դու նրա հետ ես, քո բանաստեղծի։
Իսկ նա իսկապես տաղանդավոր է։
Ինչքան էլ տքնեմ՝ իմ ձեռքն անզոր է,
Աչքերի մասին պոեմ այսպիսի
Ես չեմ ստեղծի։
Երանի նրանց՝ պոետներին կաղ,
Որ հազիվ սարքած մի խեղճ հանգախաղ,
Կարծում են իրենց արդեն Շեքսպիր,
Հարկավ՝ նոր դարի, հարկավ՝ նորարար։
Երանի նրանց, որ գիտեն հնար
Ուրիշի լավը խանդից, նախանձից
Ժխտելու համար։
Երանի նրանց, այդ պոետներին,
Նրանք չեն տանջվում ոչնչությունից
Իրենց սեփական։

4

Խինդի ալիքը թոցրեց ինձ վեր,
Ասես թե հանկարծ բուսեցին թևեր,
Ու թռչում եմ ես շքեղ երազում։
Բայց դա երազ չէ, Նազիկն է եկել,
Այդ նա է նազում, այդ նա է ասում.
- Խոստովանիր ինձ, կասկածել ես դու,
Որ էլ չեմ գալու։
Այո, իհարկե, և տառապել ես։
Արշակ Խնդունի, Արշակ խինդ չունի,
Քո ընկերուհուն բնավ չգիտես,
Իսկ ես քեզ գիտեմ,

Գիտեմ, որ մարդուն չես հավատում դու,
Վկա է դրան այս յոթ օրն անցած։
Ես քեզ փորձեցի։
- Մեկ էլ չփորձես, շատ ծանր է, Նազիկ,
Խենթացնում է մենակությունը։
Բայց մենության մեջ ու տառապանքի
Ես սիրում էի, հավատում մարդուն,
Կրկին ու կրկին այն երգը տենչում,
Որ պակսեցնի ծովը արցունքի
Գոնե մի կաթիլ,
Գեթ մի «ախ» սրտի խորքում հանգցնի։
Սո՛ւս, ականջ արա.
«Տեր, ի գիրկդ գա, սփոփիր նրան»...
Լսո՞ւմ ես, այնտեղ թաղում են մեկին,
Ողում է այդպես ծերուկ քահանան։
Թող ննջեցյալին Տերն ինքն սփոփի,
Բայց նրանք, նրանք, որ տուն կդառնան,
Դատարկ կտեսնեն տեղն հարազատի,
Կտրատված սիրտը նորից ու նորից
Կխոցի վիշտը ու կկտրատի,
Նրանց ո՞վ արդյոք սփոփի պիտի,
Պարզ է, կարեկից ձեռքը պոետի։
Իմ ձեռքը, սակայն, իմ ձեռքը Նազիկ,
Փնտրում, չի գտնում խոսքեր ամոքիչ։
«Տեր, ի գիրկդ գա»... Ողում է դարձյալ
Ծերուկ քահանան,
Որին կանչել է մի հավատացյալ,
Որ սա մեռածին երկինք ուղարկի։
Իսկ այդ մեռածը շատ-շատ կդառնա
Իր թմբին բուսած մի թիզ խոտ միայն
Ու խոտի չափ էլ կձգվի երկինք։
Ախ, ես էլ խոտ եմ, անհայտ, անանուն,

Այդ հանգուցյալից բնավ չջոկվող։
Կգա աշունը, ոչ ոք չի ասի,
Թե այստեղ ինչ-որ մի ծիլ կար կանաչ,
Թոշնեց իր նման ծիլ-խոտերի հետ։
Իսկ ամեն բարդին՝ մի հայտնի պոետ,
Կտրես՝ անպայման տեղը կերևա.
Ամեն մեկը մի բանաստեղծ է սեգ
Ի՛ր, ի՛ր խշշոցն ու սոսափն ունեցող,
Ի՛ր տերևները
Եվ ի՛ր ստվերը։
- Եթե այդպես է, ասա, Խնդունի,
Այ, աշտարակն այն բարձր բոլորից
Ո՞ր բանաստեղծն է, որ աստծու պես
Բոլոր կողմերից երևում է մեզ։
- Հենց աստված ինքը։
Սո՛ւս, չխանգարես, ծնվում է երգս։
«Դու բախտավոր ես, արարիչ աստված,
Մի կիսատ-պռատ աշխարհ երկնեցիր,
Եվ չեն մոռանում մարդիկ քո մասին։
Ինչ ստեղծեցիր քո կամքով վերին՝
Ոչ մի քննադատ չնշեց թերին
Եվ... ընդունեցին։
Քո աշխարհի մեջ այդ կիսատ-պռատ
Մարդիկ դարեդար տանջեցին իրար,
Ու դու լռեցիր։
Ոչ մի զարկող ձեռք դու չբռնեցիր,
Իսկ հիմա, աստված, սիրտ ունես՝ նայիր,
Մահվան ինչպիսի զենք հնարեցին։
Բայց ինչպե՞ս նայես, դու վաղուց չկաս։
Մահից հետո էլ դու բախտավոր ես,
Արարիչ անգո, չստուգված հզոր,
Քո անունով են մարդիկ մինչ այսօր

Լավ երգը կոչում, քո՝ աստվածային,
Կոչում լավ գինին,
Կնոջը անգին,
Ամեն, ամեն բան, ինչ բարձր է, վերին։
Նույնիսկ կպցրին հրանոթներին
Քո այդ անունը,
Թե հրետանին աստվածն է կռվի։
Իսկ ես, որ ծնվել, ապրում եմ ու կամ
Որպես գոյություն մի շոշափելի,
Չունեմ քո փառքի կեսի կեսն անգամ,
Իսկ փառքը հաճախ ինչ-որ մոգական
Եվ խոր իմաստ է հաղորդում տողին։
Ես կհուզեի իմ ընթերցողին
Եվ լուսե ափեր կառաջնորդեի։
Մարդկության գլխին կախված է մազից
Լեգենդի սուրը այն դամոկլյան,
Որ այսօր արդեն այլ անուն ունի՝
Ատոմոկլյան։
Ինչպես կուզեի ես այդ սրի դեմ
Իմ սուրը հանել՝ իմ երգը վսեմ»...
- Խնդունի, քո դեմ թղթեր են ճերմակ,
Երկու ժամ անցավ, մի տող չես գրել։
- Բայց տեսիլքի պես իմ դեմ էր երգս,
Թվում էր, պիտի ուր որ է բռնեմ,
Մոտենում էի, երկարում ձեռքս
Եվ նա թռչում էր, ինչպես քո ասած
Այն դեղնափորիկ ճնճղուկը խաբող։
Մեկ էլ իմ մեջ էր ղողանջում քաղցրիկ,
Իմ էության մեջ, խորքերի խորքում,
Կարծես ուրիշն էր իմ սրտում երգում,
Ինձ մնում էր լոկ բարձրաձայն կրկնել։
Տեսնում ես, ես այդ չկարողացա,

Իմ երգը էլի սրտիս մեջ երգվեց,
Լռեց սրտիս մեջ։

5

Թել-թել անձրև եկավ,
Շող-շող անձրև,
Ջինջ էր ու տաք այնպես,
Արևոտ էր։
Եկավ վարար-վարար,
Լույս էր ասես իջնում
Մուգ ամպերից աշխարհ,
Այնպես ծիծաղկոտ էր։
Երգ էր ասես հորդած,
Շափշափում էր ուրախ
Խաչքարերի վրա,
Երգ էր չհորինված,
Բայց արդեն շատ հնչած,
Կտրվելու մոտ էր։
Էլ չուզեցինք մնալ
Մենք փչակում ծառի,
Դուրս նետվեցինք խնդուն
Նազիկն ու ես։
Վազում ենք, քրքջում,
Կա ինչ-որ ուրախ բան
Ամեն ինչում։
Շիրմաքարերն անգամ
Մև չեն առաջվա չափ,
Լվացված են լույսով։
Քարից քար ենք թռչում
Մենք երկուսով,

Մեր երգն է կարկաչում
Երգի հետ անձրևի։
Երբ երկուսով ենք մենք,
Ծանր չէ երևի
Այն, որ չեն ղողանջում
Իմ յամբն ու դակտիլը։
Ինչ զորեղ է հնչում
Անձրևի կաթիլը։
Այսպես վարար-վարար,
Այսպես թել-թել,
Շող-շող,
Իմ հոգում էլ հիմա
Անձրև է սկսվել։
Թող որ անտաղանդ եմ,
Իսկ նա տաղանդավոր,
Ինձ է ընտրել սակայն
Նազիկն ահա,
Ինձ հետ է նա վազում
Անձրևի տակ հիմա։
Իջիր, անձրև, իջիր,
Իմ վշտերը լվա,
Սիրտն ինչքա՞ն կարող է
Ցավից նվալ։
Ի՜նչ անձրև է թեթև,
Բայց կտրվեց, ափսոս,
Ծիածանն աղեղվեց,
Տես, լեռների ետև։
Անցնենք նրա տակով,
Անցնենք, Նազիկ,
Դու չդառնաս տղա,
Ես չդառնամ աղջիկ,
Այլ քեզ տրվի հավետ

Ջահելություն անանց,
Ես էլ դառնամ պոետ
Մի այնպիսի,
Որ աչքերիդ մասին
Հյուսեմ երգեր անմահ,
Ավելի լավ պոեմ,
Քան պոեմը նրա։

6

Նազիկն իրավ է, իսկապես, այո,
Ով որ նայել է սիրուն մուսային՝
Նրան հեշտությամբ մտքից չի հանում։
Ահա քայլում ենք մենք գործարանում,
Երկաթն է շաչում, իսկ ես ինձ համար
Պատկեր եմ փնտրում և հանգեր հարմար։
Կռունկն իր երկաթ մագիլների մեջ
Առաստաղով մեկ իր բեռն է տանում,
Ես իմ բեռան տակ էլ չեմ դիմանում
Եվ ականջն ի վար իմ առաջնորդի
Բարձր գոռում եմ գոռ աղմուկի մեջ.
- Եթե չպիտի իմ երգը հորդի,
Նազիկ, ինձ համար կյանքն իմաստ չունի,
Անպետք օրերիս մի օր կտամ վերջ։
- Դու գիժ ես, իսկը կապելու խենթուկ,
Եկ, եկ։ - Ու Նազիկն իմ ձեռքը բռնած՝
Առաջնորդում է դեպի ձուլարան։
Ի՜նչ շոգ է այստեղ,
Փռվել է մեր շուրջն ասես Սահարան,
Քրտինքն է պտկում ճակատիս վրա,
Բայց ես՝ անհոդդոդդ, ես չեմ ընկրկում,

Ամոթ է, ախր,
Չէ՞ որ ձուլողը այս ամրամկան
Այսպես անվախ է մոտենում հրին,
Նրա բաց կրծքին, տես, մազեր չկան,
Այրվել են քիչ-քիչ, չեն աճել կրկին,
Խարկած հողի մեջ ընկած սերմի պես։
Ով ձուլող ընկեր, դու մի զարմանա,
Որ քո հնոցին մոտիկ գնացի
Քեզնից ավելի,
Չեմ ուզում խորհես իմ մասին հիմա,
Որ իբր այս մեծ, այս շոգ աշխարհում
Դյուրինն եմ ընտրել ինձ համար ճամփա։
Թող թարթիչներս խանձվեն կրակից,
Շիկացած օդից թոքերս ուռչեն,
Մեկ է՝ այս տապից ես նահանջող չեմ։
Մի կարծիր դու ինձ փխրուն թղթակից,
Այդպես մի ժպտա, ո՛չ մի կասկածիր,
Այդպես մի հեգնիր, ախր հասկացիր,
Քո հնոցից չէ, որ սիրտս դողաց
Ու եկած ճամփով ետ-ետ գնացի.
Հին վիշտը նորից իմ սիրտը սողաց...
Դու, ձուլող ընկեր, քո կրակն ունես,
Երկաթ ես հալում, կապար ու չուգուն,
Դու ստեղծում ես քոնը այս կյանքում,
Իսկ իմ երգերում... մոխիր կա միայն
Եվ... կայծեր չնչին...
- Եկ, եկ,- Նազիկն է կանչում վերստին,
Ո՞ւր է ինձ կանչում, բարձո՞ւնքն արվեստի,
Չէ, իմ քնարին նա չի հավատում։
- Եկ, թղթակից, տես, ինչե՛ր կան
Այս աշխարհում երգից բացի։
Ու կանգնում է Նազիկն ահա

Անկյուն նետված հաստոցի դեմ,
Որ գլխավոր ինժեների
Միտքն է աշխարհ բերել թերի։
Պիտի լիներ սա աշխարհում
Հղկող հաստոցն ամենաճիշտ,
Բայց... լուռ մնաց։
Ի՜նչ խոհեր են կորչում իզուր,
Ինչքա՜ն հույզեր դառնում են վիշտ,
Խոցում սիրտը գյուտարարի։
Եվ օրեր են այսպես անցնում,
Իսկ նա հույսը քիչ-քիչ կտրում,
Էլ հաստոցին չի մոտենում։
Եկ, թղթակից, ինչե՜ր են, տես,
Այս աշխարհում մնում թերի,
Քո երգի պես...

7

Գիշերը անհուն օվկիան խավարի,
Մենք հատակում ենք,
Վերում աստղերն են թափվել ջուրն ասես,
Լողանում զվարթ ու կատակում են։
Նրանց կատակներն ու զրույցները
Պատրաստ եմ լսել ամբողջ գիշերը,
Սակայն նստել եմ իրիկնամուտից,
Ակնարկ եմ գրում ձուլողի մասին
Եվ ինժեների մասին եմ գրում,
Բայց... երգն է գալիս ու ինձ խանգարում։
Ես նրանց մասին ե՛րգ պիտի գրեմ,
Ակնարկն ի՞նչ, կարդան ու դեն կնետեն։
Երգը... Ամեն մի հաջողված պատկեր,

Ամեն նոր կերպար, էպիտետ կամ տող
Կյանք է ինձ համար, մարդ է նոր ծնվող։
Ի՜նչ շուտ են մեռնում բանաստեղծները,
Ինչքա՜ն լավ երգեր չեն գալիս աշխարհ։
Հիմա ո՞վ կտա մեզ այն հույզերը,
Որ չերգած՝ փակեց Բայրոնն աչքերը։
Դուրյանը հանգավ դեռ նոր ճառագած,
Ի՜նչ արշալույս էր բացում նա երգի։
Մահ, եթե պետք է քեզ հաշվեկշիռ,
Իմ կյանքից տայիր նրան մեկ տարի,
Չէ, մեկը քիչ է, տասնմե՛կ տայիր,
Իմ տարին նրա մեկ օրն իսկ չարժի,
Իմ տարին՝ ամուլ անապատի պես,
Որ ունի վարդեր երկնելու երազ,
Երկնում է սակայն փշեր հազիվհազ։
Զուլոդի մասին և ինժենների
Երկնել եմ ահա փուշ-տողեր անբույր,
Որ սիրտս են ծակում խայթոցներով սուր։
Ո՞վ էր ինձ ասում,
Որ նայեմ այսպես սիրուն մուսային,
Ուրիշ ճամփաներ մի՞թե չկային։
Իմ բանաստեղծ հայր,
Հիշո՞ւմ ես, երբ ես պատրաստում էի
Ինքնաշեն ավտո քույրիկիս համար,
Դու ձեռքդ դրիր իմ ուսին, ասիր.
«Իմ որդին պիտի բանաստեղծ դառնա,
Այդ երկաթը թո՛ղ,
Զուլիր երկաթե տողեր զնգացող։
Ինչ հայրդ չարեց՝ դու անես պիտի»,
Եվ ես ընտրեցի ճամփան պոետի։
Ինձ քրքրում են մացառներն հիմա,
Ես ոտաբոբիկ ու արյունլվա

Քայլում եմ՝ ինքս էլ չգիտեմ, թե ուր։
Ինչո՞ւ է, ինչո՞ւ բախտն այնպես անում,
Որ ով նայում է սիրուն մուսային՝
Նրան հեշտությամբ մտքից չի հանում։

8

Նույնն էր արևն էլի՝
Մի նորաբաց շուշան
Երկնի դաշտում,
Նույնն էին աստղերը՝
Մեխակներն այդ խնդուն,
Եվ լուսինը նույնպես
Չէր փոխվել մազաչափ,
Բայց ես նույնը չէի,
Փոխվել էր Նազիկն էլ,
Մի մեծ բան էր եղել
Այս աշխարհում.
Մի Գագարին, երեկ
Անհայտ անուն,
Այսօր աշխարհով մեկ
Շուրթից-շուրթ է անցնում։
Հրաշք է իսկական,
Մարդն առաջին անգամ
Թև է բացել արդեն
Ոչ թե Երկրի վրա,
Այլ Երկրից դուրս։
Նո՛ր արշալույս,
Քեզ ցնծագին ողջույն։
Նոր ես ծագում, սակայն
Ես ու Նազիկն արդեն

Աստղանավորդ դարձել,
Երկինքներ ենք կտրում։
- Ես ուր գնամ, սիրտս
Պիտի մնա Երկրում,-
Ասում է Նազիկը
Մեր արբանյակ-նավում։
Մենք տանում ենք մեզ հետ
Մի բուռ հող երկրային,
Մի վարդափունջ՝
Ցողված Երկրի ջրով,
Որ բույրն զգանք Երկրի։
Տանում ենք մենք նաև
Ամենալավ գիրքը
Երկրային երգերի,
Ախ, գեթ մի տող չունեմ
Ես նրա մեջ։
Ու սթափվում եմ ես
Իմ երազից։
- Լսիր, Նազիկ,
Երկաթից է շինված
Արբանյակ-նավը, չէ՞։
Երգ ունի երկաթը,
Մարդու երազանքը
Ուղեծիր հանող երգ։
Ես այդ մասին ինչպե՞ս
Չեմ մտածել երբեք։
Դու հիշո՞ւմ ես, Նազիկ,
Ասում էիր, որ ես
Պոետ եմ իսկապես,
Երբ սուզված եմ լինում
«Տեխնիկական» կոչվող
Գրքերի մեջ։

Այդ գրքերում, Նազիկ,
Նույն երգն էր երկաթի,
Որ ես չէի լսում,
Հիմա լսեմ պիտի...

9

Մեր բլրի վրա, փչակում այս մեր,
Դու ինձ ամպամած չես տեսել, Նազիկ,
Տես, ես ժպտում եմ, թեև կարեվեր
Իմ սիրտն է տնքում կրծքիս տակ հիմա։
Մեր բլրի վրա, այս մեր բարձունքում
Ես վերքս սեղմած ափերով իմ տաք,
Տեսնում եմ նորից իմ կոպերի տակ
Մի մեծ գործարան, ես մեջը մենակ,
Ես մեն ու մենակ ողջ գործարանում։
- Էս ո՞վ է, արա, որտեղի՞ց բուսավ։
- Հեքիաթ պատմող է, էդպես են ասում։
- Էլ ինչո՞ւ հապա գործարան եկավ...
- Գիտեր փլավ են մեզ մոտ բաժանում։
- Հա, հա, հա, դե կեր երկաթե փլավ,
Միայն թե զգույշ, փորդ չծակի։
Ծաղրը եկավ ու ականջիս հասավ,
Խրվեց սրտիս մեջ ուժով գնդակի։
Այդ տղերքի պես, նրանցից առաջ
Խայթեց գլխավոր ինժեներն էլ մեր.
- Ինձ բանվոր է պետք,
Ինձ բանվոր տվեք,
Իմ ինչի՞ն է պետք լեզվի դասատուն։
- Բայց, ընկեր Զազյան,- ասացի նրան,-
Երբ Դուք ծնվեցիք, Ձեր մայրը բարի

Չեր ճակատին չէր գրել «ինժեներ»,
Ոչ էլ իմ մայրը՝ մի գեղջուկ սարի,
Ինձ մկրտել է միայն բանասեր։
Նա ինձ խեթ նայեց՝ լավ, գնա գործիդ։
Իսկ իմ գործն արդեն հաստոցներն էին։
Կանգնած նրանց մոտ՝ զգացի հանկարծ,
Որ իմ գլխի մեջ տողեր են զարթնում
Այն «տեխնիկական» գրքերից պոկված։
Հիշո՛ւմ եմ, հիշո՛ւմ այնքան շատ բաներ,
Ե՛վ բանաձևեր, և՛ գծեր բազում,
Որ առաջ անձև մշուշ էին լոկ։
Հիմա ելնում են խավարից, մուժից,
Ելնում ուղեղիս ծալքերից մեկ-մեկ։
Խայտում եմ, քշվում ինքս իմ ուժից,
Չեմ եղել այսքան զորավոր երբեք
Եվ պայծառատես։
Վառել են ասես
Մի հզոր արև իմ ուղեղի մեջ...

10

Օրը օրին դիզվեց,
Օրը օրին քշեց
Դեպի անցյալ։
Եկան օրեր դարձյալ,
Ամեն մեկը թողեց
Մի հուշ,
Մի հիշատակ
Եվ իրենով լցրեց
Հոգուս ամեն մի ծալք,
Ու չիմացա, թե ե՛րբ

Կամ թե ինչպե՛ս եղավ,
Որ ես դարձա հարգված
Ամբողջ գործարանում։
- Դու տաղանդ ես,- ասաց
Ընկեր Զազյանն ինքը,-
Ես քեզ կօգնեմ, տղաս,
Որ ինժեներ դառնաս,
Թեկուզ ինքնուս։
Եվ պարապեց ինձ հետ
Ընկեր Զազյանն ինքը,
Պարզվել էր երկինքը,
Շող էր թափում հոգուս։
Բայց տխրում էր մեկ-մեկ
Նա ամպի պես.
- Ի՛նչ հաստոց է, գիտե՞ս,
Ելք չեմ գտնում։
Աշխարհում չի եղել
Այլ մի հաստոց,
Որ ճիշտ հատի այսքան,
Ու այսքան ճիշտ տաշի,
Բայց ընկած է փոշում։
Ինչ-որ մի բան, մի մաս
Այս հանգույցում, այստեղ,
Չի ստացվում։
Նա, մի հատիկ ավազ
Ընկած սիրտը առողջ,
Զրկել է սիրտն ամբողջ
Իր տրոփից։
Ու ընկեր Զազյանը
Հառաչում է սրտում։
Ես լավ գիտեմ, Նազիկ,
Թե ինչպես է դաղում

Հառաչանքն այդ։
Տանջվում էի ես էլ,
Երբ զրկված էր այդպես
Իմ երգը՝ տրոփից։
Բայց ես պոետ չէի,
Իսկ նա գյուտարար է,
Կորյուն է ծնածը,
Բայց մեռած-քնած է։
Ախ, ես կարենայի
Արթնացնել դրան։
Երբ ասացի նրան,
Թե՝ թույլ տվեք փորձեմ,
Նա ժպտաց հայրաբար
Ու շշնջաց՝ փորձիր։

11

Նորից նոր մարդիկ տիեզերք թռան...
Լսո՞ւմ ես, Նազիկ, մենք էլ թևաբաց
Վաղը կարող ենք ճախրել աստղերում։
Վարդեր կլինեն մեր աստղանավում,
Ինքս կքաղեմ քեզ համար, Նազիկ,
Եվ նրանց համար, ում հյուր կգնանք
Մարս կամ Վեներա։
Թող մեր երկրային քնքշությունն զգան
Եվ մեր երկրային խանդաղատանքը։
Ի՜նչ գեղեցիկ է, հրաշք է կյանքը...
Ես իմ ձեռքերով և մտքերով իմ
Մեկն եմ այդ հրաշքն արարողներից։
Գիտե՞ս Զազյանը կպել է նորից
Իր նոր հաստոցին ու պոկ չի գալիս,

Այդ ե՛ս հուսահատ նրա սրտի մեջ
Վառեցի հուրը ոգևորության։
Մենք որոնում ենք պատճառները այն,
Որոնք հաստոցը այդ հրաշալի
Զրկել են կյանքի առողջ տրոփից։
- Միտքդ կտրուկ է,- ասում է նա ինձ,-
Դու կոնստրուկտոր ես ծնվել իսկական,
Ինչո՞ւ կորցրիր տարիներ այսքան։
Հետո ժպտում է նա մտերմաբար,
Ձեռքն ուսիս խփում՝ ա՛յ շատ ապրես դու,
Լեզվի դասատու։

12

Իմ ապրած օրերի
Օրն է ամենամեծ,
Այսօր, Նազիկ, հենց նոր,
Հաստոցը աշխատեց։
Ո՞նց դիմանամ մենակ
Ուրախությանն այսքան,
Մեղմիր, մեղմիր, Նազիկ,
Պոռթկումը խնդության,
Ինչպես վիշտն են մեղմում,
Խինդն էլ է սիրտ սեղմում
Իր աքցանում։
Թե լինեիր, Նազիկ,
Դու մեր գործարանում,
Կտեսնեիր ինչպես
Պարում էր Զազյանը,
Պարում էի և ես,
Որ մեր ջանքն համատեղ

Պտուղ տվեց այսպես։
- Բայց ո՞վ գտավ ձեզնից
Գաղտնիքն այն գերագույն,
Նկարչության լեզվով՝
Այն հարվածը վրձնի,
Որ կյանք է ներարկում
Կտավի մեջ մեռած...
- Մենք երկուսս գտանք։
- Բայց ո՞վ առաջինը։
- Մենք երկուսս, Նազիկ։
Զուր թղթակցին ասաց
Ուսուցիչն իմ,
Որ հաղթության դափնին
Ամբողջովին
Իր սանին պիտի տալ։
Շա՛տ է այդ անարդար։

13

- Դու բանաստեղծ ես, Արշակ Խնդունի,
Դու ստեղծում ես արդ քո վսեմը,
Դու ոտք ես դրել կյանքի նոր սեմը,
Քեզ բարի ճամփա։
Եթե ես այստեղ մի դեր ունեցա,
Շնորհակալ եմ մայր բնությունից,
Որ ինձ տվել է քեզ դյութող ժպիտ,
Տվել է աչքեր, որոնց խորհրդին
Եվ բարությանը դու հավատացիր։
Այդպես և նա է հավատում անհուն,
Որ պոեմ գրեց աչքերիս մասին։
Հիմա խենթացած, ափերից ելած

Գիտես, երկնում է ի՛նչ չքնաղ գործեր։
Ես ինձնից անկախ մուսան եղա ձեր։
Շնորհակալ եմ իմ բախտից անչափ,
Որ ձեզ երկուսիդ հանդիպեցի ես,
Դուք լավ տղերք եք,
Ինձ համար երգ եք
Ու ձեզ լսելիս ես չեմ ձանձրանա։
Մի՛, մի՛ հոնքերդ կախի դու այդպես։
Ես քեզ եմ ընտրել,
Նա եթե նույնիսկ Շեքսպիր դառնա՝
Ես չեմ ափսոսա, որ քեզ եմ ընտրել։
Այդ գիտի նա էլ,
Ասել եմ երեկ։
Բայց ես չեմ կարող երբեք ու երբեք
Կես ճամփին լքել մեր բանաստեղծին,
Բարի խոսք չասել...
- Ես իմ հոնքերը չեմ կախում, Նազիկ,
Չէ՞ որ ինձ համար դու վիշտ չես ընտրել։
Երբ դու կողքիս ես՝ զորավոր եմ շատ,
Թվում է ինչե՛ր դեռ պիտի անեմ։
Ուրիշ պատճառ էլ ունեմ ցնծալու.
Ասում են, և ես հավատում եմ խոր,
Ինչ-որ մասեր են արբանյակ-նավի
Մեր նոր հաստոցով հղկել ինչ-որ տեղ։
Ճախրում է հիմա նոր մի թևավոր,
Թռիչքում այս նոր
Ես էլ մաս ունեմ, թեկուզ մի քիչ, մի ծեղ,
Իմ ձեռքով էլ են աստղերը շքեղ,
Մեր երազի մեջ մոտիկ թվացող
Իրականում էլ մոտիկ լինելու։
Ցնծում-երգում եմ, ինչպես պոետը
Առաջին գիրքը տպված տեսնելիս

Ու պոետի պես
Ես աշխարհի հետ, աշխարհն ինձ հետ է։
Հանգ էի երեկ փնտրում անդադար,
Դու ծիծաղո՞ւմ ես. այո, իսկապես,
Ով որ նայել է սիրուն մուսային՝
Նրան հեշտությամբ մտքից չի հանում։
Թռիչքի մասին տիեզերական
Ես երգ գրեցի
Ու տարա երեկ խմբագրություն։
Թերթը տպել է տառերով խոշոր,
Այ, սա է, կարդա,
Բայց Խնդունու տեղ ինքս իմ ձեռքով
Ես իմ անունն եմ գրել իսկական՝
Արշակ Միրաքյան,
Ինքնուս կոնստրուկտոր։

14

Էլ ի՞նչ, այստեղ պիտի
Վերջակետ դնեի,
Կյանքը եկավ, սակայն,
Շարունակիր, ասաց։
Այդ նոր հաստոցով ձեր
Հղկում են ոչ միայն
Աստղանավի մասեր,
Այլև՝
Ատոմային ռումբի։
Բացատրեց կյանքն ինձ,
Թե այդ ինչու պիտի
Այդպես լինի.
Կան լորդ ու բուրժուա,

Բանկիրներ կան, ասաց,
Որ տենչում են բերել
Մեզ մահ ատոմային,
Անեծք նրանց ցեղին։
Բայց անեծքն ի՞նչ,
Ռումբեր են հարկավոր,
Որ նրանց դեմ հանես։
Եվ հաստոցով մեր նոր,
Ճշգրտագույն
Մահ են հղկում։
Ախ, ինձ տրված լիներ
Նաև գրելու ձիրք...
Ասա, Նազիկ, նրան՝
Ընկերոջդ պոետ,
Որ երբ գրել ուզի
Երգը խաղաղության,
Թող հանդիպի ինձ հետ։

(1970 թ.)

ԿՈՆՏՐԱՍՏ

Գոռում է, փրփրում գետը անդունդում,
Զարկում ու զարկվում ափերին ժայռոտ,
Բայց նրան Վահեն չի էլ նկատում
Չի լսում ձայնը այսօր առավոտ:
Նստած մի ժայռի՝ թախծում է անհույս
Արցունք են հուշերն ու մտքերը՝ թույն,
Նա իր սիրելի վայրում է թեկուզ,
Բայց չի մեղմանում դժոխքը սրտում:
Ինչքան է նստել այս ժայռի վրա,
Նայել է ներքև՝ կարծես երկնքից,
Գետը առվակ է թվացել նրան,
Ուզես՝ մեն-մենակ կշեղես ճամփից:
Բայց դա երեկ էր, իսկ այսօր ահա
Այդ խոլ բարձունքը էլ թովչանք չունի,
Մի՞թե լոկ սերն էր մի ջինջ աղջկա
Աստղերով լցրել դատարկն անհունի:
- Մեռնե՛լ, մոռանա՛լ,- շշնջաց Վահեն,-
Չհիշել, որ կա աշխարհում Նվարդ,
Ալիքներ, նա ինձ մերժեց սառնորեն,
Դուք բարի եք միշտ, մոր պես գթառատ:
Մնացեք բարով, ախ, առավոտներ,
Էլ չեք բացվելու իմ սրտի վրա,
Կակաչներ իմ վառ, բարով մնացեք,
Խամրեց ալը ձեր, ողջ սև եք հիմա:
Ախ, մնաս բարով դու էլ, իմ Նվարդ,
Թող խիղճդ խոցվի, որ հիշես ինձ միշտ,
Երբ ուրախ լինես, երբ ցնծաս զվարթ՝
Օձի պես սողա սիրտդ մի խոր վիշտ…
Ու Վահեն զգաց իրեն գետնահար,
Տեսավ հոգու մեջ մի գարշ աղբակույտ,

Դեմը կանգնած էր Նվարդը պայծառ,
Ցոլք էր կարծես նա լուսեղեն, մաքուր։
«Չար ես,- ասում էր այդ ցոլքը նրան,
Ինչքան կեղտեր կան հոգուդ մեջ, նայիր,
Լույսից պիտ լինի իմ սիրած տղան,
Ինձ նման բարի, ինձ պես երկնային։
Հերիք չէ՞ միթե, որ ես տխրում եմ,
Երբ տեսնում եմ քեզ այդպես տանջվելիս,
Ես այլ եմ, ուրիշ, ես նրանցից չեմ,
Որ շոյվեմ, երբ դու մեռնես հանուն ինձ»։
- Ներիր ինձ, Նվարդ,- շշնջաց նորից
Ու խոր հառաչեց սիրամերժ տղան,-
Դու մեղավոր չես, դու լույս ես անբիծ,
Իսկ ես փոքրոգի, սիրուդ անարժան։
Բայց ինչպե՞ս, ասա, ես քեզ մոռանամ,
Երբ չքնաղ ես դու, ջահել եմ ես դեռ,
Ախ, կգա՞ մի օր, որ լոկ մի անգամ
Քեզ հանդիպելիս անցնեմ անտարբեր։
Խորհում էր Վահեն ու աչքերի դեմ
Նվարդն էր կանգնած՝ ցոլանքն անմարմին,
Հետո՝ թե ինչպե՞ս, ինքն այդ չգիտե,
Ելան իր առջև ծանոթներ քանի։
Նրանցից մեկը կանգնեց ու մնաց,
Մի զզվելի մարդ՝ անունը Ենոք,
Նրա համար չէ՞ր, որ ընդգծեր նա,
Թե Նվարդն ինչքան պայծառ է իրոք։
Նա թղթակից է մի թերթում հայտնի,
Մի քիչ վիպասան, մի քիչ՝ քննադատ,
Մի քիչ՝ հռետոր, մի քիչ՝ թարգմանիչ,
Այն ամենն, ինչ որ փող բերի առատ։
Եվ չունի կյանքում ոչ մի սկզբունք,
Իր հավերժ տռուզ գրպանից բացի,

Փո՛ղ տուր նրան դու՝ կգրի իսկույն՝
Կոմիտասն հայ չէ, այլ շոտլանդացի։
Զուր չէր, որ Վահեն ատում էր նրան,
Իսկ այժմ ատեց ավելի ուժգին,
Ի՜նչ լավ է՝ կյանքում Նվարդներ էլ կան,
Ու թույլ չեն տալիս կրծի ժանգն հոգին։
Ծնվել են նրանք, որ ապացուցեն,
Թե մարդը աստծուց շատ քիչ է պակաս։
- Նվա՛րդ, պաշտելիս,- շշնջաց Վահեն,-
Ի՜նչ լավ է, Նվարդ, որ աշխարհում կաս։
Ու վեր կացավ նա, հոգնած էր այնպես,
Բայց սրտում ինչ որ թեթևություն կար,
Կարծես լույսին էր շփվել հոգեպես,
Հոգու մեջ շող կար լույսից այդ պայծառ։
Ահա քաղաքը, աղմուկ, եռ ու զեռ,
Պուրակներ կանաչ, զույգեր թևանցուկ,
Բայց հանկարծ մեկից պայթեցին ամպեր,
Աշխարհը կարծես դարձավ ճիչ, աղմուկ։
Թևանցուկ արած՝ անցնում են նրանք՝
Նվարդն ու Ենոքն այնպես սիրալիր,
Պատմում է Նվարդն ինչ-որ բան նրան,
Սա էլ ժպտում է բեղի տակին իր։
- Առաջարկե՛լ է,- հեգնում է կծու,-
Նամա՛կ է գրել, խելքին աշեցեք,
Է՛խ, է՛խ, վարժապետ, դու խեղճն աստծու,
Քանի՞ ժամ ունես, չո՞րս, կամ թե երե՞ք։
Չի լսում Վահեն ոչ մի բան կարգին,
Բայց էլ ի՛նչ լսի, պարզ է ամեն բառ,
Թե լիներ հիմա նստած քարափին,
Այս անհուն ցավին դժվար դիմանար։
Ախ, Վահե, ինչո՞ւ փոթորկվում ես դու,
Ետ կաց, ձեռքերդ կեղտոտել չարժի,

Չէ՞ որ դու գիտես հատակն այդ հոգու,
Լպրծուն տիղմ է և ուրիշ ոչինչ:
Վահե, Նվարդն էլ, հավատա նույնն է,
Այդ դու ես նրան դարձրել սրբազան,
Տվել ես հոգուդ ջինջ մաքրությունը,
Այն ցոլքը դու ես պարգևել նրան:
Այդպես, լավ արիր, որ զսպեցիր քեզ,
Քայլիր դու, քեզ է մեծ սերն սպասում:
Դու մարդ ես, և՛ սիրտ, և՛ երազ ունես,
Ի՜նչ լավ է, Վահե, որ կաս աշխարհում:

ԾԱՆՈԹ ԺՊԻՏ
(չափածո նովել)

Հուզված է տղան և զայրացած,
Ծաղրում է իրեն և չի ներում,
Որ շուտով կիջնի աղջիկը ցած
Գուցե հենց մոտիկ այս կանգառում,
Իսկ ինքը… այնքան է ամաչկոտ,
Այնքան անշնորհք, անհամարձակ,
Որ քարացել է աղջկա մոտ,
Կանգնել այնպես լուռ, որպես արձան:
Գոնե անունը հարցնի նրա,
Գուցե հենց նա է՝ ծանոթն իր հին,
Տես, նույն աչքերն են, երկու կրակ,
Եվ նույն ժպիտը արևային…
Չէ, ճանաչում է վաղո՛ւց, վաղո՛ւց,
Շատ են հանդիպել կյանքում միմյանց,
Պետք է բաց անել ամեն հանգույց
Թանկ է ժամանակը չափազանց:
Բայց տրամվայը… չար է ինչքան,
Կծկում է ռելսերն արագ-արագ,
Դարձել է այսօր խիստ գործնական,
Չի սիրում խորհել երկար-բարակ.
Իսկ նա՝ աղջիկը… գեղեցկուհին
Ժպտում է միայն այնպես ծանոթ,
Եթե իսկապես ծանոթ են հին,
Ինչո՞ւ է նա էլ զգում ամոթ,
Ինչո՞ւ չի ասում թեկուզ մի բառ,
Ժպտում է միայն, ժպտում կրկին,
Գուցե ծաղրում է անգթաբար
Իր հին, մոռացկոտ բարեկամին:
Հուզված է տղան և զայրացած,

Բայց քնքույշ խոսքեր է որոնում,
Այնինչ աղջիկը իջել է ցած՝
Թողած իր բուրմունքը վագոնում:
Ախ, մտքեր, մտքեր հուզմունքով լի,
Դուք եք մեղավորը անկասկած:
Բայց ո՞վ էր աղջիկն այս հաճելի,
Այդ ինքն էլ՝ տղան հիշեց հանկարծ.
Նկարն էր նրա տեսել թերթում,
Մի պահ մտածել նրա մասին,
Հետո չէր հիշել կյանքի երթում
Նա այդ աղջկան հարվածային,
Բայց ահա՝ հիշեց, և ինչ զարմանք,
Այդ նա էր, այդ նա՝ ծանոթն իր հին:
Նույն աչքերն էին՝ երկու կրակ,
Եվ նույն ժպիտը արևային.
Նա տուն էր դառնում աշխատանքից
Եվ գոհ էր անշուշտ, հոգով հպարտ,
Նրա ժպիտը երջանկալից,
Պայծառ ժպիտն էր հաստատում այդ:
Պարզ էր ամեն ինչ, պարզ ու մեկին
Եվ ամեն հանգույց արդեն բացված,
Էլ հարկավոր չէր տանջել հոգին,
Որոնել այլ բա ն, այլ առեղծված:
Բայց ինչո՞ւ տղան հուզված է դեռ,
Դժգոհ է դեմքը, ինչո՞ւ, ինչո՞ւ:
Ասացեք ինչպե՞ս չդժգոհեր,
Չիմացավ հասցեն գեղեցկուհու:

ԲԱԼԼԱԴՆԵՐ

ԲԱԼԼԱԴ ՉԳՐՎԱԾ ԵՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինձ մի հարցրեք, թե ո՞ր դարում էր,
Կամ թե ո՞ր երկրում, ո՞ր ջրվեժի մոտ,
Ես միայն գիտեմ, որ տաք գարուն էր
Ու տաք կտրիճներ՝ սրտերով ըմբոստ:
Նրանց երազը ծնվել էր հողմից
Ու չէր հանդուրժում կապանք՝ հողմի պես,
Սերվել էին ամպերի տոհմից՝
Ազատ չու առնել, շանթել գոռ ու վեհ:
Եվ իրենց սրտից և խենթ ու խելառ
Իմաստուններից սովորել էին
Գլուխ չթեքել փոր հացի համար,
Որ շիտակ կանգնեն արդարն ու բարին:
Մի բուռ կտրիճներ՝ կրակներ բոսոր,
Մարտ էին մտնում ձիերով աշխետ
Եվ ինչպես նման մարտերում բոլոր,
Նրանց փնջում կար նաև մի պոետ:
«Կայծ ենք մենք, կայծ ենք,- պոետն էր երգում,-
Դեռ բոց կդառնանք նոր արշալույսի,
Ես տեսնում եմ պարզ, ահա երկնքում
Առաջին շողն է վառվում մեր հույսի»:
Ու կռվում էին թշնամու դեմ
Ու կռվից հետո մի ջրվեժի մոտ
Մաքրում շորերն ու սրերը վսեմ
Իրենց թշնամու արյունից կեղտոտ:
«Քիչ ենք մենք, քիչ ենք, բայց կշատանանք,-
Շարունակում էր պոետն իր երգը,-
Դեռ շատ ըմբոստներ քնից կարթնանան,
Արդար սրերին կմեկնեն ձեռքը»:

«Դեռ կշատանանք, դեռ կշատանանք»՝
Կրկներգն էր թնդում ձորերում մթին,
Գոռ ձայների մեջ և մի ձայն բարակ՝
Սիրած աղջիկն էր ջահել պոետի:
Մարտերից մեկում աղջիկը… ընկավ…
Փլվեց պոետը նրա դիակին,
Ասես վայր ընկնող ասուպ էր՝ հանգավ,
Ու գերի վերցրեց նրան թշնամին:
Սակայն, ով զարմանք, նրան չեն տանջում,
Չեն կիսում սիրտը, որ շներին տան,
Էլ ինչո՞ւ տանջեն, երբ ինքն է տանջվում,
Սիրտն ինչո՞ւ կիսեն, էլ խիզախ չէ այն:
Դատարկ է թվում աշխարհը նրան,
Պայքար ու երգեր՝ անիմաստ հնչյուն,
Եվ երկու հոգի ծաղրանքով դաժան
Կտրիճների մոտ բերեցին գերուն:
- Ձեր արծի՞վն էր սա, բայց հավ է, տեսեք,
Աչքերն ասես թե կորեկ են փնտրում,
Տեսեք, հասկացեք, որ հոգին ձեր հեզ
Հավից ավելի վեր չի սավառնում:
Եկեք, հանձնվեք, բավ հեղեք արյուն:
Մեկ է չեք փոխի ոչինչ աշխարհում,
Կգրգռեք և ուրիշների՝
Ավելացնելով թիվը հավերի:
Ու կտրիճների խումբն է փոթորկվում.
- Առաջնորդ, թույլ տուր շանսատակ անենք.
Սրանք մեր ազնիվ հավատն են ծաղրում,
Մեր երազները, տենչերը աննենգ:
Եվ առաջնորդը՝ որդին ցասումի,
Ձեռքով նշան է անում՝ համբերեք.
- Մեր պոետն էլի արծվանա պիտի
Եվ այս հավերին կերցնի կորեկ:

Եկ, պոետ գնանք մենք ջրվեժի մոտ:
Ու խումբն է շարժվում դեպի տարերքն այն,
Որի հետ երեկ մի տարերք երկրորդ
Շաչեցնում էր երգն ըմբոստության:
- Լսո՞ւմ ես, պոետ, ձայնը քո եղբոր,
Ի՞նչ ես զգում դու, ասա այս մարդկանց:
- Մրսում եմ, ցուրտ է… գնանք այստեղից…
Ո՛չ, առաջնորդի աչքերից վառված
Արցունքի ոչ մի կաթիլ չընկավ ցած,
Բոցերից արցունք չի ծորում երբեք:
- Սիրել եմ սրան, որպես իմ որդուն,
Փրկել եմ նրա կյանքը մի մարտում,
Բայց հիմա տարեք, իսկույն գլխատեք,
Գլուխը տվեք այս շներին կեր:
Քիչ հետո երկու պատգամավորներ,
Որ եկել էին ծաղրով խոցելու,
Ետ էին դառնում քայլերով երեր՝
Տանելով հետներն մի արնոտ գլուխ:
Ինձ մի հարցրեք, թե որ դարում էր,
Կամ թե ո՞ր երկրում, ո՞ր ջրվեժի մոտ,
Ես միայն գիտեմ՝ դաժան գարուն էր,
Ու ներում չկար սրտին վարանոտ:
Ու գիտեմ նաև, որ այսօր էլի
Աչք չեմ փակելու մինչև լուսաբաց.
Գալիս է, նստում իմ մահճակալին
Այն բանաստեղծը մի օր գլխատված:
- Նրանք, ասում է, ինձ սպանեցին
Անողոքությամբ մարտնչող ոգու,
Իմ մահը պետք էր նրանց պայքարին
Ու խստության դեմ ես չեմ բողոքում:
Բայց կարծվանայի, սպասել էր դեռ պետք,
Իսկ նրանց համար ժամանակ չկար,

Վերքս կփակվեր, համբերել էր պետք,
Որ նորից ըմբոստ քնարս զնգար:
Ի՜նչ երգեր տարա ինձ հետ գերեզման:
Շատ բանաստեղծներ եկան փոքր ու մեծ,
Սակայն ոչ մեկը դրանք չգրեց:
Ու հառաչում է պոետն իր հոգում՝
Ողջ գիշեր նստած իմ մահճակալին,
Մենք երկար-երկար զրուցում անքուն
Եվ սպասում ենք արևագալին:

ԲԱԼԼԱԴ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՍԻՆ

Ապոլոնը, երբ ողջ սրտով
Բանաստեղծին տվեց քնար,
Դիմեց նրան՝ ուղարկելով
Օլիմպոսից դեպի աշխարհ.
- Երկու բանով միշտ հիացիր,-
Ասաց երգի աստվածն անամպ,-
Գեղեցկությամբ քո երգածի
Եվ քո երգի գեղեցկությամբ:
Ու ցած իջավ բանաստեղծը
Բարձունքներից Օլիմպոսի,
- Բարո՜վ գնաս, քեզ իմ սերը,-
Զնգաց ձայնը Ապոլոնի,
- Բարո՜վ գնաս,- ձայն տվեցին
Մուսաները բարձունքներից,
- Բարո՜վ եկար, այդ միջոցին
Արձագանքեց աշխարհն հեռվից:

Ահա քայլում է աշխարհում
Բանաստեղծը խանդավառված.

Հեռվում պալատ է նշմարում
Ու պարիսպներ՝ մշուշ հագած...
Գնա՛լ հենց այս ակնթարթում,
Ա՜խ, ինչ լավ են ժպտում նրանք,
Ժպտում, կանչում են, կախարդում,
Որպես կապո՛ւյտ հրապուրանք։
«Ա՜խ, մի գնա»,- լսվում է խուլ,
Մի ձայն լսվում հառաչքի պես,
Այս՝ հյուղակներն են խեղճ, խարխուլ
Նրա շուրջը տնքում այսպես։
Բայց նա գնաց... Եվ այդ պահից
Այրեց նրան մորմոքը խոր,
Երբ որ տեսավ դառնակսկիծ
Այնտեղ գործեր հրեշավոր։
Տեսավ նախանձն է չար ֆշշում
Ու մերթ՝ սողում օձագալար,
Կեղծիքն հագած խաս-աբրեշում
Ժպտում է լոկ գահի համար,
Ելնում է ոխն իր պատյանից,
Որ խավարում մեկին խոցի,
Բամբասանքը փեշի տակից
Վտառներ է հանում օձի,
Իսկ ծիրանին արքայական
Դրոշ է լոկ պատերազմի,
Թագը մի զանգ, որ տա նշան,
Թե ե՛րբ ուժը աշխարհ ճզմի։
Ինքն է միայն, ինքը բարի,
Երգում է սեր, խաղաղություն,
Զնգում է ձայնը քնարի,
Թրթռում է... բայց ոչ սրտում։
Լացեց. սա լացն էր առաջին,
Ավա՛ղ ուներ արցունք աղի։

Ինչո՞ւ եկավ հյուր այս որջին՝
Առած քնարն իր յոթնաղի։
Ու դուրս եկավ նա այստեղից՝
Իր ետևում ծաղրը թողած,
Որի ատամը թունալից
Բերանի մեջ դեռ շա՛տ շողաց։
Երգեց նա սեր, խաղաղություն,
Երգեց այնտեղ, բայց ո՞ւմ համար,
Մի՞թե նրանք իրենց մթնում
Պետք ունեին երգին այս վառ։
- Ոչ, չունեին,- մղկտաց նա,
Ուզեց ջարդել քնարը իր,
Ապոլոնը թող իմանա,
Որ չեն հաշտվում երգ ու ոճիր,
Թող իմանա և էլ չասի,
Թե հիացիր սրտով անամպ
Գեղեցկությամբ քո երգածի
Եվ քո երգի գեղեցկությամբ։
Ո՞ւր է այնտեղ գեղեցկություն,
Որ հասկանա գեղեցիկ երգ,
Այնտեղ իրար միս են ուտում,
Այնտեղ միայն թույն կա և վերք։
Մի՞թե այս խեղճ հյուղակներում
Կհասկանան երգը չքնաղ,
Ոչ, տնքում են այստեղ, լռում,
Ինչ թշվառ է աշխարհն, ավա՛ղ։
Շուրջս ահա դեմքեր հյուծված,
Ա՛խ, սա պատկերն է աշխարհի,
Այն էլ դարձյալ բաժին ընկած
Պալատական մի որկորի։
Ու թափառեց մի ողջ ցերեկ
Բանաստեղծը տխուր ու լուռ,

Սրտում հազար կսկիծ ու վերք,
Սրտում հազար ողբ ու մրմուռ։
Երեկոյան հուսալքված
Կանգնեց մի խեղճ հյուղակի մոտ,
Մի պահ նրան այնպես թվաց,
Թե ձայն լսեց, մի ձայն ծանոթ։
Ականջ դրեց, տեսավ իրոք
Ձայն է գալիս, ծանոթ մի ձայն,
Մեկը կարդում է լիաթոք
Երգն իր սիրո, խաղաղության։
Ինչո՞ւ մեկը. մի լավ լսիր,
Կարդում են բյուր հյուղակներում,
Օ՜, ինչ սրտեր կան անբասիր,
Ինչ վառ աստղեր այս խավարում։
Բանաստեղծը լացեց նորից,
Երկրորդ անգամ լացեց ահա,
Բայց այս անգամ հիացմունքից,
Խնդությունից արտասվեց նա։
Ձղջաց, որ վատ է մտածել
Մարդկանց մասին հյուղակների,
Թող ջինջ հոգում, սրտում իր պարզ
Ճշմարտությունն իրեն ների։
- Այստե՛ղ միայն,- շշնջաց նա,-
Պիտի փնտրել գեղեցկություն,
Այստե՛ղ հոգին բարձրագնա
Միշտ էլ կերգի ազատ, խնդուն։
Ու նա երգեց քնարն առած,
Երգեց նա սեր, խաղաղություն
Կեղծիքների նավը թողած
Պալատական ծանծաղուտում։
Երգեց նա սեր, խաղաղություն,
Կյանքը երգեց հուզմունքով խոր,

Արեգակներ վառած սրտում
Երգում է նա մինչև այսօր։
Չկան արդեն հյուղակներն այն,
Կյանքն է զարթնել իմ աշխարհում,
Ամբիոններից խաղաղության
Երգն է նրա սրտեր վառում,
Երգն է նրա ուժգին թնդում,
Երգը խրոխտ ու անլռին,
Նա՝ դարավոր մաղձը սրտում
Երգում է՝ մահ պալատներին։

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՈՒՆԴԸ

Մութն է ծանր չոքել նախնադարի վրա,
Եվ մութը ճեղքելով երևում է ահա
Ինձ մի խարույկ։
Բոլորել են շուրջը մարդիկ դեռ վայրենի
Ու տված ձեն-ձենի՝
Սպասում են որսի խորովվելուն,
Որ մարդ էր քիչ առաջ։
Բայց նրանցից մեկը մի քանի քայլ հեռու
Կուչ է եկել սառած։
Աչքերի մեջ նրա բոցն է պարում առույգ,
Աչքերի մեջ նրա մի կրկնվող խարույկ,
Որ չի տաքացնում։
Վտարել են նրան տաք խարույկի մոտից,
Իսկ շուրջը ձմեռ է, կոշտացած ձյուն։
Վագրի մորթին հագի քրքրված է, լոսված,
Քամին ամեն ճեղքից ներս է խցկում լեզուն
Ու մահվան համբույր է տալիս նրան։
Խարույկի մոտ հիմա տաք է այնպես,

Կրակն է ճարճատում, լեզու հանում ասես
Ձմռան ցրտի վրա։
Դե կրակ է, ցուրտը ի՞նչ կարող է անել,
Որ նրանից դողա,
Փայտի պաշար շատ կա
Ու քանի դեռ փայտ կա՝ նա կլինի կրակ
Ու լեզու կհանի ցրտի վրա։
Իսկ այս արտաքսվածը սպառել է, չունի
Ցրտին դիմանալու պաշար արդեն,
Բացվող առավոտը նա չի տեսնի,
Քիչ էլ, և սառած դին կրակին կպահեն,
Ի՞նչ էր մեղքը նրա։
Մարդիկ, ասել էր նա,
Էլ մարդկային արյամբ չանենք մենք կերուխում,
Էլ մարդու միս չուտենք այսուհետև,
Եվ իր միսն են նրանք ահա ուտում։
Կերան ու պարեցին, հետո, սակայն,
Էլ մարդկային արյամբ չարեցին կերուխում։
Մութն է ծանր չոքել նախնադարի վրա,
Եվ մութը ճեղքելով երևում է մի լույս՝
Բարի սիրտն է նրա,
Որը կերան թեկուզ,
Բայց մնա՛ց լույսը ջինջ։
Նա մարդկային ցեղի պոետն էր առաջին։
Ապրում է, կա
Հետո ծնված բոլոր պոետների սրտում,
Իր պես հսկա։

ԲԱԼԼԱԴ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Լույսը բացվում է կրկին
Մեր արտերին անափ,
Հնձվոր տղան դեռ ծեգին
Դաշտ է գնում շտապ:

Աղջիկն է ճիշտ նույն պահին
Ու նույն ճամփի վրա
Ընկերանում տղային՝
Սրտում սիրո կրակ:

Ու լուռ նայում են իրար,
Ճանապարհին ծանոթ,
Աչքերի մեջ իրենց վառ՝
Մի գիշերվա կարոտ:

Մոտիկ անտառն է երգում,
Կանչում այնպես դյութիչ,
Որ շտապեն, իր գրկում
Հանգստանան մի քիչ:

Բայց գնում են և հուզվում,
Լուռ, իրարից գաղտնի,
Սակայն գաղտնիքն է վաղուց,
Վաղուց իրենց հայտնի:

Ու գալիս է քամին զով,
Գգվում ամեն մեկին,
Ինքն էլ լցվում երազով,
Առավոտյան ծեգին:

Ճամփան, երգեր փայփայող,
Զգվում է լուռ, անձայն,
Մատնում, որ իր վրայով
Սիրող սրտեր անցան:

Տղան մինչև երեկո
Դաշտն է հնձում հուռթի,
Ու արևն է նայում գոհ
Նրա հնձած արտին:

Աղջիկն, անհուն եռանդով,
Խուրձ է կապում արագ,
Գալարվում է գեղաթով
Մեջքը նրա բարակ:

Եվ ասում են, թե նրանք
Այնքան շատ են հնձում
Որ դաշտում ոչ մի օղակ
Նրանց հետ չի մրցում:

Եվ ասում են, երբ հոգնած
Նրանք դառնում են տուն,
Հեռվից անտառն է նրանց
Հազար ձևով դյութում:

Փսփսում են չորս կողմից
Առու, արտ ու լուսին,
Պատմում նրանց հետևից
Նրանց սիրո մասին:

Իսկ երբ ցորենը կալում
Շեղջ է դառնում հակինթ,

Նրանց սերն է ցոլցոլում
Ցորենի մեջ անգին:

Կա և թխած հացի մեջ
Նրանց այս սերն անմեղ,
Դրանից է, ասում են,
Հացը այսքան համեղ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ. Ստեղծագործ հոգու ուղին……...3

ՍՈՆԵՏՆԵՐԻ ՊՍԱԿ 8

ՊՈԵՄՆԵՐ

Հազարան բլբուլ 151
Փոքր Միերի մորմոքը..... 203
Դյուցազնական..... 221
Դեղին գիշեր..... 229
Կարոտ 248
Մեր լիճը 257
Ծանր քայլեր 261
Խաղաղ առավոտ 269
Արևերգություն..... 278
Մայր արեգակին 283
Խռովահույզ խաղաղություն 294
Մեղեդի սիրո և խաղաղության..... 311
Վերադարձ 322
Կոնտրաստ 347
Ծանոթ ժպիտ..... 351

ԲԱԼԼԱԴՆԵՐ

Բալլադ չգրված երգերի մասին 353
Բալլադ բանաստեղծի մասին..... 356
Բանաստեղծի ծնունդը..... 360
Բալլադ սիրո մասին..... 362

ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

Հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 055. 52.79.74:

Էլ փոստ՝ **lusakn@rambler.ru**